

Հիմնադիր՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆ

**ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ԴԱՏԱՐԱՆ**

Խմբագրական
խորհուրդ՝

Ն. Թովմայան
Ա. Գյուլումյան
Ֆ. Թոխյան
Ա. Թունյան
Ա. Խաչատրյան
Ն. Նազարյան
Ա. Պետրոսյան

Խմբագրության հասցեն՝
Երևան, Բաղրամյան 10
Հեռախոս՝ 011-58-81-81(189)

ՏԵՂԵԿԱԳԻՐ

1(97)
2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

• ՀՀ ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ (1499-1521)

- * 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՄԻ 6-ԻՆ ՄԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՎ ՉԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՔՄԱՅԻՆ ՄԱՀՄԱՆՆԵՐՈՎ ՏԵՂԱՓՈԽՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՋԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1499, 14 հունվարի 2020 թվականի).....6
- * 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՄԻ 26-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՉԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՀԱՆՋՆՄԱՆ ՄԱՍԻՆ» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1500, 21 հունվարի 2020 թվականի).....11
- * 2019 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 9-ԻՆ ՉՈԼՊՈՆ-ԱԹԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՂՐԴՋՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԵՎԱՍՏԻ ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՈՒՄԸ ԲԱՅԱՌԵԼՈՒ ԵՎ ՀԱՐԿՈՒՄԻՑ ԽՈՒՍԱՓԵԼԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՋԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1501, 21 հունվարի 2020 թվականի).....15
- * 2008 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 14-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՇԱՔԱՐԱԽՏՈՎ ՀԻՎԱՆԴԱՅՈՒԹՅԱՆ ԱՃԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐՈՒՄ ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՋԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1502, 21 հունվարի 2020 թվականի).....20
- * 2018 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 2-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ՎԹԱՐԻ ԿԱՄ ՃԱՌԱԳԱՅԹԱՅԻՆ ՎԹԱՐԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱՅՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԴՐԱՆՑ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՅՄԱՆ ՓՈԽՕԳՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՐԱՍՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ՝ ԱՊՀ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՋԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1503, 21 հունվարի 2020 թվականի).....24

- * ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
«ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 7-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ, 8-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 3 ԵՎ 4-ՐԴ ՄԱՍԵՐԻ, 17-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ, 19.3-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 4-ՐԴ ԿԵՏԻ, «ՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 6-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 10-ՐԴ ՄԱՍԻ, 9-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ԵՎ 2-ՐԴ ՄԱՍԵՐԻ, 15 ԵՎ 16-ՐԴ ՀՈՂՎԱԾՆԵՐԻ, 19-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 2, 3 ԵՎ 4-ՐԴ ՄԱՍԵՐԻ, 22-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ, ՆՈՒՅՆ ՕՐԵՆՔԻ ՀԱՎԵԼՎԱԾԻ 6-ՐԴ ԲԱԺՆԻ 4-ՐԴ ԿԵՏԻ 2-ՐԴ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ «ԵՐԵՒԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 32-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1504, 30 հունվարի 2020 թվականի).....29
- * 2019 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 1-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՆԱՎԱԳՆԱՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1505, 11 փետրվարի 2020 թվականի)61
- * ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 39-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 7-ՐԴ ԿԵՏԻ՝ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂԻՆ ԿՐՈՆԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԼԻՆԵԼՈՒ ԱՐԳԵԼՔԻ ՄԱՍՈՎ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1506, 18 փետրվարի 2020 թվականի)65
- * ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 43-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 9-ՐԴ ՄԱՍԻ ԵՐԿՐՈՐԴ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐՔԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 16.1-ԻՆ ՀՈՂՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1507, 25 փետրվարի 2020 թվականի)79
- * 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 24-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԵՐՄԱՆԻՍՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1508, 25 փետրվարի 2020 թվականի)101
- * 2017 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «1992 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 15-Ի՝ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՄԱՍԻՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՌԱԶՄԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՉՈՐՐՈՐԴ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1509, 25 փետրվարի 2020 թվականի).....105

* 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 11-ԻՆ ՍՈՉԻՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ
«ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ԻՐԵՂԵՆ ԱՊԱՅՈՒՅՑ ՀԱՆԴԻՄԱՅՈՂ
ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ, ՀՈԳԵՄԵՏ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԲԱՂԱԴԻԻՉՆԵՐԻ,
ՀՐԱԶԵՆԻ, ԴՐԱ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍԵՐԻ, ՌԱԶՄԱՍԹԵՐՔԻ, ՊԱՅԹՈՒՅԻԿ
ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ ՊԱՅԹՈՒՅԻԿ ՍԱՐՔԵՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ»
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1510, 25 փետրվարի 2020 թվականի)109

* 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 10-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՒ ՎԵՐԱԿԱՌՈՒՅՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ԿԵՆՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ
ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՑԱՆՑԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԵՐԿՐՈՐԴ
ԼՐԱՅՈՒՅԻՉ ՖԻԱՆՍԱՎՈՐՈՒՄ» ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐՈՒՄ
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1511, 3 մարտի 2020 թվականի).....113

* 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 3-ԻՆ ՍՈՍԿՎԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ՝ «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ ՄՐՑԱԿՅՈՒԹՅԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ
ԿԱՆԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՆԿԱՏՄԱՍԲ ՀՄԿՈՂՈՒԹՅԱՆ
ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼԻՄ ԳԱՂՏՆԻ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԻ ԵՎ ԴՐԱ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» 2014 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 12-Ի
ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐԻ ՄԻԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1512, 3 մարտի 2020 թվականի).....119

* ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ
1087.2-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 7-ՐԴ ԵՎ 8-ՐԴ ՄԱՍԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1513, 3 մարտի 2020 թվականի).....123

* ՎԱՐԴԱՆ ՑՈԼԱԿՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ
ՕՐԵՆՍԳՐՔԻ 477-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1514, 10 մարտի 2020 թվականի).....138

* ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ
ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ
ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 182-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 2-ՐԴ ԿԵՏԻ,
183-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 8-ՐԴ ՄԱՍԻ, 203-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1515, 10 մարտի 2020 թվականի).....151

- * 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ
 «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻՆԳԱՊՈՒՐԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
 ՄԻՋԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ»
 ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
 ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
 ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1516, 17 մարտի 2020 թվականի).....165
- * 2019 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 9-ԻՆ ՉՈԼՊՈՆ ԱՏԱՅՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ
 «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՈՎ
 ՎՏԱՆԳԱՎՈՐ ԹՄՓՈՆՆԵՐԻ ԱՆԴՐՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՏԵՂԱՓՈՒՄԱՆ ՄԱՍԻՆ»
 ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
 ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
 ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1517, 17 մարտի 2020 թվականի).....173
- * ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
 «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
 ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ 81-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 5-ՐԴ
 ՄԱՍԻ ԵՎ 82-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ, «ԴԱՏԱԽԱՁՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
 ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 35-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ, «ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ
 ՊԱՇՏՊԱՆԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
 ՕՐԵՆՔԻ 12-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ, «ՀԵՈՒՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՈՒԴԻՈՅԻ ՄԱՍԻՆ»
 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 39-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ, «ՀԱՇՎԵՔՆԻՉ
 ՊԱԼԱՏԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 17-ՐԴ
 ՀՈԴՎԱԾԻ, «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
 ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 18 ԵՎ 19-ՐԴ
 ՀՈԴՎԱԾՆԵՐԻ, «ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
 ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ 144 ԵՎ 145-ՐԴ
 ՀՈԴՎԱԾՆԵՐԻ, «ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՅ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
 ԱՊԱՀՈՎՄԱՆ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ»
 ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 2 ԵՎ 3-ՐԴ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ՝
 ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
 ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1518, 31 մարտի 2020 թվականի).....178
- * 2007 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 25-ԻՆ ԼԱՆՁԱՐՈՏՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ
 «ՍԵՌԱԿԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԻՑ ԵՎ ՍԵՌԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԻ
 ԲՈՒՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԵՐԵՎԱՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԵՎՐՈՊԱՅԻ
 ԽՈՐՀՐԴԻ ԿՈՆՎԵՆՅՈՒՄՆԵՐԻ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
 ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
 ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1519, 31 մարտի 2020 թվականի).....225
- * 2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 24-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ
 ԿԱՏԱՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՊԵԿԻՆԻ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
 ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
 ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
 ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1520, 31 մարտի 2020 թվականի).....232
- * 2019 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 9-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «1994 ԹՎԱԿԱՆԻ
 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 9-Ի ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ԱՐՏՈՆԱԳՐԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՅՈՒՄՆԵՐԻ ԿԻՑ
 «ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»
 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
 ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
 ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ (ՄԴՈ – 1521, 31 մարտի 2020 թվականի).....236



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2019 թվականի Հոկտեմբերի 6-ին ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳՈՒՄ
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՎ
ՉԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՔՍԱՅԻՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՎ ՏԵՂԱՓՈԽՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ
ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
ՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ»
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

14 հունվարի 2020 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ա. Դիլանյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի (զեկուցող), Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահ Դ. Անանյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դոնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2019 թվականի հունիսի 6-ին Սանկտ Պետերբուրգում ստորագրված «Եվրասիական տնտեսական միության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության մաքսային սահմաններով տեղափոխվող ապրանքների և միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների վերաբերյալ տեղեկատվության փոխանակման մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2019 թվականի դեկտեմբերի 5-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ համաձայնագիրը, սույն գործով ՀՀ կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Եվրասիական տնտեսական միության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության մաքսային սահմաններով տեղափոխվող ապրանքների և միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների վերաբերյալ տեղեկատվության փոխանակման մասին» համաձայնագիրը (այսուհետ Համաձայնագիր) ստորագրվել է 2019 թվականի հունիսի 6-ին Սանկտ Պետերբուրգում Եվրասիական տնտեսական միության և ՉՏՀ մաքսային սահմաններով տեղափոխվող ապրանքների ու միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների վերաբերյալ տեղեկատվության փոխանակմանն ուղղված համագործակցության կազմակերպման նպատակով:

2. Համաձայնագիրն ունի անբաժան երկու հավելված: Առաջինում սահմանվում է Համաձայնագրի իրականացման սկզբնական փուլում փոխանակման ենթակա տեղեկատվության կազմը: Այն ներառում է, ի թիվս այլնի, ապրանքների հայտարարագրի համարը, ապրանքային խմբաքանակում ապրանքների անվանումների քանակը (թվային արժեքը), ուղարկողի երկրի (տարածաշրջանի) ծածկագիրը, տեղեկություններ այն անձի վերաբերյալ, որը մաքսային փաստաթղթերում նշված է որպես ապրանքներն ուղարկող, ստացողի երկրի (տարածաշրջանի) ծածկագիրը, տեղեկություններ այն անձի վերաբերյալ, որը մաքսային փաստաթղթերում նշված է որպես ապրանքներն ստացող:

Երկրորդ հավելվածում սահմանվում է այն տեղեկատվության կազմը, որի փոխանակմանը Կողմերը ձգտելու են Համաձայնագրի փուլ առ փուլ իրականացմանը զուգընթաց և տեխնիկական պատրաստվածության մակարդակին հասնելուց հետո: Այն ներառում է տեղեկատվություն հետևյալ չորս ոլորտների վերաբերյալ.

ա) Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կողմից ՉԺՀ արտահանում և ՉԺՀ կողմից Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններ արտահանում,

բ) Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կողմից ՉԺՀ մաքսային տարածքով տարանցման կարգով երրորդ երկրներ արտահանում և ՉԺՀ կողմից Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների մաքսային տարածքով տարանցման կարգով երրորդ երկրներ արտահանում,

գ) Եվրասիական տնտեսական միության և ՉԺՀ մաքսային տարածքներով երրորդ պետություններից տարանցման կարգով երրորդ պետություններ փոխադրվող ապրանքներ և միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցներ,

դ) երրորդ պետություններից ՉԺՀ մաքսային տարածքով Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններ և երրորդ պետություններից Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքով ՉԺՀ տարանցման կարգով փոխադրվող ապրանքներ և միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցներ:

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը ստանձնում է հետևյալ հիմնական պարտավորությունները.

- իրականացնել ավտոմոբիլային, երկաթուղային, օդային, ջրային (ծովային և գետային) տրանսպորտի տեսակներով Եվրասիական տնտեսական միության և ՉԺՀ մաքսային սահմաններով տեղափոխվող ապրանքների և միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների վերաբերյալ տեղեկատվության փոխանակում (Հոդված 3, կետ 1),

- ձգտել ընդլայնել փոխանակման ենթակա տեղեկությունների ծավալն ու կազմը՝ հաշվի առնելով Համաձայնագրի 3-րդ հոդվածի 5-7-րդ կետերը և Համաձայնագրի 2-րդ հավելվածը (Հոդված 3, կետ 4),

- ՉԺՀ-ին տեղեկատվություն տրամադրել այն ապրանքների և միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային

միջոցների վերաբերյալ, որոնք Հայաստանի Հանրապետությունից արտահանվում են ՉԺՀ և երրորդ երկրներ (տարածաշրջաններ) ՉԺՀ մաքսային տարածքով տարանցմամբ (Հոդված 3, կետ 5),

- տեխնիկական պատրաստվածության մակարդակին հասնելուց հետո ՉԺՀ-ին տեղեկատվություն տրամադրել այն ապրանքների և միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների վերաբերյալ, որոնք երրորդ երկրներից (տարածաշրջաններից) տարանցիկ կարգով տեղափոխվում են ԵԱՏՄ անդամ պետություններ ՉԺՀ մաքսային տարածքով, ՉԺՀ՝ ԵԱՏՄ մաքսային տարածքով և երրորդ երկրներ (տարածաշրջաններ)՝ ԵԱՏՄ և ՉԺՀ մաքսային տարածքներով (Հոդված 3, կետ 7),

- չիրականացնել ֆիզիկական անձանց կողմից որպես անձնական օգտագործման ապրանքներ տեղափոխվող, ինչպես նաև միջազգային փոստային առաքանիներով ուղարկվող ապրանքների վերաբերյալ տեղեկատվության փոխանակում (Հոդված 3, կետ 8),

- չիրականացնել ՀՀ օրենսդրությանը համապատասխան պետական գաղտնիք հանդիսացող տեղեկությունների շարքին դասվող տեղեկատվության փոխանակում (Հոդված 3, կետ 9),

- հաշվի առնելով, որ Համաձայնագրի շրջանակներում ստացված տեղեկատվությունը հրապարակման ենթակա չէ, սահմանափակել այդպիսի տեղեկատվության հասանելիությունը երրորդ անձանց համար, ինչպես նաև ձեռնարկել միջոցներ դրա անկառավարելի տարածումը թույլ չտալու համար (Հոդված 6, կետ 1),

- երաշխավորել, որ Համաձայնագրի շրջանակներում ստացված տեղեկատվությունը դրա փոխանակման համար պատասխանատու լիազորված մարմինների կողմից կօգտագործվի բացառապես մաքսային նպատակներով, և այն առանց այդ տեղեկատվությունը տրամադրած լիազորված մարմնի գրավոր համաձայնության որպես ապացույց չի օգտագործվի վարչական և քրեական վարույթների, ինչպես նաև դատաքնությունների ընթացքում (Հոդված 6, կետ 2),

- երաշխավորել, որ ՉԺՀ լիազորված մարմնից տեղեկատվություն ստացած ՀՀ լիազորված մարմինները կձեռնարկեն միջոցներ՝ ուղղված ստացված տեղեկատվության պահպանմանը, և դրա համար կօգտագործեն չթույլատրված մուտքից պաշտպանելու այնպիսի եղանակներ, որոնք ՀՀ օրենսդրությանը համապատասխան նույնական են՝ նույնանման տեղեկատվության մասով կիրառվող միջոցների ու եղանակների համեմատ (Հոդված 6, կետ 3),

- Համաձայնագրի իրականացման ընթացքում ծագած ցանկացած տարաձայնություն կարգավորել խորհրդակցությունների և բանակցությունների միջոցով (Հոդված 8):

4. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված՝ արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2019 թվականի հունիսի 6-ին Սանկտ Պետերբուրգում ստորագրված «Եվրասիական տնտեսական միության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության մաքսային սահմաններով տեղափոխվող ապրանքների և միջազգային փոխադրում իրականացնող տրանսպորտային միջոցների վերաբերյալ տեղեկատվության փոխանակման մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

14 հունվարի 2020 թվականի
ՍԴՈ-1499



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2019 թՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՄԻ 26-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՉԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՀԱՆՁՆՄԱՆ ՄԱՍԻՆ»
ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

21 հունվարի 2020 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ա. Դիլանյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի (գեկուցող), Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ Բ. Գրիգորյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2019 թվականի մայիսի 26-ին ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության միջև հանձնման մասին» պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

1(97)/2020

◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿՎՈՐ

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2019 թվականի նոյեմբերի 15-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վերոնշյալ պայմանագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**:

1. «Հայաստանի Հանրապետության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության միջև հանձնման մասին» պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) ստորագրվել է 2019 թվականի մայիսի 26-ին Երևանում՝ հանցագործության կանխման գործում Հայաստանի Հանրապետության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության միջև արդյունավետ համագործակցությունը խթանելու նպատակով՝ հիմնված ինքնիշխանության, հավասարության, փոխադարձ հարգման և շահի վրա:

2. Պայմանագրի 1-ին հոդվածով Կողմերից յուրաքանչյուրը պարտավորվում է Հայցող Կողմի պահանջով մյուս Կողմին հանձնել իր տարածքում հայտնաբերված և Հայցող Կողմի կողմից հետախուզվող ցանկացած անձի՝ այդ անձի նկատմամբ քրեական վարույթ իրականացնելու կամ նշանակված պատիժն ի կատար ածելու նպատակով:

3. Պայմանագրի 2-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ հանձնման մասին հարցումը կարող է բավարարվել միայն այն դեպքում, եթե արարքը, որի համար հանձնում է պահանջվում, համարվում է հանցանք երկու Կողմերի օրենքներով, և եթե առկա է նույն հոդվածի 1-ին կետի «ա» և «բ» ենթակետերով սահմանված պայմաններից որևէ մեկը:

4. Պայմանագրով, միաժամանակ, նախատեսված են հանձնման մերժման պարտադիր հիմքերը (հոդվ. 3), հանձնման մերժման հայեցողական հիմքերը (հոդվ. 4), Կողմերից յուրաքանչյուրի կողմից իր քաղաքացիների հանձնումը մերժելը (հոդվ. 5):

5. Հայաստանի Հանրապետությունը Պայմանագրով ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

ա) որպես Հայցվող Կողմ, հանձնման մասին հարցումը բավարարել միայն այն դեպքում, եթե արարքը, որի համար հանձնում է պահանջվում, համարվում է հանցանք հայկական և չինական կողմերի օրենքներով, և եթե առկա է հետևյալ պայմաններից որևէ

1(97)2020

◆ ՏԵՂԵԿՎՈՒՄ

◆ ԴԱՏԱՐԱՆ

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ

մեկը. հանձնման մասին հարցումը կատարվել է այնպիսի հանգանքի համար քրեական վարույթ իրականացնելու նպատակով, որը երկու կողմերի օրենքներով պատժելի է ազատազրկմամբ նվազագույնը մեկ տարի ժամկետով կամ ցանկացած ավելի խիստ պատժով, կամ հանձնման մասին հարցումը կատարվել է ազատազրկման ձևով պատիժն ի կատար ածելու նպատակով, եթե պատժի մնացած ժամկետը, որը հետախուզման մեջ գտնվող անձը պետք է կրի, հանձնման մասին հարցում ներկայացնելու պահին առնվազն վեց ամիս է (հոդվ. 2, կետ 1),

բ) իր հայեցողությամբ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների հանձնումը մերժելիս, որպես Հայցվող Կողմ, չինական կողմի պահանջով գործը հանձնել Հայաստանի Հանրապետության իրավասու մարմիններին՝ այդ անձի դեմ, Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն, քրեական վարույթ հարուցելու նպատակով, իսկ նույն հանգամանքներում, սակայն, արդեն որպես Հայցող Կողմ, չինական կողմին տրամադրել գործին առնչվող փաստաթղթերն ու ապացույցները (հոդվ. 5, կետ 2),

գ) որպես Հայցվող Կողմ՝ անհապաղ տեղեկացնել Հայցող Կողմին հարցման ընթացքի արդյունքների մասին, իսկ հետախուզման մեջ գտնվող անձի կալանավորումից հետո երեսնօրյա ժամկետում Հայցող Կողմից հանձնման մասին պաշտոնական հարցում չստանալու դեպքում ժամանակավոր կալանավորումը դադարեցնել (հոդվ. 10, կետեր 3 և 4),

դ) որպես Հայցվող Կողմ՝ հանձնման մասին հարցումը քննարկել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված ընթացակարգերին համապատասխան և իր որոշման մասին անհապաղ տեղեկացնել Հայցող Կողմին: Միաժամանակ, հանձնման մասին հարցումը ամբողջությամբ կամ մասամբ մերժելու դեպքում մերժման պատճառների մասին ծանուցել Հայցող Կողմին (հոդվ. 11),

ե) որպես Հայցվող Կողմ՝ հանձնման հարցումը բավարարելու դեպքում, առանց անհարկի ուշացման, Հայցող Կողմի հետ պայմանավորվել հանձնումն իրականացնելու ժամանակի, տեղի և հանձնմանն առնչվող այլ համապատասխան հարցերի մասին: Մինևնույն ժամանակ տեղեկացնել Հայցող Կողմին, թե նախքան հանձնումը հանձնման ենթակա անձը որքան ժամանակ է պահվել կալանքի տակ (հոդվ. 12, կետ 1),

զ) որպես Հայցվող Կողմ՝ հանձնման ենթակա անձին անհապաղ ազատել, եթե Հայցող Կողմը հանձնումն իրականացնելու համար պայմանավորված ժամկետից հետո՝ տասնհինգ օրվա ընթացքում, չի տեղափոխում հանձնման ենթակա անձին (հոդվ. 12, կետ 2),

է) մի քանի պետություններից ստացված հանձնման մասին հարցումների առկայության դեպքում ապահովել Պայմանագրի 15-րդ հոդվածի դրույթների կատարումը,

ը) որպես Հայցող Կողմ՝ Պայմանագրի դրույթներին համապատասխան հանձնված անձի նկատմամբ Հայաստանի Հանրապետությունում քրեական հետապնդում չիրականացնել կամ պատիժն ի կատար չածել մինչև նրան հանձնելն այդ անձի կողմից կատարված այն հանցանքի համար, որով հանձնելու հարցում չի ներկայացվել, ինչպես նաև այդ անձին չհանձնել որևէ երրորդ պետության, եթե միայն Հայցվող Կողմը նախապես չի տվել իր համաձայնությունը, կամ երբ այդ անձը երեսուն օրվա ընթացքում չի հեռացել Հայաստանի Հանրապետության տարածքից դրա հնարավորությունը ունենալուց հետո, կամ երբ հեռանալուց հետո այդ անձն ինքնակամ չի վերադարձել Հայաստանի Հանրապետության տարածք (հոդվ. 16) և այլն:

6. Պայմանագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածի դրույթներին և, ի թիվս այլնի, նպատակաուղղված են Հայաստանի Հանրապետության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության միջև քրեական գործերով միջազգային-իրավական համագործակցության բարելավմանը և հանցավորության դեմ պայքարի արդյունավետության բարձրացմանը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2019 թվականի մայիսի 26-ին ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության և Չինաստանի Ժողովրդական Հանրապետության միջև հանձնման մասին» պայմանագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

21 հունվարի 2020 թվականի
ՍԴՈ-1500



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2019 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 9-ԻՆ ՉՈԼՊՈՆ-ԱԹԱՅՈՒՄ
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԴՐՂՋՍԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԵԿԱՄՏԻ ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՈՒՄԸ
ԲԱՑԱՌԵԼՈՒ ԵՎ ՀԱՐԿՈՒՄԻՑ ԽՈՒՍԱՓԵԼԸ ԿԱՆԽԵԼՈՒ
ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՍՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

21 հունվարի 2020 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմայանի (նախագահող), Ա. Գյուլումյանի (զեկուցող), Ա. Դիլանյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Ա. Պողոսյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2019 թվականի օգոստոսի 9-ին Չոլպոն-Աթայում ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Դրղստանի Հանրապետու-

1(97)2020
◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

թյան միջև եկամտի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2019 թվականի նոյեմբերի 18-ին Սահմանադրական դատարանում մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով սույն համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**:

1. «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ղրղզստանի Հանրապետության կառավարության միջև եկամտի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին» համաձայնագիրը (**այսուհետ՝ Համաձայնագիր**) ստորագրվել է 2019 թվականի օգոստոսի 9-ին Չոլպան-Աթայում: Համաձայնագրի նպատակն է նպաստել կողմերի միջև երկկողմ համագործակցության զարգացմանը, ԵԱՏՄ շրջանակներում հարկային բնագավառին առնչվող համատեղ ծրագրերի մշակմանն ու իրականացմանը և ստեղծել իրավական բարենպաստ պայմաններ կողմերի համապատասխան սուբյեկտների տնտեսական գործունեության ազատության համար:

Համաձայնագրով Պայմանավորվող պետությունների գործարար շրջանակների համար փոխադարձության սկզբունքով սահմանվում են եկամուտների ստացման երկրում հիմնական եկամտատեսակների շահաբաժինների, տոկոսների, ռոյալթիների հարկման պայմանները և դրույքաչափերը (հոդված 10, 11, 12):

2. Ըստ Համաձայնագրի՝ Հայաստանի Հանրապետությունը (**այսուհետ՝ ՀՀ**) ստանձնում է, մասնավորապես, հետևյալ հիմնական պարտավորությունները.

- կազմակերպության, ընկերակցության կամ այլ անձի եկամուտները, որոնք, Համաձայնագրի կողմերից յուրաքանչյուրի հարկային օրենսդրության համաձայն, ամբողջությամբ կամ մասամբ համարվում են հարկման առումով թափանցիկ, համարել այդ Պետության ռեզիդենտի եկամուտ, սակայն միայն այն չափով, որքանով եկա-

մուտք տվյալ Պետությունում հարկվելու նպատակով համարվում է այդ Պետության ռեզիդենտի եկամուտ (հոդված 1, կետ 2),

- Համաձայնագիրը ՀՀ-ում տարածել շահութահարկի և եկամտային հարկի վրա և ապահովել, որ Համաձայնագիրը կիրառվի նաև ցանկացած նույնատիպ կամ էապես համանման հարկերի նկատմամբ, որոնք կսահմանվեն Համաձայնագրի ստորագրման ամսաթվից հետո՝ ի լրումն գործող հարկերի կամ դրանց փոխարեն, ինչպես նաև դրդական կողմին ծանուցել հարկային օրենսդրությունում կատարված ցանկացած էական փոփոխության մասին (հոդված 2, կետեր 3, 4),

- եթե ՀՀ ձեռնարկությունն իր ձեռնարկատիրական գործունեությունն իրականացնում է Ղրղզստանի Հանրապետությունում այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, ապա այդ ձեռնարկության շահույթը հարկել միայն այն չափով, որը վերագրելի չէ այդ մշտական հաստատությանը (հոդված 7, կետ 1),

- ապահովել, որ մշտական հաստատության կողմից ձեռնարկության համար բացառապես ապրանքների կամ արտադրանքի գնումը հիմք չհանդիսանա այդ մշտական հաստատությանը որևէ շահույթ վերագրելու համար (հոդված 7, կետ 6),

- չհարկել Ղրղզստանի Հանրապետության ձեռնարկության կողմից միջազգային փոխադրումներում նավերի, օդանավերի, ավտոմոբիլային կամ երկաթուղային փոխադրամիջոցների շահագործումից ստացված շահույթը, ինչպես նաև նավերի, օդանավերի, ավտոմոբիլային կամ երկաթուղային փոխադրամիջոցների շահագործմամբ զբաղվող միավորումից, համատեղ ձեռնարկությունից կամ միջազգային կազմակերպություններից ստացված շահույթը (հոդված 8),

- հարկերից ազատել ՀՀ-ում առաջացող և Ղրղզստանի Հանրապետության կառավարությանը կամ Ազգային (կենտրոնական) բանկին վճարվող տոկոսները (հոդված 11, կետ 3),

- չհարկել Ղրղզստանի Հանրապետության ձեռնարկությանը պատկանող ՀՀ-ում գտնվող մշտական հաստատության ձեռնարկատիրական գույքի մաս կազմող, ինչպես նաև նման ձեռնարկության կողմից միջազգային փոխադրումներում շահագործվող նավերի, օդանավերի կամ ավտոմոբիլային և երկաթուղային փոխադրամիջոցների, կամ այդպիսի նավերի, օդանավերի կամ ավտոմոբիլային և երկաթուղային փոխադրամիջոցների շահագործմանը վերաբերող շարժական գույքի օտարումից ստացված եկամուտը (հոդված 13, կետեր 2, 3),

- ապահովել, որ ՀՀ ռեզիդենտի կողմից վարձու աշխատանքի դիմաց ստացված աշխատավարձը, վճարները և համանման այլ վարձատրությունները հարկվեն միայն ՀՀ-ում, եթե այդպիսի վարձու աշխատանքը չի իրականացվում Ղրղզստանի Հանրապետությունում (հոդված 14, կետ 1),

- ՀՀ ռեզիդենտի կողմից Ղրղզստանի Հանրապետությունում իրականացվող վարձու աշխատանքի դիմաց ստացված վարձատրությունը հարկել ՀՀ-ում, եթե.

ա) ստացողը ցանկացած 12-ամսյա ժամանակահատվածում գտնվում է Ղրղզստանի Հանրապետությունում ընդհանուր առմամբ 183 օրը չգերազանցող ժամանակահատվածով կամ ժամանակահատվածներով, և

բ) վարձատրությունը վճարվում է Ղրղզստանի Հանրապետության ռեզիդենտ չհանդիսացող գործատուի կողմից կամ նրա անունից, և

գ) վարձատրություն չի կատարվում գործատուի՝ Ղրղզստանի Հանրապետությունում ունեցած մշտական հաստատության կողմից (հոդված 14, կետ 2),

- չհարկել Ղրղզստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող ուսանողին կամ ստաժորին, որը գտնվում է ՀՀ-ում՝ բացառապես իր ուսման կամ մասնագիտացման նպատակով (հոդված 19),

- բացառել կրկնակի հարկումը և այն դեպքում, երբ ՀՀ ռեզիդենտը եկամուտ է ստանում, որը, Համաձայնագրի դրույթներին համապատասխան, կարող է հարկվել Ղրղզստանի Հանրապետությունում, թույլ տալ այդ ռեզիդենտի եկամտից գանձվող հարկից հանել Ղրղզստանի Հանրապետությունում եկամտից վճարված հարկի գումարին համարժեք գումար, ինչպես նաև ապահովել, որ այդպիսի նվազեցումներն ամեն դեպքում չգերազանցեն մինչև նվազեցման տրամադրումը հաշվարկված եկամտահարկի այն մասը, որը կարող է հարկվել Ղրղզստանի Հանրապետությունում՝ կախված հանգամանքներից (հոդված 21, կետ 1),

- բացառել խտրականությունը և Ղրղզստանի Հանրապետության ազգային անձանց և ռեզիդենտ հանդիսացող քաղաքացիություն չունեցող անձանց ՀՀ-ում չենթարկել այլ կամ ավելի ծանր հարկման կամ դրա հետ կապված պարտավորության կատարման, քան այն հարկումը և դրա հետ կապված պարտավորության կատարումն է, որոնց ենթակա են ՀՀ ազգային անձինք՝ նույն պայմանների դեպքում (հոդված 22, կետ 1, 2),

- երաշխավորել, որ Ղրղզստանի Հանրապետության ձեռնարկության մշտական հաստատության հարկումը ՀՀ-ում չլինի պակաս

բարենպաստ, քան համանման գործունեություն իրականացնող ՀՀ ձեռնարկության հարկումը (հոդված 22),

- Դրդստանի Հանրապետության իրավասու մարմնին տրամադրել անհրաժեշտ տեղեկատվություն, մասնավորապես, փոխանակել այնպիսի տեղեկություններ, որոնք անհրաժեշտ են Համաձայնագրով նախատեսված հարկերի վերաբերյալ ներպետական օրենքների կիրառման համար (հոդված 24):

3. Համաձայնագիրն ինչպես կառուցվածքային, այնպես էլ բովանդակային առումով համապատասխանում է միջազգային պայմանագրերի իրավունքի նորմերին և սկզբունքներին: Սահմանադրական դատարանը գտնում է, որ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված միջազգային իրավունքի հիման վրա բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**:

1. 2019 թվականի օգոստոսի 9-ին Չոլպան-Աթայում ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության կառավարության և Դրդստանի Հանրապետության միջև եկամտի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

21 հունվարի 2020 թվականի
ՍԴՈ-1501



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2008 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 14-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
«ՇԱՔԱՐԱԽՏՈՎ ՀԻՎԱՆԴԱՑՈՒԹՅԱՆ ԱՃԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐՈՒՄ
ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ
ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ
ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

21 հունվարի 2020թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ա. Դիլանյանի (զեկուցող), Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարար Ա. Թորոսյանի, համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2008 թվականի նոյեմբերի 14-ին ստորագրված՝ «Շաքարախտով հիվանդացության աճի դեմ պայքարում Անկախ պետությունների համագործակցու-

թյան մասնակից պետությունների համագործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2019 թվականի դեկտեմբերի 2-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով վերոնշյալ համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Շաքարախտով հիվանդացության աճի դեմ պայքարում Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2008 թվականի նոյեմբերի 14-ին Քիշնևում՝ շաքարախտի բարդացման և համալիր բուժման համար օգտագործվող անորակ և կեղծված դեղերի շրջանառությանը հակազդելու, շաքարախտով տառապող քաղաքացիների կյանքի որակը բարելավելու նպատակով:

2. Մոլդովան և Ուկրաինան Համաձայնագիրը ստորագրել են վերապահումներով, իսկ Ռուսաստանի Դաշնությունը՝ հայտարարությամբ:

3. Հայաստանի Հանրապետությունը, փոխադարձության հիման վրա, Համաձայնագրով ստանձնում է մի շարք պարտավորություններ, որոնցից են, մասնավորապես.

- միջոցներ ձեռնարկել շաքարախտի խնդրի վերաբերյալ օրենսդրության կատարելագործման ուղղությամբ՝ հաշվի առնելով Անկախ պետությունների համագործակցության շրջանակներում առողջապահության բնագավառում ընդունված համաձայնագրերն ու որոշումները, և մշակվեն ու հաստատվեն շաքարախտի և դրա բարդությունների կանխարգելման բնագավառում երկարատև համալիր ազգային ծրագրեր (Հոդված 1),

- անհետաձգելի բուժօգնություն ցուցաբերել Անկախ պետությունների համագործակցության անդամ պետությունների շաքարախտով տառապող քաղաքացիներին՝ առանց ծախսերի փոխադարձ հատուցման (Հոդված 2),

- ապահովել շաքարախտի կանխարգելման և վաղ հայտնաբերման միջոցառումների իրականացումը (Հոդված 3),

- համագործակցել շաքարախտի և դրա բարդությունների բուժման նոր մեթոդների մշակման ու ներդրման, շաքարախտի կանխարգելման, շաքարախտով տառապող քաղաքացիների սոցիալական և բժշկական վերականգնման բնագավառներում (Հոդված 4),
- գիտակցելով շաքարախտով տառապող քաղաքացիների կյանքի որակի բարելավման համար բժշկահոգեբանական օգնության կարևորությունը, ազգային ու միջպետական ծրագրերի շրջանակներում նպաստել շաքարախտով հիվանդացության հոգեբանական կողմերի հետազոտության նախագծերի իրագործմանը (Հոդված 5),
- նպաստել շաքարախտով տառապող հիվանդների ասոցիացիաների, բժշկական հասարակական կազմակերպությունների, կառավարական կառույցների և դեղագործական արտադրությունների ջանքերի միասնականացմանը շաքարախտով հիվանդացության դեմ պայքարում (Հոդված 6),
- նպաստել շաքարախտի խնդիրներով զբաղվող կազմակերպությունների շփումների զարգացմանը (Հոդված 7),
- Համաձայնագրի ուժի մեջ մտնելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, դրա իրականացումն ապահովելու նպատակով մշակել և հաստատել շաքարախտի կանխարգելման և բուժման բնագավառում Անկախ պետությունների համագործակցության անդամ պետությունների միջև համագործակցության երկարաժամկետ ծրագիր (Հոդված 8),
- հաշվի առնելով նաև «Միր» միջպետական հեռուստառադիոընկերության հնարավորությունները, ապահովել բնակչությանը շաքարախտի և դրա բարդությունների կանխարգելման անհրաժեշտ միջոցառումների, բուժման ու վերականգնման ժամանակակից մեթոդների մասին տեղեկության պարբերաբար տրամադրումը, նպաստել միջպետական թեմատիկ ցուցահանդեսների, գիտաժողովների և սեմինարների անցկացմանը (Հոդված 9),
- ապահովել, որ Համաձայնագիրն իրականացնեն առողջապահության ոլորտի գործադիր իշխանության համապատասխան մարմինները՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված իրավասությունների շրջանակներում (Հոդված 10):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2008 թվականի նոյեմբերի 14-ին ստորագրված՝ «Շաքարախտով հիվանդացության աճի դեմ պայքարում Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների համագործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

21 հունվարի 2020 թվականի
ՍԴՈ-1502



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2018 թվապահի նոյեմբերի 2-ին ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
«ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ՎԹԱՐԻ ԿԱՄ ՃԱՌԱԳԱՅԹԱՅԻՆ ՎԹԱՐԱՅԻՆ
ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ԴԵՊՔՈՒՄ ԴՐԱՆՑ
ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ ՓՈԽՕԳՆՈՒԹՅԱՆ
ՊԱՏՐԱՍՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ՝ ԱՊՀ ՄԱՍՆԱԿԻՑ
ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»
ՀԱՄԱՋԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

21 հունվարի 2020թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ա. Դիլանյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի (զեկուցող), մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Ս. Պապիկյանի, համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22, 23 և 74-րդ հոդվածների, դրնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2018 թվականի նոյեմբերի 2-ին ստորագրված՝ «Միջուկային վթարի կամ ճառա-

գայթապին վթարային իրավիճակների առաջացման դեպքում դրանց հետևանքների վերացման փոխօգնության պատրաստականության ապահովման՝ ԱՊՀ մասնակից պետությունների փոխգործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2019 թվականի դեկտեմբերի 12-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Միջուկային վթարի կամ ճառագայթային վթարային իրավիճակների առաջացման դեպքում դրանց հետևանքների վերացման փոխօգնության պատրաստականության ապահովման՝ ԱՊՀ մասնակից պետությունների փոխգործակցության մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2018 թվականի նոյեմբերի 2-ին Աստանայում:

2. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները՝

- համագործակցել Համաձայնագրի կողմերի (Կողմեր) հետ՝ համաձայն Համաձայնագրի և այլ միջազգային պայմանագրերի դրույթների, որոնց մասնակից է Հայաստանի Հանրապետությունը, միջուկային վթարների կամ ճառագայթային վթարային իրավիճակների դեպքում օգնության անհապաղ տրամադրման հարցում աջակցության, վթարների հետևանքները նվազագույնի հասցնելու և բնակչության առողջության, գույքի և շրջակա միջավայրի վրա ռադիոակտիվ արտանետումներից և իոնիզացնող ճառագայթման ազդեցության պաշտպանության նպատակներով,

- ապահովել, որ Հայաստանի Հանրապետության լիազոր (իրավասու) մարմինը Կողմերի լիազոր (իրավասու) մարմինների հետ Ատոմային էներգիայի միջազգային գործակալության առաջարկությունների հիման վրա համատեղ մշակի իրազեկման միասնական ձևերը, որոշի փոխանցվող տեղեկատվության բովանդակությունը, նույնական կապի կետերը և իրազեկման սարքավորումները, հա-

մագործակցի ատոմային էներգիայի օգտագործման միջուկային և ճառագայթային վտանգավոր օբյեկտների մշտադիտարկման միջպետական համակարգի ստեղծման գործընթացում,

- օգնությունը տրամադրել գրավոր դիմումի հիման վրա, որով հայցող Կողմը տեղեկացնում է միջուկային վթարի կամ ճառագայթային վթարային իրավիճակի և, հնարավորության դեպքում, դրա վտանգավորության աստիճանի գնահատականի վերաբերյալ նշելով օգնության անհրաժեշտ ձևը և ծավալը,

- որպես տրամադրող Կողմ՝ անհապաղ ուսումնասիրել հայցող Կողմի դիմումը և, իր հերթին, տեղեկացնել վերջինիս օգնության տրամադրման հնարավորության, ծավալի և պայմանների, այդ թվում՝ ֆինանսական, ինչպես նաև օգնության ցուցաբերման խմբերի ղեկավարների նշանակումների վերաբերյալ և ձեռք բերել համապատասխան համաձայնեցումներ հայցող Կողմի հետ,

- միջուկային վթարի կամ ճառագայթային վթարային իրավիճակի հետևանքների վերացման համար օգնությունը տրամադրել Հայաստանի Հանրապետության լիազոր (իրավասու) մարմնի կողմից օգնության ցուցաբերման խմբերի ուղարկման կամ հատուկ տեխնիկայի, սարքավորումների, հանդերձանքի, գործիքների և նյութերի տրամադրման միջոցով,

- որպես հայցող Կողմ, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, տրամադրող Կողմի օգնության ցուցաբերման խմբին ապահովել առաջնահերթ մուտքի թույլտվություն Հայաստանի Հանրապետության տարածք,

- երաշխավորել, որ որպես հայցող Կողմ Հայաստանի Հանրապետության տարածք ժամանակավորապես ներկրված հատուկ տեխնիկան, սարքավորումները, հանդերձանքը, գործիքները և նյութերն օգնության ցուցաբերման աշխատանքների ավարտից և ապակտիվացումից հետո ենթակա լինեն վերադարձման օգնություն տրամադրող պետության տարածք Կողմերի միջև համաձայնեցված կարգով,

- որպես հայցող Կողմ հանդես գալու պարագայում՝ կրել Միջուկային վթարի կամ ճառագայթային վթարային իրավիճակների հետևանքների վերացման ընթացքում առաջացած ռադիոակտիվ թափոնների անվտանգ կառավարման պատասխանատվությունը,

- միջուկային վթարի կամ ճառագայթային վթարային իրավիճակների հետևանքների վերացման համար Համաձայնագրի մասնակից պետությունների անցակետերով տրանսպորտային միջոցների, հատուկ տեխնիկայի, սարքավորումների, հանդերձանքի, գործիք-

ների և նյութերի տեղաշարժի հսկողության եղանակների ու միասնական իրականացման նպատակով նպաստել անցակետերում վերահսկման տեխնիկական միջոցների միավորմանը և պետությունների միջուկային վթարի կամ ճառագայթային վթարային իրավիճակների կարգավորման վերաբերյալ օրենքի ներդաշնակեցմանը,

- որպես հայցող Կողմ՝ տրամադրող Կողմի՝ Համաձայնագրի ներքո իրականացրած գործողությունների շրջանակներում փոխհատուցել Հայաստանի Հանրապետության տարածքում օգնության ցուցաբերման հետ կապված տրամադրող Կողմի բոլոր ծախսերը՝ տրամադրող Կողմի կողմից եռամսյա ժամկետում փոխհատուցման տրամադրման խնդրանքի ներկայացման դեպքում, եթե Կողմերի լիազորված (իրավասու) մարմիններն այլ բան չեն պայմանավորվել,

- որպես հայցող Կողմ՝ տրամադրող Կողմի՝ Համաձայնագրի ներքո իրականացրած գործողությունների շրջանակներում օգնության տրամադրման խմբերին օգնության տրամադրման իրականացման շրջանակներում տրամադրել անձեռնմխելիություն ձեռքակալումից, կալանավորումից և դատական գործընթացներից, ինչպես նաև, Հայաստանի Հանրապետության օրենսդրության և միջազգային պարտավորությունների համաձայն, ազատել հատուկ տեխնիկայի, սարքավորումների, հանդերձանքի, գործիքների, նյութերի և դեղորայքի ներկրման հարկերից, տուրքերից և մաքսային վճարներից բացառությամբ ապրանքի կամ ծառայությունների արժեքում ներառվածներից,

- որպես տրամադրող Կողմ՝ օգնություն ցուցաբերող խմբի փոխադրումը հայցող Կողմի պետության տարածք իրականացնել Հայաստանի Հանրապետության բյուջեով նախատեսված ֆինանսական միջոցների հաշվին:

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 13-րդ հոդվածի դրույթներին և, ի թիվս այլնի, նպատակ ունեն ամրապնդելու միջուկային վթարների կանխարգելման և դրանց հետևանքների նվազեցմանն ուղղված արդեն իսկ ձեռնարկվող բազմակողմանի միջոցառումները:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2018 թվականի նոյեմբերի 2-ին ստորագրված՝ «Միջուկային վթարի կամ ճառագայթային վթարային իրավիճակների առաջացման դեպքում դրանց հետևանքների վերացման փոխօգնության պատրաստականության ապահովման ԱՊՀ մասնակից պետությունների փոխգործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

21 հունվարի 2020 թվականի
ՍԴՈ-1503



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 7-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3-ՐԴ ՄԱՍԻ, 8-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 3 ԵՎ 4-ՐԴ ՄԱՍԵՐԻ, 17-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ, 19.3-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 4-ՐԴ ԿԵՏԻ, «ՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 10-ՐԴ ՄԱՍԻ, 9-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԵՎ 2-ՐԴ ՄԱՍԵՐԻ, 15 ԵՎ 16-ՐԴ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ, 19-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2, 3 ԵՎ 4-ՐԴ ՄԱՍԵՐԻ, 22-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ, ՆՈՒՅՆ ՕՐԵՆՔԻ ՀԱՎԵԼՎԱԾԻ 6-ՐԴ ԲԱԺՆԻ 4-ՐԴ ԿԵՏԻ 2-ՐԴ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ «ԵՐԵՒԱՅԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 32-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 2-ՐԴ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

30 հունվարի 2020 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Դիլանյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի Ա. Խաչատրյանի (զեկուցող), Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմողի՝ Մարդու իրավունքների պաշտպան Ա. Թաթոյանի,

1(97)/2020
◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ Ազգային ժողովի պաշտոնական ներկայացուցիչ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի պետ Կ. Սովսիայանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի և 68-րդ հոդվածի,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Մարդու իրավունքների պաշտպանի դիմումի հիման վրա՝ «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասի, 8-րդ հոդվածի 3 և 4-րդ մասերի, 17-րդ հոդվածի 2-րդ մասի, 19.3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, «Հոգեբուժական օգնության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 10-րդ մասի, 9-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 15 և 16-րդ հոդվածների, 19-րդ հոդվածի 2, 3 և 4-րդ մասերի, 22-րդ հոդվածի 1-ին մասի, նույն օրենքի հավելվածի 6-րդ բաժնի 4-րդ կետի 2-րդ պարբերության և «Երեխայի իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության թիվ ՀՕ-42 օրենքն Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1996 թվականի մարտի 4-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 1996 թվականի ապրիլի 4-ին և ուժի մեջ է մտել 1996 թվականի մայիսի 16-ին:

Օրենքի վիճարկվող նորմերի բովանդակությունը հետևյալն է.

«Հոդված 7. Առողջական վիճակի մասին տեղեկություն ստանալու մարդու իրավունքը

(...)

18 տարին չլրացած կամ օրենքով սահմանված կարգով անգործունակ ճանաչված պացիենտների առողջական վիճակի մասին տեղեկությունները տրվում են նրանց օրինական ներկայացուցիչներին»:

«Հոդված 8. Համաձայնություն բժշկական միջամտության համար

(...)

18 տարին չլրացած կամ օրենքով սահմանված կարգով անգործունակ ճանաչված պացիենտին, ինչպես նաև այն դեպքերում, երբ պացիենտի վիճակը թույլ չի տալիս արտահայտել իր կամքը, բժշկական միջամտության համար համաձայնությունը տրվում է նրա օրինական ներկայացուցչի կողմից:

Օրինական ներկայացուցչի բացակայության դեպքում, եթե բժշկական միջամտությունը հետաձգման ենթակա չէ, բժշկական միջամտության վերաբերյալ որոշումը, ելնելով պացիենտի շահերից, կայացվում է բժշկական խորհրդակցության (կոնսիլիումի), իսկ դրա անհնարինության դեպքում՝ բժշկի կողմից»:

«Հոդված 17. Բժշկական միջամտությունից հրաժարվելը

(...)

Բժշկական միջամտությունից հրաժարվելու փաստը՝ հնարավոր հետևանքների նշումով, գրանցվում է բժշկական փաստաթղթերում և հավաստվում պացիենտի կամ նրա օրինական ներկայացուցչի կողմից»:

«Հոդված 19.3. Բուժաշխատողների պարտականությունները

1. Բուժաշխատողները պարտավոր են՝

(...)

4) պացիենտին և (կամ) նրա օրինական ներկայացուցչին տեղյակ պահել իր առողջությանը վերաբերող հետազոտությունների արդյունքների, հիվանդության ախտորոշման և բուժման մեթոդների, դրանց հետ կապված ռիսկերի, բժշկական միջամտության հնարավոր տարբերակների, հետևանքների ու բուժման արդյունքների մասին.

(...):»:

«Հոգեբուժական օգնության մասին» Հայաստանի Հանրապետության թիվ ՀՕ-80-Ն օրենքն Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2004 թվականի մայիսի 25-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել 2004 թվականի հունիսի 19-ին և ուժի մեջ է մտել 2004 թվականի օգոստոսի 30-ին:

Օրենքի վիճարկվող նորմերի բովանդակությունը հետևյալն է.

«Հոդված 6. Հոգեկան խանգարումներով տառապող անձանց իրավունքները

(...)

10. Բուժման, հետազոտման, դուրսգրման հարցերով հոգեբուժական կազմակերպությանը դիմելու, ինչպես նաև սույն հոդվածի 3-րդ մասի 12-13-րդ և 18-րդ կետերով նախատեսված իրավունքներն իրականացնում է հոգեկան խանգարումներ ունեցող երեխայի օրինական ներկայացուցիչը»:

«Հոդված 9. Արտահիվանդանոցային և դիսպանսերային հոգեբուժական օգնություն

1. Բժշկական ցուցումներից ելնելով՝ հոգեբուժական կազմակերպությունները հոգեկան խանգարումով տառապող անձի նկատմամբ արտահիվանդանոցային ձևով իրականացնում են բժշկական խորհրդատվություն կամ փորձաքննություն կամ ախտորոշում կամ բուժում՝ անձի կամ նրա օրինական ներկայացուցչի դիմելու դեպքում:

2. Տևական (քրոնիկ) հոգեկան խանգարումներով տառապող անձի նկատմամբ, իր կամ իր օրինական ներկայացուցչի դիմումի համաձայն, իրականացվում է դիսպանսերային արտահիվանդանոցային հոգեբուժական օգնություն, որը ներառում է հաշվառում և շարունակական հսկողություն ու բուժում կամ սոցիալական վերականգնում կամ հոգեբուժական փորձաքննություն:

(...)»:

«Հոդված 15. Բուժում իրականացնելու համար համաձայնությունը

1. Հոգեկան խանգարումով տառապող անձի բուժումը կատարվում է նրա կամ նրա օրինական ներկայացուցչի գրավոր դիմումի հիման վրա, բացառությամբ սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերի:

2. Բժիշկը պարտավոր է հոգեկան խանգարումով տառապող անձին կամ նրա օրինական ներկայացուցչին տեղեկություններ տրամադրել հոգեկան խանգարման բնույթի, առաջարկվող բուժման նպատակի, մեթոդաբանության, տևողության, ինչպես նաև կողմնակի ազդեցության և ակնկալվող արդյունքների մասին: Դրանց վերաբերյալ բժշկական փաստաթղթերում (ամբուլատոր քարտում կամ հիվանդության պատմության նկարագրում) կատարվում է գրանցում:

3. Հոգեկան խանգարումով տառապող անձի բուժումը կարող է իրականացվել առանց նրա կամ նրա օրինական ներկայացուցչի համաձայնության՝ միայն օրենքով նախատեսված բժշկական բնույթի հարկադրական միջոցների կիրառման և ոչ հոժարակամ հոսպիտալացման դեպքերում»:

«Հոդված 16. Բուժումից հրաժարվելը

1. Հոգեկան խանգարումով տառապող անձը կամ նրա օրինական ներկայացուցիչն իրավունք ունի հրաժարվելու առաջարկված բուժօգնությունից կամ դադարեցնելու այն, բացառությամբ սույն օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ մասում նշված դեպքերի:

2. Բուժումից հրաժարվող անձին կամ նրա օրինական ներկայացուցչին պետք է բացատրվեն բուժման դադարեցման հետ կապված հնարավոր հետևանքները:

3. Բուժօգնություն ստանալուց հրաժարվելու և բուժման դադարեցման հետ կապված հնարավոր հետևանքների մասին տեղյակ պահելու փաստը արձանագրվում է բժշկական փաստաթղթերում՝ բուժօգնությունից հրաժարվող անձի կամ նրա օրինական ներկայացուցչի և հոգեբույժի ստորագրությամբ»:

«Հոդված 19. Հոգեբուժական հետազոտումը

(...)

2. Հոգեբուժական հետազոտում իրականացնող բժիշկը պարտավոր է հետազոտվողին կամ նրա օրինական ներկայացուցչին ներկայանալ որպես հոգեբույժ և հայտնել կատարվող հետազոտության բնույթի ու հետևանքների մասին:

3. Հոգեբուժական հետազոտումն իրականացվում է հետազոտվողի կամ նրա օրինական ներկայացուցչի համաձայնությամբ՝ հիվանդի վիճակի և հետազոտման բնույթի վերաբերյալ վերջիններիս լիարժեք տեղեկություն տալուց հետո:

4. Հոգեբուժական հետազոտումը կարող է իրականացվել առանց հետազոտվողի կամ նրա օրինական ներկայացուցչի համաձայնության միայն այն դեպքերում, երբ հետազոտվողը, հոգեկան վիճակից ելնելով, անկարող է արտահայտել իր ազատ կամքը և չունի օրինական ներկայացուցիչ»:

«Հոդված 22. Ոչ հոժարական հոսպիտալացման կարգը

1. Հոգեկան խանգարումներով տառապող անձն առանց իր կամ օրինական ներկայացուցչի համաձայնության կարող է հոսպիտալացվել հոգեբուժական հանձնաժողովի կողմից պարտադիր հետազոտվելուց հետո, եթե՝

1) նա վտանգ է ներկայացնում իր կամ այլ անձանց համար, կամ

2) բուժում չիրականացնելը կամ բուժումը դադարեցնելը կարող է վատթարացնել հիվանդի առողջական վիճակը:

(...)»:

Հավելված

«VI. ՀՈԳԵԲՈՒԺԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՀՈԳԵԿԱՆ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐՈՎ ՏԱՌԱՊՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԻՐԱԶԵԿՈՒՄԸ

4. (...)

Նշվածի վերաբերյալ բուժող բժիշկը կամ ընդունարանի բժիշկը կամ բաժանմունքի վարիչը գրառում է կատարում հոգեկան խանգարմամբ տառապող անձի բժշկական քարտում՝ նրա կամ նրա օրինական ներկայացուցչից (եթե անձն անգործունակ կամ սահմանափակ գործունակ է ճանաչված, կամ եթե անձն անչափահաս է) վերցնելով ստորագրություն»:

«Երեխայի իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության թիվ ԶՕ-59 օրենքն Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1996 թվականի մայիսի 29-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 1996 թվականի մայիսի 31-ին և ուժի մեջ է մտել 1996 թվականի հունիսի 27-ին:

Օրենքի վիճարկվող նորմի բովանդակությունը հետևյալն է.

«Հոդված 32. Երեխայի իրավունքների պաշտպանությունը հատուկ դաստիարակչական կամ հոգեբուժական հաստատություններում

(...)

Երեխան առանց օրինական ներկայացուցչի համաձայնության հոգեբուժական հաստատություն կարող է հոսպիտալացվել միայն դատարանի վճռով՝ օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

(...)»:

Գործի քննության առիթը Մարդու իրավունքների պաշտպանի՝ 2019 թվականի մայիսի 30-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը, պատասխանող կողմի գրավոր բացատրությունը, վերլուծելով սույն գործին առնչվող օրենքները, ինչպես նաև գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Դիմողի դիրքորոշումները

Դիմողը գտնում է, որ վիճարկվող կարգավորումների անկատարությունը վտանգում է անձնային առանձնահատկություններով պայմանավորված իրավունքների իրացման սահմանափակ հնարավորություններ ունեցող անգործունակ անձանց և երեխաների սահմանադրական մի շարք հիմնարար իրավունքներ:

Ըստ դիմողի՝ անգործունակ չափահաս անձանց կարծիքը նրանց նկատմամբ բժշկական միջամտություններին կամ բուժմանն առնչվող հարցերում հաշվի չառնելու մասով խնդրո առարկա օրենսդրա-

կան դրույթները փաստորեն նախատեսում են հնարավորություն առանց անձի համաձայնությունն ստանալու, նրա օրինական ներկայացուցչի դիմումի հիման վրա անձին ենթարկել բժշկական միջամտության, տրամադրել բժշկական օգնություն և սպասարկում, կազմակերպել և իրականացնել հոգեկան առողջության խնդիր ունեցող անձի բուժումը, արտահիվանդանոցային ձևով բժշկական խորհրդատվությունը, փորձաքննությունը, ախտորոշումը և բուժումը, ինչպես նաև դիսպանսերային արտահիվանդանոցային հոգեբուժական օգնությունը և հոգեբուժական հետազոտումը: Այսինքն, անձի՝ բժշկական միջամտության վերաբերյալ համաձայնության պայմանը բավարարվում է օրինական ներկայացուցչի համաձայնության ուժով՝ առանց այն անձի իրական, գիտակցված կամահայտնության, որի նկատմամբ իրականացվելու է բժշկական միջամտությունը:

Դիմողը նաև նշում է, որ տարանջատում նախատեսված չէ, թե որ դեպքերում է բուժումը կատարվում հոգեկան խանգարումով տառապող անձի և որ դեպքերում նրա օրինական ներկայացուցչի գրավոր համաձայնությամբ:

Ի լրումն վերոգրյալի դիմողը նաև նշում է, որ անգամ օրենսդրական սկզբունքի մակարդակում ամրագրված չէ անգործունակ ճանաչված անձի՝ որպես բժշկական միջամտության ազդեցությունն անմիջականորեն կրող պացիենտի համաձայնությունն ստանալու նախապատվելիությունը. վերջինիս հասկացողությանը և որոշումներ կայացնելու ունակությանը համապատասխան բժշկական գործընթացին մասնակից դարձնելու որևէ կառուցակարգ առկա չէ, մինչդեռ, ըստ դիմողի՝ անձի անգործունակության փաստի ուժով օրինական ներկայացուցչի համաձայնության՝ որպես անձի միջնորդավորված կամահայտնության օրենսդրական ամրագրումը հնարավորություն է տալիս շրջանցելու պացիենտի իրավունքներն անձամբ իրացնելու և վերջինիս համաձայնությունը կամ անհամաձայնությունն անձամբ հայտնելու պահանջը:

Դիմողի կարծիքով՝ վիճարկվող կարգավորումներն անձին հոգեբուժական կազմակերպություն ոչ հոժարակամ հոսպիտալացնելու առումով չեն ապահովում Սահմանադրության 25-29-րդ հոդվածներով և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիայի 3-րդ և 5-րդ հոդվածներով երաշխավորված իրավունքները:

Դիմողը գտնում է, որ պացիենտների առողջական վիճակի մասին կամ բժշկական այլ տեղեկություններն անգործունակ պացիենտի

օրինական ներկայացուցչին ներկայացնելուց զատ խնդրահարույց է, որ գործող կարգավորումների համաձայն՝ բժշկական միջամտությունից հրաժարվելու փաստը՝ հնարավոր հետևանքների նշումով, գրանցվում է բժշկական փաստաթղթերում և հավաստվում պացիենտի կամ նրա օրինական ներկայացուցչի կողմից, ինչպես նաև հոգեկան խանգարումներով տառապող անձին իր իրավունքները բացատրելու վերաբերյալ բուժող բժիշկը կամ ընդունարանի բժիշկը կամ բաժանմունքի վարիչը գրառում է կատարում հոգեկան խանգարմամբ տառապող անձի բժշկական քարտում՝ նրա կամ նրա օրինական ներկայացուցչից (եթե անձն անգործունակ կամ սահմանափակ գործունակ է ճանաչված, կամ եթե անձն անչափահաս է) վերցնելով ստորագրություն:

Ըստ դիմողի՝ ստացվում է, որ եթե անձն անգործունակ կամ սահմանափակ գործունակ է ճանաչված, նրա փոխարեն վերջինիս առողջական վիճակին, ինչպես նաև իրավունքներին ծանոթանում է նրա օրինական ներկայացուցիչը, այսինքն՝ պացիենտի իրազեկված համաձայնության համար անհրաժեշտ առաջին բաղադրիչը տեղեկացված լինելը, արդեն իսկ շրջանցվում է օրենքի ուժով, ինչի արդյունքում՝ վերոնշյալ բոլոր դեպքերում հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց կարծիքը նրանց վերաբերյալ որոշումներ կայացնելիս հաշվի չի առնվում:

Ըստ դիմողի՝ չափահաս անգործունակ անձի նկատմամբ պաշտպանության միջոց կարող է սահմանվել միայն նրա լիարժեք և կամավոր համաձայնությամբ: Այն դեպքերում, երբ պաշտպանության միջոցի սահմանումն անհրաժեշտ է, այն պետք է համարժեք լինի անձի անգործունակության աստիճանին և հարմարեցված լինի անձի անհատական հանգամանքներին և կարիքներին, պետք է հնարավորինս պարզել անձի նախկին և ներկա ցանկություններն ու զգացողությունները, որոնք պետք է հաշվի առնվեն և հարգանքի արժանանան:

Ամփոփելով վերոգրյալը՝ դիմողը գտնում է, որ վիճարկվող կարգավորումները

- անձին հոգեբուժական կազմակերպություն ոչ հոժարակամ հոսպիտալացման առումով չեն ապահովում Սահմանադրության 27-րդ հոդվածով երաշխավորված անձնական ազատության իրավունքը,

- վիճահարույց են Սահմանադրության 78-րդ հոդվածով սահմանված՝ համաչափության սկզբունքի տեսանկյունից, քանի որ

նշված կարգավորումներում սահմանափակումները համարժեք չեն սահմանափակվող հիմնական իրավունքին և չեն բխում դրա նպատակից,

- խնդրահարույց են Սահմանադրության 80-րդ հոդվածի տեսանկյունից, քանի որ հաշմանդամություն ունեցող անձանց ամբողջությամբ զրկում են իրենց իրավունքների իրականացումից տարբեր պատճառներով, այդ թվում՝ հնարավորություն չտալով մասնակցել իրենց ազատագրկման կամ բժշկական միջամտությունների ու բուժման ընթացքի հետ առնչվող հարցերին առհասարակ,

- խնդրահարույց լինելով երկու տեսանկյունից՝ խախտում են Սահմանադրության 25-րդ հոդվածով սահմանված անձի հոգեկան անձեռնմխելիության իրավունքը, որն անձի հիմնական իրավունքներից է, և որի էությունն անխախտելի է. ավելին, Սահմանադրության 75-րդ հոդվածի համաձայն՝ դրանց իրականացման համար օրենքով պետք է ամրագրվեն այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր,

- խնդրահարույց են Սահմանադրության 81-րդ հոդվածի տեսանկյունից, քանի որ հակասում են մի շարք միջազգային իրավական ակտերի, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումներին:

Անչափահասների կարծիքը նրանց նկատմամբ բժշկական միջամտություններին կամ բուժմանն առնչվող հարցերում հաշվի չառնելու մասով դիմողն արձանագրում է, որ հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անչափահասների առողջության պահպանման իրավունքի իրականացման շրջանակներում «Հոգեբուժական օգնության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը նախատեսում է հնարավորություն՝ առանց անձի համաձայնությունն ստանալու, նրա օրինական ներկայացուցչի դիմումի հիման վրա իրականացնել բուժում, հետազոտում, դուրսգրում, ինչպես նաև տալ համաձայնություն և ցանկացած փուլում հրաժարվել բուժական մեթոդներից և միջոցներից (6-րդ հոդվածի 10-րդ մաս): Գործող կարգավորումների պարագայում նախատեսվում է հնարավորություն՝ առանց 18 տարին չլրացած անձի կարծիքը հաշվի առնելու կամ համաձայնությունն ստանալու, նրա օրինական ներկայացուցչի համաձայնությամբ անձին ենթարկել բժշկական միջամտության: Օրինական ներկայացուցչի համաձայնությունը ձեռք չբերելու կամ նրա տվյալ պահին բացակայության դեպքում կարող է փակուղային իրավիճակ առաջանալ:

Դիմողը փաստում է, որ արդյունքում՝ վերը նշված հիմնարար իրավունքները կարող են իրականացվել երեխայի օրինական ներկայացուցչի կողմից՝ առանց երեխային լսելու և նրա կարծիքը հաշվի առնելու:

Վերլուծելով «Երեխայի իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով ամրագրված դրույթը, ըստ որի՝ երեխան առանց օրինական ներկայացուցչի համաձայնության հոգեբուժական հաստատություն կարող է հոսպիտալացվել միայն դատարանի վճռով՝ օրենքով նախատեսված դեպքերում և կարգով, դիմողը կարծում է, որ անչափահասների բուժման համար պահանջվում է միայն օրինական ներկայացուցչի համաձայնությունը, և անչափահասի հոսպիտալացումը դատական վերահսկողության առարկա չի դառնում՝ անկախ վերջինիս տարիքից, իր կարծիքն արտահայտելու ունակությունից և օրինական ներկայացուցչի՝ անչափահասի շահերից գործելուց, ինչի արդյունքում՝ ստացիոնար հետազոտման և բուժման համար բավարար է միայն անչափահասի օրինական ներկայացուցչի համաձայնությունը:

Բացի դրանից, դիմողը նշում է, որ այստեղ ևս երեխայի լսված լինելու համար անհրաժեշտ կարևորագույն նախապայման հանդիսացող տեղեկություններ ստանալու իրավունքը սահմանափակվում է «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, որի 7-րդ հոդվածի 3-րդ մասում իմպերատիվ կերպով սահմանվում է, որ 18 տարին չլրացած պացիենտների առողջական վիճակի մասին տեղեկությունները տրվում են նրանց օրինական ներկայացուցիչներին, հետևաբար, նախատեսված չէ նշված տեղեկությունները պացիենտներին տրամադրելու հնարավորություն, ինչի հետևանքով հենց խախտվում է երեխայի՝ լսված լինելու սահմանադրական իրավունքը:

Ի լրումն վերոգրյալի՝ դիմողը գտնում է, որ չափահաս անգործունակ անձանց իրավունքները սահմանափակող կարգավորումների հակասահմանադրականության խնդիրը նույն ոչ իրավաչափ տրամաբանությամբ ամրագրվել է նաև անչափահասների դեպքում, մինչդեռ, ըստ դիմողի՝ երեխաների դեպքում պետք է կիրառելի լինեն ոչ միայն անձի իրավունքների ապահովման սահմանադրական և միջազգային իրավական համընդհանուր երաշխիքները, այլև

երեխաներին վերաբերող առանձնահատուկ սկզբունքները՝ երեխայի լավագույն շահի առաջնահերթության, վերջինիս լաված լինելու և զարգացող կարողությունների հաշվառման պահանջները:

Ամփոփելով իր դիրքորոշումները՝ դիմողը փաստում է, որ վիճարկվող օրենսդրական կարգավորումներն անչափահասների մասով հակասում են ոչ միայն յուրաքանչյուրի համար երաշխավորված սահմանադրական իրավունքներին, այլև Սահմանադրության 37-րդ հոդվածին, համաձայն որի՝ երեխան իրավունք ունի ազատ արտահայտելու իր կարծիքը, որը, երեխայի տարիքին և հասունության մակարդակին համապատասխան, հաշվի է առնվում իրեն վերաբերող հարցերում: Երեխային վերաբերող հարցերում երեխայի շահերը պետք է առաջնահերթ ուշադրության արժանանան:

2. Պատասխանողի դիրքորոշումները

Պատասխանողը գտնում է, որ սույն սահմանադրաիրավական վեճը պետք է դիտարկել ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքի, անձնական ազատության, անձնական տվյալների պաշտպանության, երեխայի իրավունքների, համաչափության և որոշակիության սկզբունքների վերաբերյալ սահմանադրաիրավական պահանջների համատեքստում:

Ըստ պատասխանողի՝ օրենսդիրը, սահմանելով վիճարկվող կանոնակարգումները, նախևառաջ հիմք է ընդունել մարդու անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքը, որտեղ որպես իրավական հենք է ընդունել այն կարևորագույն իրավական բաղադրիչը, որ անձնական ազատության և անձեռնմխելիության իրավունքը մարդու ֆիզիկական ազատությունն է՝ մարդու ծննդյան պահից ունեցած բնական իրավունքը, առավել ընդգրկուն իմաստով՝ մարդու ֆիզիկական և բարոյահոգևոր անձեռնմխելիությունը:

Պատասխանողի կարծիքով՝ օրենսդիրը, սահմանելով անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձի (նաև երեխայի) առողջական վիճակի փոխարեն նրա օրինական ներկայացուցչի կողմից իրականացվող համապատասխան լիազորությունների շրջանակները, մասնավորապես, ամրագրել է հոգեկան առողջության հետ կապված խնդիրներ ունեցող անձանց (նաև երեխայի) ներկայացուցիչների կողմից բացառապես այդ անձի շահերով և իրավունքների առաջնահերթությամբ առաջնորդվելու սկզբունքը:

Պատասխանողը փաստում է, որ օրենսդիրը հստակ սահմանել է, որ երեխան առանց օրինական ներկայացուցչի համաձայնության հոգեբուժական հաստատություն կարող է հոսպիտալացվել միայն դատարանի վճռով՝ օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

Հետևաբար, վիճարկվող իրավադրույթները, պատասխանողի համոզմամբ, համահունչ են թե՛ իրավական ակտի որոշակիության, թե՛ համաչափության և կանխատեսելիության իրավական բաղադրատարրերին:

Համեմատելով Սահմանադրական դատարանի ՍԴՈ-827 և ՍԴՈ-913 որոշումներում արտահայտված իրավական դիրքորոշումները՝ պատասխանողն ակնհայտ է համարում, որ անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված անձի նկատմամբ (նրա ներկայացուցչի համաձայնությամբ) բուժման նպատակով կիրառելով սահմանափակում, սահմանադիրը, միևնույն ժամանակ, դրանում արտացոլված նպատակներով ու հիմքերով անձին ազատությունից զրկելու ձևերի ընտրությունը վերապահել է օրենսդրի հայեցողությանը՝ որևէ կերպ չկանխորոշելով, թե յուրաքանչյուր կոնկրետ դեպքում կամ կոնկրետ նպատակին հասնելու համար ինչ ընթացակարգային միջոցներ կիրառել:

Հետևաբար, պատասխանողի համոզմամբ սույն սահմանադրաիրավական վեճի առարկա իրավադրույթները համահունչ են և բխում են ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության, անձնական ազատության, երեխայի իրավունքների, համաչափության և որոշակիության սկզբունքների վերաբերյալ սահմանադրաիրավական պահանջներից:

3. Հայաստանի Հանրապետության կառավարության դիրքորոշումները

Անդրադառնալով վիճարկվող իրավակարգավորումների վերլուծությանը՝ Կառավարությունը փաստել է. «... դիմումում բարձրացված խնդիրներն ընդունելի են ՀՀ կառավարության համար: Մասնավորապես հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անչափահաս կամ անգործունակ անձանց իրենց առողջական վիճակի մասին տեղեկատվություն ստանալու կամ բժշկական միջամտությունների համար համաձայնություն տալու կամ դրանցից հրաժարվելու իրավունքների իրականացմանը մասնակցությունը չպետք է պայմանավորել նրանց կարգավիճակով, սակայն նրանց կարգավիճակի առանձնահատկություններից ելնելով, անհրաժեշտ է սահմանել հստակ կարգավորումներ»:

Միաժամանակ, Կառավարության բացատրության մեջ նշվել է. «... Առողջապահության նախարարության կողմից ներկայումս շրջանառվում է «Հոգեբուժական օգնության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծը և քննարկվում է նշված նախագծում անգործունակ և անչափահաս անձանց կարծիքի հաշվառմամբ նրանց օրինական ներկայացուցչի համաձայնությամբ հոգեբուժական կազմակերպությունում հոսպիտալացման և բուժման դեպքում՝ դատական վերահսկողության մեխանիզմներ սահմանելու հարցը»:

Բացատրության եզրահանգման մեջ Կառավարությունն արձանագրել է. «... «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագծում արդեն իսկ նախատեսվել է 16 տարին լրացած երեխայի կողմից իրազեկված համաձայնություն տալու իրավունքը՝ որոշակի պայմանների առկայության դեպքում»:

4. Գործի շրջանակներում պարզելու ենթակա հանգամանքները

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ սույն գործով վիճարկվող նորմերն անմիջականորեն առնչվում են Սահմանադրության 25 և 37-րդ հոդվածներում ամրագրված հիմնական իրավունքներին՝ անձի ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքի սահմանափակման իրավաչափությանը, երեխայի՝ իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունքի պատշաճ իրականացմանը:

Այս կապակցությամբ սույն գործի շրջանակներում Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում վիճարկվող նորմերի սահմանադրականությունը գնահատելիս, մասնավորապես, պարզել հետևյալ հարցը.

արդյոք ք վիճարկվող իրավակարգավորումները Սահմանադրության 25 և 37-րդ հոդվածների տեսանկյունից երաշխավորում են անձի ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության և երեխայի՝ իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունքը:

4.1. Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասին, 8-րդ հոդվածի 3 և 4-րդ մասերին, 17-րդ հոդվածի 2-րդ մասին, 19.3-

րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետին, «Հոգեբուժական օգնության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 10-րդ մասին, 9-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, 15 և 16-րդ հոդվածներին, 19-րդ հոդվածի 2, 3 և 4-րդ մասերին, 22-րդ հոդվածի 1-ին մասին, նույն օրենքի հավելվածի 6-րդ բաժնի 4-րդ կետի 2-րդ պարբերությանը և «Երեխայի իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասին անդրադառնալ Սահմանադրության 25-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերով և 37-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված իրավակարգավորումների բովանդակային վերլուծության շրջանակներում՝ ելնելով անձի՝ իր համաձայնությամբ բժշկական միջամտության ենթարկվելու և առողջական վիճակի մասին տեղեկություն ստանալու իրավունքների իրացման, անչափահասների ու անգործունակ ճանաչված անձանց՝ իրենց նկատմամբ իրականացվող բժշկական միջամտություններին պատշաճ մասնակցությունը և իրազեկված համաձայնությունն ապահովելու պահանջների պահպանման, ինչպես նաև հոգեկան խանգարում ունեցող երեխայի իրավունքները պատշաճ ձևով երաշխավորելու պահանջի ընդհանուր տրամաբանությունից՝ պայմանով, որ երեխայի տարիքը և հասունության մակարդակն ու հոգեկան խանգարման բնույթը, ինչպես նաև անգործունակ ճանաչված անձի հոգեկան խանգարման բնույթը թույլ են տալիս, որ վերջիններս արտահայտեն իրենց կամքը և գիտակցեն իրենց նկատմամբ կատարվող բժշկական միջամտության բնույթն ու հետևանքները:

Սահմանադրության 25-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ «1. Յուրաքանչյուր ոք ունի ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունք: 2. Ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով պետական անվտանգության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով»:

Այսպիսով՝ նշված իրավունքին որևէ միջամտություն կարող է տեղի ունենալ բացառապես Սահմանադրության 25-րդ հոդվածի 2-րդ մասում նախատեսված հիմքերով՝ պահպանելով նման միջամտության համաչափության պահանջը: Մնացած բոլոր դեպքերում բժշկական միջամտությունը կարող է տեղի ունենալ բացառապես նման միջամտության ենթարկվող անձի համաձայնությամբ:

Ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքին բժշկական միջամտությունը բացառապես նման միջամտության ենթարկվող անձի համաձայնությամբ իրականացնելու սահմանադրական պահանջը վերաբերում է այն դեպքերին, երբ անձը գիտակցում է իր հոգեկան առողջության վիճակը, հստակ հասկանում և կանխատեսում է իր հոգեկան առողջությանը բժշկական միջամտության կամ դրա բացակայության հնարավոր հետևանքները:

Այլ է իրավիճակը, երբ անձը հոգեկան առողջության հետ կապված որոշակի խնդիրների պատճառով ամբողջությամբ կամ որոշակիորեն ունակ չէ գիտակցել իր հոգեկան առողջության վիճակը, հստակ հասկանալ և կանխատեսել իր հոգեկան անձեռնմխելիությանը բժշկական միջամտության կամ դրա բացակայության հնարավոր հետևանքները: Նման իրավիճակներում անձը չի կարող լիարժեքորեն ինքնուրույն իրականացնել իր հիմնական իրավունքները, և նրա փոխարեն այդ իրավունքներն իրականացնում է օրինական ներկայացուցիչը: Սակայն օրինական ներկայացուցիչ կողմից հոգեկան առողջության հետ կապված խնդիրներ ունեցող անձի փոխարեն նրա իրավունքներն ամբողջությամբ իրականացնելը չի կարող արդարացված դիտարկվել բոլոր այն դեպքերում, երբ անձն ամբողջությամբ զրկված չէ իր հոգեկան առողջության վիճակը գիտակցելու, իր հոգեկան առողջությանը բժշկական միջամտության կամ դրա բացակայության հնարավոր հետևանքները հստակ հասկանալու և կանխատեսելու ունակությունից:

Այսինքն՝ հոգեկան անձեռնմխելիությանը բժշկական միջամտության անհրաժեշտության դեպքում **օրինական ներկայացուցիչ խնդիրը պետք է լինի հոգեկան առողջության հետ կապված խնդիրներ ունեցող անձին աջակցելն այն չափով, որ չափով վերջինս ունակ չէ գիտակցել իր հոգեկան առողջության վիճակը, հստակ հասկանալ և կանխատեսել իր հոգեկան առողջությանը բժշկական միջամտության կամ դրա բացակայության հնարավոր հետևանքները:**

4.2. Սահմանադրության 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Երեխան իրավունք ունի ազատ արտահայտելու իր կարծիքը, որը, երեխայի տարիքին և հասունության մակարդակին համապատասխան, հաշվի է առնվում իրեն վերաբերող հարցերում»: Սահմանադիրը հստակ պահանջ է դրել, որպեսզի երաշխավորվի երեխայի կարծիքը ցանկացած հարցի վերաբերյալ ազատ արտահայտելու

իրավական հնարավորությունը: Սակայն այդ կարծիքը, երեխայի տարիքին և հասունության մակարդակին համապատասխան, պարտադիր պետք է հաշվի առնվի միայն այն դեպքերում, երբ հարցը վերաբերում է իրեն՝ երեխային:

Այսինքն՝ «երեխայի տարիքին և հասունության մակարդակին համապատասխան» սահմանադրական ձևակերպումից բխում է, որ երեխայի կարծիքի որոշիչ լինելու աստիճանը կախված է կոնկրետ հանգամանքներից՝ երեխայի տարիքից և հասունության մակարդակից, որը տարբեր անձանց մոտ կարող է տարբեր լինել: Ուստի յուրաքանչյուր կոնկրետ դեպքում անհրաժեշտ է գնահատել երեխայի տարիքը և հասունության մակարդակը, որպեսզի հնարավոր լինի գնահատել երեխայի՝ իր հոգեկան առողջության վիճակը գիտակցելու, իր հոգեկան անձեռնմխելիությանը բժշկական միջամտության կամ դրա բացակայության հնարավոր հետևանքները հստակ հասկանալու և կանխատեսելու ունակությունը:

Օրենքով սահմանված կարգով անգործունակ ճանաչված կամ 18 տարին չլրացած անձանց հոգեկան անձեռնմխելիության իրավունքը կարգավորելիս օրենքները պետք է սահմանեն այդ իրավունքի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր՝ այն հաշվով, որ չխախտվի իրավունքների սահմանափակման համաչափության սկզբունքի մաս կազմող սահմանափակման համար ընտրված միջոցների՝ Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար **անհրաժեշտ** լինելու պահանջը:

Վերոնշյալ բոլոր պահանջները պետք է կատարվեն ինչպես անձի իր համաձայնությամբ բժշկական միջամտության ենթարկվելու, այնպես էլ անձի՝ իր առողջական վիճակի մասին տեղեկություն ստանալու իրավունքների իրացման համատեքստում:

4.3. Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող՝ անգործունակ ճանաչված անձի, այդ թվում երեխաների իրավական պաշտպանության առանձնահատկությունները կարևորվում են նաև մի շարք միջազգային իրավական փաստաթղթերում:

Այսպես ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից 1991 թվականի դեկտեմբերի 17-ին ընդունված «Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց պաշտպանությունը և հոգեբուժական օգնության բարելավումը» թիվ 46/119 բանաձևի հավելվածով սահմանվում են հոգեկան առողջության խնդիրներ ունեցող մարդկանց իրավունք-

ների պաշտպանության և նրանց հոգեբուժական օգնություն տրամադրելու առանձին սկզբունքներ, որոնք ուղղակիորեն առնչվում են քննության առարկա հիմնահարցերին:

Ըստ այդմ, մասնավորապես.

ա) հիվանդ անձանց նկատմամբ թույլատրելի չէ որևէ խտրակա-
նություն բացառելով հոգեկան հիվանդության պատճառով այն-
պիսի տարբերակումներ, բացառություններ կամ նախապատվու-
թյուն տալու այնպիսի դրսևորումներ, որոնց արդյունքում անհնա-
րին կդառնա կամ կդժվարանա միջազգայնորեն ճանաչված քաղա-
քացիական, քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշա-
կութային իրավունքներից հավասար օգտվելը (1-ին սկզբունք),

բ) պացիենտի բուժումը և խնամքը պարտադիր պետք է
քննարկվի նրա հետ և պարբերաբար վերանայվի (9-րդ սկզբունք),

գ) յուրաքանչյուր պացիենտի բուժումը պետք է նպատակ ունենա
պահպանել և բարձրացնել անձի ինքնուրույնությունը (9-րդ սկզ-
բունք),

դ) որևէ բուժում չպետք է իրականացվի առանց անձի նախապես
իրազեկված համաձայնությունն ստանալու, բացառությամբ հա-
տուկ սահմանված դեպքերի (11-րդ սկզբունք),

ե) հոգեկան առողջության պահպանման հաստատությունում
գտնվող յուրաքանչյուր ոք ունի օրենքի առջև որպես իրավունքի
սուբյեկտ ճանաչված լինելու հարգման իրավունք (13-րդ սկզբունք),

զ) պացիենտը, նրա օրինական ներկայացուցիչը և խնամակալը
պետք է իրավունք ունենան հաճախել, մասնակցել և անձամբ լսված
լինել գործի լսումների ընթացքում (18-րդ սկզբունք),

է) յուրաքանչյուր պացիենտ (այդ թվում՝ նախկին) պետք է իրա-
վունք ունենա բողոք ներկայացնել օրենքով սահմանված ընթացա-
կարգերին համապատասխան (21-րդ սկզբունք):

Միաժամանակ, անհրաժեշտ է հաշվի առնել, որ հիշյալ բանաձևի
23-րդ սկզբունքի համաձայն՝ պետությունները պետք է կիրառեն
նշված սկզբունքները համապատասխան օրենսդրական, դատա-
կան, վարչական, կրթական և այլ միջոցառումների, այդ թվում՝
դրանք պարբերաբար վերանայելու միջոցով:

Այս հիմնարար մոտեցումներն ընկած են նաև ՄԱԿ-ի 2006
թվականի դեկտեմբերի 13-ի «Հաշմանդամություն ունեցող անձանց
իրավունքների մասին» կոնվենցիայի հիմքում: Մասնավորապես
նշված կոնվենցիայի 25-րդ հոդվածի «դ» կետի համաձայն՝ պետու-

թյունները պարտավոր են ապահովել, որ հաշմանդամություն, այդ թվում՝ հոգեկան կամ մտավոր հաշմանդամություն ունեցող անձանց բժշկական ծառայությունները տրամադրվեն վերջիններիս ազատ և տեղեկացված համաձայնության հիման վրա:

Կոնվենցիայի հիշատակված և այլ նորմերի պահանջների կատարումը ենթադրում է, որ պետությունները հոգեբուժական ծառայությունների մատուցման շրջանակներում պարտավոր են օրենսդրական բարեփոխումների միջոցով ապահովել, որ հաշմանդամություն ունեցող անձինք որոշումներ ընդունեն ազատ և տեղեկացված համաձայնության հիման վրա:

Հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անգործունակ ճանաչված անձանց, այդ թվում՝ երեխաների իրավունքների միջազգային իրավական պաշտպանության առանձին կարգավորումներ ամրագրված են Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի և Նախարարների կոմիտեի ակտերում: Մասնավորապես, Եվրոպայի խորհրդի Խորհրդարանական վեհաժողովի 1977 թվականի հոկտեմբերի 8-ի «Հոգեկան հիվանդություն ունեցող անձանց վիճակի մասին» թիվ 818 (1977) հանձնարարականի 17-րդ կետի համաձայն՝ հոգեկան առողջության խնդիրների պատճառով բուժում ստացող անձն ունի լաված լինելու իրավունք:

Իսկ Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 1999 թվականի փետրվարի 23-ի «Անգործունակ չափահասների իրավական պաշտպանության սկզբունքների վերաբերյալ» թիվ R (99) 4 հանձնարարականում սահմանվել են անգործունակ չափահաս անձանց իրավական պաշտպանության սկզբունքները: Հիշյալ սկզբունքների համաձայն, մասնավորապես.

1) անգործունակ չափահասների իրավական պաշտպանական միջոցները չպետք է ինքնաբերաբար անձին գրկեն իր առողջությանը միջամտելու համաձայնություն տալու կամ չտալու իրավունքից կամ ցանկացած ժամանակ այլ անձնական բնույթի որոշումներ կայացնելու հնարավորությունից, եթե նա ունակ է նման որոշումներ կայացնել (3-րդ սկզբունք),

2) չափահաս անգործունակ անձի նկատմամբ պաշտպանության միջոց կարող է սահմանվել միայն նրա լիարժեք և կամավոր համաձայնությամբ (5-րդ սկզբունք),

3) այն դեպքերում, երբ պաշտպանության միջոցի սահմանումն անհրաժեշտ է, այն պետք է համարժեք լինի անձի անգործունակության աստիճանին և հարմարեցված լինի անձի անհատական հանգամանքներին և կարիքներին (6-րդ սկզբունք),

4) անգործունակ չափահաս անձի նկատմամբ պաշտպանության միջոց սահմանելիս և կիրառելիս պետք է հնարավորինս պարզել անձի նախկին և ներկա ցանկություններն ու զգացողությունները, որոնք պետք է հաշվի առնվեն և հարգանքի արժանանան:

5) անգործունակ չափահաս անձի ներկայացուցիչը կամ օժանդակություն տրամադրողը հնարավորության դեպքում անձին պետք է տրամադրի անհրաժեշտ տեղեկատվություն հատկապես նրա վերաբերյալ կայացվող հիմնական որոշումների վերաբերյալ, որպեսզի անձը ներկայացնի իր տեսակետը (9-րդ սկզբունք),

6) այն դեպքում, երբ պացիենտը, որի նկատմամբ պաշտպանական միջոց է կիրառվել, իր առողջությանը միջամտության վերաբերյալ փաստացի ունակ է տալ կամավոր և տեղեկացված համաձայնություն, նշված միջամտությունը կարող է իրականացվել միայն նրա համաձայնությամբ, և նշված համաձայնությունը ստանալու համար անձին պետք է դիմի միջամտություն իրականացնելու իրավասություն ունեցող անձը (22-րդ սկզբունք),

7) այն դեպքում, երբ պացիենտն իր առողջությանը միջամտության վերաբերյալ փաստացի ունակ չէ տալ կամավոր և տեղեկացված համաձայնություն, նշված միջամտությունը, այնուամենայնիվ, կարող է իրականացվել միայն, եթե դա բխում է անձի շահերից, և նրա ներկայացուցչի կամ օրենքով լիազորություն ունեցող անձի կամ մարմնի կողմից ստացվել է թույլտվություն (22-րդ սկզբունք),

8) եթե պետությունը չի կիրառում 22-րդ սկզբունքի դրույթները, պետք է ամեն դեպքում ջանքեր գործադրվեն, որ հաշվի առնվի չափահաս անձի համաձայնությունը, եթե վերջինս փաստացի ունակ է տալ համաձայնություն (23-րդ սկզբունք):

Բացի դրանից, Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի 1983 թվականի փետրվարի 22-ի թիվ R(83)2 հանձնարարականով հարկադիր հոսպիտալացված հոգեկան խանգարմամբ տառապող անձանց իրավական պաշտպանության բնագավառում առաջ քաշվեց այն մոտեցումը, որ այդ անձինք իրավունք ունեն անմիջապես տեղեկանալ իրենց իրավունքների մասին: Մասնավորապես

ա) հոգեբուժարանում տեղավորելու կապակցությամբ պացիենտն ունի դատական կարգով բողոքարկելու իրավունք, ընդ որում, բողոքարկելու իրավունքի իրականացման հարցում որոշում կայացնելու համար օժանդակություն ցույց տալու նպատակով պետության կողմից անձ նշանակելը չպետք է սահմանափակի այլ շահագրգիռ անձանց կողմից բողոքարկման իրենց իրավունքը (4-րդ հոդվածի 2-րդ կետ),

բ) հոգեբուժական հաստատությունում պետք է ապահովվի անձի՝ անձնապես լսված լինելու իրավունքը, նույնիսկ այն դեպքերում, երբ այդ հաստատությունում տեղավորելը լինի սահմանափակ ժամանակով, և դրա անհրաժեշտությունը պետք է պարբերաբար վերանայվի (4-րդ հոդվածի 3-րդ կետ),

գ) պացիենտը կարող է պահանջել դատական կարգով ողջամիտ պարբերականությամբ վերանայել իրեն հոգեբուժական հաստատությունում պահելու անհրաժեշտությունը: Միաժամանակ, հոգեբուժական հաստատությունում տեղավորելը կարող է ընդհատվել բժշկի կամ իրավասու մարմնի կողմից սեփական նախաձեռնությամբ, կամ երբ այդ մասին պահանջ է ներկայացնում պացիենտը կամ այլ շահագրգիռ անձ (8-րդ հոդված):

Մեկ այլ «Հոգեկան խանգարումներ ունեցող անձանց իրավունքների և արժանապատվության պաշտպանության մասին» Եվրոպայի խորհրդի Նախարարների կոմիտեի թիվ Rec(2004)10 հանձնարարականով սահմանվել է.

1) հոգեկան խանգարումներ ունեցող անձինք պետք է հնարավորություն ունենան իրականացնելու իրենց բոլոր քաղաքացիական և քաղաքական իրավունքները: Այդ իրավունքների իրականացման ցանկացած սահմանափակում պետք է համապատասխանի Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիային և չպետք է հիմնված լինի միայն այն փաստի վրա, որ անձը հոգեկան խանգարում ունի (4-րդ հոդվածի 2-րդ մաս),

2) անչափահասի հոսպիտալացման և բուժման վերաբերյալ (հարկադիր կամ ոչ հարկադիր) որոշում ընդունելիս պետք է հաշվի առնել անչափահասի կարծիքը, որը նրա տարիքից և հասունության աստիճանից կախված գնալով ավելի որոշիչ նշանակություն ունեցող գործոն է դիտվում (29-րդ հոդվածի 2-րդ մաս):

Այսպիսով, վիճարկվող իրավակարգավորումների համատեքստում Սահմանադրական դատարանը փաստում է, որ միջազգային իրավական վերոնշյալ փաստաթղթերում ամրագրված կարգավորումների համադրված վերլուծությունը վկայում է, որ

1) ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության հիմնական իրավունքի երաշխավորումն ապահովող նորմատիվ կարգավորումները պետք է նպատակաուղղված լինեն անձի՝ իր համաձայնությամբ բժշկական միջամտության ենթարկվելու և անձի՝ իր առողջական վիճակի մասին տեղեկություն ստանալու իրավունքների պատշաճ իրացման համար նախադրյալների ստեղծմանը,

2) բժշկական տեղեկությունների մատչելիության իրավունքի արդյունավետ իրականացման հիման վրա պետք է երաշխավորվի անչափահասների և անգործունակ ճանաչված անձանց պատշաճ մասնակցությունն իրենց նկատմամբ իրականացվող բժշկական միջամտություններին՝ իրազեկված համաձայնություն ստանալու պահանջի խստագույն պահպանման պայմաններում,

3) բժշկական միջամտության ենթարկելու գործընթացի շրջանակներում հոգեկան խանգարում ունեցող երեխայի իրավունքները պետք է պատշաճ ձևով երաշխավորվեն օրենքով, եթե երեխայի տարիքը և հոգեկան խանգարման բնույթը թույլ են տալիս, որ վերջինս արտահայտի իր կամքը և գիտակցի իր նկատմամբ կատարվող բժշկական միջամտության բնույթն ու հետևանքները:

Չնայած այն հանգամանքին, որ վերը նշված միջազգային իրավական փաստաթղթերով կարևորվում է հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անգործունակ ճանաչված անձի, այդ թվում՝ երեխաների լաված լինելու իրավունքը, երբ անձը փաստացի ունակ է համաձայնություն տալ իր առողջությանը միջամտության վերաբերյալ, այդուհանդերձ, միջազգային իրավական հիշատակված ակտերի համատեքստում առանձնակի կարևորություն է տրվում նաև այն անձի լաված լինելու իրավունքին, որի համաձայնությունը ստանալը համաձայնություն տալուն փաստացի ունակ չլինելու հիմքով, պարտադիր չէ, սակայն այդ դեպքում նրա իրավունքների պատշաճ իրացման համար պարտադիր պայման է անձի՝ նախկինում արտահայտած ցանկությունը և կարծիքը հաշվի առնելը:

Անդրադառնալով անչափահասների և անգործունակ ճանաչված անձանց՝ իրենց նկատմամբ իրականացվող բժշկական միջամտություններին իրազեկված համաձայնությամբ պատշաճ մասնակցությունն ապահովելու ազգային փորձին՝ Սահմանադրական դատարանը կարևորում է Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ձևավորած հետևյալ չափանիշները.

ա) անգործունակության փաստն անհրաժեշտաբար չի նշանակում, որ նա ունակ չէ փաստացի ընկալել իր վիճակը (Shtukaturon v. Russia գործով 2008 թվականի հունիսի 27-ի վճիռը, գանգատ թիվ 44009/05, §108),

բ) ցանկացած պաշտպանիչ միջոց պետք է հնարավորինս արտացոլի իրենց կամքն արտահայտելու ունակ անձանց ցանկությունները: Նրանց կարծիքը չհարցնելը կարող է հանգեցնել խոցելի անձանց իրավունքների իրականացման չարաշահման և դրան խոչընդոտելու իրավիճակների: Այդ իսկ պատճառով, առանց շահա-

գրգիռ անձի հետ նախապես խորհրդակցելու, կիրառված ցանկացած միջոց, որպես կանոն, պահանջելու է մանրակրկիտ ուսումնասիրություն (Stanev v. Bulgaria գործով 2012 թվականի հունվարի 17-ի վճիռը, գանգատ թիվ 36760/06, § 153),

զ) որոշ իրավիճակներում խաթարված հոգեկան վիճակով անձանց ցանկությունները կարող են օրինականորեն փոխարինվել պաշտպանիչ միջոցի ենթատեքստում գործող այլ անձի ցանկություններով, և երբեմն բարդ է գնահատել շահագրգիռ անձանց իրական ցանկությունները կամ նախընտրությունները (Stanev v. Bulgaria գործով 2012 թվականի հունվարի 17-ի վճիռը, գանգատ թիվ 36760/06, § 130),

դ) օրինական ներկայացուցչի միջոցով դատավարության մասնակցությունն ամբողջությամբ չի երաշխավորում անձի այս իրավունքի իրականացումը, և անձն ամբողջությամբ կախյալ է դառնում իր օրինական ներկայացուցչից (D.D. v. Lithuania գործով 2012 թվականի փետրվարի 14-ի վճիռը, գանգատ թիվ 13469/06, § 166),

ե) չնայած անգործունակ ճանաչված լինելու փաստին և իր ներկայացուցչի պահանջով ազատությունից զրկված լինելու հանգամանքին, եթե անձը կարող է արտահայտել իր կարծիքը, նրան պետք է հնարավորություն ընձեռվի դատարանի առջև վիճարկելու իր ազատագրկման իրավաչափությունն առանձին իրավաբանական ներկայացուցչության միջոցով (D.D. v. Lithuania գործով 2012 թվականի փետրվարի 14-ի վճիռը, գանգատ թիվ 13469/06, § 166),

զ) որպեսզի մտավոր խնդիրներ ունեցող անձին ազատությունից զրկելը լինի օրինական, անհրաժեշտ է երեք հիմնական պահանջի բավարարում՝ ա) հոգեկան խանգարումներ ունեցող անձանց ազատությունից զրկելը (կալանքը) թույլատրելի է, եթե միայն առողջական օբյեկտիվ չափանիշների հիման վրա է արձանագրվում հոգեկան խանգարումը, բ) եթե հոգեկան խանգարման բնույթից կամ ծանրությունից կախված հիվանդը լուրջ վտանգ է ներկայացնում այլ անձանց կամ հենց իր անձի համար, գ) ազատությունից զրկելը կարող է շարունակվել, միայն քանի դեռ այն հիմնավորող հոգեկան խանգարումը շարունակում է պահպանվել (Winterwerp v. The Netherlands գործով 1979 թվականի հոկտեմբերի 24-ի վճիռը, գանգատ թիվ 6301/73),

է) անգործունակ անձանց նկատմամբ սահմանափակումները չպետք է լինեն այնպիսին, որ խաթարվի իրավունքի էությունը. նման սահմանափակումները պետք է հետապնդեն իրավաչափ

նպատակ, ինչպես նաև առկա լինի ողջամիտ հավասարակշռություն կիրառվող միջոցի և հետապնդվող նպատակի միջև (Zagidullina v. Russia 2013 թվականի մայիսի 2-ի վճիռը, գանգատ թիվ 11737/06):

4.4. Վիճարկվող դրույթների և դրանք ամրագրող օրենքների համալիր վերլուծությունից հետևում է.

1) օրենսդրական ձևակերպումները վերաբերում են 18 տարին չլրացած անչափահասներին և երեխաներին, օրենքով սահմանված կարգով անգործունակ ճանաչված, ինչպես նաև հոգեկան խանգարումներով տառապող այն անձանց, որոնք անձամբ կամ օրինական ներկայացուցչի միջոցով օժտված են առողջական վիճակի ու բուժման մասին տեղեկություններ ստանալու և բժշկական միջամտության համար դիմելու, համաձայնություն տալու կամ դրանից հրաժարվելու իրավունքներով,

2) 18 տարին չլրացած անչափահասի կամ օրենքով սահմանված կարգով անգործունակ ճանաչված անձի առողջական վիճակի մասին տեղեկությունները տրվում են բացառապես նրանց օրինական ներկայացուցիչներին («Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, 7-րդ հոդվածի 3-րդ մաս),

3) 18 տարին չլրացած անչափահասի կամ օրենքով սահմանված կարգով անգործունակ ճանաչված անձի նկատմամբ, ինչպես նաև այն դեպքերում, երբ անձի վիճակը թույլ չի տալիս արտահայտել իր կամքը, բժշկական միջամտության համար համաձայնությունը տրվում է միայն նրա օրինական ներկայացուցչի կողմից («Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, 8-րդ հոդվածի 3-րդ մաս),

4) անչափահասի կամ անգործունակ ճանաչված անձի օրինական ներկայացուցչի բացակայության դեպքում բժշկական միջամտության վերաբերյալ որոշումը կայացվում է բժշկական խորհրդակցության (կոնսիլիումի), իսկ դրա անհնարինության դեպքում՝ բժշկի կողմից ելնելով պացիենտի շահերից («Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, 8-րդ հոդվածի 4-րդ մաս),

5) բժշկական միջամտությունից հրաժարվելու փաստը գրանցվում է բժշկական փաստաթղթերում և հավաստվում պացիենտի կամ նրա օրինական ներկայացուցչի կողմից («Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, 17-րդ հոդվածի 2-րդ մաս),

6) բուժաշխատողները պարտավոր են պացիենտին և (կամ) նրա օրինական ներկայացուցչին տեղյակ պահել իր առողջության կամ բժշկական միջամտության ու բուժման գործընթացների վերաբերյալ («Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, 19.3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետ),

7) հոգեկան խանգարումներ ունեցող երեխայի բուժման, հետազոտման, հոգեբուժական կազմակերպությանը դիմելու իրավունքը վերապահված է նրա օրինական ներկայացուցչին, իսկ բուժում իրականացնելու կամ բուժումից հրաժարվելու հետ կապված հարցերը համաձայնեցվում են երեխայի կամ նրա օրինական ներկայացուցչի հետ («Հոգեբուժական օգնության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, 6-րդ հոդվածի 10-րդ մաս, 9-րդ հոդվածի 1-2-րդ մասեր, 15, 16-րդ հոդվածներ),

8) հոգեբուժական հետազոտումը կամ հետազոտվողի իրավունքների մասին իրազեկումը կարող է իրականացվել առանց հետազոտվողի համաձայնության կամ հետազոտվողի կամ նրա օրինական ներկայացուցչի համաձայնությամբ («Հոգեբուժական օգնության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 3-4-րդ մասեր, հավելվածի VI բաժնի 4-րդ կետի երկրորդ պարբերություն),

9) հոգեկան խանգարումներով տառապող անձն առանց իր կամ իր օրինական ներկայացուցչի համաձայնության կարող է հոսպիտալացվել հոգեբուժական հանձնաժողովի կողմից, եթե նա վտանգ է ներկայացնում իր կամ այլ անձանց համար, կամ բուժում չիրականացնելը կամ բուժումը դադարեցնելը կարող է վատթարացնել հիվանդի առողջական վիճակը («Հոգեբուժական օգնության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, 22-րդ հոդվածի 1-ին մաս),

10) երեխան առանց օրինական ներկայացուցչի համաձայնության հոգեբուժական հաստատություն կարող է հոսպիտալացվել միայն դատարանի վճռով՝ օրենքով նախատեսված դեպքերում և կարգով («Երեխայի իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, 32-րդ հոդվածի 2-րդ մաս):

Վերլուծելով անչափահասների կամ անգործունակ ճանաչված անձանց տրամադրվող բժշկական օգնության և սպասարկման, ինչպես նաև հոգեբուժական օգնության գործընթացներում վերջիններիս կամքը կամ բժշկական միջամտության վերաբերյալ համաձայնության պայմանների սահմանման հետ կապված հարաբերությունները կարգավորող օրենքների համապատասխան նոր-

մերը՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վերաբերելի օրենսդրության շրջանակներում **18 տարին չլրացած կամ օրենքով սահմանված կարգով անգործունակ ճանաչված պացիենտները բժշկական միջամտության ենթարկվելու առումով հավասարեցված են այն պացիենտներին, որոնց վիճակը թույլ չի տալիս արտահայտել իրենց կամքը և նրանց փոխարեն համաձայնությունը տրվում է նրանց օրինական ներկայացուցիչների կողմից:**

Մյուս կողմից, անհրաժեշտ է ընդգծել, որ օրենսդիրը 18 տարին չլրացած կամ օրենքով սահմանված կարգով անգործունակ ճանաչված անձանց չի դիտարկել որպես պացիենտներ, որոնց վիճակը թույլ չի տալիս արտահայտել իրենց կամքը: Այսինքն, ըստ այդ տրամաբանության՝ **թեև անձի վիճակը կարող է թույլ տալ նրան արտահայտել իր կամքը, սակայն 18 տարին չլրացած լինելու կամ օրենքով սահմանված կարգով անգործունակ ճանաչված լինելու փաստի ուժով անձը զրկվում է իր կամքն արտահայտելու հնարավորությունից:** Մինչդեռ նման մեխանիկական մոտեցումը չի կարող համահունչ լինել վերոնշյալ սահմանադրական պահանջներին:

Բացի դրանից, Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում 18 տարին չլրացած անձինք կարող են ունենալ որոշակի իրավունքներ և կրել պարտականություններ: Այսպես օրինակ քրեական օրենսդրության շրջանակներում որոշ հանցակազմերով քրեական պատասխանատվության ենթարկվելու տարիքը 14 տարեկանն է, կամ քաղաքացիական օրենսդրության շրջանակներում մինչև 14 տարեկան անչափահասներն ունեն որոշակի գործարքներ կնքելու իրավունք, 16 տարին լրացած անչափահասը կարող է լրիվ գործունակ ճանաչվել, եթե նա աշխատում է աշխատանքային պայմանագրով կամ ծնողների, որդեգրողների կամ հոգաբարձուի համաձայնությամբ զբաղվում է ձեռնարկատիրական գործունեությամբ, իսկ այն դեպքում, երբ օրենքով թույլատրվում է ամուսնանալ մինչև տասնութ տարեկան դառնալը, տասնվեց տարին լրացած անձը կարող է լրիվ ծավալով գործունակություն ձեռք բերել:

Միաժամանակ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ անգործունակ ճանաչված չափահաս անձին տրամադրվող բժշկական օգնության և սպասարկման, նաև հոգեբուժական օգնության գործընթացներում վերջինիս կամքը հաշվի առնելու պահանջ թեև ամրագրված է, սակայն գործնականում այն հաճախ շրջանց-

վում է գործող օրենսդրությամբ ամրագրված այլընտրանքի ուժով, օրինակ՝ անձի օրինական ներկայացուցչի համաձայնությամբ որպես բավարար պայման, անչափահաս կամ օրենքով սահմանված կարգով անգործունակ ճանաչված պացիենտի դեպքում, կամ այն դեպքերում, երբ պացիենտի վիճակը թույլ չի տալիս արտահայտել իր կամքը:

Բացի դրանից, վիճարկվող դրույթներում անձի՝ բժշկական միջամտության վերաբերյալ համաձայնության պայմանը բավարարվում է օրինական ներկայացուցչի համաձայնությամբ՝ առանց այդ անձի իրական, գիտակցված կամահայտնության: Այդ դրույթներում առկա են հետաձգման ոչ ենթակա դեպքերի ամրագրումն այն պարագայում, երբ խոսքը վերաբերում է անգործունակ ճանաչված անձանց, հոգեկան խանգարումով տառապող անձանց բուժմանը, հոգեբուժական կազմակերպությունում արտահիվանդանոցային ձևով բժշկական խորհրդատվությանը կամ փորձաքննությանը կամ ախտորոշմանը կամ բուժմանը, դիսպանսերային արտահիվանդանոցային հոգեբուժական օգնությանը՝ անձի կամ անձի օրինական ներկայացուցչի դիմումի համաձայն:

Այսինքն, գործնականում նախատեսված չէ, թե որ դեպքերում է բուժումը կատարվում հոգեկան խանգարումով տառապող անձի և որ դեպքերում՝ նրա օրինական ներկայացուցչի գրավոր համաձայնությամբ:

Վիճարկվող դրույթներում պացիենտի համաձայնությունն ստանալու նախապատվելիության և նրան բժշկական գործընթացին մասնակից դարձնելու որևէ կառուցակարգ առկա չէ, և անձի փոխարեն օրինական ներկայացուցչի համաձայնությունն ինքնին դիտարկվում է որպես բավարար պահանջ: Թեև գործնականում իրավական այդ պահանջը բավարարվում է, սակայն նման կարգավորումը խնդրահարույց է անձի վերաբերելի հիմնական իրավունքների երաշխավորման տեսանկյունից:

Սահմանադրական դատարանը փաստում է, որ Սահմանադրության 25-րդ հոդվածի 2-րդ մասում ամրագրված՝ հոգեկան անձեռնմխելիության հիմնական իրավունքի սահմանափակման որևէ հիմք չի կարող դիտվել որպես բավարար և անհրաժեշտ պայման՝ հոգեկան անձեռնմխելիության իրավունքի սահմանափակման համար: Այսպես՝ պետական անվտանգությունը, հանցագործությունների կանխումը կամ բացահայտումը, հասարակական կարգի, բարոյականության կամ այլոց իրավունքների պաշտպանությունը որևէ կերպ չեն կարող արդարացնել անձի համաձայնության պահանջի

բացակայությունը և (կամ) նրա օրինական ներկայացուցչին նախապատվություն տալը, ուստի առկա չէ որևէ սահմանադրական հիմք նշված նպատակներով անձի հոգեկան անձեռնմխելիության հիմնական իրավունքը սահմանափակելու համար:

Ինչ վերաբերում է որևէ անձի կամ այլոց առողջության պաշտպանության նկատառումներով նրա հոգեկան անձեռնմխելիության իրավունքի սահմանափակմանը, ապա Սահմանադրական դատարանը գտնում է, որ հենց այդ նպատակով ոչ թե պետք է սահմանափակվի անձի իրազեկված համաձայնությունն ստանալը, այլ այն պետք է երաշխավորվի բոլոր դեպքերում, երբ նա ունակ է ինքնուրույն իրականացնել այդ իրավունքը: Նրա հոգեկան առողջությանը միջամտությունն այդ համաձայնությամբ պայմանավորելն ինքնին չի ենթադրում, որ նա, Սահմանադրության 27-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետին համապատասխան, եթե հոգեկան խանգարում ունի և նրանից վտանգ է բխում, չի կարող զրկվել անձնական ազատությունից՝ օրենքով սահմանված կարգով:

Բացի դրանից, Սահմանադրական դատարանը գտնում է, որ օրինական ներկայացուցչի ներգրավումն արդարացված է միայն սուբսիդիարության սկզբունքով, այն է՝ եթե հոգեկան առողջության իրավունքի կրողը փաստացի ունակ չէ ինքնուրույն իրականացնել հոգեկան անձեռնմխելիության իր հիմնական իրավունքը: Դա կարող է ներառել նաև այն դեպքերը, երբ անձի մոտ թեև առերևույթ առկա է հիշյալ իրավունքը սեփական պատասխանատվությամբ իրականացնելու կարողություն, սակայն դրանով նա կարող է անխուսափելիորեն վնաս պատճառել իր իսկ հոգեկան առողջությանը: Սահմանադրական դատարանը գտնում է, որ յուրաքանչյուր կոնկրետ դեպքում անհրաժեշտ է ապահովել անձի հոգեկան առողջության և իր հիմնական իրավունքն ինքնուրույն իրականացնելու ունակության պատշաճ մասնագիտական գնահատում:

Ինչ վերաբերում է Սահմանադրության 37-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված՝ երեխայի կարծիքը իրեն վերաբերող հարցերում հաշվի առնելու հիմնական իրավունքին, ապա դրա իրականացումը պայմանավորված է բացառապես երեխայի տարիքով և հասունության մակարդակով:

Ուստի բոլոր այն դեպքերում, երբ երեխան ունակ է ինքնուրույնաբար իրականացնելու հոգեկան անձեռնմխելիության իր հիմնական իրավունքը, իսկ նրա տարիքը և հասունության մակար-

դակը հնարավորություն են տալիս հաշվի առնել նրա կարծիքը իրեն վերաբերող հարցերում, ապա օրենքը պետք է ստեղծի անհրաժեշտ նախադրյալներ այն հաշվի առնելու համար, իսկ օրինական ներկայացուցչի ներգրավումը, ինչպես և չափահաս անձանց դեպքում, պետք է իրականացվի սուբսիդիարության սկզբունքի հիման վրա:

Այսպիսով՝ Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ

1) «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասը, 8-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերն այնքանով, որքանով չեն ապահովում անչափահասների և անգործունակ ճանաչված անձանց պատշաճ մասնակցությունը վերջիններիս նկատմամբ իրականացվող բժշկական միջամտություններին՝ իրազեկված համաձայնություն ստանալու պահանջի տեսանկյունից, չեն ապահովում նշված անձանց՝ իրենց վերաբերյալ բժշկական տեղեկությունների մատչելիության իրավունքը,

2) «Հոգեբուժական օգնության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 10-րդ մասը պատշաճորեն չի ապահովում հոգեկան խանգարում ունեցող երեխաների՝ հոգեկան անձեռնմխելիության հիմնական իրավունքը, եթե երեխայի տարիքը և հոգեկան խանգարման բնույթը թույլ են տալիս, որ վերջինս արտահայտի իր կամքը և գիտակցի իր նկատմամբ կատարվող բժշկական միջամտության բնույթը և հետևանքները,

3) «Երեխայի իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասը չի ապահովում երեխային հոգեբուժական հաստատություն հոսպիտալացնելիս վերջինիս համաձայնության պարտադիր լինելն այն դեպքում, երբ երեխայի տարիքը և հոգեկան առողջությունը թույլ են տալիս, որ վերջինս արտահայտի իր կամքը:

Ուստի հիշյալ իրավադրույթները հակասում են Սահմանադրության 25-րդ հոդվածի 1-ին, 2-րդ մասերում և 37-րդ հոդվածի 1-ին մասում ամրագրված իրավունքներին՝ Սահմանադրությամբ չնախատեսված հիմքերով սահմանափակելով հոգեկան անձեռնմխելիության հիմնական իրավունքը, ինչպես նաև անհիմն սահմանափակելով երեխայի՝ իր կարծիքն ազատ արտահայտելու հիմնական իրավունքը:

4.5. Ինչ վերաբերում է «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածով ամրագրված վիճարկվող իրավակարգավորմանը, ապա Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ հիշյալ կարգավորման շրջանակներում բժշկական միջամտությունից հրաժարվելու փաստը հավաստելու մասով պացիենտի կամ նրա օրինական ներկայացուցչի համար նախատեսվել է պատշաճ հնարավորություն: Իսկ նույն օրենքի 19.3-րդ հոդվածի համաձայն պացիենտը և (կամ) նրա օրինական ներկայացուցիչը պետք է տեղեկացվեն պացիենտի առողջությանը վերաբերող հետազոտությունների արդյունքների, հիվանդության ախտորոշման և բուժման մեթոդների, դրանց հետ կապված ռիսկերի, բժշկական միջամտության հնարավոր տարբերակների, հետևանքների և բուժման արդյունքների մասին:

Վերոգրյալը վերաբերում է նաև «Հոգեբուժական օգնության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, 15 և 16-րդ հոդվածներին, 19-րդ հոդվածի 2, 3 և 4-րդ մասերին, 22-րդ հոդվածի 1-ին մասին և հիշյալ օրենքի հավելվածի 6-րդ բաժնի 4-րդ կետի երկրորդ պարբերությանը, քանի որ հիշյալ կարգավորումների ուժով հոգեկան խանգարումով անձին բժշկական միջամտության ենթարկելու գործընթացի շրջանակներում հաշվի է առնվում տվյալ անձի կամ նրա օրինական ներկայացուցչի կարծիքը:

Մինևույն ժամանակ Սահմանադրական դատարանը գտնում է, որ բժշկական միջամտությունից հրաժարվելու, անձին իր առողջությանը վերաբերող հետազոտությունների արդյունքների, հիվանդության ախտորոշման և բուժման մեթոդների, դրանց հետ կապված ռիսկերի, բժշկական միջամտության հնարավոր տարբերակների, հետևանքների և բուժման արդյունքների մասին տեղեկացնելու և հոգեկան խանգարումով անձին բժշկական միջամտության ենթարկելու գործընթացի շրջանակներում «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ և 19.3-րդ հոդվածներով, ինչպես նաև «Հոգեբուժական օգնության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 15 և 16-րդ հոդվածներին, 19-րդ հոդվածի 2, 3 և 4-րդ մասերի, 22-րդ հոդվածի 1-ին մասի և հիշյալ օրենքի հավելվածի 6-րդ բաժնի 4-րդ կետի երկրորդ պարբերության կիրառման ժամանակ պետք է ապահովվի **անձի համաձայնությունն ստանալու նախապատվությունը՝ իր օրինական ներկայացուցչի համեմատ:**

Միաժամանակ, հաշվի առնելով այն հանգամանքը, որ նախապատվություն պետք է տրվի նաև անչափահաս այն անձի կարծիքին, որի տարիքը թույլ է տալիս արտահայտել իր կամքը, ինչպես նաև պետք է ապահովվի տվյալ անչափահաս անձին իր առողջության վերաբերյալ տեղեկատվության տրամադրման առաջնահերթությունը, իրավակիրառ պրակտիկայում անհրաժեշտ է բացառել անչափահասների ֆիզիկական և հոգեկան անձեռնմխելիության իրավունքի տեսանկյունից խնդրահարույց իրավիճակները: Վերոգրյալի հիման վրա Սահմանադրական դատարանը գտնում է, որ մինչև օրենսդրի կողմից համապատասխան փոփոխություններ կատարելու միջոցով 18 տարին չլրացած կամ օրենքով սահմանված կարգով անգործունակ ճանաչված անձանց իրավունքների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր սահմանելը, վիճարկվող իրավադրույթները պետք է կիրառվեն այնպես, որ հաշվի առնվի 18 տարին չլրացած կամ օրենքով սահմանված կարգով անգործունակ ճանաչված անձի կամքը իր հոգեկան առողջության վիճակը գիտակցելու, **իր հոգեկան անձեռնմխելիությանը բժշկական միջամտության կամ դրա բացակայության հնարավոր հետևանքները հասկանալու և կանխատեսելու ունակության աստիճանին համապատասխան** ինչպես բժշկական միջամտության անհրաժեշտության, այնպես էլ առողջական վիճակի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու դեպքերում:

Ելնելով գործի քննության արդյունքներից և հիմք ընդունելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետը, 169-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը, 170-րդ հոդվածը, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 68-րդ հոդվածները՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**:

1. «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասը, 8-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերն այնքանով, որքանով չեն ապահովում անչափահասների և անգործունակ ճանաչված անձանց պատշաճ մասնակցությունն իրենց նկատմամբ իրականացվող բժշկական միջամտություններին՝ չսահմանելով իրազեկված համաձայնություն ստանալու պահանջ, ինչպես նաև չեն ապահովում նշված անձանց՝ իրենց վերաբերյալ բժշկական տեղեկությունների մատչելիության իրավունքը, ճանաչել Սահմանադրության 25-րդ հոդվածին հակասող:

2. «Հոգեբուժական օգնության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 10-րդ մասն այնքանով, որքանով պատշաճորեն չի ապահովում հոգեկան խանգարում ունեցող երեխայի հոգեկան անձեռնմխելիության հիմնական իրավունքը, երբ երեխայի տարիքը և հոգեկան խանգարման բնույթը թույլ են տալիս, որ վերջինս արտահայտի իր կամքը և գիտակցի իր նկատմամբ կատարվող բժշկական միջամտության բնույթը և հետևանքները, ճանաչել Սահմանադրության 25-րդ և 37-րդ հոդվածներին հակասող:

3. «Երեխայի իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասն այնքանով, որքանով որ չի ամրագրում երեխային հոգեբուժական հաստատություն հոսպիտալացնելիս վերջինիս համաձայնության պարտադիր լինելն այն դեպքերում, եթե երեխայի տարիքը և հոգեկան առողջությունը թույլ են տալիս, որ վերջինս արտահայտի իր կամքը, ճանաչել Սահմանադրության 25-րդ և 37-րդ հոդվածներին հակասող:

4. «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասը և 19.3-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը համապատասխանում են Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, որ բժշկական միջամտությունից հրաժարվելու փաստը հավաստելու, ինչպես նաև անձին իր առողջությանը վերաբերող հետազոտությունների արդյունքների, հիվանդության ախտորոշման և բուժման մեթոդների, դրանց հետ կապված ռիսկերի, բժշկական միջամտության հնարավոր տարբերակների, հետևանքների և բուժման արդյունքների մասին տեղեկացնելու մասերով անձի համաձայնությունն ստանալը պետք է լինի նախապատվելի:

5. «Հոգեբուժական օգնության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, 15 և 16-րդ հոդվածները, 19-րդ հոդվածի 2, 3 և 4-րդ մասերը, 22-րդ հոդվածի 1-ին մասը և հիշյալ օրենքի հավելվածի 6-րդ բաժնի 4-րդ կետի երկրորդ պարբերությունը համապատասխանում են Սահմանադրությանն այն մեկնաբանությամբ, որ հոգեկան խանգարումով անձին բժշկական միջամտության ենթարկելու գործընթացի շրջանակներում անձի համաձայնությունն ստանալը պետք է լինի նախապատվելի:

6. Հիմք ընդունելով Սահմանադրության 170-րդ հոդվածի 3-րդ մասը, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 68-րդ հոդվածի 9-րդ մասի 4-րդ կետը և 19-րդ մասը, ինչպես

նան հաշվի առնելով այն հանգամանքը, որ սույն որոշման հրապարակման պահին «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի 3-րդ մասը, 8-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերը, «Հոգեբուժական օգնության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 10-րդ մասը և «Երեխայի իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասը Սահմանադրությանը հակասող և անվավեր ճանաչելն անխուսափելիորեն կառաջացնի այնպիսի ծանր հետևանքներ պետության և հանրության համար, որոնք կխաթարեն այդ պահին վիճարկվող դրույթների վերացմամբ հաստատվելիք իրավական անվտանգությունը, այն է՝ կառաջանա իրավակարգավորման այնպիսի բաց, որը խոչընդոտ կդառնա անչափահասների և անգործունակ ճանաչված անձանց բժշկական օգնության և սպասարկման համար, սույն որոշմամբ Սահմանադրությանը հակասող ճանաչված դրույթների ուժը կորցնելու վերջնաժամկետ սահմանել 2020 թվականի հունիսի 1-ը՝ հնարավորություն տալով Ազգային ժողովին «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին», «Հոգեբուժական օգնության մասին» և «Երեխայի իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների վերաբերելի իրավակարգավորումները համապատասխանեցնելու սույն որոշման պահանջներին:

7. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

30 հունվարի 2020 թվականի
ՍԴՈ-1504



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2019 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 1-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ
«ՆԱՎԱԳՆԱՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ
ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

11 փետրվարի 2020 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ա. Դիլանյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի (զեկուցող), Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Ս. Պապիկյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2019 թվականի փետրվարի 1-ին ստորագրված «Նավագնացության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2019 թվականի նոյեմբերի 18-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը, գործում առկա եզրակացություններն ու մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**:

1. «Նավագնացության մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2019 թվականի փետրվարի 1-ին՝ ԵԱՏՄ անդամ պետությունների (այսուհետ՝ Անդամ պետություն) ջրային տրանսպորտի ոլորտում համագործակցության զարգացման ու ամրապնդման, ինչպես նաև «Համակարգված (համաձայնեցված) տրանսպորտային քաղաքականության մասին» Արձանագրությունն իրականացնելու նպատակով («Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 24-րդ հավելված», որը ՀՀ կողմից վավերացվել է «2014 թվականի հոկտեմբերի 10-ին Մինսկում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրին միանալու մասին» պայմանագրի վավերացմամբ՝ Ազգային ժողովի 2014 թվականի դեկտեմբերի 4-ի ԱԺՈ-132-Ն որոշմամբ (ՄԴՈ-1175):

2. Համաձայնագիրը սահմանում է Անդամ պետության ներքին ջրային ուղիներով նավարկության կարգը, մասնավորապես՝ իրավունքներ և պարտավորություններ է սահմանում Անդամ պետության դրոշի ներքո նավարկող նավերի համար: Այն կոչված է դյուրացնելու ԵԱՏՄ անդամ պետությունների ներքին ջրային ուղիները, երկկողմ և տարանցիկ բեռների, ուղևորների և ուղեբեռների փոխադրումը, ինչպես նաև նավերի քարշակումը:

Երկկողմ փոխադրումը կատարվում է ծանուցման հիման վրա, ըստ որի՝ լիազորված մարմինները յուրաքանչյուր տարի՝ մինչև ապրիլի 1-ը, համաձայնեցնում են նախատեսվող ուղևորների, ուղեբեռի և բեռների փոխադրման՝ նավի դրոշի մի Անդամ պետության ներքին ջրային ուղիների նավահանգիստներից (դեպի նավահանգիստներ) այլ Անդամ պետության ներքին ջրային ուղիների դեպի նավահանգիստներ (նավահանգիստներից) քարշակման համար նախատեսվող նավերի նախնական ցուցակները, և Անդամ պետության ներքին ջրային ուղիներով նավարկելը թույլատրվում է

այն նավերին, որոնք համապատասխանում են տվյալ Անդամ պետության օրենսդրությամբ սահմանված՝ այդպիսի նավի համար կիրառելի պահանջներին (հոդված 3, կետեր 2 և 4):

Համաձայնագրով նախատեսված է, որ ներքին ջրային ուղիներով նավարկման ընթացքում չի թույլատրվում Անդամ պետությունների օրենսդրությամբ իրենց տարածքներում ներմուծման և տեղաշարժման համար արգելված բեռների փոխադրումը և ներքին ջրային ուղիներով նավերի շարժի հետ կապ չունեցող ձկնորսական, հիդրոգրաֆիկ, հետազոտական և այլ գործունեության իրականացում (Հոդված 4):

Նավերի անձնակազմի նվազագույն քանակի պահանջները սահմանվում են առանձին միջազգային միջգերատեսչական պայմանագրով, որը կնքվում է Անդամ պետությունների իրավասու մարմինների միջև՝ սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրացուցային օրվա ընթացքում (հոդված 7, կետ 3, մաս 2):

3. Ելնելով Հայաստանի Հանրապետության աշխարհագրական դիրքից, չունենալով նավարկելի ջրային տարածք՝ Համաձայնագիրն առավելապես առնչվում է ՀՀ դրոշի ներքո նավարկող նավերի՝ այլ Անդամ պետությունների ներքին ջրային տարածքներում նավարկության կարգին:

Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունը ստանձնում է հետևյալ հիմնական պարտավորությունները.

- սահմանել ՀՀ լիազորված և իրավասու մարմիններ, որոնք պատասխանատու են Համաձայնագրի իրականացման համար և աջակցել այդ մարմինների, ինչպես նաև ջրային տրանսպորտի բնագավառում տնտեսվարող սուբյեկտների միջև գործնական հարաբերությունների և համագործակցության պահպանմանն ու զարգացմանը (հոդված 10, հոդված 11, կետ 1),

- տեղեկացնել ավանդապահին Համաձայնագրի իրականացման համար պատասխանատու լիազորված և իրավասու մարմինների մասին Համաձայնագրի ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերի կատարման մասին ծանուցման հետ միաժամանակ, իսկ ՀՀ լիազորված կամ իրավասու մարմնի անվանման փոփոխության դեպքում այդ մասին տեղեկացնել ավանդապահին (հոդված 11, կետ 2),

- ապահովել, որ Համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից 30 օրացուցային օրվա ընթացքում ՀՀ իրավասու մարմինները մյուս Անդամ պետությունների իրավասու մարմինների հետ փոխանակեն

Համաձայնագրի 7-րդ հոդվածով սահմանված փաստաթղթերի օրինակները, ինչպես նաև դրանք տալու կանոնները, իսկ վերոհիշյալ փաստաթղթերում փոփոխություններ կատարվելու դեպքում այդ փոփոխությունների կատարման օրվանից 30 օրացուցային օրվա ընթացքում ՀՀ իրավասու մարմինները այլ Անդամ պետությունների իրավասու մարմիններին ուղարկեն նոր փաստաթղթերի օրինակները և դրանց հանձնման կանոնները (հոդված 11, կետ 4):

4. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված՝ արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց Ց**.

1. 2019 թվականի փետրվարի 1-ին ստորագրված «Նավագնացության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

11 փետրվարի 2020 թվականի
ՄԴՈ-1505

1(97)2020

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՒԹՅՈՒՆ ♦



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ
ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԻ 39-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 7-ՐԴ ԿԵՏԻ՝
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂԻՆ ԿՐՈՆԱԿԱՆ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԼԻՆԵԼՈՒ ԱՐԳԵԼՔԻ ՄԱՍՈՎ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

18 փետրվարի 2020 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ա. Դիլանյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի (զեկուցող), Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմողի՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի պետ Կ. Մովսիսյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 4-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22-րդ և 71-րդ հոդվածների,

1(97)/2020
◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆ 65

դոնրաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի դիմումի հիման վրա՝ «Ոստիկանությունում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի՝ ոստիկանության ծառայողին կրոնական կազմակերպության անդամ լինելու արգելքի մասով՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

«Ոստիկանությունում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (այսուհետ՝ Օրենք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2002 թվականի հուլիսի 3-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 2002 թվականի հուլիսի 30-ին և ուժի մեջ է մտել 2003 թվականի հունվարի 1-ից:

Օրենքի՝ «Ոստիկանության ծառայողի նկատմամբ կիրառվող սահմանափակումները» վերտառությամբ 39-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը սահմանում է.

«1. Ոստիկանության ծառայողն իրավունք չունի՝

....

7) լինել որևէ կուսակցության, հասարակական-քաղաքական, հասարակական (բացառությամբ գիտական, մշակութային, մարզական, որսորդական, վետերանների և նմանօրինակ շահերի ընդհանրության հիման վրա միավորված կազմակերպությունների), այդ թվում՝ կրոնական, արհեստակցական կազմակերպության անդամ իր ծառայողական դիրքն օգտագործել կուսակցությունների, հասարակական, այդ թվում՝ կրոնական միավորումների շահերի համար, նրանց նկատմամբ վերաբերմունք քարոզել, ինչպես նաև իր ծառայողական պարտականությունները կատարելիս այլ քաղաքական կամ կրոնական գործունեություն իրականացնել.»:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի՝ 2019 թվականի օգոստոսի 19-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է, որով ներկայացվել է նույն դատարանի 2019 թվականի օգոստոսի 15-ի՝ թիվ ՎԴ/11599/05/18 գործով «Վարչական գործի վարույթը կասեցնելու մասին» որոշումը:

Ուսումնասիրելով դիմումը, պատասխանողի գրավոր բացատրությունը, վերլուծելով Օրենքի, Հայաստանի Հանրապետության օրենսդրության վերաբերելի այլ ակտերի համապատասխան դրույթները, ինչպես նաև գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Դիմողի դիրքորոշումները

Հղումներ կատարելով Սահմանադրության 41, 78 և 79-րդ հոդվածներին, վկայակոչելով «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» դաշնագրի համապատասխան դրույթները, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) նախադեպային պրակտիկան, վերլուծելով Օրենքի վիճարկվող նորմերով նախատեսված իրավակարգավորումը և համադրելով այն Հայաստանի Հանրապետության օրենսդրության այլ նորմերի հետ՝ դիմողը գտնում է, որ Օրենքի վիճարկվող նորմում «կրոնական կազմակերպության անդամ» եզրույթը չի համապատասխանում իրավական որոշակիության պահանջին, «թյուրլմբուման ու տարամեկնաբանման տեղիք է տալիս»: Ըստ դիմողի՝ «կրոնական կազմակերպության անդամ» հասկացությունը Օրենքով սահմանված չէ, պարզ չէ, թե անձի կողմից ակտիվ կամ պասիվ ուր գործողության դրսևորումն է, որ կարող է հանգեցնել կրոնական կազմակերպության անդամ հանդիսանալուն, սահմանված չէ կրոնական կազմակերպությանը «անդամակցություն» հասկացությունը: Հետևաբար, կանխորոշված չեն այն սահմանները, որոնցում անձը պետք է դրսևորի իր վարքագիծը, և «կրոնական կազմակերպության անդամակցության արգելքի վերաբերյալ իրավանորմը չի կարող համարվել որոշակի վերացական բովանդակություն ունեցող նորմ, որը բավարար հստակությամբ պետք է մեկնաբանվի և կիրառվի պրակտիկայում»: Դիմողը նաև գտնում է, որ «կրոնական կազմակերպության անդամ» հանդիսանալու արգելքն անձի և անաչառ դիտորդի համար չի ապահովում կանխատեսելիություն և որոշակիություն: Դիմումում հարց է բարձրացվում, թե անձի կողմից կրոնական կազմակերպության կազմակերպած որևէ միջոցառմանը մեկ կամ մի քանի անգամ մասնակցելը համարվում է արդյոք անդամակցություն, արդյոք էական նշանակություն ունի կրոնական կազմակերպության կողմից կազմակերպված միջոցառման բնույթը, անձի մասնակցության նպատակը, մասնակցության դրսևորման ձևը, հաճախականությունը և այլ օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքներ:

Ըստ դիմողի եզրահանգման՝ հիմնական իրավունքի՝ Օրենքով նախատեսված սահմանափակումը իրավաչափ չէ, «նույնանման կատեգորիայի անձանց նկատմամբ տարբերակված է և չունի օբյեկտիվ հիմնավորում, անհրաժեշտ չէ ժողովրդավարական հասարա-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՍԿԻՐ ♦ 1(97)/2020
67

կությունում» և հակասում է հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համաչափության սկզբունքին, հետևաբար՝ «հակասում է Սահմանադրությամբ երաշխավորված կրոնական ազատության իրավունքին, սահմանափակումը համաչափ չէ և նորմի իրավական որոշակիության (res judicata) համընդհանուր սկզբունքի պահանջներին համահունչ չէ»:

2. Պատասխանողի դիրքորոշումները

Ըստ պատասխանողի վիճարկվող դրույթը համապատասխանում է Սահմանադրության պահանջներին: Մասնավորապես, հղում կատարելով միջազգային մի շարք փաստաթղթերի ու դրանցում ամրագրված սկզբունքներին, վկայակոչելով ՄԻԵԴ պրակտիկան, ինչպես նաև մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքի վերաբերյալ սահմանադրական նորմերը՝ պատասխանողը գտնում է, որ «կրոնի ազատությունը բացարձակ իրավունք չէ», և «որոշ հանգամանքներում պետությունը կարող է միջամտել կրոնի «դավանմանը»՝ սահմանափակելով կրոնի ազատության իրավունքը»:

Ըստ պատասխանողի՝ Օրենքի վիճարկվող իրավակարգավորումն «անորոշություն չի պարունակում և բավարար չափով հստակ է», քանի որ ուղղակիորեն արգելում է ոստիկանության ծառայողների անդամակցությունը որևէ կրոնական կազմակերպության և պայմանավորված է հասարակական անվտանգության ապահովման հիմքով, բխում է «հասարակական շահերից և ընդհանուր արդարություն, այդ թվում՝ անվտանգություն հաստատելու անհրաժեշտությունից»:

Պատասխանողը շեշտում է, որ ոստիկանության ծառայողները, կամավոր կերպով ընդունվելով ծառայության, գիտակցում են հավատքի ազատության իրավունքի սահմանափակման հնարավորությունը: Այդ սահմանափակումը հետապնդում է օրինական նպատակ և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում ոստիկանության ծառայողի կողմից իր պարտականությունների պատշաճ կատարման համար, քանի որ «օբյեկտիվ և անաչառ դիտորդի մոտ ոստիկանի անդամակցությունը կրոնական կազմակերպությանը կարող է ողջամիտ կասկած առաջացնել նրա անկողմնակալության վերաբերյալ»:

3. Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները

Սույն գործի շրջանակներում վիճարկվող նորմի սահմանադրականությունը գնահատելիս Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում պարզել, թե արդյո՞ք վիճարկվող իրավա-

կարգավորմամբ նախատեսված բացարձակ արգելքը համապատասխանում է, մասնավորապես, կրոնի ազատության արտահայտման և միավորումների ազատության սահմանափակումների հիմքերին:

Ելնելով վերոգրյալից՝ Սահմանադրական դատարանը վիճարկվող դրույթի սահմանադրականությունը գնահատում է Սահմանադրության 17-րդ հոդվածի 2-րդ մասի, 41 և 45-րդ հոդվածների տեսանկյունից:

4. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

4.1. Սահմանադրության 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի մտքի, խղճի, կրոնի ազատության իրավունք: Այն մարդու հիմնական իրավունք է և ներառում է կրոնը կամ համոզմունքները փոխելու ազատությունը և դրանք ինչպես միայնակ, այնպես էլ այլոց հետ համատեղ և հրապարակավ կամ մասնավոր կարգով՝ քարոզի, եկեղեցական արարողությունների, պաշտամունքի այլ ծիսակատարությունների կամ այլ ձևերով արտահայտելու ազատությունը:

Իսկ նույն հոդվածի 2-րդ մասում ամրագրվում են կրոնի ազատության թույլատրելի սահմանափակումները: Ըստ այդմ՝ կարող է սահմանափակվել միայն կրոնի ազատության արտահայտումը, ընդամին՝ միայն օրենքով՝ պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Մտքի, խղճի, կրոնի ազատությունը երաշխավորված է նաև միջազգային-իրավական մի շարք ակտերով (Մարդու և քաղաքացու իրավունքների համընդհանուր հռչակագիր (18-րդ հոդված), Մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիա (9-րդ հոդված), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր (18-րդ հոդված), Կրոնի կամ համոզմունքների հենքի վրա ամեն տեսակ անհանդուրժողականության և խտրականության չեզոքացման մասին հռչակագիր (6-րդ հոդված), Ազգային փոքրամասնությունների իրավունքների պաշտպանության մասին կոնվենցիա (8-րդ հոդված) և այլն):

Այս ազատությունն օրենքով իրացնելու արդյունավետ ընթացակարգերի երաշխավորումն ունի ոչ միայն զուտ իրավական նշանակություն, այլև ժողովրդավարական, իրավական և սոցիալական պետության կայացման ու զարգացման կարևոր նախապայման է:

Միաժամանակ, Սահմանադրությունը և վերը նշված միջազգային-իրավական ակտերը, երաշխավորելով մտքի, խղճի և կրոնի ազատությունը, հանրային իշխանության մարմիններին սկզբունքորեն պարտավորեցնում են այդ իրավունքի իրացումն ապահովել իրավական այնպիսի նախապայմանների շրջանակներում, համաձայն որոնց՝ հանրային իշխանությունը չպետք է միջամտի այդ ազատությունների իրականացմանը, ինչպես նաև պետք է սահմանի արդյունավետ իրավական և այլ կառուցակարգեր ապահովելու համար այդ ազատություններն ամեն տեսակ ոչ իրավաչափ միջամտություններից:

Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ վիճարկվող իրավադրույթը վերաբերում է ոչ միայն կրոնի ազատության արտահայտման սահմանափակմանը, այլև Սահմանադրության 45-րդ հոդվածում ամրագրված միավորումների ազատության սահմանափակմանը, քանի որ արգելում է ոստիկանության ծառայողին անդամակցելու որևէ կրոնական կազմակերպության, որը միավորման տարատեսակ է: Ընդ որում, միավորումների ազատության սահմանափակման սահմանադրական հիմքերը նույնական են կրոնի ազատության սահմանափակման հիմքերի հետ (Սահմանադրության 45-րդ հոդվածի 3-րդ մաս):

Սահմանադրական դատարանը հարկ է համարում նաև հատուկ նշել, որ, ի տարբերություն նույնպես միավորման տարատեսակ հանդիսացող կուսակցություն ստեղծելու և կուսակցությանն անդամագրվելու հիմնական իրավունքի (Սահմանադրության 46-րդ հոդված), որը սահմանափակվում է Սահմանադրության մեջ ուղղակիորեն նշված սուբյեկտային կազմի համար (դատավորներ, դատախազներ և քննիչներ), կամ Սահմանադրության մեջ հիշատակվում են այլ սուբյեկտներ, որոնց համար օրենքով կարող են սահմանվել այդ իրավունքի սահմանափակումներ (զինված ուժերում, ազգային անվտանգության, ոստիկանության և այլ ռազմականացված մարմիններում ծառայողներ), կրոնական կազմակերպությանն անդամակցելու որևէ հատուկ սուբյեկտային սահմանափակում Սահմանադրությունում ամրագրված չէ:

Այս հայեցակարգային լուծմանը համահունչ է նաև ՄԻԵԴ պրակտիկան: Այսպես, օրինակ, ըստ ՄԻԵԴ-ի՝ դատարանի վերահսկողության ինտենսիվությունը կախված է միավորման տեսակից և

գործունեության բնույթից, ժողովրդավարական հասարակությունում դրա ունեցած դերից: Հաշվի առնելով այն, որ քաղաքական կուսակցությունները և ոչ քաղաքական միավորումները ժողովրդավարության համար նույն կարևորությունը չունեն, միայն առաջին դեպքում է, որ միավորումներ կազմելու իրավունքի սահմանափակումների անհրաժեշտությունը պետք է ենթարկվի առավել խիստ վերահսկողության (Vona v. Hungary, app. 35943/10, Judgment 09/07/2013, § 58; Les Authentiks and Supras Auteuil 91 v. France, nos. 4696/11 et 4703/11, §§ 74, 84, 27 October 2016):

Իսկ ոստիկանության ծառայողների միավորումների ազատության առնչությամբ ՄԻԵԴ-ը նշել է, որ նրանց չեզոքության և զսպվածության պարտականությունը խիստ կարևոր է, քանի որ ժողովրդավարական հասարակությունում նրանց դերն է աջակցել կառավարությանը՝ իրականացնելու իր գործառնությունները (Trade Union of the Police in the Slovak Republic and Others v. Slovakia, app. 11828/08, Judgment 25/09/2012, § 57): Այնուհետև ՄԻԵԴ-ը դիրքորոշում է արտահայտել առ այն, որ իրավաչափ է ոստիկանության ծառայողներից պահանջել, որ նրանք իրենց տեսակետներն արտահայտելիս լինեն անաչառ, որպեսզի նրանց հուսալիությունը և վստահությունը հասարակության մոտ պահպանվի (նույն տեղում՝ §§ 67-70):

Այսպիսով, Սահմանադրական դատարանը փաստում է, որ կրոնական կազմակերպություններին անդամակցելը՝ որպես կրոնի ազատության արտահայտման ձև և միաժամանակ միավորման ազատության իրականացման եղանակ, կախված չէ որևէ ռազմականացված մարմնում ծառայելու փաստից, այդ թվում՝ ոստիկանությունում: Ուստի սոսկ ոստիկանությունում ծառայելու փաստը ինքնին չի կարող լինել կրոնական կազմակերպությանն անդամակցության արգելքի հիմք, նման արգելքի համար անհրաժեշտ են ավելի լուրջ նախադրյալներ, առնվազն՝ Սահմանադրության 41-րդ հոդվածի 2-րդ և 45-րդ հոդվածի 3-րդ մասում նշված նախադրյալներից որևէ մեկի առկայությունը և դրա գերակայությունը ոստիկանության ծառայողի կրոնի ազատության արտահայտման և միավորման ազատության նկատմամբ:

Սահմանադրական դատարանը վերստին հարկ է համարում անդրադառնալ այն փաստին, որ Սահմանադրությունը ոստիկանությունում ծառայողների համար, ի թիվս այլ ռազմականացված

մարմիններում ծառայողների, նախատեսել է օրենքով սահմանափակում սահմանելու իրավական հնարավորություն, մինչդեռ ոստիկանության և ռազմականացված այլ մարմիններում ծառայողների այլ հիմնական իրավունքների կամ ազատությունների սահմանափակման նման հնարավորություն չի նախատեսել:

Սահմանադրության հիշյալ դրույթների համակարգային վերլուծությունը վկայում է, որ սահմանադիրն ամրագրել է քաղաքական չեզոքության ապահովման տարբերակված հիմքեր դատավորների, դատախազների և քննիչների համար սահմանելով կուսակցություն ստեղծելու և դրան անդամագրվելու ուղղակի արգելք՝ Սահմանադրության մակարդակում, իսկ ռազմականացված մարմիններում, այդ թվում՝ ոստիկանությունում ծառայողների համար թույլատրելով օրենսդրին սուբյեկտային կազմի հիմքով սահմանելու սահմանափակումներ: Հետևապես, եթե սահմանադրի համար ռազմականացված մարմիններում ծառայողների համար կրոնական կամ այլ միավորմանն անդամակցելու ազատությունը սահմանափակելու ուղղակի անհրաժեշտություն առաջացած լիներ, սահմանադիրը կանդրադառնար նաև այդ հարցին առնվազն նման սուբյեկտների համար օրենսդրին թույլատրելով հենց այդ հիմքով սահմանափակումներ նախատեսելու հատուկ հնարավորություն:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ այն փաստը, որ սահմանադիրը կրոնի ազատության արտահայտման և միավորման ազատության սահմանափակումները չի պայմանավորել որևէ սուբյեկտի կարգավիճակով կամ նրա ծառայության առանձնահատկություններով, ուղղակիորեն հաստատում է, որ սահմանադիրը չի տարբերակել կրոնի ազատության և կրոնական կազմակերպություններին անդամակցելու իրավունքի սուբյեկտներին ըստ նրանց կարգավիճակի կամ հանրային ծառայության մեջ գտնվելու հանգամանքի կամ առանձնահատկությունների: Ուստի ոստիկանությունում ծառայողների քաղաքական չեզոքությունը կարող է ապահովվել օրենքով ամրագրված տարբեր ինտենսիվությամբ սահմանափակումներ սահմանելու միջոցով, ընդամին այս խմբի ծառայողների համար ուղղակի արգելքի բացակայությունը Սահմանադրության տեքստում նշանակում է, որ սահմանափակումները չպետք է պարտադիր ձևակերպվեն առավել խիստ միջոցի արգելքի ընտրությամբ, իսկ դավանաբանական չեզոքությունը պետք է ապահովվի, եթե առկա են կրոնի ազատության արտահայտման և կրոնական կազմակերպություններին անդամակցելու ընդհանուր սահմանափակումների իրավաչափ ամրագրման նախադրյալներ:

Այսպիսով՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ ոստիկանության ծառայողի՝ որևէ կրոնական կազմակերպության անդամակցելու արգելքի սահմանադրականությունն անհրաժեշտ է գնահատել Սահմանադրության 41-րդ հոդվածի 2-րդ մասում և 45-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանված՝ բոլորի համար ընդհանուր սահմանափակումների տեսանկյունից:

4.2. Մտքի, խղճի և կրոնի ազատության սահմանադրական բովանդակության բացահայտման տեսանկյունից՝ հաշվի առնելով դիմող կողմի հարցադրումները, Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում շեշտել, որ այդ իրավունքն ընդգրկում է.

1) անձի՝ համոզմունք, մասնավորապես՝ կրոնական համոզմունք ունենալու ազատությունը, որը սահմանադրական մակարդակով երաշխավորված **բացարձակ իրավունք է** և ենթակա չէ որևէ սահմանափակման,

2) կրոնական համոզմունքներն արտահայտելու, ի ցույց դնելու ազատությունը, որը, ի տարբերություն այդպիսիք ունենալու ազատության՝ **բացարձակ չէ և կարող է սահմանափակվել օրենքով**՝ Սահմանադրության 41-րդ հոդվածի 2-րդ մասում նախատեսված հիմքերով:

Եթե կրոնական համոզմունքներ ունենալու ազատությունն ինքնին կրոնական համոզմունքներ ընտրելու, ինչպես նաև դրանք ազատ արտահայտելու իրավունքի դրսևորում է, ապա այդ **համոզմունքներ արտահայտելու ազատությունը** դրսևորվում է այլոց հետ կրոնական միություն կազմելու, կրոնական միությանը, կազմակերպությանն անդամակցելու և դրանց շրջանակներում իր կրոնական համոզմունքներին համահունչ գործունեություն ծավալելու (քարոզչություն իրականացնելու) ազատության տեսքով:

Օրենքի վիճարկվող նորմի և վերջինիս հետ փոխկապակցված՝ այլ օրենսդրական կարգավորումների բովանդակության համադրված վերլուծությունը վկայում է, որ օրենքով կրոնական ազատության արտահայտման սահմանափակումներ նախատեսված են նաև հանրային ծառայության մի շարք այլ բնագավառներում: Մասնավորապես, «Զինվորական ծառայություն անցնելու մասին» (1-ին հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետ), «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին» (43-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետ), «Քրեակատարողական ծառայության մասին» (37-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետ), «Փրկարար ծառայության մասին» (39-րդ

հոդվածի 1-ին մասի «է» կետ), «Դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» (30-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետ) օրենքներում առկա են հիշյալ բնագավառների ծառայողների՝ կրոնական կազմակերպություններին **անդամակցության հիմքով** սահմանափակումներ՝ էլնելով հանրային ծառայության այդ մարմինների առջև դրված խնդիրների առանձնահատկություններից: Այսինքն, **կրոնական կազմակերպության անդամ լինելը** (կրոնական կազմակերպությանն անդամակցելը), ըստ հիշյալ կարգավորումների, համապատասխան հանրային ծառայության հետ ինքնին անհամատեղելի է և տվյալ հանրային ծառայողին զբաղեցրած պաշտոնից ազատելու հիմք է:

Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ «անդամ» («անդամակցություն») եզրույթի իրավական բովանդակության բացահայտման խնդրին՝ նպատակ ունենալով պարզել.

1) անձի՝ այս կամ այն կրոնական կազմակերպության անդամությամբ պայմանավորված կարգավիճակի էությունը,

2) մի կողմից՝ կրոնական կազմակերպության անդամության և, մյուս կողմից՝ դրանով պայմանավորված՝ անձի վարքագծի միջև ենթադրյալ պատճառահետևանքային կապի առկայությունն անձի՝ որպես կրոնական կազմակերպության անդամի, և միաժամանակ հանրային ծառայողի, գործողությունների իրավազնահատման հնարավորության տեսանկյունից:

«Խղճի ազատության և կրոնական կազմակերպությունների մասին» օրենքի 5-րդ («է» կետ), 6-րդ, 7-րդ («գ» և «դ» կետեր), 18-րդ և 19-րդ հոդվածների ուսումնասիրությունը վկայում է, որ.

1) կրոնական կազմակերպության «անդամ» եզրույթը **չունի անձի որոշակի կարգավիճակով պայմանավորված կառուցակարգային նշանակություն**, և այդ պատճառով այդ կազմակերպությանն անդամակցող անձի՝ ներկազմակերպական իրավունքների և պարտականությունների բովանդակությունը կարող է լիովին տարբեր լինել և չի կարող լինել միատեսակ, ուստի կրոնի ազատության արտահայտման սահմանափակման հիմք կարող է ծառայել ոչ թե բուն անդամակցությունը որևէ կրոնական կազմակերպության, այլ կրոնի ազատության այնպիսի այլ արտահայտումը, որն անհամատեղելի կլինի հանրային ծառայողի կողմից այլոց և հանրային իշխանության հանդեպ կրոնական, դավանաբանական չեզոքություն դրսևորելու պահանջի հետ,

2) կրոնական կազմակերպության «անդամ» եզրույթն առավելապես հետապնդում է տվյալ կազմակերպության՝ **որպես կրոնական լինելու կազմակերպական-իրավական տեսակը հատկորոշելու, դրան որպես իրավաբանական անձ պետական գրանցում տալու նպատակ:**

Այսպիսով, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ «կրոնական կազմակերպության անդամ» եզրույթը, ըստ օրենսդրական կարգավորման տրամաբանության, չունի իրավական այնպիսի բովանդակություն ու նշանակություն, որն **ինքնին հիմք կհանդիսանար կրոնական համոզմունքներ ունեցող անձ-հանրային ծառայողի պաշտոնեական գործունեությունը հանրային ծառայության տվյալ բնագավառում անհամատեղելի որակելու համար:**

4.3. Սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ կրոնի ազատության **սահմանափակման (արգելքի) հիմք կարող է լինել ոչ թե համոզմունքներ ունենալու ազատությունը, այլ կրոնական համոզմունքներն արտահայտելու ազատությունը,** եթե այդ սահմանափակումը պայմանավորված է պետական անվտանգության, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության անհրաժեշտությամբ: Ինչպես նշվեց, նույնաբովանդակ սահմանափակումներ են նախատեսված նաև միավորումների ազատության սահմանափակման համար:

Հետևապես, մինչև կրոնի ազատության արտահայտման սահմանափակման համաչափության գնահատումը Սահմանադրական դատարանի գնահատման առարկան առաջին հերթին այդպիսի սահմանափակման հիմքերի առկայության ստուգումն է:

Սույն գործի շրջանակներում համադրելով Սահմանադրության 41-րդ հոդվածի 2-րդ մասում և 45-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված համապատասխանաբար՝ կրոնի ազատության արտահայտման և միավորումների ազատության սահմանափակման նույնաբովանդակ հիմքերը՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ ռստիկանության ծառայողի կողմից կրոնական կազմակերպությանն անդամակցելն ինքնին չի կարող աղերսվել հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանությանը:

Ինչ վերաբերում է պետական անվտանգությանը, ապա այդպիսի անդամակցությունը խնդրահարույց կարող է լինել, նախ՝ այնպիսի կրոնական կազմակերպությունների մասով, որոնց գործունեությունը օրենքով սահմանված դեպքերում և կարգով կասեցվել կամ

արգելվել է դատարանի որոշմամբ՝ Սահմանադրության 45-րդ հոդվածի 4-րդ մասին համապատասխան:

Ոստիկանության ծառայողի անդամակցությունը կարող է խնդրահարույց լինել պետական անվտանգության տեսանկյունից նաև այնպիսի կրոնական կազմակերպություններին անդամակցության դեպքում, որոնք ստեղծվել են ոչ իրավաչափ կերպով:

Բացի դրանից, անդամակցելու փաստի ուժով իրենց անդամների համար կանոնադրական կամ ընթացիկ՝ ոստիկանության ծառայողի պարտականությունների կամ ծառայության շահերի հետ ի սկզբանե անհամատեղելի պարտականություններ սահմանող կրոնական կազմակերպություններին անդամակցելը, ինչը կարող է խաթարել ոստիկանության ծառայողի կրոնական, դավանաբանական չեզոքությունը, կարող է հանգեցնել նման դեպքերում ոստիկանությունում ծառայության անցնելու իրավունքի սահմանափակման: Հիշյալ իրավական դիրքորոշումը վերաբերելի է նաև հանրային ծառայության այլ բնագավառներին, ինչպես նաև մասնավոր իրավահարաբերությունների շրջանակներում աշխատանքային գործունեությանը:

Մնացյալ դեպքերում կրոնական կազմակերպությանն անդամակցելը չի կարող սահմանափակվել, առավել ևս արգելվել a priori՝ օրենքով՝ զուտ հանրային ծառայության տեսակի առանձնահատկությունների բերումով:

Մինևույն ժամանակ, ցանկացած հանրային ծառայող՝ Սահմանադրության 17-րդ հոդվածի ուժով, աշխարհիկ պետությունում, ինչպիսին է Հայաստանի Հանրապետությունը պարտավոր է **իր ծառայողական գործառույթները կատարելիս** պահպանել կրոնական, դավանաբանական չեզոքություն, ուստի այսպիսի օրենսդրական պահանջի ամրագրումն ինքնին իրավաչափ կլինի: Իսկ որպես մասնավոր անձ՝ նա ունի կրոնի ազատության արտահայտման իրավունք՝ բոլոր մյուս անձանց հետ հավասար հիմունքներով: Ուստի՝ կրոնական, դավանաբանական չեզոքության պահանջի կոնկրետ խախտումներն արդեն իրավակիրառ պրակտիկայում գնահատվող հանգամանքներ են:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավակիրառ պրակտիկայում ոստիկանության և այլ հանրային ծառայողի կրոնական, դավանաբանական չեզոքության պահանջը պահպանելու փաստը ենթակա է պատշաճ իրավական ընթացակարգով գնա-

հատման այդ ազատության իրացման կոնկրետ դրսևորման (դրսևորումների), տվյալ ծառայողի կողմից այդ ազատության արտահայտմանն ուղղված գործողություններ ձեռնարկելու տեսանկյունից, որպիսիք կարող են անհամատեղելիության հիմքով տվյալ հանրային ծառայողի նկատմամբ օրենքով սահմանված պատասխանատվության միջոցներ կիրառելու իրավաչափ հիմք հանդիսանալ:

Հետևապես վերոնշյալ բացառիկ դեպքերից զատ, երբ անդամակցության փաստը վկայում է կրոնական, դավանաբանական չեզոքության պահպանության անհնարինության կամ առավել հավանական խախտման մասին, միայն ոստիկանության ծառայողի վարքագծի փաստացի դրսևորումը կարող է նրա պաշտոնավարման համատեղելիության գնահատման հիմք հանդիսանալ:

Սահմանադրական դատարանը, փաստելով, որ Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ ոստիկանության ծառայողն իրավունք չունի «... իր ծառայողական դիրքն օգտագործել ... կրոնական միավորումների շահերի համար, նրանց նկատմամբ վերաբերմունք քարոզել, ինչպես նաև իր ծառայողական պարտականությունները կատարելիս ... կրոնական գործունեություն իրականացնել», նշում է, որ Օրենքում սահմանված նման սահմանափակումն իրավաչափ է, և կրոնական կազմակերպությանն անդամակցելու պատճառով ոստիկանության ծառայողն իրավասու չէ այդ կազմակերպության առջև ստանձնել այնպիսի պարտականություններ, որոնք կարող են հակասել նրա ծառայողական պարտականություններին, իսկ նման դեպքերում կրոնական կազմակերպությանն անդամակցությունը պահպանելը կարող է անհամատեղելի դառնալ հանրային ծառայության հետ:

Եթե հիշյալ սահմանափակումը բավարար չէ ոստիկանության ծառայողի կրոնական, դավանաբանական չեզոքությունն ապահովելու համար, ապա օրենսդիրն իրավասու է ընտրել նաև այլ օրենսդրական լուծումներ՝ հիմք ընդունելով սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով, 169-րդ հոդվածի 4-րդ մասով, 170-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 71-րդ հոդվածներով Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**:

1. «Ոստիկանությունում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը՝ ոստիկանության ծառայողի համար ինքնին որևէ կրոնական կազմակերպությանն անդամակցելու և անդամակցության համար վարքագծի կոնկրետ դրսևորումներով չպայմանավորված բացարձակ արգելք սահմանելու մասով, ճանաչել Սահմանադրության 41-րդ հոդվածին և 45-րդ հոդվածին հակասող և անվավեր:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

18 փետրվարի 2020 թվականի
ՍԴՈ-1506



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 43-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 9-ՐԴ ՄԱՍԻ ԵՐԿՐՈՐԴ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԳԻՐՔԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 16.1-ԻՆ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

25 փետրվարի 2020թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ա. Դիլանյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի (զեկուցող), մասնակցությամբ՝

դիմողների՝ Մարդու իրավունքների պաշտպանի և Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի պետ Կ. Մովսիսյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի և 4-րդ մասի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22, 41, 68 և 71-րդ հոդվածների,

դռնբաց նիստում մասամբ բանավոր ընթացակարգով քննեց «Մարդու իրավունքների պաշտպանի և Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի դիմումների հիման վրա՝ «Ոստիկանությունում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 9-րդ մասի երկրորդ պարբերության և «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16.1-ին հոդվածի 1-ին մասի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

«Ոստիկանությունում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (այսուհետ նաև՝ Օրենք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2002 թվականի հուլիսի 3-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել 2002 թվականի հուլիսի 30-ին և ուժի մեջ է մտել 2003 թվականի հունվարի 1-ից:

«Ոստիկանությունում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի «Կարգապահական տույժը կիրառելու և տույժը հանելու կարգը» վերտառությամբ 43-րդ հոդվածի՝ սույն գործով վիճարկվող 9-րդ մասի երկրորդ պարբերությունը սահմանում է.

«Ոստիկանության ծառայողի նկատմամբ քրեական հետապնդում իրականացվելիս լիազորությունների ժամանակավորապես կասեցումը կատարվում է մինչև քրեական գործի ավարտը կամ մինչև տվյալ գործով դատարանի դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը: Այդ դեպքում աշխատավարձը վճարվում է մինչև երկու ամսվա համար, իսկ մնացած վճարումը կատարվում է գործի՝ արդարացնող հիմքով ավարտի դեպքում»:

Օրենքի 43-րդ հոդվածը լրացվել և փոփոխվել է 14.12.04թ. ՀՕ-131-Ն, 24.10.06թ. ՀՕ-169-Ն, 15.11.10թ. ՀՕ-169-Ն, 16.12.16թ. ՀՕ-215-Ն, 31.05.19թ. ՀՕ-49-Ն օրենքներով:

«Հայաստանի Հանրապետության ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (այսուհետ նաև՝ Կանոնագիրք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2005 թվականի ապրիլի 11-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել 2005 թվականի մայիսի 11-ին և ուժի մեջ է մտել 2005 թվականի մայիսի 28-ից:

Կանոնագրքի «Քրեական հետապնդում իրականացնելու և ծառայողական քննության ժամանակահատվածում նոր պաշտոնի նշանակվելու և ոստիկանությունում ծառայությունից ազատվելու արգելքը» վերտառությամբ 16.1-ին հոդվածի՝ սույն գործով վիճարկվող 1-ին մասը սահմանում է.

«Ոստիկանության ծառայողը, որի նկատմամբ հարուցված է քրեական հետապնդում, մինչև քրեական հետապնդումը դադարեցնելը չի կարող նշանակվել նոր պաշտոնի, իր նախաձեռնությամբ ազատվել ոստիկանությունում ծառայությունից»:

Կանոնագրքի 16.1-ին հոդվածը լրացվել է 19.03.12թ. ՀՕ-36-Ն օրենքով:

Գործի քննության առիթը Մարդու իրավունքների պաշտպանի՝ 2019 թվականի հուլիսի 31-ին և Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի՝ 2019 թվականի սեպտեմբերի 23-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումներն են:

«Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 41-րդ հոդվածի հիմքով՝ Սահմանադրական դատարանի 2019 թվականի նոյեմբերի 5-ի ՍԴԱՈ-123 աշխատակարգային որոշմամբ վերոհիշյալ դիմումներով գործերը միավորվել են:

Սահմանադրական դատարանի 2020 թվականի փետրվարի 11-ի ՍԴԱՈ-23 աշխատակարգային որոշմամբ սույն գործի հանգամանքների առավել արդյունավետ բացահայտման նպատակով որոշվել է անցնել բանավոր ընթացակարգով դատաքննության՝ Մարդու իրավունքների պաշտպանի դիմումի մասով:

Լսելով և ուսումնասիրելով սույն գործով դիմողների և պատասխանողի բացատրությունները, ինչպես նաև վերլուծելով Օրենքի և Կանոնագրքի համապատասխան դրույթները, գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Ձ Ե Ց**.

1. Դիմողների դիրքորոշումները

1.1. Մարդու իրավունքների պաշտպանը, դիմելով Սահմանադրական դատարան, խնդրում է որոշել «Ոստիկանությունում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 9-րդ մասի երկրորդ պարբերության և «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16.1-ին հոդվածի 1-ին մասի Սահմանադրության 29, 31, 57, 66, 78 և 80-րդ հոդվածներին համապատասխանությունն այնքանով, որքանով ոստիկանության ծառայողի նկատմամբ քրեական հետա-

պնդում իրականացնելու դեպքում վերջինս զրկված է լինում և՛ սեփական նախաձեռնությամբ ոստիկանությունում ծառայությունից ազատվելու հնարավորությունից, և՛ այլ պաշտոնի նշանակվելու կամ գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից բացի այլ աշխատանք կատարելու հնարավորությունից:

Մարդու իրավունքների պաշտպանը վիճարկվող իրավադրույթների հետ կապված ենթադրյալ սահմանադրականության հարցերը ներկայացնում է աշխատանքի ազատ ընտրության իրավունքի իրացման սահմանադրաիրավական և միջազգային իրավական բովանդակության, այդ իրավունքի սահմանափակման սահմանադրաիրավական երաշխիքների, աշխատանքի ազատ ընտրության և մասնավոր ու ընտանեկան կյանքի իրավունքների փոխկապակցվածության, աշխատանքային հարաբերություններում խտրականության արգելքի, անմեղության կանխավարկածի սկզբունքի, ինչպես նաև պետական ծառայության այլ տարատեսակների հարաբերությունները կարգավորող համանման իրավադրույթների համեմատական վերլուծության համատեքստում: Մասնավորապես, դիմողը եզրահանգում է, որ «Ոստիկանության ծառայողների համար նման խնդրահարույց կարգավորումներ նախատեսելու արդյունքում վերջինս հայտնվում է մի իրավիճակում, երբ ծառայողը մի կողմից չի կարող ընտրել վարձատրվող այլ աշխատանք, մյուս կողմից առանց աշխատավարձի հնարավորություն չի ունենում հոգալ նյութական և սոցիալական նվազագույն կարիքները՝ ապահովելով իր և իր ընտանիքի կենսապահովման նվազագույն կարիքների բավարարումը»: Դիմողը նաև գտնում է, որ ծառայողի նկատմամբ քրեական հետապնդման ողջ ժամանակահատվածի համար աշխատավարձի չվճարման և ծառայությունից դուրս գալու միաժամանակյա արգելքը հանգեցնում է անմեղության կանխավարկածի սկզբունքի սահմանադրաիրավական երաշխիքից օգտվող ոստիկանության ծառայողի իրավունքների անհամաչափ սահմանափակման, ինչն էլ իր հերթին պարունակում է անձի վիճակը էականորեն վատթարացնող և այդպիսով պատժիչ բնույթ ունեցող տարրեր:

1.2. Հայաստանի Հանրապետության վարչական դատարանը, դիմելով Սահմանադրական դատարան, խնդրում է որոշել «Ոստիկանությունում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 9-րդ մասի երկրորդ պարբերության՝ Սահմանադրության 29-րդ հոդվածին, 61-րդ հոդվածի 1-ին մասին և 79 հոդվածին համապատասխանության հարցը:

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանը, վիճարկվող իրավադրույթի հետ կապված ենթադրյալ սահմանադրականության հարցերը ներկայացնելով սահմանադրակախրավական և միջազգային իրավական մի շարք կարգավորումների, Մահմանադրական դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի առանձին իրավական դիրքորոշումների վերլուծության համատեքստում, մասնավորապես եզրահանգում է, որ «Ոստիկանությունում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 9-րդ մասի երկրորդ պարբերությունը հակասում է Մահմանադրության 79-րդ հոդվածին՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ այդ իրավադրույթի կիրառումը սահմանափակում է անձի Մահմանադրության 57-րդ հոդվածով նախատեսված աշխատանքի ազատ ընտրության իրավունքի իրացումը՝ չսահմանելով նման սահմանափակման բովանդակային հիմքեր և կիրառման որոշակի պայմաններ: Ըստ դիմողի՝ վիճարկվող իրավադրույթով «...ոստիկանության ծառայողի լիազորությունների ժամանակավորապես կասեցնելու հիմքերը և ծավալը չսահմանելը թեև անձին de jure չի զրկում լիազորությունները կասեցնելու վերաբերյալ վարչական ակտը բողոքարկելու դատական պաշտպանության իրավունքից, այդուհանդերձ, նման իրավունքը գործնականում ձեռք է բերում ձևական բնույթ: Մասնավորապես, ոստիկանության ծառայողի լիազորություններն առանց որևէ հիմքի՝ զուտ վերջինիս նկատմամբ քրեական հետապնդում իրականացնելու ուժով կասեցնելու վերաբերյալ հրամանը դատական կարգով բողոքարկելիս անձը զրկված է նշված հրամանի հիմնավորվածությունը դատարանում վիճարկելու իրական հնարավորությունից, ինչն էլ ուղղակիորեն հակասում է ՀՀ Մահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված արդյունավետ դատական պաշտպանության իրավունքին»: Միաժամանակ դիմողը գտնում է, որ հանրային տարբեր ծառայողների նկատմամբ օրենսդրական միասնական մոտեցում ապահովված չէ, ինչը հիմնավորված չէ, ըստ այդմ՝ ոստիկանության ծառայողների նկատմամբ դրսևորվում է չարդարացված խտրականություն և տարբերակում է նախատեսվում միևնույն հանգամանքներում գտնվող միևնույն կարգավիճակով օժտված սուբյեկտների համեմատ:

2. Պատասխանողի դիրքորոշումները

Պատասխանողը (2019 թվականի սեպտեմբերի 27-ի և նոյեմբերի 11-ի գրավոր բացատրություններով) խնդրում է Սահմանադրական դատարանին «Ոստիկանությունում ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 9-րդ մասի երկրորդ պարբերության և «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կարգապահական կանոնագիրքը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16.1-ին հոդվածի 1-ին մասի Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով ընդունել որոշում՝ վիճարկվող դրույթները Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին:

Պատասխանողը վիճարկվող իրավադրույթների վերաբերյալ դիմողների բարձրացրած ենթադրյալ սահմանադրականության հարցերին անդրադարձել է՝ վերլուծելով Սահմանադրության, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի, պետական ծառայության առանձին տեսակների հարաբերությունները կարգավորող օրենքների մի շարք դրույթներ, ինչպես նաև վկայակոչելով Սահմանադրական դատարանի և Մարդու իրավունքների եվրոպական դատարանի առանձին իրավական դիրքորոշումներ:

Պատասխանողը գտնում է, որ «...կարգապահական վարույթի ընթացքում ոստիկանության ծառայողի աշխատանքի ընտրության սահմանափակումը պայմանավորված է անձին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցի վերջնական լուծմամբ, այն պարագայում, երբ նա չենթարկվի քրեական պատասխանատվության, ինչը ոստիկանության ծառայողի կողմից ծառայությունից դուրս գալու դեպքում հնարավոր չի լինի: տվյալ պարագայում նախատեսված սահմանափակումը անհրաժեշտ է և համաչափ հետապնդվող իրավաչափ նպատակին և բխում է պատժի անխուսափելիության սկզբունքից»:

Ըստ պատասխանողի՝ «...ոստիկանության ծառայողները չեն համարվում զինծառայողներին հավասարեցված անձինք, ի տարբերություն ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայողների, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայողների և հարկադիր կատարողների: ոստիկանության ծառայողներին և զինծառայողներին ու նրանց հավասարեցված անձանց, ինչպես նաև այլ իրավապահ մարմինների ծառայողներին, մասնավորապես քննչական կոմիտեի և դա-

տախազության ծառայողներին որպես «միևնույն կատեգորիայի անձինք» դիտարկելը չի բխում ՀՀ օրենսդրական կարգավորումներից»: Պատասխանողը եզրահանգում է, որ օրենսդրական կարգավորմամբ առկա չէ խտրական վերաբերմունք ոստիկանության ծառայողների և դատավորների, քննչական կոմիտեի կամ դատախազության ծառայողների միջև, քանի որ նրանք չեն կարող համարվել էապես նույն իրավիճակում գտնվող անձինք:

Պատասխանողը գտնում է նաև, որ ոստիկանության ծառայողի լիազորությունների կասեցման վարչաիրավական մեխանիզմը կարող է կիրառվել, եթե իրականացվել են Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածով սահմանված գործողությունները, և պահպանվել են նույն հոդվածով սահմանված երաշխիքները, որն էլ իրենից ենթադրում է հենց լիազորությունների կասեցման քրեադատավարական մեխանիզմը: Ըստ պատասխանողի՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի և Օրենքի հիմքում դրված նպատակը, սկզբունքները և էլնելով դրանցում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ընդունող մարմնի հետապնդող նպատակից հիշյալ երկու իրավական ակտերում սահմանված մեխանիզմները հանդիսանում են մեկը մյուսով պայմանավորված, հաջորդական գործընթացներ, այսինքն՝ Օրենքի 43-րդ հոդվածի 9-րդ մասի երկրորդ պարբերությամբ սահմանված լիազորությունների ժամանակավորապես կասեցումը կարող է կատարվել միայն այն պարագայում, երբ կա Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածի կարգով կայացված դատախազի կամ քննիչի որոշում:

Ի լրումն վերը նշված բացատրությունների՝ պատասխանողն իր 2020 թվականի փետրվարի 17-ի գրավոր և փետրվարի 18-ի բանավոր լրացուցիչ բացատրություններով նշում է, որ վիճարկվող դրույթները Սահմանադրության հետ հակասության մեջ չեն գտնվում, բայց միաժամանակ, տեղեկացնում է, որ դիմումով բարձրացված հարցերը և առաջ քաշված խնդիրներն ընդհանուր առմամբ ընդունելի են նաև Ազգային ժողովի կողմից:

3. Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները

Սույն գործով վիճարկվող իրավակարգավորումների սահմանադրականությունը գնահատելու նպատակով Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ, մասնավորապես, հետևյալ հարցադրումներին.

ա) ոստիկանության ծառայողի նկատմամբ քրեական հետապնդման ժամանակահատվածում նրա լիազորությունների կասեցումը պարտադիր է արդյոք Օրենքի 43-րդ հոդվածի 9-րդ մասի երկրորդ պարբերության իրավակարգավորման ուժով, և եթե հիմնված է ոստիկանության ծառայողի նկատմամբ բացառապես քրեական հետապնդում հարուցելու փաստի վրա, խախտում է արդյոք Սահմանադրության 29-րդ հոդվածով նախատեսված խտրականության արգելքը և Սահմանադրության 66-րդ հոդվածով նախատեսված անմեղության կանխավարկածի սկզբունքը,

բ) ոստիկանության ծառայողի նկատմամբ քրեական հետապնդման որոշակի ժամանակահատվածում աշխատավարձ չվճարելու և դրա հետ միաժամանակ ծառայությունից իր նախաձեռնությամբ ազատվելու օրենսդրական արգելք սահմանելը խախտում է արդյոք Սահմանադրության 49, 66 և 78-րդ հոդվածներով սահմանված պահանջները,

գ) Օրենքի 43-րդ հոդվածի 9-րդ մասի երկրորդ պարբերության իրավակարգավորումը համապատասխանում է արդյոք Սահմանադրության 79-րդ հոդվածով սահմանված որոշակիության սկզբունքին:

4. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

4.1. Օրենքի դրույթների վերլուծության արդյունքում Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը «Կարգապահական տույժը կիրառելու և տույժը հանելու կարգը» վերտառությամբ 43-րդ հոդվածով առանձին կանոնակարգել է ծառայողական քննության ժամանակահատվածում ոստիկանության ծառայողի լիազորությունները ժամանակավորապես դադարեցնելու (9-րդ մասի առաջին պարբերություն) և ոստիկանության ծառայողի նկատմամբ քրեական հետապնդում իրականացվելիս լիազորությունների ժամանակավորապես կասեցման հետ կապված հարաբերությունները (9-րդ մասի երկրորդ պարբերություն):

Սահմանադրական դատարանն իրավակիրառական պրակտիկայի ուսումնասիրության արդյունքում (ըստ Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի տեղակալի 17.02.2020թ. գրության) արձանագրում է նաև, որ ոստիկանության ծառայողի նկատմամբ քրեական հետապնդում իրականացվելիս լիազորությունների ժամանակավորապես կասեցումը կատարվել է ինչպես Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի

152-րդ հոդվածով նախատեսված հիմքով (դատախազի, կամ դատախազի համաձայնությամբ՝ քննիչի որոշմամբ), այնպես էլ առանց հիշյալ հոդվածով նախատեսված հիմքի առկայության: Այլ կերպ իրավակիրառական պրակտիկայում արձանագրվել են դեպքեր, երբ ոստիկանության ծառայողի նկատմամբ քրեական հետապնդման ժամանակահատվածում նրա լիազորությունների ժամանակավորապես կասեցումը հիմնված է եղել ոստիկանության ծառայողի նկատմամբ բացառապես քրեական հետապնդում իրականացնելու փաստի վրա:

Սահմանադրական դատարանը, անդրադառնալով սույն գործով վիճարկվող դրույթներով ամրագրված «քրեական հետապնդում իրականացնել» և «քրեական հետապնդում հարուցել» եզրույթներին, փաստում է, որ «քրեական հետապնդում» և «քրեական հետապնդման հարուցում» հասկացությունների նշանակությունը բացահայտված է Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 6-րդ հոդվածի համապատասխանաբար 17 և 18-րդ կետերում: Ըստ այդմ քրեական հետապնդում են համարվում այն բոլոր դատավարական գործողությունները, որոնք իրականացնում են քրեական հետապնդման մարմինները, իսկ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված դեպքերում տուժողը՝ նպատակ ունենալով բացահայտել քրեական օրենսգրքով չթույլատրված արարքը կատարած անձին, վերջինիս մեղավորությունը հանցանքի կատարման մեջ, ինչպես նաև ապահովել այդպիսի անձի նկատմամբ պատժի և հարկադրանքի այլ միջոցներ կիրառելը: Ինչ վերաբերում է քրեական հետապնդում հարուցելուն, ապա դա քրեական հետապնդման մարմնի որոշումն է անձին որպես մեղադրյալ ներգրավելու, ինչպես նաև մինչև այդ նրան ձերբակալելու կամ նրա նկատմամբ խափանման միջոց կիրառելու մասին:

Նշված որոշումներից որևէ մեկը կայացնելու դեպքում անձը պարտադիր ստանում է կամ կասկածյալի (Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 62-րդ հոդվածի 1-ին մաս), կամ մեղադրյալի (Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 64-րդ հոդվածի 1-ին մաս) կարգավիճակ: Միաժամանակ, Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածի 1-ին մասի բովանդակությունից հետևում է, որ «պաշտոնավարության ժամա-

նակավոր դադարեցում» դատավարական հարկադրանքի միջոցը կարող է կիրառվել բացառապես կասկածյալի կամ մեղադրյալի նկատմամբ, այսինքն՝ այն անձի, որի նկատմամբ արդեն իսկ հարուցված է քրեական հետապնդում:

Վերոհիշյալ քրեադատավարական կարգավորումների պայմաններում Սահմանադրական դատարանը նշում է, որ սույն գործով վիճարկվող դրույթների վերլուծության շրջանակներում «քրեական հետապնդում իրականացնելը» հաջորդում է «քրեական հետապնդում հարուցելուն»: Հետևաբար, սույն որոշման մեջ նշված եզրույթներն օգտագործվում են՝ նկատի ունենալով դրանց հենց այդ հարաբերակցությունը:

4.2. Սահմանադրական դատարանն իր 2019 թվականի նոյեմբերի 15-ի ՄԴՈ-1488 որոշմամբ անդրադարձել է Սահմանադրության 49-րդ հոդվածում ամրագրված՝ ընդհանուր հիմունքներով հանրային ծառայության անցնելու իրավունքի սահմանադրական բովանդակությանը և արտահայտել, մասնավորապես, հետևյալ իրավական դիրքորոշումները.

1) սահմանադրորեն երաշխավորված հանրային ծառայության անցնելու իրավունքի իրականացման համար օրենսդիրը պետք է ապահովի ընդհանուր հիմքեր՝ *բացառելով որևէ խտրականություն,*

2) այդուհանդերձ՝ ընդհանուր հիմունքներով հանրային ծառայության անցնելու իրավունքի իրականացման կառուցակարգերը կարող են էապես տարբերվել միմյանցից՝ *կախված հանրային պաշտոնի առանձնահատկություններից և հանրային ծառայության տեսակից,*

3) հանրային ծառայության անցնելու հիմնական իրավունքի ծավալի մեջ ներառվում է նաև **անձի կողմից ընդհանուր հիմունքներով զբաղեցված հանրային պաշտոնում պաշտոնավարելու իրավունքը**, որը, իր հերթին, ենթադրում է օրենքով *չնախատեսված, ինչպես նաև կամայական հիմքերով հանրային ծառայությունից ազատվելու արգելք:*

Սահմանադրական դատարանի ՄԴՈ-1488 որոշմամբ ամրագրվել է նաև, որ «...հիմնական իրավունքները կամ ազատությունները սահմանափակող օրենքների հստակությունը, կանխատեսելիությունը և մատչելիությունն ուղիղ համեմատական են հիմնական իրավունքի սահմանափակման աստիճանին. **որքան ավելի ինտենսիվ է այդ սահմանափակումը, այնքան ավելի հստակ, կանխա-**

տեսելի և մատչելի պետք է լինեն հիշյալ օրենքների ձևակերպումները, որպեսզի երկիմաստություն չառաջացնեն մասնավոր անձանց համար արգելքների, այլ սահմանափակումների կամ նրանց վրա դրված պարտականությունների առկայության և բովանդակության հարցում»:

Վերահաստատելով և սույն գործի շրջանակներում զարգացնելով վերոհիշյալ իրավական դիրքորոշումները՝ Սահմանադրական դատարանը գտնում է.

1) հանրային ծառայողի պաշտոնավարման իրավունքին որևէ միջամտություն պետք է իրականացվի *ոչ խտրական հիմքերով*՝ անկախ այն հանգամանքից, թե այդ ծառայողի նկատմամբ հարուցվել է քրեական հետապնդում, թե ոչ, և անկախ որևէ այլ հանգամանքից, որը օբյեկտիվ հիմքով և իրավաչափ նպատակով չի հանգեցնում նրա պաշտոնավարման իրավունքին իրավաչափ միջամտության:

2) հանրային ծառայողի պաշտոնավարման իրավունքին այնպիսի միջամտությունը, որն ունի առավելագույն կամ բարձր ինտենսիվություն, այն է՝ հանգեցնում է նրա պաշտոնավարման հարկադիր դադարեցման կամ կասեցման, պետք է հիմքում ունենա հստակ, կանխատեսելի և մատչելի կարգավորումներ օրենքի մակարդակում, բացի դրանից, լինի համաչափ:

3) հանրային ծառայությունը կարգավորող օրենքներում չպետք է ամրագրվեն սուկ քրեական հետապնդման հարուցման փաստով պայմանավորված՝ այնպիսի հավելյալ սահմանափակումներ, որոնք, մի կողմից՝ դուրս են հանրային ծառայության ընդհանուր համակարգի տրամաբանությունից, մյուս կողմից՝ չունեն առարկայական արդարացում հատուկ օրենքում:

4) հաշվի առնելով հանրային ծառայողների առավել մեծ մասի և, ընդհանրապես, որևէ այլ մասնավոր անձի նկատմամբ ինքնին քրեական վարույթ հարուցելու համար իրավական խոչընդոտների նվազ լինելը՝ հանրային ծառայողի պաշտոնավարման նկատմամբ *քրեական դատավարության օրենքով չնախատեսված* այլ հավելյալ սահմանափակումները պետք է կիրառվեն բացառապես *սուբսիդիարության կանոնի համաձայն*, այն է՝ եթե քրեադատավարական միջոցների կիրառմամբ հնարավոր չէ հասնել Սահմանադրությամբ կամ օրենքով սահմանված համապատասխան իրավաչափ նպատակի կենսագործմանը: Ընդամին՝ քրեադատավարական ներ-

գործության միջոցներ կիրառելու անհրաժեշտության բացակայության պայմաններում **սուկ քրեական հետապնդման հարուցման փաստի ուժով** հավելյալ օրենսդրական սահմանափակումներ ամրագրելը չի կարող հետապնդել Սահմանադրության տեսանկյունից արդարացված որևէ նպատակ, ուստի չի կարող արդարացվել ոչ հանրային ծառայության ընդհանուր համակարգի տրամաբանությամբ, ոչ էլ հանրային ծառայության որևէ կոնկրետ տեսակի առանձնահատկություններով.

5) հանրային ծառայության անցնելու և զբաղեցված պաշտոնում առանց չարարացված միջամտության պաշտոնավարելու իրավունքը ենթադրում է նաև այդ **պաշտոնից սեփական նախաձեռնությամբ ազատվելու անարգել հնարավորություն**՝ անկախ պաշտոնեական լիազորությունների իրականացման կապակցությամբ կարգապահական, քրեական կամ այլ պատասխանատվության ընթացակարգի առկայությունից: Հանրային ծառայության պաշտոնից սեփական նախաձեռնությամբ ազատվելու իրավունքը նույնքան պաշտպանված է Սահմանադրության 49-րդ հոդվածով, որքան հանրային ծառայության անցնելու իրավունքը:

Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ հանրային ծառայությունից սեփական նախաձեռնությամբ ազատվելու արգելքն առնչվում է նաև Սահմանադրության 57-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված՝ աշխատանքի ազատ ընտրության իրավունքին, քանի որ սահմանափակում է անձի հնարավորությունը հանրային ծառայությունից անցնելու այլ, այդ թվում՝ մասնավոր իրավահարաբերությունների շրջանակում աշխատանքի:

Հարկ է նշել նաև, որ միջազգային իրավական փաստաթղթերով և սահմանված են աշխատանքային իրավունքների պաշտպանության բնագավառում առանցքային կարգավորումներ: Այսպես.

1) Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 23-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի աշխատանքի, աշխատանքի ազատ ընտրության իրավունք,

2) Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագրի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Մույն դաշնագրին մասնակցող պետությունները ճանաչում են աշխատանքի իրավունքը, որն իր մեջ ներառում է յուրաքանչյուր մարդու իրավունքը իր ապրուստի համար աշխատանքով վատակելու հնարավորություն ստանալը, որը նա ազատորեն ընտրում

է, կամ որին նա ազատորեն համաձայնում է, և կձեռնարկեն հարկ եղած քայլեր այդ իրավունքի ապահովման համար»,

3) Վերանայված Եվրոպական սոցիալական խարտիայի 1-ին մասի համաձայն՝ կողմերը, որպես իրենց քաղաքականության նպատակ, պարտավորվում են արդյունավետ իրականացման համար նպաստել նաև, որ յուրաքանչյուր ոք ունենա վաստակելու հնարավորություն՝ իր կողմից ազատորեն ընտրված ցանկացած աշխատանքով,

4) Աշխատանքի և զբաղվածության բնագավառում խտրականության մասին կոնվենցիայի 1-ին հոդվածի 2-րդ կետի համաձայն որոշակի աշխատանքի հետ կապված ցանկացած տարբերակում, բացառում կամ նախապատվություն, որը հիմնված է այդ աշխատանքին հատուկ պահանջների վրա, խտրականություն չի համարվում, իսկ հիշյալ կոնվենցիայի 4-րդ հոդվածի համաձայն այն անձի դեմ ուղղված ցանկացած միջոցառում, որի վերաբերյալ կա հիմնավորված կասկած կամ ապացուցված է, որ նա զբաղվում է պետության անվտանգությունը վտանգող գործունեությամբ, խտրականություն չի համարվում՝ պայմանով, որ տվյալ անձն իրավունք ունենա դիմելու ներպետական պրակտիկային համապատասխան ստեղծված իրավասու մարմնին:

Սահմանադրական դատարանը փաստում է, որ այս միջազգային չափորոշիչները *mutatis mutandis* պետք է կիրառելի լինեն նաև հանրային ծառայության ոլորտում, քանի որ իրենց էությանը տարածելի են նաև հանրային իրավահարաբերությունների շրջանակներում հանրային-իշխանական գործառույթներ իրականացնող անձանց վրա:

4.3. Սույն գործով վիճարկվող Օրենքի 43-րդ հոդվածի 9-րդ մասի երկրորդ պարբերության համաձայն՝ ոստիկանության ծառայողի նկատմամբ քրեական հետապնդում իրականացվելիս լիազորությունների ժամանակավորապես կասեցումը կատարվում է մինչև քրեական գործի ավարտը կամ մինչև տվյալ գործով դատարանի դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը: Այդ դեպքում աշխատավարձը վճարվում է մինչև երկու ամսվա համար, իսկ մնացած վճարումը կատարվում է գործի՝ արդարացնող հիմքով ավարտի դեպքում: Ինչպես վերը փաստվեց նաև իրավակիրառական պրակտիկայով, նման ձևակերպմամբ իրավակարգավորումից բխում է, որ ոստիկանության ծառայողի նկատմամբ լիազորությունների ժամանակավորապես կասեցում կիրառվում է նաև առանց Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 152-րդ

հողվածով նախատեսված հիմքի առկայության (դատախազի, կամ դատախազի համաձայնությամբ՝ քննիչի որոշման), և այն, ըստ էության, պայմանավորվում է ոստիկանության ծառայողի նկատմամբ սոսկ քրեական հետապնդում հարուցելու փաստով:

Հարկ է ընդգծել, որ այս իրավակարգավորման հետ միաժամանակ գործում է նաև օրենսդրական այն արգելքը, համաձայն որի՝ ոստիկանության ծառայողը, որի նկատմամբ հարուցված է քրեական հետապնդում, մինչև քրեական հետապնդումը դադարեցնելը չի կարող նշանակվել նոր պաշտոնի, իր նախաձեռնությամբ ազատվել ոստիկանությունում ծառայությունից (Կանոնագրքի 16.1-ին հոդվածի 1-ին մաս):

Սահմանադրական դատարանը գտնում է, որ վերոհիշյալ իրավակարգավորումները և դրանց իրավակիրառումը խնդրահարույց են Սահմանադրության 29 և 66-րդ հոդվածների տեսանկյունից:

Սահմանադրության 29-րդ հոդվածի համաձայն՝ խտրականությունը, կախված սեռից, ռասայից, մաշկի գույնից, էթնիկ կամ սոցիալական ծագումից, գենետիկական հատկանիշներից, լեզվից, կրոնից, աշխարհայացքից, քաղաքական կամ այլ հայացքներից, ազգային փոքրամասնությանը պատկանելությունից, գույքային վիճակից, ծնունդից, հաշմանդամությունից, տարիքից կամ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հանգամանքներից, արգելվում է:

Խտրականության արգելքն ամրագրող հիմնարար սկզբունքի ձևակերպումը՝ անձնական կամ սոցիալական բնույթի այլ հատկանիշների մասով, ի թիվս այլնի, վերաբերում է նաև *հանրային ծառայության մեջ գտնվելու հանգամանքին, ինչպես նաև քրեական հետապնդում հարուցելու փաստին*:

Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում անդրադարձել է խտրականության արգելքի սկզբունքին՝ արտահայտելով, մասնավորապես, հետևյալ իրավական դիրքորոշումները.

1) «...պետության պոզիտիվ սահմանադրական պարտականությունն է ապահովել այնպիսի պայմաններ, որոնք նույն կարգավիճակն ունեցող անձանց հավասար հնարավորություն կտան իրացնելու, իսկ խախտման դեպքում՝ պաշտպանելու իրենց իրավունքները, հակառակ դեպքում՝ կխախտվեն ոչ միայն հավասարության, խտրականության արգելման, այլ նաև իրավունքի գերակայության և իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքները» (ՄԴՈ-731),

2) «Սահմանադրական դատարանը խտրականության արգելման սկզբունքի շրջանակներում թույլատրելի է համարում օբյեկտիվ հիմքով և իրավաչափ նպատակով պայմանավորված ցանկացած տարբերակված մոտեցում: Խտրականության արգելման սկզբունքը չի նշանակում, որ միևնույն կատեգորիայի անձանց շրջանակում ցանկացած տարբերակված մոտեցում կարող է վերածվել խտրականության: Խտրականության սկզբունքի խախտում է հանդիսանում այն տարբերակված մոտեցումը, **որը գուրկ է օբյեկտիվ հիմքից և իրավաչափ նպատակից**» (ՄԴՈ-881),

3) «...աշխատանքի ընտրության ազատությունը յուրաքանչյուր անհատի համար ապահովում է առանց խտրականության աշխատանքային հարաբերությունների մեջ մտնելու և իր մասնագիտական ու այլ ընդունակություններն ազատ դրսևորելու հավասար հնարավորություն: Միաժամանակ, այն չի խոչընդոտում օրենսդրին աշխատանքային հարաբերություններն իրավական կարգավորման ենթարկելիս սահմանել **անձանց իրավական տարբեր կարգավիճակներ՝** կապված աշխատանքային պայմանների, անմիջական պայմանագրային պարտականությունների, գործունեության բնագավառի հետ, և նույնիսկ նախատեսել **առանձին պաշտոններ զբաղեցնելու և պաշտոններից ազատելու առանձնահատուկ դեպքեր**, եթե դրանք օբյեկտիվորեն արդարացված են և ունեն սահմանադրաիրավական համապատասխան հիմնավորում» (ՄԴՈ-991),

4) «...խտրականությունն առկա է այն դեպքում, երբ նույն իրավական կարգավիճակի շրջանակներում այս կամ այն անձի կամ անձանց նկատմամբ դրսևորվում է տարբերակված մոտեցում, մասնավորապես՝ նրանք զրկվում են այս կամ այն իրավունքներից, կամ դրանք սահմանափակվում են, կամ ձեռք են բերում արտոնություններ (ՄԴՈ-1224):

Սահմանադրական դատարանը հարկ է համարում նաև վկայակոչել Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ խտրականության արգելքի սկզբունքի վերաբերյալ արտահայտած, մասնավորապես, հետևյալ իրավական դիրքորոշումները.

1) վարքագծում տարբերությունը խտրականություն է միայն այն դեպքում, երբ չունի օբյեկտիվ և պատճառաբանված հիմնավորում, այսինքն՝ եթե չի հետապնդում իրավաչափ նպատակ, կամ որևէ ողջամիտ հարաբերակցություն առկա չէ օգտագործվող միջոցների և այն նպատակների միջև, որին պետք է հասնել (Inze v. Austria, գործով 1987թ. հոկտեմբերի 28-ի վճիռ, գանգատ թիվ 8695/79, § 41),

2) տարբերակումը կամ տարբերությունը համարվում է խտրական, եթե այն չունի օբյեկտիվ և ողջամիտ արդարացում, այսինքն՝ եթե այդ տարբերակումը կամ տարբերությունը չի հետապնդում իրավաչափ նպատակ կամ համաչափ չէ հետապնդվող իրավաչափ նպատակին (Andrejeva v. Latvia, գործով Մեծ պալատի 2009թ. փետրվարի 18-ի վճիռ, գանգատ թիվ 55707/00, § 81):

Սահմանադրության 66-րդ հոդվածի համաձայն՝ հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղքն ապացուցված չէ օրենքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ անմեղության կանխավարկածը՝ համակցված խտրականության արգելքի սկզբունքի հետ, բացառում է օրենքով քրեական հետապնդում հարուցելու հետ կապված այնպիսի սահմանափակումների ամրագրման իրավական հնարավորությունը, որոնք վերաբերում են անձի ընդհանուր կարգավիճակին, այդ թվում՝ հանրային, տվյալ դեպքում՝ ոստիկանության ծառայության պաշտոնում նրա հետագա պաշտոնավարման կամ ծառայությունից ազատվելու իրավունքին, և որոնք անհրաժեշտ չեն քրեական վարույթի իրականացման համար: Հետևապես՝ նախ՝ քրեական հետապնդում հարուցելու փաստը որևէ կերպ չի կարող հիմք դառնալ հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձի պաշտոնավարումը կասեցնելու կամ դադարեցնելու համար, եթե նրա նկատմամբ չի ընտրվել դատավարական ներգործության այնպիսի միջոց, որը արգելափակում է նրա հետագա պաշտոնավարումը: Դա նշանակում է, որ նման հիմքով չի կարող արգելափակվել նաև հանրային ծառայության պաշտոնից ազատվելու՝ անձի իրավունքը: Ուստի հանրային ծառայության պաշտոնի հետ կապված բոլոր իրավունքները, որոնք քրեական հետապնդման շրջանակներում չեն սահմանափակվել, չեն կարող սահմանափակվել նաև հանրային ծառայությունը կարգավորող ընդհանուր կամ հատուկ օրենքներով: Բացի դրանից, դա նշանակում է նաև հանրային ծառայության պաշտոնով պայմանավորված պարտականությունների անարգել իրականացման ապահովում, ինչից էլ հետևում է, որ մինչև մեղադրական դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելն անձի՝ վարձատրություն ստանալու իրավունքը չի կարող և չպետք է սահմանափակվի ո՛չ բովանդակային, ո՛չ էլ ժամանակագրական տեսանկյունից:

Այսպիսով, Սահմանադրական դատարանը գտնում է, որ առկա չէ որևէ հիմնավորում՝ **բացառապես քրեական հետապնդում հարուցելու փաստի հիմքով** հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձի՝ այդ պաշտոնից աժանցվող որևէ իրավունքի սահմանափակման համար:

Նշվածը վերաբերելի է ինչպես պետական ծառայության, համայնքային ծառայության, հանրային պաշտոններ զբաղեցնող, այնպես էլ աշխատանքային պայմանագրով աշխատող անձանց:

4.4. Սահմանադրության 78-րդ հոդվածով ամրագրված համաչափության սկզբունքի համաձայն՝ հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:

Սույն գործով վիճարկվող իրավակարգավորումների սահմանադրականության գնահատման շրջանակներում անհրաժեշտ է պարզել նաև, թե արդյոք ոստիկանության ծառայողի նկատմամբ օրենքներով ընտրված սահմանափակումները, այն է՝ *լիազորությունների ինքնաշխատ կասեցումը, աշխատավարձի վճարման ժամկետի սահմանափակումը, նոր պաշտոնի նշանակվելը կամ իր նախաձեռնությամբ ոստիկանությունում ծառայությունից ազատվելը* հետապնդում են իրավաչափ, այսինքն՝ Սահմանադրությամբ սահմանված նպատակ:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ հիշյալ սահմանափակումները պայմանավորված են բացառապես քրեական հետապնդում հարուցելու փաստով, հետևապես, կարող են արդարացված լինել միայն քրեական վարույթի շրջանակներում ներգործության միջոցներ կիրառելու անհրաժեշտությամբ, ինչի գնահատումը քրեական վարույթն իրականացնող համապատասխան մարմինների իրավասության շրջանակներում է: Միայն նրանց համապատասխան որոշումը կարող է հիմք հանդիսանալ հանրային ծառայության պաշտոն զբաղեցնող անձի, տվյալ դեպքում՝ ոստիկանության ծառայողի նկատմամբ անհրաժեշտ այնպիսի սահմանափակման կիրառման համար, ինչպիսին է *լիազորությունների կասեցումը*: Այս առումով Սահմանադրական դատարանը գտնում է, որ ոստիկանության ծառայության պաշտոն զբաղեցնող անձի *լիազորությունների ինքնաշխատ, այսինքն՝ պարտադիր կասեցումը, նրա աշխատավարձի վճարման ժամկետային սահմանա-*

փակումը, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ ծառայությունից ազատվելու արգելքը չեն կարող հետապնդել Սահմանադրությամբ սահմանված որևէ նպատակ, այսինքն հակասում են Սահմանադրության 78-րդ հոդվածին: Հարկ է նշել, որ Օրենքով չեն կարող սահմանվել այնպիսի սահմանափակումներ, որոնք մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելն ուղղակի կամ անուղղակի կկանխորոշեն անձի մեղավորությունը ենթադրյալ հանցագործության կատարման համար:

Ինչ վերաբերում է Կանոնագրքի՝ սույն գործով վիճարկվող 16.1-ին հոդվածի 1-ին մասով սահմանված՝ նոր պաշտոնի նշանակվելու արգելքին, ապա այն կարող է արդարացված լինել, եթե ոստիկանությունում ծառայության պաշտոն զբաղեցնող անձը պետք է դրանով խրախուսվի՝ զբաղեցնելով ավելի բարձր պաշտոն կամ տեղափոխվելով ավելի մեծ պատասխանատվություն ենթադրող համարժեք այլ պաշտոնի: Նման դեպքերում թույլատրելի է քրեական հետապնդում հարուցելու փաստի ուժով ժամանակավորապես ձեռնպահ մնալ այնպիսի խրախուսական միջոցներ կիրառելուց, որոնք կասկածի տակ կդնեն հանցագործությունների բացահայտման հանրային շահը: Սակայն այդ դեպքերում ևս, ելնելով անմեղության կանխավարկածի հրամայական պահանջից՝ չպետք է ամրագրվի պարտադիր կարգով կիրառվող բացարձակ արգելք՝ հատկապես հաշվի առնելով մեղսագրվող արարքի ծանրությունը և անձը բնութագրող, ինչպես նաև յուրաքանչյուր կոնկրետ դեպքում գնահատման ենթակա մյուս բոլոր անհրաժեշտ հանգամանքները:

4.5. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ Օրենքի 43-րդ հոդվածի 9-րդ մասի երկրորդ պարբերությամբ չեն սահմանվում ոստիկանության ծառայողի լիազորությունների կասեցման հիմքերը, ինչպես նաև կասեցնելու իրավասություն ունեցող սուբյեկտների շրջանակը, ինչի սահմանադրականության գնահատման հարցը, իրավական որոշակիության տեսակետից, բարձրացվել է սույն գործով դիմող Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի կողմից:

Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում անդրադարձել է իրավական որոշակիության սկզբունքին՝ արտահայտելով, մասնավորապես, հետևյալ իրավական դիրքորոշումները.

1) որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը (ՄԴՈ-630),

իրավական օրենքը պետք է լինի բավականաչափ մատչելի՝ իրավունքի սուբյեկտները պետք է համապատասխան հանգամանքներում հնարավորություն ունենան կողմնորոշվելու՝ թե տվյալ դեպքում ինչ իրավական նորմեր են կիրառվում (ՄԴՈ-753), օրենսդրության մեջ օգտագործվող հասկացությունները պետք է լինեն հստակ, որոշակի և չհանգեցնեն տարաբնույթ մեկնաբանությունների կամ շփոթության (ՄԴՈ-1176),

2) «... Սահմանադրական դատարանը գտնում է, որ իրավական որոշակիության սկզբունքը ենթադրում է ինչպես հնարավորինս հստակ իրավակարգավորման առկայություն, այնպես էլ դրա կանխատեսելիության ապահովում: Մասնավորապես, իրավակարգավորման ձևակերպումը պետք է հնարավորություն տա անձին ոչ միայն դրան համապատասխան ձևավորելու իր վարքագիծը, այլև կանխատեսելու, թե ինչպիսին կարող են լինել հանրային իշխանության գործողությունները, և ինչ հետևանքներ կառաջանան տվյալ իրավակարգավորման կիրառման արդյունքում» (ՄԴՈ-1452),

3) հաշվի առնելով կենսական հարցերի բազմազանությունը և նորմաստեղծ ճանապարհով բոլոր իրավիճակներին արձագանքելու անհնարինությունը՝ օրենսդրական և ենթաօրենսդրական կարգավորումների որոշակիության պահանջը չի բացառում անորոշ իրավական հասկացությունների ամրագրումն օրենքներում և ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերում, սակայն այն պարտադիր պետք է ուղեկցվի նման հասկացությունների համարժեք, իսկ նույնական դեպքերում՝ միատեսակ մեկնաբանությամբ, առանց որի անհնարին կլինի փաստել այդ դրույթների կանխատեսելիությունը (ՄԴՈ-1488):

Սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել, որ վերոհիշյալ իրավական դիրքորոշումները կարևոր են նաև Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի իրացման ապահովման առումով:

Հիմք ընդունելով քրեադատավարական օրենսդրության ընդհանուր տրամաբանությունը, ինչպես նաև սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումները՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ Օրենքի 43-րդ հոդվածի 9-րդ մասի երկրորդ պարբերության «լիազորությունների ժամանակավորապես կասեցումը կատարվում է» դրույթը խնդրահարույց է նաև

Սահմանադրության 79-րդ հոդվածի տեսանկյունից: Իրավական որոշակիության ապահովման առումով Օրենքի 43-րդ հոդվածի 9-րդ մասի երկրորդ պարբերության՝ «լիազորությունների ժամանակավորապես կասեցումը կատարվում է» դրույթը պետք է որպես իրավական հիմք ունենա քրեադատավարական օրենքը:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում նաև նշել, որ օրենսդրորեն անհրաժեշտ է անդրադառնալ նաև, ըստ էության, նույն բովանդակությունը և իմաստն արտահայտող եզրույթների կիրառման միասնականության ապահովման հարցին: Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 152-րդ հոդվածում օրենսդիրը կիրառում է «պաշտոնավարության ժամանակավոր դադարեցում» եզրույթը, Օրենքի 43-րդ հոդվածի 9-րդ մասի առաջին պարբերությունում՝ կիրառում է «լիազորությունների ժամանակավորապես դադարեցում» եզրույթը, իսկ նույն մասի երկրորդ պարբերությունում՝ «լիազորությունների ժամանակավորապես կասեցում» եզրույթը:

4.6. Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն հանրային ծառայության առանձին տեսակների կազմակերպման և գործունեության առանձնահատկությունները սահմանվում են համապատասխան օրենքներով (2-րդ հոդվածի 3-րդ մաս):

Սույն գործի քննության առարկայի շրջանակներում Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նաև անդրադառնալ հանրային ծառայության այլ տեսակների կազմակերպման և գործունեության առանձնահատկությունները կարգավորող առանձին օրենքների համանման դրույթներին: Այսպես.

«Փրկարար ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածի 14-րդ մասի համաձայն՝ «Օտայողի նկատմամբ քրեական հետապնդում իրականացվելիս լիազորությունների ժամանակավորապես կասեցումը կատարվում է մինչև քրեական գործի ավարտը կամ մինչև տվյալ գործով դատարանի դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը: Այդ դեպքում ծառայողին շարունակում է վճարվել աշխատավարձ»:

«Քրեակատարողական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ «Քրեակատարողական ծառայողի նկատմամբ քրեական հետապնդում իրականացվելիս նրա լիազորությունները ժամանակավորապես դադարեցվում են մինչև քրեական հետապնդումը դադարեց-

ները կամ մինչև տվյալ գործով դատարանի դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը: Քրեակատարողական ծառայողի լիազորությունների ժամանակավորապես դադարեցման ժամանակահատվածում նրա աշխատավարձը պահպանվում է»:

«Հարկադիր կատարումն ապահովող ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ «Հարկադիր կատարողի նկատմամբ քրեական հետապնդում իրականացվելիս լիազորությունները ժամանակավորապես դադարեցվում են մինչև քրեական հետապնդման դադարեցումը կամ մինչև տվյալ գործով դատարանի դատավճռի օրինական ուժի մեջ մտնելը: Հարկադիր կատարողի լիազորությունների ժամանակավորապես դադարեցման ժամանակահատվածում նրա աշխատավարձը պահպանվում է»:

«Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի համաձայն՝

«1. Քննչական կոմիտեի ծառայողի լիազորությունները կասեցվում են՝

1) քննչական կոմիտեի ծառայողի նկատմամբ քրեական հետապնդում հարուցվելու դեպքում մինչև համապատասխան վերջնական որոշման ընդունումը.

(...)

4. Քննչական կոմիտեի ծառայողի լիազորությունների կասեցման ժամանակահատվածում նրա աշխատավարձը պահպանվում է»:

«Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37.1-ին հոդվածի համաձայն՝

«Քրեական գործերով որպես մեղադրյալ ներգրավված մաքսային ծառայողի պաշտոնական լիազորությունները կասեցվում են հիմնական աշխատավարձի պահպանմամբ մինչև մեղադրանքի հանվելը»:

Ելնելով վերոգրյալից՝ Սահմանադրական դատարանը փաստում է, որ հանրային ծառայության վերոհիշյալ տեսակները կարգավորող օրենքներում առկա չէ ծառայությունից սեփական նախաձեռնությամբ ազատվելու և նոր պաշտոնի նշանակվելու կամ այլ աշխատանք կատարելու արգելք՝ քրեական հետապնդում հարուցելու փաստի հիմքով: Բացի դրանից, լիազորությունների կասեցման դեպքում աշխատավարձը պահպանվում է:

Սույն գործի շրջանակներում՝ Սահմանադրական դատարանն իրավասու չէ անդրադառնալ հանրային ծառայության առանձին տեսակները կարգավորող օրենքների վերաբերելի դրույթների սահմանադրականությանը: Միննույն ժամանակ, սակայն, Սահմանա-

դրական դատարանն անհրաժեշտ է համարում նշել, որ օրենսդրո-
րենն հիմնավորված չեն հանրային ծառայության վերը նշված տե-
սակները կարգավորող օրենքների վերաբերելի դրույթներից տար-
բերվող՝ սույն գործով վիճարկվող իրավակարգավորումների օբյեկ-
տիվ հիմքերը և իրավաչափ նպատակները, ուստիև այս առումով
ևս դրանք հակասում են Սահմանադրության 29-րդ հոդվածին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և հիմք ընդունելով
Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետը, 169-րդ հոդվածի
1-ին մասի 10-րդ կետը և 4-րդ մասը, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ
մասերը, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին»
սահմանադրական օրենքի 63, 64, 68 և 71-րդ հոդվածները՝ Սահ-
մանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «Ոստիկանությունում ծառայության մասին» Հայաստանի Հան-
րապետության օրենքի 43-րդ հոդվածի 9-րդ մասի երկրորդ պարբե-
րությունը՝ ոստիկանության ծառայողի նկատմամբ բացառապես
քրեական հետապնդում հարուցելու (իրականացնելու) փաստով
պայմանավորված՝ լիազորությունները կասեցնելու, ինչպես նաև
ոստիկանության ծառայողի աշխատավարձի վճարման ժամկետա-
յին սահմանափակում նախատեսելու մասով, ճանաչել Սահմանա-
դրության 29, 49, 66, 78 և 79-րդ հոդվածներին հակասող և անվավեր:

2. «Հայաստանի Հանրապետության ոստիկանության կարգա-
պահական կանոնադիրքը հաստատելու մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 16.1-ին հոդվածի 1-ին մասը՝ մինչև
քրեական հետապնդումը դադարեցնելը ոստիկանության ծառայողի
նոր պաշտոնի նշանակվելու բացարձակ արգելք, ինչպես նաև
սեփական նախաձեռնությամբ ոստիկանության ծառայությունից
ազատվելու արգելք նախատեսելու մասով, ճանաչել Սահմա-
նադրության 29, 49, 66 և 78-րդ հոդվածներին հակասող և անվավեր:

3. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝
սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման
պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

25 փետրվարի 2020 թվականի
ՍԴՈ-1507



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 24-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ
ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻԶԵՎ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ
ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

25 փետրվարի 2020թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝
կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ա. Դի-
լանյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի (զեկուցող),
Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացու-
ցիչ՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի
տեղակալ Ա. Հայրապետյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-
րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին»
սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2019 թվականի
հոկտեմբերի 24-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության

1(97)/2020
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦

կառավարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջև 2016 թվականի ֆինանսական համագործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2019 թվականի դեկտեմբերի 13-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Հայաստանի Հանրապետության կառավարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջև 2016 թվականի ֆինանսական համագործակցության մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2019 թվականի հոկտեմբերի 24-ին Երևանում՝ Հայաստանի Հանրապետության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության միջև առկա բարեկամական հարաբերությունները գործընկերային ֆինանսական համագործակցության միջոցով ամրապնդելու և խորացնելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության սոցիալտնտեսական զարգացմանը նպաստելու նպատակով:

2. Համաձայնագրով Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարությունը հնարավորություն է տալիս Հայաստանի Հանրապետության կառավարությանը կամ երկու Կառավարությունների կողմից համատեղ ընտրվելիք այլ ընդունող կողմերի հնարավորություն է ընձեռում Վերականգնման վարկերի բանկից ստանալ վարկային միջոցներ և ֆինանսական օժանդակություն «Գերմանահայկական ֆոնդ» (ԳՀՖ), վերաֆինանսավորման գիծ I», «Ախուրյան գետի ջրային ռեսուրսների համապարփակ կառավարում I (նախագծային 2-րդ փուլ)», «Համայնքային ենթակառուցվածքներ II, 3-րդ փուլ», Ագրարային ապահովագրությունների ներդրման և այլ ծրագրերի իրականացմանն ու աջակցմանն ուղղված անհրաժեշտ հարակից միջոցառումների համար (հոդվ. 1):

3. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության կառավարությունը ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

ա) երաշխավորել Վերականգնման վարկերի բանկի օգտին վճարումները եվրոյով՝ ի կատարումն Համաձայնագրի 2-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն կնքվելիք պայմանագրերով վարկառուների ստանձնած պարտավորությունների, եթե վարկառուն Հայաստանի Հանրապետության կառավարությունը կամ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը չեն (հոդվ. 2, պարբերություն 3),

բ) ապահովել, որ Վերականգնման վարկերի բանկին տրվի երաշխիք, որ կկատարվեն պարտքի վերադարձման այն պահանջները, որոնք կարող են բխել Համաձայնագրի 2-րդ հոդվածի 1-ին պարբերության համաձայն կնքվելիք ֆինանսավորման պայմանագրերից, եթե ֆինանսական օժանդակություններ ստացողը Հայաստանի Հանրապետության կառավարությունը կամ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը չեն (հոդվ. 2, պարբերություն 4),

գ) երաշխավորել, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը կստանձնի Վերականգնման վարկերի բանկի կողմից վճարման ենթակա այն հարկերը, որոնք ծագում են Համաձայնագրի 2-րդ հոդվածի 1-ին պարբերությունում նշված պայմանագրերի կնքման և իրականացման արդյունքում, Համաձայնագրի 2-րդ հոդվածի 1-ին պարբերությունում նշված պայմանագրերի կնքման և իրականացման արդյունքում առաջացող ավելացված արժեքի հարկը, ինչպես նաև կվճարի Վերականգնման վարկերի բանկի կողմից վճարման ենթակա բոլոր պետական տուրքերը (հոդվ. 3),

դ) երաշխավորել, որ վարկերի և ֆինանսական օժանդակությունների օգտագործումից անհրաժեշտաբար բխող ծովային, ցամաքային և օդային ճանապարհներով անձանց և գույքի տեղափոխման համար ուղևորներին և առաքողներին տրվի տրանսպորտային ձեռնարկության ազատ ընտրության հնարավորություն, չձեռնարկել միջոցներ, որոնք կբացառեն կամ կդժվարացնեն Գերմանիայի Դաշնային Հանրապետությունում գործող տրանսպորտային ձեռնարկությունների իրավահավասար մասնակցությունը, անհրաժեշտության դեպքում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրել պահանջվող թույլտվություններ տրանսպորտային հիշյալ ձեռնարկությունների մասնակցության համար (հոդվ. 4),

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 1(97)/2020

ե) Համաձայնագրի մեկնաբանման կամ կիրառման շուրջ ծագող բոլոր վեճերը լուծել Կողմերի միջև խորհրդակցությունների կամ բանակցությունների միջոցով (հոդվ. 6, պարբերություն 5) և այլն:

4. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված՝ արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**:

1. 2019 թվականի հոկտեմբերի 24-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության կառավարության և Գերմանիայի Դաշնային Հանրապետության կառավարության միջև 2016 թվականի ֆինանսական համագործակցության մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

25 փետրվարի 2020 թվականի
ՍԴՈ-1508



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2017 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «1992
ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 15-Ի՝ ՀԱՎԱՔԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՄԱՍՆԱԿԻՑ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԻՋԵՎ ՌԱԶՄԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԿԱՆ ՄԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՉՈՐՐՈՐԴ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

25 փետրվարի 2020 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ա. Դիլանյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի (զեկուցող), Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի տեղակալ Գ. Բալայանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 1(97)/2020
105

դոնրաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2017 թվականի նոյեմբերի 30-ին ստորագրված «1992 թվականի մայիսի 15-ի Հավաքական անվտանգության մասին պայմանագրի մասնակից պետությունների միջև ռազմատեխնիկական համագործակցության հիմնական սկզբունքների մասին համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին» չորրորդ արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2019 թվականի դեկտեմբերի 12-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով արձանագրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «1992 թվականի մայիսի 15-ի՝ Հավաքական անվտանգության մասին պայմանագրի մասնակից պետությունների միջև ռազմատեխնիկական համագործակցության հիմնական սկզբունքների մասին համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին» չորրորդ արձանագրությունը (այսուհետ՝ Արձանագրություն) ստորագրվել է 2017 թվականի նոյեմբերի 30-ին Մինսկում՝ 2000 թվականի հունիսի 20-ին ստորագրված՝ 1992 թվականի մայիսի 15-ի՝ «Հավաքական անվտանգության մասին պայմանագրի մասնակից պետությունների միջև ռազմատեխնիկական համագործակցության հիմնական սկզբունքների մասին» համաձայնագրի (այսուհետ՝ Համաձայնագիր) իրագործման մեխանիզմների կատարելագործման անհրաժեշտությունից ելնելով:

Արձանագրությամբ նախատեսվում է դյուրացնել Կողմերի ազգային զինված ուժերի, այլ զորքերի, զինվորական կազմավորումների, իրավապահ մարմինների և հատուկ ծառայությունների սպառազինության և ռազմական տեխնիկայի՝ այդ թվում արտոնյալ պայմաններով ձեռքբերումն ու ձեռքբերման մեխանիզմները:

2. Արձանագրությամբ Համաձայնագրի 2-րդ հոդվածը լրացվում է հետևյալ պարբերությամբ. ռազմական նշանակության արտադրանքի գները ձևավորվում են ռազմական նշանակության արտադրանք մատակարարող (ծառայություններ մատուցող, աշխատանքներ կատարող) Կողմի սեփական կարիքների համար ազգային

զինված ուժերի, այլ զորքերի, զինվորական կազմավորումների, իրավապահ մարմինների և հատուկ ծառայությունների պատվերների կատարման ժամանակ ռազմական նշանակության արտադրանքի համար գնագոյացումը կարգավորող օրենսդրությանը համապատասխան:

Այն դեպքում, երբ ռազմական նշանակության արտադրանքը չի գնվել ռազմական նշանակության արտադրանք մատակարարվող Կողմի ազգային զինված ուժերի, այլ զորքերի, զինվորական կազմավորումների, իրավապահ մարմինների և հատուկ ծառայությունների սեփական կարիքների համար, արտոնյալ պայմաններով մատակարարման ժամանակ դրանց նկատմամբ գնագոյացումը ձևավորվում է արտադրող ձեռնարկությունների կողմից ազգային զինված ուժերի շահերից ելնելով, ռազմական նշանակության արտադրանքի պատվերների կատարման ժամանակ ռազմական նշանակության արտադրանք մատակարարող Կողմի օրենսդրությանը համապատասխան:

Արտոնյալ պայմաններով ռազմական նշանակության արտադրանք մատակարարող Կողմը, անհրաժեշտության դեպքում, ռազմական նշանակության արտադրանքի ձեռքբերմամբ շահագրգիռ Կողմի հարցմամբ, տրամադրում է Համաձայնագրի դրույթներով ռազմական նշանակության արտադրանքի մատակարարման համար պայմանագրի (պայմանագրի նախագծի) պայմանների համապատասխանության մասին, այդ թվում՝ գների կազմավորման մասով, լիազորված մարմնի գրավոր հաստատումը:

3. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված՝ արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**:

1. 2017 թվականի նոյեմբերի 30-ին ստորագրված «1992 թվականի մայիսի 15-ի Հավաքական անվտանգության մասին պայմանագրի մասնակից պետությունների միջև ռազմատեխնիկական համագործակցության հիմնական սկզբունքների մասին համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին» չորրորդ ասարձանագրությունում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

25 փետրվարի 2020 թվականի
ՄԴՈ-1509



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 11-ԻՆ ՍՈՉԻՈՒՄ
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾԵՐՈՎ ԻՐԵՂԵՆ ԱՊԱՅՈՒՅՑ
ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐԻ, ՀՈԳԵՄԵՏ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ
ԴՐԱՆՑ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ, ՀՐԱՋԵՆԻ, ԴՐԱ ՀԻՄՆԱԿԱՆ
ՄԱՍԵՐԻ, ՌԱԶՄԱՍԹԵՐՔԻ, ՊԱՅԹՈՒՑԻԿ ՆՅՈՒԹԵՐԻ ԵՎ
ՊԱՅԹՈՒՑԻԿ ՍԱՐՔԵՐԻ ՓՈԽԱՆՑՄԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ»
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

25 փետրվարի 2020 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմայանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ա. Դիլանյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի (զեկուցող), Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետի տեղակալ Վ. Մովսիսյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 1(97)/2020
109

դոնրաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2017 թվականի հոկտեմբերի 11-ին Սոչիում ստորագրված «Քրեական գործերով իրեղեն ապացույց հանդիսացող թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց բաղադրիչների, հրազենի, դրա հիմնական մասերի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի և պայթուցիկ սարքերի փոխանցման կարգի մասին» արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2019 թվականի դեկտեմբերի 16-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով արձանագրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Քրեական գործերով իրեղեն ապացույց հանդիսացող թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց բաղադրիչների, հրազենի, դրա հիմնական մասերի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի և պայթուցիկ սարքերի փոխանցման կարգի մասին» արձանագրությունը (այսուհետ՝ Արձանագրություն) ստորագրվել է 2017 թվականի հոկտեմբերի 11-ին Սոչիում՝ թմրանյութերի և զենքի անօրինական շրջանառության հետ կապված հանցագործությունների բացահայտման և քննության գործում համագործակցությունը խորացնելու, ինչպես նաև քրեական գործերով իրեղեն ապացույց հանդիսացող թմրանյութերի և զենքի փոխանցման կարգ սահմանելու նպատակով:

2. Արձանագրության անբաժան մասն են կազմում 4 հավելվածները՝ Հավելված 1՝ «Իրեղեն ապացույցների փոխանցման կարգ», Հավելված 2՝ «Իրեղեն ապացույցների ընդունման-հանձնման արձանագրության ձև», Հավելված 3՝ «Իրեղեն ապացույցի հաշվառման քարտի ձև», Հավելված 4՝ «Իրեղեն ապացույցի պիտակի ձև»:

Ադրբեջանի Հանրապետությունն Արձանագրությունն ստորագրել է վերապահումով: Այդ կապակցությամբ Արձանագրությունը վերապահումով է ստորագրել նաև Հայաստանի Հանրապետությունը:

3. Հայաստանի Հանրապետությունը, փոխադարձության հիման վրա, Արձանագրությամբ ստանձնում է մի շարք պարտավորություններ, մասնավորապես.

- մյուս Կողմի հարցումով վերջինիս փոխանցել իրեղեն ապացույցներ՝ հարցում ուղարկող Կողմի քրեական դատավարության ընթացքում օգտագործելու համար,

- ապահովել հարցումն իրականացնելու ընթացքում փոխանցվող տեղեկության գաղտնիությունը և իրեղեն ապացույցների անվտանգությունը,

- ապահովել, որ Արձանագրության հիման վրա ստացված տեղեկությունները և իրեղեն ապացույցներն առանց դրանք տրամադրած Կողմի գրավոր համաձայնության չօգտագործվեն այլ նպատակներով՝ բացի այն նպատակներից, որոնց համար դրանք հարցվել և տրամադրվել են,

- ապահովել, որ Արձանագրության հիման վրա փոխանցված տեղեկություններն ու իրեղեն ապացույցներն առանց դրանք տրամադրած Կողմի նախնական գրավոր համաձայնության չփոխանցվեն երրորդ կողմի,

- ապահովել, որ ստացած տեղեկության և իրեղեն ապացույցների անվտանգության պաշտպանության վերաբերյալ ՀՀ ստանձնած պարտավորություններն ուժի մեջ մնան նաև Արձանագրության գործողության դադարեցումից կամ դրանից դուրս գալուց հետո,

- Արձանագրության կատարման ընթացքում ծախսերը կատարել ինքնուրույն, եթե ամեն կոնկրետ դեպքի համար այլ կարգ չի համաձայնեցվում,

- ապահովել, որ Արձանագրության կիրառման և մեկնաբանման ժամանակ ծագող վիճելի հարցերը լուծվեն խորհրդակցությունների և բանակցությունների միջոցով:

4. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված՝ արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց Ց**.

1. 2017 թվականի հոկտեմբերի 11-ին Սոչիում ստորագրված «Քրեական գործերով իրեղեն ապացույց հանդիսացող թմրամիջոցների, հոգեմետ նյութերի և դրանց բաղադրիչների, հրազենի, դրա հիմնական մասերի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի և պայթուցիկ սարքերի փոխանցման կարգի մասին» արձանագրությունում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

25 փետրվարի 2020 թվականի
ՍԴՈ-1510



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 10-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՒ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԿԻ ՄԻՋԵՎ «ԿԵՆՍԱԿԱՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՑԱՆՑԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ
ԾՐԱԳՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ»
ՎԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

3 մարտի 2020 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի (զեկուցող), Ա. Դիլանյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի տեղակալ Վ. Տերտերյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒՄԻ ԴԱՏԱՐԱՆ **ՏԵՂԵԿԱԳԻՐ** ♦ 1(97)/2020
113

դոնբասց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2019 թվականի հոկտեմբերի 10-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման ծրագրի երկրորդ լրացուցիչ ֆինանսավորում» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2019 թվականի դեկտեմբերի 18-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վարկային համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**:

1. «Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման ծրագրի երկրորդ լրացուցիչ ֆինանսավորում» (**այսուհետ՝ Ծրագիր**) վարկային համաձայնագիրը (**այսուհետ՝ Համաձայնագիր**) Հայաստանի Հանրապետության (**այսուհետ՝ Վարկառու**) և Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև (**այսուհետ՝ Բանկ**) ստորագրվել է 2019 թվականի հոկտեմբերի 10-ին:

Ծրագրի նպատակն է ընտրված կենսական նշանակություն ունեցող ճանապարհները բարելավելու միջոցով բարելավել շուկաների և ծառայությունների հասանելիությունը գյուղական համայնքների համար և ուժեղացնել Վարկառուի ճանապարհների համար պատասխանատու համապատասխան նախարարության կարողությունները՝ կենսական նշանակություն ունեցող ճանապարհային ցանցը կառավարելու համար: Ծրագիրը ներկայում գործող «Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավում» և «Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման ծրագրի լրացուցիչ ֆինանսավորում» ծրագրերի շարունակությունն է: Ընդհանուր առմամբ Ծրագրով նախատեսվում է կենսական նշանակության ճանապարհային ցանցում մոտ 450կմ երկարությամբ ընտրված ճանապարհների բարելավման աշխատանքների կատարում:

Համաձայնագրով նախատեսվում է, որ Բանկը Հայաստանի Հանրապետությանը տրամադրում է 13,400,000 (տասներեք միլիոն չորս հարյուր հազար) եվրո գումար՝ Համաձայնագրով նախատեսված ծրագրի իրականացման համար:

2. Համաձայնագրով Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները.

- վճարել միանվագ կոմիսիոն վճար՝ Վարկի գումարի մեկ տոկոսի մեկ քառորդին (0.25%) հավասար չափով (հոդված II, կետ 2.03),

- վճարել տարեկան կտրվածքով պարտավորության վճար՝ Վարկի չառհանված մնացորդի մեկ տոկոսի մեկ քառորդին (0.25%) հավասար չափով (հոդված II, կետ 2.04),

- յուրաքանչյուր տարվա մայիսի 15-ին և նոյեմբերի 15-ին վճարել տոկոսը, որը հավասար է Վարկի կողմնորոշիչ դրույքաչափին գումարած փոփոխական սփրեդը կամ նման դրույքաչափ, որը կարող է կիրառվել Վարկի գումարի փոխարկման դեպքում՝ Ընդհանուր պայմանների 3.02(ե) բաժնի համաձայն (հոդված II, կետ 2.05 և 2.06),

- յուրաքանչյուր տարվա մայիսի 15-ին և նոյեմբերի 15-ին՝ սկսած 2033 թվականի նոյեմբերի 15-ից մինչև 2044 թվականի մայիսի 15-ը, մարել Վարկի մայր գումարը (ընդ որում, յուրաքանչյուր մարում սկսած 2033 թվականի նոյեմբերի 15-ից մինչև 2043 թվականի մայիսի 15-ի մուծումը, կազմում է նշված մայր գումարի 4.55%-ը, իսկ 2044 թվականի մայիսի 15-ինը՝ 4.45%-ը) (հոդված II, կետ 2.07 և Առդիր 3),

- հայտարարել Ծրագրի նպատակների իրականացման ՀՀ հանձնառության մասին և այդ նպատակով Ծրագիրն իրականացնել ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (ՏԿԵՆ) միջոցով՝ Ընդհանուր պայմանների V Հոդվածի և Համաձայնագրի 2-րդ առդիրի դրույթների համաձայն (հոդված III, կետեր 3.01),

- մինչև Ծրագրի ավարտը ՏԿԵՆ-ում պահպանել հիմնական աշխատակազմ՝ Բանկի համար ընդունելի գործառույթներով, փորձով, պարտականություններով և որակավորումներով, որը պատասխանատու կլինի Ծրագրի կառավարման, համակարգման, իրականացման, մշտադիտարկման և գնահատման համար և ի թիվս այլ մասնագետների՝ կներառի Ծրագրի համակարգող, ֆինանսական կառավարման մասնագետ, գնումների մասնագետ, բնապահպանական և սոցիալական երաշխիքների մասնագետ, ինչպես նաև ճանապարհային ինժեներ, ինչպես սահմանվում է Գործառնական ձեռնարկում (Առդիր 2, Բաժին I, կետ «Ա», ենթակետ 1),

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 1(97)/2020

- Ծրագրի՝ ճանապարհաշինական աշխատանքների նախագծման և շինարարության շրջանակներում թույլ տալ կիրառել ճանապարհների և մայրուղիների նախագծման և շինարարության համար Ստանդարտացման եվրոպական կոմիտեի կողմից առաջարկվող ստանդարտները (ի լրումն ազգային ստանդարտների) (Առդիր 2, Բաժին I, կետ «Ա», ենթակետ 2),

- Ծրագրի մաս 2 (գ)(vii)-ի իրականացման նպատակով, ուժի մեջ մտնելու օրվանից ոչ ուշ, քան 1 ամիս հետո, ՏԿԵՆ-ի միջոցով համաձայնագիր («Համագործակցության համաձայնագիր») կնքել ճանապարհային ուստիկանության հետ՝ Բանկի համար ընդունելի պայմաններով և, բացառությամբ այն դեպքերի, երբ Վարկառուն և Բանկը այլ գրավոր համաձայնություն են ձեռք բերում, մյուս դեպքերում չեղյալ չճանաչել, չփոփոխել, չկասեցնել, չհրաժարվել կամ մեկ այլ կերպ չձախողել Համագործակցության համաձայնագրի կամ վերջինիս դրույթներից որևէ մեկի կատարումը (Առդիր 2, Բաժին I, կետ «Ա», ենթակետ 3),

- թարմացնել և հաստատել Բանկի համար ընդունելի Գործառնական ձեռնարկը, որը կներառի Առդիր 2, Բաժին I, կետ «Բ», ենթակետ 1, «ա» մասով սահմանված տեղեկատվությունը, ինչպես նաև Ծրագիրն իրականացնել Գործառնական ձեռնարկի համաձայն (Առդիր 2, Բաժին I, կետ «Բ», ենթակետ 1),

- բացառությամբ այն դեպքերի, երբ Հայաստանի Հանրապետությունը և Բանկը գրավոր այլ համաձայնություն են ձեռք բերում, չեղյալ չճանաչել, չփոփոխել, չկասեցնել, չհրաժարվել կամ այլ կերպով չձախողել Գործառնական ձեռնարկի կամ վերջինիս դրույթների կատարումը (Առդիր 2, Բաժին I, կետ «Բ», ենթակետ 2),

- եթե որոշակի ճանապարհային հատվածների համար նախատեսվի տարաբնակեցում, ապա իրականացնել տարաբնակեցման գործողությունների համապատասխան ծրագիրը կամ սեղմ ծրագիրը, ըստ անհրաժեշտության, Բանկի համար ընդունելի պայմանների և կարգի համաձայն՝ ապահովելով, որ կոնկրետ ճանապարհային հատվածում շինարարական աշխատանքներ չսկսվեն, եթե Բանկի կողմից նախապատրաստված և հաստատված ու Վարկառուի կողմից իրականացված չէ համապատասխան ճանապարհային հատվածի համար տարաբնակեցման գործողությունների համապատասխան ծրագիրը կամ սեղմ ծրագիրը (Առդիր 2, Բաժին I, կետ «Գ», ենթակետ 1, մաս «բ»),

- ՏԿԵՆ միջոցով ապահովել, որ Ծրագրի շրջանակներում պահանջվող ցանկացած խորհրդատվության տեխնիկական առաջադրանքը Բանկի կողմից ուսումնասիրվելուց հետո ընդունելի լինի վերջինիս համար, և այդ նպատակով, նման տեխնիկական առաջադրանքը հավուր պատշաճի ներառի Բանկի երաշխիքների քաղաքականությունը, որոնք կիրառվում են նման տեխնիկական աջակցության միջոցով տրամադրվող խորհրդատվության մասով, այդ թվում՝ նաև Բանկի երաշխիքների քաղաքականության համաձայն՝ բնապահպանական և սոցիալական ազդեցության գնահատումների մասին հանրության իրազեկման և խորհրդակցության իմաստով (Առդիր 2, Բաժին I, կետ «Գ», ենթակետ 2),

- ՏԿԵՆ-ի միջոցով Բանկին ներկայացնել Ծրագրի հաշվետվությունը օրացուցային յուրաքանչյուր կիսամյակի ավարտից ոչ ուշ, քան 45 օր հետո, որը կընդգրկի տվյալ օրացուցային կիսամյակը (Առդիր 2, Բաժին II, կետ «Ա»),

- Վարկային հաշվից որևէ առհանում չկատարել այն վճարումների համար, որոնք կատարվել են մինչև Համաձայնագրի կնքման ամսաթիվը, բացառությամբ մինչև 2.700.000 եվրոն չգերազանցող համախառն գումարով առհանումները, որոնք կարող են կատարվել այն վճարումների համար, որոնք կատարվել են մինչ վերոհիշյալ ամսաթիվը, սակայն 2019թ. ապրիլի 3-ին կամ դրանից հետո կատարված թույլատրելի ծախսերի համար (Առդիր 2, Բաժին III, կետ «Բ», ենթակետ 1, մաս «ա»),

- ապահովել, որ մինչ Ծրագրի ավարտը Ծրագրի շրջանակներում կենսական նշանակություն ունեցող ճանապարհային ցանցի հիմնանորոգված ճանապարհային հատվածների պահպանության համար հատկացվեն և հասանելի լինեն բավարար բյուջետային միջոցներ (Առդիր 2, Բաժին IV, կետ «Ա»):

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**:

1. 2019 թվականի հոկտեմբերի 10-ին ստորագրված «Հայաստանի Հանրապետության ու Վերակառուցման և զարգացման միջազգային բանկի միջև «Կենսական նշանակության ճանապարհային ցանցի բարելավման ծրագրի երկրորդ լրացուցիչ ֆինանսավորում» վարկային համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

3 մարտի 2020 թվականի
ՍԴՈ-1511



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 3-ԻՆ ՍՈՍԿՎԱՅՈՒՄ
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ՝
«ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ
ՄՐՑԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ
ՆԿԱՏՄԱՍԲ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ
ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼԻՍ ԳԱՂՏԻ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԻ ԵՎ ԴՐԱ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՀԱՄԱՐ
ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» 2014 ԹՎԱԿԱՆԻ
ՆՈՅԵՄԲԵՐԻ 12-Ի ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻՆ ՄԻԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ»
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՄԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՐ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

3 մարտի 2020 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ա. Դիլանյանի, Ֆ. Թոխյանի (զեկուցող), Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝
Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի նախագահ Գ. Գևորգյանի,

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 1(97)/2020

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22, 23 և 74-րդ հոդվածների,

դրնրաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2018 թվականի դեկտեմբերի 3-ին Մոսկվայում ստորագրված «Հայաստանի Հանրապետության «Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից մրցակցության միասնական կանոնների պահպանման նկատմամբ հսկողության լիազորություններն իրականացնելիս գաղտնի տեղեկատվության պաշտպանության կարգի և դրա հրապարակման համար պատասխանատվության մասին» 2014 թվականի նոյեմբերի 12-ի համաձայնագրին միանալու մասին» արձանագրությունում ամրագրված պարտավորությունների Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2020 թվականի հունվարի 13-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով արձանագրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**:

1. «Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից մրցակցության միասնական կանոնների պահպանման նկատմամբ հսկողության լիազորություններն իրականացնելիս գաղտնի տեղեկատվության պաշտպանության կարգի և դրա հրապարակման համար պատասխանատվության մասին» համաձայնագրին միանալու մասին» արձանագրությունը ստորագրվել է 2018 թվականի դեկտեմբերի 3-ին Մոսկվայում՝ 2014 թվականի նոյեմբերի 12-ի «Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից մրցակցության միասնական կանոնների պահպանման նկատմամբ հսկողության լիազորություններն իրականացնելիս գաղտնի տեղեկատվության պաշտպանության կարգի և դրա հրապարակման համար պատասխանատվության մասին» համաձայնագրին (այսուհետ՝ Համաձայնագիր) միանալու նպատակով:

2. Ըստ Համաձայնագրի՝ Հայաստանի Հանրապետությունն ստանձնում է, մասնավորապես հետևյալ պարտավորությունները՝
- ապահովել, որ Հանձնաժողովից «Գաղտնի» դրոշմագիր ունեցող նյութական կրիչներ ստանալու դեպքում այդպիսի կրիչները ճա-

նաչվեն «Առևտրային գաղտնիք» (ՀՀ ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձանց համար), «Ծառայողական օգտագործման համար» (ՇՕՀ) (ՀՀ պետական մարմինների համար) դրոշմագիր ունեցող (հոդված 5, մաս 3),

- ապահովել, որ գաղտնի տեղեկատվություն պարունակող նյութական կրիչների, փաստաթղթերի Հանձնաժողովին փոխանցումը իրականացվի փոստային կապի միջոցով (պատվիրված կամ արժեքավոր փոստային փոխանցումներով), ինչպես նաև սուրհանդակային կապի կամ սուրհանդակի միջոցով (հոդված 5, մաս 4),

- համագործակցել Հանձնաժողովի հետ ի նպաստ գաղտնի տեղեկատվության հրապարակման հետ կապված գործերով Հայաստանի Հանրապետությունում արդարադատության իրականացման (հոդված 6, կետ 4, մաս 2),

- երաշխավորել, որ ՀՀ լիազորված մարմինները կապահովեն Հանձնաժողովից իրենց ստացած գաղտնի տեղեկատվության պաշտպանությունը և պատասխանատվություն կկրեն դրա հրապարակման համար ՀՀ օրենսդրությանը համապատասխան (հոդված 7, կետ 1, մաս 1),

- երաշխավորել, որ Հանձնաժողովից ստացված գաղտնի տեղեկատվության ՀՀ լիազորված մարմինների կողմից փոխանցումը երրորդ անձանց հնարավոր կլինի միայն Հանձնաժողովի գրավոր համաձայնությամբ (հոդված 7, կետ 1, մաս 2),

- ապահովել, որ ՀՀ լիազորված մարմնի և մյուս Կողմերի լիազորված մարմինների միջև գաղտնի տեղեկատվության փոխանակումն իրականացվի Մրցակցության մասին համաձայնագրին համապատասխան (հոդված 7, կետ 2):

3. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Արձանագրությամբ Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված միջազգային իրավունքի հիման վրա բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**:

1. 2018 թվականի դեկտեմբերի 3-ին Մոսկվայում ստորագրված «Հայաստանի Հանրապետության՝ «Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից մրցակցության միասնական կանոնների պահպանման նկատմամբ հսկողության լիազորություններն իրականացնելիս գաղտնի տեղեկատվության պաշտպանության կարգի և դրա հրապարակման համար պատասխանատվության մասին» 2014 թվականի նոյեմբերի 12-ի համաձայնագրին միանալու մասին» արձանագրությունում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

3 մարտի 2020 թվականի
ՄԴՈ- 1512



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
ՀՀ ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 1087.2-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ
7-ՐԴ ԵՎ 8-ՐԴ ՄԱՍԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

3 մարտի 2020 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ա. Դիլանյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի (զեկուցող), Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմողի՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի պետ Կ. Մովսիսյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 4-րդ մասի և «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 71-րդ հոդվածի,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.2-րդ հոդ-

1(97)/2020
◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ
◆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

վածի 7-րդ և 8-րդ մասերի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998 թվականի մայիսի 5-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի հուլիսի 28-ին և ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ից:

Օրենսգրքի «Հիմնարար իրավունքների խախտման և անարդարացի դատապարտման հետևանքով պատճառված ոչ նյութական վնասի հատուցման կարգը և պայմանները» վերտառությամբ 1087.2-րդ հոդվածի 7-րդ և 8-րդ մասերը սահմանում են.

«7. Հատուցման չափը չի կարող գերազանցել՝

1) նվազագույն աշխատավարձի երեքհազարապատիկը՝ սույն օրենսգրքի 162.1 հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերով, ինչպես նաև նույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված իրավունքների խախտման պարագայում,

2) նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը՝ սույն օրենսգրքի 162.1 հոդվածի 2-րդ մասի 3-9-րդ կետերով նախատեսված իրավունքների խախտման պարագայում:

8. Ոչ նյութական վնասի հատուցման չափը բացառիկ դեպքերում կարող է գերազանցել սույն հոդվածի 7-րդ մասով նախատեսված առավելագույն սահմանը, եթե պատճառված վնասի արդյունքում առաջացել են ծանր հետևանքներ»:

Օրենսգրքի վերոհիշյալ հոդվածը լրացվել է 19.05.14 ՀՕ-21-Ն օրենքով, փոփոխվել, լրացվել, խմբագրվել 21.12.15 ՀՕ-184-Ն և խմբագրվել 16.12.16 ՀՕ-241-Ն օրենքներով:

Գործի քննության առիթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2019 թվականի սեպտեմբերի 25-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է, որով ներկայացվել է նույն դատարանի 2019 թվականի սեպտեմբերի 19-ի ԵԴ/0217/02/19 գործով «Սահմանադրական դատարան դիմելու մասին» որոշումը:

Ուսումնասիրելով դիմումը և կից ներկայացված փաստաթղթերը, պատասխանողի գրավոր բացատրությունը, գործում առկա մյուս փաստաթղթերը, ինչպես նաև վերլուծելով Օրենսգրքի մի շարք դրույթներ՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Դիմողի դիրքորոշումները

Դիմողը գտնում է. «Դատական վարույթի ինչպես հրապարակա-
յին, արդար, այնպես էլ՝ արդյունավետ դատարանի բնութագրիչ-
ները, արժեք չեն ունենա, եթե այդ գործընթացների իրացման
ժամանակ դատավորը բախվում է նյութաիրավական նորմերի՝
պաշտպանվող արժեքի ենթադրյալ խախտման դեպքում ոչ համար-
ժեք և ոչ ողջամիտ սահմանափակումների, մասնավորապես՝ երբ
օրենսդրորեն այդ իրավունքի էությանը համարժեք ընթացքը չի
սպահովվում՝ անհամաչափորեն սահմանափակելով դատարանի
լիազորությունները և անհամաչափորեն դիմողի վրա դնելով
պաշտպանվող արժեքի հետ ոչ համաչափ պահանջ կամ այդ ար-
ժեքին Պետության կողմից կատարված միջամտության արդյունքում
խախտված իրավունքը վերականգնելու համար անհամաչափ բեռ»:

Անդրադառնալով Սահմանադրության 61-րդ հոդվածին՝ դիմողը
նշում է, որ անձի ազատության իրավունքը երևակայական կլինի,
եթե իրավական համակարգը թույլ չտա դատարանին այդ իրա-
վունքի խախտման դեպքերում սահմանել համարժեք փոխհատուց-
ման արդյունավետ միջոցներ, երբ դատարանն իրականում հնա-
րավորություն չունի «երկուհազարապատիկից ավել փոխհատուց-
ման չափ սահմանելու, եթե չի հիմնավորվել ծանր հետևանքը,
սակայն առկա է հետևանք», այն է՝ անձը, օրինակ, 5, 10, 15, 20 տարի
զրկված է եղել ազատությունից, որն ինքնին պետք է համարվի
հանրահայտ փաստ, այլ ոչ թե դեռ ապացուցման ենթակա փաստ,
ինչպիսի իմպերատիվ պահանջ նախատեսում է գործող օրենքը:

Դիմողի պնդմամբ՝ օրենսդրորեն առաջադրված կարգավորմամբ
շարժվելով՝ դատարանը ստիպված է լինում արձանագրել, որ
խախտված իրավունքը կրողը, օրինակ, չի ապացուցել ծանր
հետևանքները, որոնք առաջացել են «ապօրինի ազատությունից
զրկելու արդյունքում՝ անկախ անձի կրած անօրինական պատժի
տևողությունից կամ ստիպված է լինում սահմանել այնպիսի փոխ-
հատուցման չափ, որն, իր համոզմամբ, հետևանքների առաջացման
տեսանկյունից (խոսքը ծանր հետևանքների մասին չէ), արդարաց-
ված չէ սահմանափակված լինելով ընդամենը նվազագույն
աշխատավարձի երկուհազարապատիկի առավելագույն շեմով»:

Դիմողի կարծիքով՝ վիճարկվող դրույթները «պետք է ի չիք չդարձ-
նեն գործին մասնակցող և հիմնարար իրավունքների հնարավոր
խախտման համար փոխհատուցում՝ արդարացի պատասխանա-
տվություն պահանջող անձանց պաշտպանության իրավունքները
թույլ տալով Դատարանին ինքնուրույն որոշել, թե որքան փոխհա-

տուցման չափ սահմանել և (կամ) թույլ տալ դատարանին սահմանել ավելի մեծ փոխհատուցման չափ՝ ավելացնելով փոխհատուցման առավելագույն շեմը և (կամ) ազատությունից զրկված լինելու տևողությունից կախված ինքնին համարել, որ առաջացել են ծանր հետևանքներ առանց լրացուցիչ փաստակազմի միջոցով դա հիմնավորելու»:

Հղում կատարելով Սահմանադրության 62-րդ հոդվածի 1-ին մասին դիմողը գտնում է, որ այն ամրագրում է ազատությունից ապօրինի զրկելու արդյունքում այդ իրավունքի պաշտպանության կոնկրետ հիմք-նպատակ, որի կիրառման կարգը պետք է սահմանվի օրենքով: Այդ դեպքում համաչափության սահմանադրական սկզբունքն օրենսդրին թելադրում է, որ տվյալ դեպքում անձնական ազատության սահմանափակման արդյունքում փոխհատուցում ստանալու անձի իրավունքը երաշխավորող օրենսդրական միջոցներն ընտրելիս դրանք լինեն պիտանի և անհրաժեշտ Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Օրենսդրի կողմից ընտրված միջոցը պետք է համարժեք լինի սահմանափակվող հիմնական իրավունքի կամ ազատության նշանակությանը:

Ելնելով վերոգրյալից դիմողը խնդրում է որոշել վիճարկվող դրույթների «ամբողջությամբ կամ այնքանով, որքանով դրանք նախատեսում են փոխհատուցման խիստ նվազ առավելագույն չափեր կամ առհասարակ սահմանում են նման չափեր, չեն սահմանում իրավունքի խախտման տևողությունից ելնելով փոխհատուցման կոնկրետ չափեր՝ անկախ որևէ հետևանքի առկայությունն ապացուցելու պահանջի, ինչպես նաև փոխհատուցման չափի առավելագույն շեմից ավելին փոխհատուցում սահմանելու դեպքերի համար պահանջում են լրացուցիչ փաստակազմի առկայություն՝ ծանր հետևանքների ապացուցում», ՀՀ Սահմանադրության 3, 23, 27, 61, 62, 75, 78, 79, 80 և 81-րդ հոդվածներին համապատասխանելու հարցը:

2. Պատասխանողի դիրքորոշումները

Հղում կատարելով Սահմանադրության համապատասխան հոդվածներին, Սահմանադրական դատարանի դիրքորոշումներին, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիային (Կոնվենցիա), Մարդու իրավունքների եվրոպական դատարանի նախադեպային իրավունքում ձևավորված դիրքորոշումներին, ինչպես նաև Վճռա-

բեկ դատարանի կողմից ոչ նյութական վնասի հատուցման վերաբերյալ արտահայտված դիրքորոշումներին՝ պատասխանողը գտնում է, որ վիճարկվող դրույթների շրջանակներում վնասների փոխհատուցում ստանալու և արդար դատաքննության իրավունքն իրացնելու անձի հնարավորությունը սահմանափակված չէ:

Պատասխանողի կարծիքով՝ օրենսդրի կողմից հստակ սահմանվել են ոչ նյութական վնասների փոխհատուցման կարգն ու չափանիշները, որոնց միջոցով անձն ստանում է ողջամիտ և արդարացի փոխհատուցում: «Ընդ որում, անձի փոխհատուցման իրավունքը ապահովված է որոշակիության բավարար աստիճանով, որը բխում է ելնելով մարդու իրավունքների երաշխավորման, և իրավակիրառ մարմինների կողմից կամայականությունների կանխարգելման նկատառումներից»:

Պատասխանողը նշում է, որ Օրենսգրքով նախատեսված է դրույթ, որի շնորհիվ անարդարացի դատապարտված անձը կարող է ստանալ օրենքով սահմանված վնասի փոխհատուցման առավելագույն չափը գերազանցող փոխհատուցում՝ պայմանով, որ վերջինս կներկայացնի բավարար ապացույցներ առ այն, որ անարդարացի դատապարտման արդյունքում իր համար առաջացել են ծանր հետևանքներ: Պատասխանողի կարծիքով նման բացառությունը ինքնանպատակ չէ և չպետք է հիմնված լինի ենթադրությունների և հավանականությունների վրա, ուստի դատարանը, հանդիսանալով արդարադատություն իրականացնող մարմին, ելնելով ողջամտության, արդարացիության և համաչափության սկզբունքներից, պետք է իրականացնի գործի բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ ուսումնասիրություն՝ հաշվի առնելով կողմերի վկայակոչած հանգամանքների հիմնավորվածությունը փաստող ապացույցները:

Վերոհիշյալը հիմք ընդունելով՝ պատասխանողը գտնում է, որ դատարանի կողմից օրինական և հիմնավորված վճիռ կայացնելու կապակցությամբ կարևորվում է անձի՝ ապացույցներ ներկայացնելու պարտավորությունը, քանի որ անորոշությունն ու կասկածը պետք է դուրս մնան կայացված վճռի հիմնավորումների շրջանակից: Հետևաբար, անձի՝ ոչ նյութական վնասի չափը որոշելիս դատարանը չի կարող հաշվի չառնել անձի ներկայացրած պահանջի հիմնավորվածության մակարդակը, քանի որ միայն այդ դեպքում դատարանը կկարողանա սահմանել վնասի համաչափ և արդարացի փոխհատուցում:

Ինչ վերաբերում է ներպետական օրենսդրությամբ սահմանված ոչ նյութական վնասի չափերը եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի պահանջներին համապատասխանեցնելուն, ապա պատասխանողը նշում է, որ նման տարբերությունը չի կարող հանգեցնել վիճարկվող դրույթների հակասահմանադրականությանը, քանի որ եվրոպական երկրների օրենսդրական փորձը և Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի պահանջները ենթադրում են ոչ թե ներպետական օրենսդրությամբ վնասի փոխհատուցման նույնական չափեր սահմանելը, այլ նպատակ են հետապնդում ապահովել յուրաքանչյուր անձի վնասի փոխհատուցման իրավունքի լիարժեք և արդյունավետ իրացումը, հետևաբար, ներպետական օրենսդրությամբ պետք է սահմանվեն վնասի փոխհատուցման այնպիսի չափեր, որոնց շնորհիվ անձը հնարավորություն կունենա ստանալ իր կրած ոչ նյութական վնասների համարժեք և արդարացի փոխհատուցում:

Ելնելով վերոգրյալից պատասխանողը գտնում է, որ Օրենսգրքի 1087.2-րդ հոդվածի 7-րդ և 8-րդ մասերը համապատասխանում են Սահմանադրությանը:

3. Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները

Նկատի ունենալով, որ դիմողը բարձրացնում է վիճարկվող դրույթներով ոչ նյութական վնասի հատուցման առավելագույն չափերի սահմանման սահմանադրականության հարցը՝ հաշվի առնելով, որ այդ չափերից ավելի հատուցում տրամադրելու հնարավորությունը նախատեսված է միայն բացառիկ դեպքերում, երբ առաջացել են ծանր հետևանքներ, Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրումներին.

- արդյոք ոչ նյութական վնասի հատուցման առավելագույն չափեր սահմանելն ապահովում է Սահմանադրության 62-րդ հոդվածով նախատեսված անձի՝ վնասի հատուցման իրավունքի լիարժեք իրականացումը, ինչպես նաև չի խոչընդոտում անձի՝ դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման հնարավորությունը.

- արդյոք վիճարկվող դրույթներով ոչ նյութական վնասի հատուցման չափերին վերաբերող իրավակարգավորումները համահունչ են Սահմանադրությամբ ամրագրված որոշակիության ու համաչափության սկզբունքներին, և արդյոք դրանցով նախատեսված սահ-

մանափակումները գերազանցում են Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված սահմանափակումները:

4. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

4.1. Սահմանադրության 62-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն յուրաքանչյուր ոք ունի պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց ոչ իրավաչափ գործողություններով կամ անգործությամբ, իսկ օրենքով սահմանված դեպքերում նաև իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման իրավունք: Վնասի հատուցման պայմանները և կարգը սահմանվում են օրենքով:

Օրենսգրքի 17-րդ հոդվածը համապատասխան վնասների շարքին է դասում նաև ոչ նյութական վնասը, որը ենթակա է հատուցման՝ օրենքով նախատեսված դեպքերում: Անդրադառնալով ոչ նյութական վնասի հատուցման հարցերին՝ Սահմանադրական դատարանը 2013 թվականի նոյեմբերի 5-ի ՄԴՈ-1121 որոշմամբ արձանագրել է. «ՀՀ Սահմանադրության մի շարք դրույթների սահմանադրաիրավական բովանդակությունը վկայում է այն մասին, որ բարոյական վնասը և բարոյական վնասի նյութական հատուցման հնարավորությունը բխում են մարդու իրավունքների պաշտպանության հարցում որդեգրված սահմանադրաիրավական մոտեցումներից: Այսպես, ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ «Մարդը, նրա արժանապատվությունը, հիմնական իրավունքները և ազատությունները բարձրագույն արժեքներ են»: Այս կապակցությամբ սահմանադրական դատարանը գտնում է, որ մարդու արժանապատվության առանցքային բաղադրատարրերից մեկը, ի թիվս այլնի, հանդիսանում է անհատական հատկանիշներով պայմանավորված բարոյական տառապանքներից զերծ մնալը»:

Ելնելով վերոգրյալից՝ Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ հանրային իշխանության ոչ իրավաչափ գործողություններով կամ անգործությամբ, իսկ օրենքով սահմանված դեպքերում նաև իրավաչափ վարչարարությամբ պատճառված վնասի հատուցման իրավունքն օրենքով նախատեսված դեպքերում ներառում է նաև ոչ նյութական վնասի հատուցման հնարավորությունը:

Հաշվի առնելով ոչ նյութական վնասի հատուցման կարևորությունը, ինչպես նաև հիմք ընդունելով Սահմանադրական դատարանի վերոհիշյալ որոշումը՝ Օրենսգիրքն օրենսդրի կողմից լրացվել

է 162.1-ին և 1087.2-րդ հոդվածներով, որոնցով սահմանվել են ոչ նյութական վնասի հատուցման կարգին և պայմաններին, ինչպես նաև չափերին վերաբերող դրույթներ:

Անդրադառնալով հիմնարար իրավունքների խախտման և անարդարացի դատապարտման հետևանքով պատճառված ոչ նյութական վնասի հատուցմանը վերաբերող իրավակարգավորումներին՝ Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել հետևյալը.

նախ՝ ի տարբերություն նյութական վնասի՝ ոչ նյութական վնասի չափը անհնար է ճշգրիտ որոշել: Քանի որ ոչ նյութական վնասն անձի ֆիզիկական կամ հոգեկան տառապանքն է, ապա առաջին հերթին անձն ինքը պետք է հնարավորություն ունենա գնահատել այդ տառապանքի դիմաց հատուցման դրամական չափը,

երկրորդ՝ ոչ նյութական վնասը հատուցվում է պետական բյուջեի կամ համապատասխան համայնքային բյուջեի միջոցների հաշվին, ինչը ենթադրում է, որ հատուցման չափը որոշելիս հաշվի են առնվում նաև պետության կամ համայնքի ֆինանսական հնարավորությունները,

երրորդ՝ ոչ նյութական վնասի՝ դրամական հատուցման վերջնական չափը որոշում է դատարանը՝ հիմք ընդունելով ողջամտության, արդարացիության և համաչափության սկզբունքները, ինչպես նաև հաշվի առնելով ֆիզիկական կամ հոգեկան տառապանքի բնույթը, աստիճանը և տևողությունը, պատճառված վնասի հետևանքները, վնասը պատճառելիս մեղքի առկայությունը, ոչ նյութական վնաս կրած անձի անհատական հատկանիշները և այլ վերաբերելի հանգամանքներ,

չորրորդ՝ ոչ նյութական վնասի դրամական հատուցման համար նախատեսված է առավելագույն սահման, որով կաշկանդված են հատուցում պահանջող անձը և դատարանը (որոշակի վերապահումով կամ բացառությամբ):

Վերոգրյալից հետևում է, որ օրենսդիրը հիմնարար իրավունքների խախտման և անարդարացի դատապարտման հետևանքով պատճառված ոչ նյութական վնասի հատուցման պայմանները և կարգը սահմանելուց բացի իրավակարգավորման է ենթարկել նաև այդ վնասի դրամական հատուցման առավելագույն չափը:

Այսպես կյանքի իրավունքի կամ խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի չենթարկվելու

իրավունքի խախտման դեպքում, ինչպես նաև այն դեպքում, երբ դատապարտյալն արդարացվել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիային կից (այսուհետ նաև՝ Կոնվենցիա) Թիվ 7 արձանագրության 3-րդ հոդվածով նախատեսված պայմաններով, ոչ նյութական վնասի հատուցման առավելագույն չափ է ընդունվել նվազագույն աշխատավարձի երեքհազարապատիկը, իսկ անձնական ազատության և անձեռնամխելիության իրավունքը, արդար դատաքննության իրավունքը, անձնական և ընտանեկան կյանքը հարգելու, բնակարանի անձեռնամխելիության իրավունքը, մտքի, խղճի և կրոնի ազատության, սեփական կարծիքն ազատ արտահայտելու իրավունքը, հավաքների և միավորման ազատության իրավունքը, իրավական պաշտպանության արդյունավետ միջոցների իրավունքը և սեփականության իրավունքը խախտելու դեպքում՝ նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկը:

Այդուհանդերձ, Սահմանադրական դատարանը փաստում է, որ ոչ նյութական վնասի հատուցման պայմանները և կարգը կոնկրետացնող իրավակարգավորումների հետ ամբողջության մեջ այդ վնասի դրամական հատուցման առավելագույն չափ սահմանելը չի խոչընդոտում կամ չի սահմանափակում անձի արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի լիարժեք իրականացումը: Այս առումով Օրենսգրքում առկա կարգավորումները միտված են մասնավոր և հանրային շահերի հավասարակշռված պաշտպանությանը, իսկ օրենքով ամրագրված ընդհանուր չափորոշիչները թույլ են տալիս գնահատել և որոշել հատուցման ենթակա ոչ նյութական վնասի դրամական արտահայտությունը՝ հաշվի առնելով յուրաքանչյուր կոնկրետ դեպքով առկա փաստական հանգամանքների համակցությունը:

Սահմանադրական դատարանն իր՝ 07.11.2017 թ. ՄԴՈ-1383 որոշմամբ արտահայտել է հետևյալ դիրքորոշումը. «... օրենսդիրը դատարանին է վերապահել յուրաքանչյուր կոնկրետ գործով ոչ նյութական վնասի հատուցման համարժեք չափի սահմանումը՝ միննույն ժամանակ ամրագրելով այն առավելագույն չափանիշները (հատուցման առավելագույն չափը), որոնցով պետք է առաջնորդվի դատարանը վնասի հատուցման վերաբերյալ գործ քննելիս: Հետևաբար, Սահմանադրական դատարանը գտնում է, որ ոչ նյութական վնասի հատուցման «համարժեք չափի» կոնկրետ բովանդակությունը, ելնելով Սահմանադրության 62-րդ հոդվածի իրավակարգավորումից, պետք է բացահայտվի իրավակիրառ գործունեության արդյունքում»:

4.2. Սահմանադրական դատարանը նաև փաստում է, որ վիճարկվող դրույթներով ոչ նյութական վնասի հատուցման չափերին վերաբերող իրավակարգավորումներն անձի համար ընդհանուր առմամբ նախատեսում են դրամական հատուցում ստանալու իրավունքի երկու հիմնական սահմանափակում՝ խախտված հիմնարար իրավունքի տեսակը և հատուցման չափի առավելագույն դրամական արտահայտությունը (որոշակի վերապահումով կամ բացառությամբ):

Այդ սահմանափակումներն իրենց բնույթով և բովանդակությամբ, հիմքերով ու ծավալով, կոնկրետության աստիճանով և առաջացնող հետևանքների առումով չեն խաթարում պատճառված վնասի համար հատուցում ստանալու իրավունքի էությունը, չեն նսեմացնում դրա արժեքը կամ նշանակությունը, ինչպես նաև թույլ են տալիս այդ իրավունքը կրողին և հասցեատիրոջը դրսևորել համապատասխան վարքագիծ:

Այս առումով հարկ է նշել, որ Կոնվենցիային կից Թիվ 7 արձանագրության 3-րդ հոդվածը սահմանում է. «Եթե որևէ անձ վերջնական դատավճռով մեղավոր է ճանաչվել քրեական հանցագործություն կատարելու մեջ, և եթե հետագայում նրա նկատմամբ կայացված դատավճիռը չեղյալ է հայտարարվել, կամ նա ներման է ենթարկվել այն հիմքով, որ նոր կամ նոր բացահայտված որևէ փաստ համոզիչ կերպով ապացուցում է դատական սխալի առկայությունը, ապա նման դատապարտման հետևանքով պատիժ կրած անձը փոխհատուցում է ստանում **տվյալ պետության օրենքին կամ պրակտիկային համապատասխան**, եթե չի ապացուցվում, որ ժամանակին այդ փաստը չբացահայտելը լիովին կամ մասամբ կախված չի եղել տվյալ անձից»: Այսինքն՝ յուրաքանչյուր պետություն ինքն է որոշում հատուցման կարգն ու չափը, ուստի վնասի հատուցման առավելագույն չափ նախատեսելը գտնվում է պետության իրավագործության և հայեցողության շրջանակներում:

4.3. Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նաև այն հանգամանքին, որ հատուցման ենթակա ոչ նյութական վնասի առավելագույն չափը նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկով և երեքհազարապատիկով սահմանափակելով հանդերձ՝ Օրենսգիրքը բացառիկ դեպքերում նախատեսել է ավելի մեծ չափով հատուցում տրամադրելու հնարավորություն, եթե պատճառված վնասի արդյունքում առաջացել են ծանր հետևանքներ:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ այս հատուկ կարգավորման ուժով Օրենսգրքի 1087.2-րդ հոդվածի 8-րդ մասն անձի համար, ի թիվս իր կրած վնասը հիմնավորելու ընդհանուր պահանջների (այս կամ այն իրավունքի խախտման փաստը, պահանջ ներկայացնելու ժամկետը, հատուցման չափը հիմնավորելը), հատուցման առավելագույն սահմանը գերազանցող չափ պահանջելու դեպքում նախատեսել է նաև ապացուցման լրացուցիչ պարտականություն, այն է՝ ըստ էության հիմնավորել տվյալ դեպքի բացառիկությունը և ծանր հետևանքների առկայությունը: Ընդ որում, հատկանշական է, որ օրենսդրորեն չեն բացահայտվում, թե որո՞նք են բացառիկ դեպքերը, և ո՞ր հետևանքները կարող են դիտարկվել որպես ծանր:

Սույն գործով վիճարկվող դրույթներն **իրավական որոշակիության** սահմանադրաիրավական սկզբունքի տեսանկյունից դիտարկելու նպատակով Մահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ հետևյալ դիրքորոշումներին: Մասնավորապես, 2016 թվականի մայիսի 3-ի ՄԴՈ-1270 որոշման մեջ Մահմանադրական դատարանը նշել է. «Նույնիսկ իրավական նորմի առավելագույն հստակությամբ ձևակերպման դեպքում դատական մեկնաբանությունը չի բացառվում: Իրավադրույթների պարզաբանման և փոփոխվող հանգամանքներին՝ զարգացող հասարակական հարաբերություններին դրանց համապատասխանեցման անհրաժեշտությունը միշտ էլ առկա է: Հետևաբար, օրենսդրական կարգավորման որոշակիությունը և ճշգրտությունը չեն կարող բացարձակապես անացվել նույնիսկ ոչ բավարար հստակությունը կարող է լրացվել դատարանի մեկնաբանություններով»:

Բացի դրանից, Մահմանադրական դատարանն իր՝ 25.11.2008 թ. ՄԴՈ-780 որոշման մեջ արձանագրել է, որ օրենքներում օգտագործվող առանձին հասկացություններ չեն կարող ինքնաբավ լինել: Դրանց բովանդակությունը, բնորոշ հատկանիշների շրջանակը ճշգրտվում են ոչ միայն օրինաստեղծ գործունեության արդյունքում, այլ նաև դատական պրակտիկայում:

Օրենսգրքի 1087.2-րդ հոդվածի 8-րդ մասում ամրագրված «**բացառիկ դեպքերում**» և «**ծանր հետևանքներ**» եզրույթների վերլուծությունը և դրանց համադրումը նույն հոդվածի 7-րդ մասի իրավակարգավորման հետ ցույց է տալիս, որ որոշակի դեպքեր պետք է ունենան «արտասովոր» կամ «արտակարգ» բնույթ, որպեսզի դրան-

ցով տրամադրվող ոչ նյութական վնասի հատուցման չափը կարողանա գերազանցել Օրենսգրքի 1087.2-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված առավելագույն սահմանը:

Նման իրավակարգավորման պայմաններում դատարանն անձի պահանջի լույսի ներքո, նախ՝ պետք է գնահատի տվյալ դեպքի բացառիկությունը, այնուհետև՝ պատճառված վնասի արդյունքում ծանր հետևանքների առաջացումը և դրանց վերաբերյալ դրական եզրահանգման գալուց հետո միայն որոշի, թե ոչ նյութական վնասի հատուցման չափն Օրենսգրքի 1087.2-րդ հոդվածի 7-րդ մասով նախատեսված առավելագույն սահմանը որքանով կարող է գերազանցել:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ ժողովրդավարական և իրավական պետությունում հիմնարար իրավունքների խախտման և անարդարացի դատապարտման հաստատված ցանկացած դեպք ինքնին պետք է գնահատվի որպես բացառիկ, իսկ դրա հետևանքով պատճառված ոչ նյութական վնասի հատուցում պահանջող յուրաքանչյուր անձի համար այն բացառիկ է յուրովի: Այս հիմքով ոչ նյութական վնասի հատուցման որևէ դեպք չի կարող մյուսի նկատմամբ բացառիկ համարվել: Ուստի, այն չպետք է անձի համար իր կրած ֆիզիկական կամ հոգեկան տառապանքի «արտասովորությունը» հիմնավորելու լրացուցիչ պարտականություն նախատեսի: Նույն պատճառով դատարանը չպետք է կոնկրետ դեպքի հանգամանքները գնահատի ինքնին կամ այլ դեպքի վերաբերելի հանգամանքների հետ բացառիկության տեսանկյունից և չպետք է իր կողմից կայացվելիք որոշման հիմքում դնի այդ անորոշ չափանիշը:

Սահմանադրական դատարանն արձանագրում է նաև, որ հիմնարար իրավունքների խախտման և անարդարացի դատապարտման այս կամ այն դեպքի բացառիկությունը հիմնավորելու անորոշ պարտականություն սահմանելն անձի համար առաջացնում է իր խախտված իրավունքի վերականգնմանը խոչընդոտող անհամաչափ բեռ, որը նրան զրկում է իր իրավունքների արդյունավետ դատական պաշտպանության իրավունքից:

4.4. Միաժամանակ, Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում փաստել, որ անձի կողմից ոչ նյութական վնասի դրամական հատուցման համար օրենքով նախատեսված առավելագույն սահմանը գերազանցող պահանջ ներկայացնելու դեպքում հավելյալ իրավական շեմեր հաղթահարելու անհրաժեշտությունը համաչափ է պետության կողմից պաշտպանվող արժեքին:

Նույնանման իրավունքի խախտման պարագայում այլ անձի համեմատ ավելի մեծ դրամական հատուցում ստանալու հավակնության դեպքում անձը պետք է ապացուցի որոշակիորեն տարբերվող կամ իրենց բնույթով մյուս դեպքերի հետ չնույնացող հանգամանքները (որոնք կարող են լինել կամ գնահատվել որպես ծանր հետևանքներ): Նման հանգամանքները ողջամտորեն կարող են հիմք հանդիսանալ ոչ նյութական վնասի հատուցման՝ օրենքով նախատեսված առավելագույն սահմանը գերազանցելու համար, օրինակ, ի տարբերություն այլ դեպքերի անարդարացի դատապարտման հետևանքով անձը կարող է ստանալ հաշմություն կամ առողջության այլ վնաս, իսկ բնակարանի անձեռնմխելիության իրավունքը խախտելիս կարող են հրապարակվել նաև անձի անձնական կյանքին վերաբերող տվյալներ:

Հետևաբար, Սահմանադրական դատարանն արձանագրում է, որ «ծանր հետևանքներ» հասկացությունը յուրաքանչյուր կոնկրետ դեպքում ենթակա է գնահատման դատարանի կողմից՝ ելնելով տվյալ գործի բոլոր փաստական հանգամանքների համադրված վերլուծությունից: Գործը քննող դատարանն է իրավասու որոշել, թե արդյոք տվյալ անձին պատճառված վնասի արդյունքում առաջացած հետևանքները ծանր են, թե ոչ:

Ինչ վերաբերում է ոչ նյութական վնասի հատուցման՝ օրենքով նախատեսված առավելագույն սահմանը գերազանցող հատուցման չափին, ապա այն դատարանի կողմից որոշվելու է՝ հիմք ընդունելով Օրենսգրքի 1087.2-րդ հոդվածի 5-րդ և 6-րդ մասերով ամրագրված չափանիշները:

Վերոնշյալի կապակցությամբ Սահմանադրական դատարանը հարկ է համարում վկայակոչել «Պողոսյանը և Բաղդասարյանն ընդդեմ Հայաստանի» գործով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կայացրած վճիռը (գանգատ թիվ 22999/06, 12.06.2012 թ.), որով Եվրոպական դատարանը սահմանել է հետևյալը. «... Դատարանը գտնում է, որ Թիվ 7 արձանագրության 3-րդ հոդվածի նպատակը ոչ միայն սխալ մեղադրական դատավճիռ կայացնելու դեպքում նյութական վնասի վերականգնումն է, այլ նաև արդարադատության ոչ պատշաճ իրականացման հետևանքով դատապարտված անձին ցանկացած ոչ նյութական վնասի մասով, օրինակ **տագնապի, անհանգստության, անհարմարության և կյանքի նկատմամբ հետաքրքրության կորստի** համար փոխհատուցման տրամադրումն է: Այնուամենայնիվ, սույն գործում նման փոխհատուցում չի տրամադրվել դիմումատուին»:

Բացի դրանից, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիային կից Թիվ 7 արձանագրության Բացատրական զեկույցում, որը Թիվ 7 արձանագրության դրույթների մեկնաբանությունն է, նշված է, որ բոլոր դեպքերում, երբ Թիվ 7 արձանագրության 3-րդ հոդվածի նախապայմանները բավարարվում են, փոխհատուցումը վճարվում է ներպետական օրենսդրության կամ պրակտիկայի համաձայն: Դա չի նշանակում, որ փոխհատուցում չի վճարվում, եթե օրենքում կամ պրակտիկայում նախատեսված չէ այդպիսի փոխհատուցում: Դա նշանակում է, որ ներպետական օրենսդրությունը կամ պրակտիկան պետք է նախատեսի փոխհատուցման վճարում այն բոլոր դեպքերում, որոնց նկատմամբ կիրառվում է այդ հոդվածը: Ջեկույցի 25-րդ կետում նշված է նաև. «Ենթադրվում է, որ պետությունները պարտավորված կլինեն փոխհատուցում վճարել անհատներին միայն բացահայտ դատական սխալի դեպքերում, այն իմաստով, որ համապատասխան անձը կճանաչվի բացահայտ անմեղ: Այս հոդվածը նպատակ չունի ապահովելու հատուցման իրավունքներ, եթե բոլոր նախապայմանները չեն պահպանվել, օրինակ, երբ վերաքննիչ դատարանը բեկանել է մեղադրական դատավճիռը, քանի որ հայտնաբերվել է փաստ, որը հանգեցրել է մեղադրյալի մեղավորության վերաբերյալ ողջամիտ կասկածի, և որը բաց է թողնված եղել 1-ին աստիճանի դատավորի կողմից»¹:

Ակնհայտ է, որ Կոնվենցիային կից Թիվ 7 արձանագրության 3-րդ հոդվածով նախատեսված երաշխիքը գործնականում կարող է ապահովվել ոչ միայն այն դեպքերում, երբ ներպետական օրենսդրությունը կսահմանի փոխհատուցման որոշակի չափանիշներ, այլև փոխհատուցման չափի դատական հայեցողությամբ ձևավորած պրակտիկայի արդյունքում: Ջեկույցի 25-րդ պարբերությամբ ևս նշվել է, որ որևէ օրենսդրական խոչընդոտ չպետք է առկա լինի փոխհատուցում տրամադրելիս, որն ուղղակի վերաբերում է նաև փոխհատուցման չափը որոշելուն:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով, 169-րդ հոդվածի

¹ Explanatory Report to the Protocol No. 7 to the Convention for the Protection of Human Rights and Fundamental Freedoms, Strasbourg, 22.XI.1984, Commentary on Article 3, p. 5-6.

4-րդ մասով, 170-րդ հոդվածով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 71-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց Թ**.

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1087.2-րդ հոդվածի 7-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 1087.2-րդ հոդվածի 8-րդ մասի «բացառիկ դեպքերում» բառակապակցությունը ճանաչել Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասին, 78 և 79-րդ հոդվածներին հակասող և անվավեր:

3. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

3 մարտի 2020 թվականի
ՍԴՈ-1513



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ՎԱՐԴԱՆ ՑՈՒԱԿՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 477-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

10 մարտի 2020 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ա. Դիլանյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի (զեկուցող), Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմողի՝ Վարդան Ցոլակյանի ներկայացուցիչ Ա. Կիվիրյանի, գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ Ազգային ժողովի ներկայացուցիչ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի պետ Կ. Մովսիսյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22 և 69-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Վարդան Ցոլակյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 477-րդ հոդվածի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրքը (այսուհետ՝ Օրենսգիրք) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1998

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 1(97)2020

թվականի մայիսի 5-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 1998 թվականի հուլիսի 28-ին և ուժի մեջ է մտել 1999 թվականի հունվարի 1-ից:

Օրենսգրքի «Վաճառողի պատասխանատվությունը գնորդից ապրանքն առգրավվելիս» վերտառությամբ 477-րդ հոդվածը սահմանում է.

«1. Մինչև առուվաճառքի պայմանագրի կատարումը ծագած հիմքերով երրորդ անձանց կողմից գնորդից ապրանքն առգրավվելու դեպքում վաճառողը պարտավոր է գնորդին հատուցել կրած վնասները, եթե չի ապացուցում, որ գնորդը գիտեր կամ պետք է իմանար այդ հիմքերի առկայության մասին:

2. Երրորդ անձանց կողմից գնորդի ձեռք բերած ապրանքը պահանջելու դեպքում վաճառողին պատասխանատվությունից ազատելու կամ նրա պատասխանատվությունը սահմանափակելու մասին կողմերի համաձայնությունն առաջինն է»:

Գործի քննության առիթը Վարդան Յուլայկյանի՝ 2019 թվականի սեպտեմբերի 17-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը և կից ներկայացված փաստաթղթերը, պատասխանողի գրավոր բացատրությունը, գործում առկա մյուս փաստաթղթերը, ինչպես նաև Օրենսգրքի վերաբերելի դրույթները՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Բ Ձ Ե Ց**.

1. Դիմողի դիրքորոշումները

Վկայակոչելով Սահմանադրության, ինչպես նաև մարդու իրավունքների պաշտպանության ոլորտում մի շարք միջազգային փաստաթղթերի դրույթները՝ դիմողը գտնում է, որ գրկվել է իր իրավունքների պատշաճ պաշտպանության հնարավորությունից, քանի որ ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը չի նախատեսում դրույթ, որով կպաշտպանվեն գնորդի իրավունքները նաև այն դեպքերում, երբ գնորդից ապրանքի առգրավման և այնուհետև վերադարձման ժամանակահատվածում վերջինս ստիպված է լինում կատարել որոշակի ծախսեր, որոնց կատարման անհրաժեշտությունը անմիջականորեն պայմանավորված է ապրանքի առգրավմամբ:

Ըստ դիմողի՝ օրենսդրական բացի պայմաններում տուժել է անձը՝ չկարողանալով պատշաճ կերպով պաշտպանել իր խախտված իրավունքները, այլ կերպ ասած՝ ի թիվս այլնի՝ խախտվել է անձի դատական պաշտպանության իրավունքը:

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՒԹՅՈՒՆ ♦ 1(97)2020

Անդրադառնալով Օրենսգրքի 477-րդ հոդվածի վերաբերյալ վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից տրված մեկնաբանությանը համաձայն որի «...բողոքաբերն անտեսել է այն հանգամանքը, որ նշված նորմը, մասնավորապես, վերաբերում է երրորդ անձանց կողմից գնորդից ապրանքն առգրավված լինելու դեպքին, այսինքն՝ միայն ապրանքն առգրավված լինելու դեպքում է մինչև պայմանագրի կատարումը ծագած հիմքերի մասին գնորդի տեղյակ չլինելը համարվում գնորդի կրած վնասները հատուցելու միակ պայմանը, իսկ սույն դեպքում առգրավված գույքը երրորդ անձանց կողմից արդեն իսկ հետ է վերադարձվել հայցվորին...», դիմողը գտնում է, որ նման մեկնաբանումը ակնհայտ կերպով խախտում է անձի դատական պաշտպանության իրավունքը, քանի որ դատարանը որպես պատճառված վնասի հատուցման պայման է դիտում գույքի՝ երրորդ անձանց տիրապետման տակ գտնվելու հանգամանքը: Ըստ դատարանի տրամաբանության՝ եթե գույքն առգրավվել, այնուհետ վերադարձվել է, իրավունքի խախտում առկա չէ, իսկ դրանով պայմանավորված անձին պատճառված վնասը ենթակա չէ հատուցման: Մինչդեռ, գույքի առգրավման և տևական ժամանակ պահելու համար դիմողից գանձվել է 1475 վրացական լարիի չափով գումար:

Դիմողը գտնում է, որ Օրենսգրքի 477-րդ հոդվածում գույքի առգրավման և վերադարձման ընթացքում գնորդին պատճառված վնասի հատուցման վերաբերյալ դրույթի բացակայությունը հանգեցնում է անձի՝ Սահմանադրությամբ, «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայով և մի շարք այլ իրավական ակտերով երաշխավորված իրավունքների խախտման:

Հղում կատարելով օրենսդրական բացի վերաբերյալ Սահմանադրական դատարանի կողմից արտահայտված մի շարք դիրքորոշումների՝ դիմողը գտնում է, որ Օրենսգրքի 477-րդ հոդվածի 1-ին մասի կապակցությամբ առկա է օրենսդրական բաց, քանի որ իրավակիրառական պրակտիկայում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 477-րդ հոդվածի 1-ն մասի կիրառելիությունը սահմանափակվում է միայն ապրանքի՝ երրորդ անձանց կողմից առգրավված լինելու հանգամանքով, և որևէ իրավական գնահատական չի տրվում այն դեպքերին, երբ ապրանքն առգրավված լինելուց հետո վերադարձվում է գնորդին, սակայն ապրանքի՝ առգրավված լինելու

ընթացքում գնորդի կողմից կատարվում են ծախսեր (վերջինս կրում է վնաս): Ըստ դիմողի՝ գնորդի կողմից կրած վնասների հատուցում ստանալու իրավունքը չի պաշտպանվում ՀՀ քաղաքացիական օրենսգրքի որևէ նորմով:

Ինչ վերաբերում է Օրենսգրքի 17-րդ հոդվածին, դիմողը, վկայակոչելով ՀՀ վճռաբեկ դատարանի դիրքորոշումը, նշում է, որ այդ հոդվածի կիրառելիության համար անհրաժեշտ և պարտադիր նախապայման է պարտապանի ոչ իրավաչափ վարքագիծը, ինչպես նաև վնաս պատճառող անձի մեղքի առկայությունը:

Բացի դրանից, դիմողը գտնում է, որ վիճարկվող դրույթով խախտվում է իր Սահմանադրությամբ և միջազգային փաստաթղթերով երաշխավորված սեփականության իրավունքը, մասնավորապես «նյութական միջոցը ձեռք բերելու լեգիտիմ ակնկալիքի իրավունքը»:

Ելնելով վերոգրյալից՝ դիմողը խնդրում է Օրենսգրքի 477-րդ հոդվածով նախատեսված կարգավորումներն այնքանով, որքանով դրանք չեն նախատեսում ապրանքը երրորդ անձանց կողմից առգրավվելու և վերադարձնելու ընթացքում և/կամ կապակցությամբ գնորդին պատճառված վնասը փոխհատուցելու իրավակարգավորում ճանաչել Սահմանադրության 1-ին, 3, 60, 61, 63, 75, 78, 80 և 81-րդ հոդվածներին հակասող և անվավեր:

2. Պատասխանողի դիրքորոշումները

Անդրադառնալով սեփականության իրավունքին վերաբերող սահմանադրաիրավական դրույթներին, ինչպես նաև Սահմանադրական դատարանի կողմից արտահայտված մի շարք դիրքորոշումներին՝ պատասխանողը նշում է, որ սահմանադրական մակարդակներով հաստատագրված է հանրային իշխանության պոզիտիվ պարտականությունը ապահովել սեփականության իրավունքի անձեռնմխելիության երաշխիքներ, այն է՝ առանց որևէ խտրականության ճանաչել և պաշտպանել սեփականության իրավունքն անկախ դրա դրսևորման ձևերի, երաշխավորել սեփականության իրավունքի պաշտպանությունը՝ նախադրյալներ ստեղծելով սեփականատիրոջ կողմից օրինական հիմքով իրեն պատկանող գույքի ազատ տիրապետման, օգտագործման և տնօրինման, ինչպես նաև սեփականության բոլոր ձևերի ազատ զարգացման և հավասար իրավական պաշտպանության համար: Ընդ որում՝ «սեփականության իրավունքը սահմանափակելը որպես կանոն ունենում է ժամանակավոր բնույթ, իսկ սեփականությունից զրկելը այնպիսի

իրավիճակ է, երբ սեփականատերը փաստացի կամ իրավաբանորեն լրիվ զրկվում է իր տիտղոսից, կորցնում է իրի հետ կապը» (Հայաստանի Հանրապետության 2015 թ. խմբագրությամբ Մահմանադրության համառոտ պարզաբանումներ):

Վկայակոչելով Օրենսգրքի 17 և 1058-րդ հոդվածները՝ պատասխանողը նշում է, որ վնասի հատուցման համար պարտադիր պայման է իրավունքը խախտած անձի ոչ օրինաչափ վարքագծի, վնասների ու ոչ օրինաչափ գործողության միջև պատճառահետևանքային կապի ու պարտապանի մեղքի միաժամանակյա առկայությունը: Ընդ որում, նշված պայմաններից որևէ մեկի բացակայության դեպքում վնասը ենթակա չէ հատուցման:

Հղում կատարելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 41-րդ հոդվածին՝ համաձայն որի՝ նորմատիվ իրավական ակտի նորմը մեկնաբանվում է՝ հաշվի առնելով նորմատիվ իրավական ակտն ընդունելիս այն ընդունող մարմնի նպատակը՝ ելնելով դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից, ամբողջ հոդվածի, գլխի, բաժնի կարգավորման համատեքստից, այն նորմատիվ իրավական ակտի դրույթներից, ի կատարումն որի ընդունվել է այդ ակտը, տվյալ նորմատիվ իրավական ակտով սահմանված սկզբունքներից, իսկ այդպիսի սկզբունքներ սահմանված չլինելու դեպքում՝ տվյալ իրավահարաբերությունը կարգավորող իրավունքի ճյուղի սկզբունքներից, պատասխանողը նշում է, որ վիճարկվող հոդվածի «բովանդակային համապարփակ վերլուծությունից պարզ է դառնում, որ վաճառողը պարտավոր է գնորդին հատուցել կրած վնասները, եթե

- հիմքերը ծագել են մինչև առուվաճառքի պայմանագրի կատարումը,
- ապրանքը գնորդից առգրավվել է երրորդ անձանց կողմից,
- և եթե չի ապացուցում, որ գնորդը գիտեր կամ պետք է իմանար այդ հիմքերի առկայության մասին:

Այսինքն՝ վաճառողը պարտավոր է գնորդին հատուցել կրած վնասները, եթե առկա են վերը նշված երեք վավերապայմանները, այլ կերպ ասած՝ գնորդը վնասի հատուցման պահանջ ներկայացնելու իրավունք ունի ցանկացած այն դեպքում, երբ մինչև առուվաճառքի պայմանագրի կատարումը ծագած հիմքերով երրորդ անձանց կողմից ապրանքն առգրավվելիս վերջինս կկրեր վնասներ

առանց շեշտը դնելու հատուցման պահանջ ներկայացնելիս ապրանքի երրորդ անձանց տիրապետության տակ գտնվելու հանգամանքի վրա»:

Բացի դրանից, հղում կատարելով օրենսդրական բացի վերաբերյալ Սահմանադրական դատարանի կողմից արտահայտված մի շարք դիրքորոշումներին՝ պատասխանողը գտնում է, որ դիմողի պնդումները, որ Օրենսգրքի 477-րդ հոդվածի 1-ին մասն այնքանով, որքանով չի նախատեսում երրորդ անձանց կողմից ապրանքը առգրավվելու և վերադարձնելու ընթացքում և/կամ կապակցությամբ գնորդին պատճառած վնասը փոխհատուցելու իրավակարգավորում, և սովյալ իրավակարգավորմամբ առկա է օրենսդրական բաց, անհիմն են, քանի որ դիմողի բարձրացրած հարցերն ավելի շուտ վերաբերում են նորմի մեկնաբանման ձևին, այլ ոչ թե դրա հակասահմանադրականության հարցին:

Ելնելով վերոգրյալից՝ պատասխանողը գտնում է, որ Օրենսգրքի 477-րդ հոդվածը համապատասխանում է Սահմանադրությանը:

3. Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները

Հաշվի առնելով այն, որ դիմողը բարձրացնում է օրենսդրական բացի խնդիր, որի արդյունքում իր կարծիքով խախտվում են անձի Սահմանադրությամբ նախատեսված սեփականության և դատական պաշտպանության իրավունքները, Սահմանադրական դատարանը հարկ է համարում անդրադառնալ հետևյալ հարցադրմանը.

արդյո՞ք առկա է այնպիսի օրենսդրական բաց, որի պատճառով Օրենսգիրքը չի նախատեսում գնորդից առգրավված գույքի վերադարձման դեպքում վերջինիս վնասների փոխհատուցման հնարավորություն, ինչի արդյունքում սահմանափակվում է անձի սեփականության իրավունքը, ինչպես նաև այդ իրավունքի արդյունավետ դատական պաշտպանության հնարավորությունը:

Միաժամանակ, Սահմանադրական դատարանը, նկատի ունենալով, որ Օրենսգրքի 477-րդ հոդվածի 2-րդ մասը դիմողի նկատմամբ չի կիրառվել, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի և 29-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքերով աշխատակարգային որոշմամբ գործն այդ մասով կարճել է (10.03.2020 թ. ՍԴԱՈ-53):

4. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

4.1. Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրի-

նելու իրավունք: Գույքի ձեռքբերման օրինական հիմքերից է, ի թիվս այլնի առուվաճառքի պայմանագիրը: Օրենսգրքի 470-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Առուվաճառքի պայմանագրով կողմերից մեկը (վաճառողը) պարտավորվում է մյուս կողմին (գնորդին) որպես սեփականություն հանձնել (գույք) ապրանք, իսկ գնորդը պարտավորվում է ընդունել այդ ապրանքը և դրա համար վճարել որոշակի գումար (գինը)»:

Օրենսգրքի առուվաճառքի պայմանագրին նվիրված ընդհանուր կարգավորումների համալիր վերլուծությունը վկայում է, որ առուվաճառքի պայմանագրով, ի թիվս այլնի՝ վաճառողն ունի երկու հիմնական պարտավորություն՝ գնորդին հանձնել համապատասխան որակի գույք և ապահովել, որ հանձնվող գույքն ազատ լինի այլ անձանց իրավունքներից:

Մասնավորապես, Օրենսգրքի 476-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Վաճառողը պարտավոր է գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք, բացառությամբ այն դեպքի, երբ գնորդը համաձայնվել է ընդունել երրորդ անձանց իրավունքներով ծանրաբեռնված ապրանքը: Վաճառողի կողմից այդ պարտականությունը չկատարելը գնորդին իրավունք է տալիս պահանջել ապրանքի գնի նվազեցում կամ առուվաճառքի պայմանագրի լուծում, եթե վաճառողը չի ապացուցում, որ գնորդը գիտեր կամ պետք է իմանար տվյալ ապրանքի նկատմամբ երրորդ անձանց իրավունքների մասին»:

Միաժամանակ, Օրենսգրքի կարգավորումների համաձայն՝ ապրանքը առգրավվելուց հետո գնորդն իրավասու է պաշտպանել իր իրավունքները օրենսգրքի 477-478 հոդվածներով սահմանված կարգով: Մասնավորապես, Օրենսգրքի 478-րդ հոդվածի համաձայն՝ «Եթե երրորդ անձը, մինչև առուվաճառքի պայմանագրի կատարումը ծագած հիմքով, գնորդի դեմ հայց է հարուցում ապրանքն առգրավելու մասին, գնորդը պարտավոր է գործին մասնակից դարձնել վաճառողին, իսկ վաճառողը պարտավոր է այդ գործին մասնակցել գնորդի կողմից»:

Միևնույն ժամանակ, «գնորդի կողմից վաճառողին գործին մասնակից չդարձնելը վաճառողին ազատում է գնորդի առջև պատասխանատվությունից, եթե վաճառողն ապացուցում է, որ, մասնակցելով գործին, կարող էր կանխել վաճառված ապրանքի առգրավումը գնորդից: Գնորդի կողմից գործին մասնակցելու հրավիրված, սակայն գործին չմասնակցած վաճառողը զրկվում է գնորդի կողմից գործը ոչ ճիշտ վարելն ապացուցելու իրավունքից»:

Հարկ է նշել, որ վերոհիշյալ դրույթներով վաճառողի շահերը ապահովվում են՝ ոչ թե հաշվի առնելով նրա մեղքի առկայությունը, այլ նրանով, թե կարո՞ղ է արդյոք վերջինս դատավարության ընթացքում ներկայացնել իր հակափաստերը գույքի առգրավման գործընթացի վերաբերյալ, ինչպես նաև նրանով, որ հետագայում կարող է պահանջներ ներկայացնել այն անձին, ումից ձեռք է բերել վիճելի գույքը: Այս իրավակարգավորումը հնարավորություն է տալիս, ի վերջո, վնասների հատուցման պատասխանատվությունը դնել օտարումների շղթայում մեղավոր անձի վրա:

4.2. Սահմանադրության 61-րդ հոդվածն ամրագրում է անձի դատական պաշտպանության իրավունքը, որի օրենսդրական երաշխավորումը, ելնելով Սահմանադրության 75-րդ հոդվածով ամրագրված պահանջից, պետք է կատարվի դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգերի և ընթացակարգերի շրջանակներում:

Օրենսդրության համակարգային վերլուծությունը վկայում է, որ օրենսդիրը, վնասի հատուցման պահանջը դիտարկելով որպես անձի քաղաքացիական իրավունքների պաշտպանության եղանակներից մեկը (Օրենսգրքի 14-րդ հոդված), սահմանել է «վնաս» հասկացության բովանդակությունը՝ ամրագրելով հետևյալը. Վնասներ են իրավունքը խախտված անձի ծախսերը, որ նա կատարել է կամ պետք է կատարի խախտված իրավունքը վերականգնելու համար, նրա գույքի կորուստը կամ վնասվածքը (իրական վնաս), չստացված եկամուտները, որոնք այդ անձը կստանար քաղաքացիական շրջանառության սովորական պայմաններում, եթե նրա իրավունքը չխախտվեր (բաց թողնված օգուտ), ինչպես նաև ոչ նյութական վնասը (Օրենսգրքի 17-րդ հոդված): Միաժամանակ, նույն հոդվածով նախատեսվել է, որ անձը, ում իրավունքը խախտվել է, կարող է պահանջել իրեն պատճառված վնասների լրիվ հատուցում, եթե վնասների հատուցման ավելի պակաս չափ նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Ընդ որում՝ օրենսդիրն ամրագրել է, որ վնասի հատուցման պարտականությունը, որպես կանոն, դրվում է վնասը պատճառած անձի վրա:

Ի լրումն վերոգրյալ կարգավորումների՝ օրենսդիրը որպես ընդհանուր մոտեցում սահմանել է նաև, որ վնաս պատճառած անձն ազատվում է այն հատուցելուց, եթե ապացուցում է, որ վնասն իր մեղքով չի պատճառվել: Միաժամանակ, օրենքով կարող է նախա-

տեսվել վնասի հատուցում՝ վնասը պատճառողի մեղքի բացակայությամբ, ինչպես նաև օրենքով վնասի հատուցման պարտականությունը կարող է ծագել օրինաչափ գործողությունների արդյունքում պատճառված վնասի համար (Օրենսգրքի 1058-րդ հոդված):

Վնասի հատուցման ինստիտուտի վերաբերյալ դատական պրակտիկայի ուսումնասիրությունը վկայում է, որ Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով Օրենսգրքի 14-րդ հոդվածի 10-րդ կետի, 17-րդ հոդվածի 1-ին մասի և 1058-րդ հոդվածի 1-ին մասի իրավակարգավորումների համատեքստում վնաս պատճառելու հետևանքով հարաբերությունների ծագման համար անհրաժեշտ պայմանների առկայության հարցին, արձանագրել է, որ «...վերը նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ վնասի հատուցման համար պարտադիր պայման է իրավունքը խախտած անձի ոչ օրինաչափ վարքագծի, վնասների, վնասների ու ոչ օրինաչափ գործողության միջև պատճառահետևանքային կապի և պարտապանի մեղքի միաժամանակյա առկայությունը» (տե՛ս նաև Նատայա Հակոբյանն ընդդեմ Վարդան Հայրապետյանի թիվ ՀՔԴ 3/0016/02/08 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 13.02.2009թ. որոշումը): «... ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 17-րդ հոդվածի 2-րդ կետի և 1058-րդ հոդվածի 1-ին կետի կանոնակարգումներից հետևում է, որ նմանատիպ գործերով ապացուցման առարկան են կազմում իրավական նշանակություն ունեցող հետևյալ փաստերը.

- ոչ օրինաչափ վարքագիծը (գործողություն կամ անգործություն),
- վնաս պատճառող անձի առկայությունը,
- պատճառված վնասի առկայությունը,
- վնաս պատճառող անձի մեղքի առկայությունը,
- պատճառահետևանքային կապը ոչ օրինաչափ գործողության կամ անգործության և պատճառված վնասի միջև»: (թիվ ՏԴ/0041/02/11 քաղաքացիական գործով Վճռաբեկ դատարանի 05.04.2013 թ. որոշումը):

Սակայն հարկ է նշել, որ պայմանագրային հարաբերություններում Օրենսգրքով նախատեսվել են վնասի հատուցման հետ կապված պարտավորությունների առաջացման հատուկ կարգավորումներ: Մասնավորապես, սույն գործով վիճարկվող դրույթի համաձայն՝ մինչև առուվաճառքի պայմանագրի կատարումը ծագած հիմքերով երրորդ անձանց կողմից գնորդից ապրանքն առգրավվելու դեպքում վաճառողը պարտավոր է գնորդին հատուցել կրած վնասները, եթե չի ապացուցում, որ գնորդը գիտեր կամ պետք է իմանար այդ հիմքերի առկայության մասին:

Նշված դրույթի վերաբերյալ Վերաքննիչ քաղաքացիական դատարանն իր 30.11.2018 թ. որոշմամբ արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «...Բողոքաբերն անտեսել է այն հանգամանքը, որ նշված նորմը, մասնավորապես, վերաբերում է երրորդ անձանց կողմից գնորդից ապրանքն առգրավված լինելու դեպքին, այսինքն՝ միայն ապրանքն առգրավված լինելու դեպքում է մինչև պայմանագրի կատարումը ծագած հիմքերի մասին գնորդի տեղյակ չլինելը համարվում գնորդի կրած վնասները հատուցելու միակ պայմանը, իսկ սույն դեպքում առգրավված գույքը երրորդ անձանց կողմից արդեն իսկ հետ է վերադարձվել հայցվորին, հետևաբար նման պայմաններում վաճառողը «Յումակս» ՍՊԸ-ն, սույն պարագայում պարտավորություն չի կրում գնորդին՝ Վարդան Յուլայանին, հատուցել վերջինիս կրած վնասները, ուստի նման վնասի հատուցման պահանջ կարող էր ներկայացվել ընդհանուր հիմունքներով»:

Վերաքննիչ քաղաքացիական դատարանի կողմից տրված մեկնաբանությամբ ստացվում է, որ վիճարկվող հոդվածը կարգավորում է բացառապես այն իրավիճակը, երբ մինչև առուվաճառքի պայմանագրի կատարումը ծագած հիմքերով երրորդ անձանց կողմից ապրանքն առգրավվում է գնորդից և այլևս չի վերադարձվում նրան, ինչի հետևանքով գնորդը կրում է վնասներ: Մինչդեռ, այն պարագայում, երբ երրորդ անձանց կողմից ապրանքը գնորդից առգրավվում է որոշակի ժամանակահատվածով, ապա այդ ժամանակահատվածում գնորդի կրած վնասները ենթակա չեն հատուցման վաճառողի կողմից:

4.3. Վերոգրյալի համատեքստում Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում անդրադառնալ վիճարկվող դրույթում կիրառված «առգրավել» հասկացությանը: Ինչպես օրենսդրական մի շարք ակտերում, այնպես էլ Օրենսգրքում կիրառվող «առգրավել» հասկացությունը չի ենթադրում, որ այն չի կարող ունենալ ժամանակավոր բնույթ: Մասնավորապես, Օրենսգրքի 279-րդ հոդվածի համաձայն՝ «Չի թույլատրվում սեփականատիրոջ գույքը հարկադրաբար վերցնել կամ **առգրավել**, բացի այն դեպքերից, երբ օրենքով նախատեսված հիմքերով՝

1) պարտավորությունների համար գույքի վրա տարածվում է բռնագանձում (հոդված 281).

2) օտարվում է այն գույքը, որն օրենքի ուժով չի կարող պատկանել տվյալ անձին (հոդված 282).

3) սեփականությունն օտարվում է հանրության գերակա շահերի ապահովման նպատակով (հոդված 218).

4) վերցվում են անտնտեսվար պահվող մշակութային արժեքները (հոդված 284).

5) կատարվում է ռեկվիզիցիա (հոդված 285).

6) կատարվում է բռնագրավում (հոդված 288).

7) իրավաբանական անձը դատարանի վճռով վերակազմակերպվում կամ լուծարվում է (63 և 67 հոդվածներ).

8) գույքն օտարվում է՝ սույն օրենսգրքի 197 հոդվածի 4-րդ կետով, 208 և 220 հոդվածներով նախատեսված դեպքերում»:

Այսինքն, ըստ Օրենսգրքի գույքի առգրավումը սեփականության իրավունքի հարկադրաբար դադարեցման ինքնուրույն հիմք չէ: Առաջին հերթին այն գույքի տիրապետումից զրկելուն ուղղված գործողություն է: Մասնավորապես, չեն բացառվում դեպքեր, երբ, օրինակ, բռնագանձման գործընթացի դադարման պատճառով առգրավված գույքը վերադարձվի սեփականատիրոջը:

Այդ առումով, Սահմանադրական դատարանը գտնում է, որ վիճարկվող դրույթում կիրառված «առգրավել» հասկացությունը պետք է վերաբերի նաև այն առգրավումներին, որոնք կրում են ժամանակավոր բնույթ:

Հակառակ պարագայում ստացվում է, որ անձի սեփականության իրավունքը ժամանակավոր առգրավման դեպքում սահմանափակվում է, անձը կրում է վնասներ, մինչդեռ դատարանի տված մեկնաբանությամբ այդ վնասը ենթակա չէ վաճառողի կողմից հատուցման:

4.4. Հաշվի առնելով դիմողի դիրքորոշումները՝ Սահմանադրական դատարանը հարկ է համարում վիճարկվող իրավակարգավորումների շրջանակներում դիտարկել օրենսդրական բացի առկայության խնդիրը:

Մասնավորապես, Սահմանադրական դատարանն արտահայտել է դիրքորոշում, համաձայն որի «... օրենսդրական բացը կարող է հանդիսանալ սահմանադրական դատարանի քննության առարկա միայն այն դեպքում, երբ օրենսդրության մեջ առկա չեն այդ բացը լրացնելու այլ իրավական երաշխիքներ կամ օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայության պարագայում ձևավորված է հակասական իրավակիրառական պրակտիկա, կամ երբ առկա օրենսդրական բացը չի ապահովում այս կամ այն իրավունքի իրացման հնարավորությունը» (14.09.2010 թ. ՍԴՈ-914):

Սահմանադրական դատարանը գտնում է, որ «Մինչև առուվաճառքի պայմանագրի կատարումը ծագած հիմքերով երրորդ անձանց կողմից գնորդից ապրանքն առգրավվելու դեպքում վաճառողը պարտավոր է գնորդին հատուցել կրած վնասները» դրույթը պետք է մեկնաբանվի և կիրառվի դրա նպատակին և սեփականության հիմնական իրավունքի արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր ամրագրելու սահմանադրական պահանջի լույսի ներքո: Այն է՝ մինչև առուվաճառքի պայմանագրի կատարումը ծագած հիմքերով երրորդ անձանց կողմից գնորդից ապրանքն առգրավվելու դեպքը պետք է ներառի ցանկացած առգրավում՝ և՛ ժամանակավոր, և՛ մշտական, իսկ «վնասներ» եզրույթն իր բովանդակության մեջ պետք է ներառի ժամանակավոր կամ մշտական առգրավման հետ կապված վնասը, մասնավորապես՝ իրավունքը խախտված անձի ծախսերը, որ նա կատարել է խախտված իրավունքը վերականգնելու համար:

Այսպիսով, Սահմանադրական դատարանը գտնում է, որ Օրենսգրքի 477-րդ հոդվածի 1-ին մասին իրավակիրառ պրակտիկայի շրջանակներում տրված այն մեկնաբանությունը, ըստ որի՝ մինչև առուվաճառքի պայմանագրի կատարումը ծագած հիմքերով երրորդ անձանց կողմից գնորդից առգրավված գույքը վերադարձնելու դեպքում վաճառողը պարտավոր չէ գնորդին հատուցել առգրավման հետևանքով առաջացած վնասները, համահունչ չէ Սահմանադրության 60, 61 և 75-րդ հոդվածների պահանջներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով, 169-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, 170-րդ հոդվածով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 69-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**:

1. Քաղաքացիական օրենսգրքի 477-րդ հոդվածի 1-ին մասը համապատասխանում է Սահմանադրությանն այնպիսի մեկնաբանությամբ, համաձայն որի՝ մինչև առուվաճառքի պայմանագրի կատարումը ծագած հիմքերով երրորդ անձանց կողմից գնորդից ապրանքն առգրավվելու դեպքը պետք է ներառի նաև ժամանակավոր առգրավման դեպքերը:

2. «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 69-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ դիմողի նկատմամբ կայացված վերջնական դատական ակտը նոր հանգամանքի ի հայտ գալու հիմքով ենթակա է վերանայման օրենքով սահմանված կարգով, քանի որ Քաղաքացիական օրենսգրքի 477-րդ հոդվածի 1-ին մասը դիմողի նկատմամբ կիրառվել է այլ մեկնաբանությամբ:

3. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

10 մարտի 2020 թվականի
ՍԴՈ-1514



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ ՀՀ
ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔԻ 182-ՐԴ
ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 2-ՐԴ ԿԵՏԻ, 183-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 8-ՐԴ
ՄԱՍԻ, 203-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ՝ ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

10 մարտի 2020 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի (զեկուցող), Ա. Դիլանյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ դիմողի Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված՝ Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի պետ Կ. Մովսիսյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 4-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22, 40 և 71-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի

ՄԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 1(97)/2020

դիմումի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 183-րդ հոդվածի 8-րդ մասի, 203-րդ հոդվածի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրքը (**այսուհետ՝ Օրենսգիրք**) Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2018 թվականի փետրվարի 9-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել՝ 2018 թվականի փետրվարի 27-ին և ուժի մեջ է մտել 2018 թվականի ապրիլի 9-ից:

Օրենսգրքի «**Գործի վարույթը կարճելու հիմքերը**» վերտառությամբ 182-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը սահմանում է.

«1. Առաջին ատյանի դատարանը դատավարության ցանկացած փուլում կարճում է գործի վարույթը, եթե՝

...

2) նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն փաստական հիմքերով գործի վերաբերյալ առկա է դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտ, բացառությամբ հայցը (դիմումը) առանց քննության թողնելու մասին որոշման»:

Օրենսգրքի «**Գործի վարույթը կարճելու կարգը և հետևանքները**» վերտառությամբ 183-րդ հոդվածի 8-րդ մասը սահմանում է.

«8. Գործի վարույթի կարճման դեպքում նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ չի թույլատրվում կրկին դիմել դատարան, բացառությամբ այն դեպքի, երբ սույն օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով նախատեսված հիմքով գործի վարույթը կարճելուց հետո դատարանը մերժել է արբիտրաժի վճռի կամ ֆինանսական համակարգի հաշտարարի՝ կողմերի համար պարտադիր դարձած որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալը»:

Օրենսգրքի «**Ընտանեկան վեճերով գործի քննության առանձնահատկությունները**» վերտառությամբ 203-րդ հոդվածը սահմանում է.

«1. Ընտանեկան վեճեր քննելիս գործի քննությունն իրականացվում է սույն օրենսգրքով նախատեսված կանոնների պահպանմամբ՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքով և սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված առանձնահատկությունները:

2. Երեխայի լավագույն շահերի ապահովման անհրաժեշտությունից ելնելով՝ դատարանը գործի լուծման համար անհրաժեշտ ներքին համոզմունք ձևավորելու նպատակով պարտավոր է, չսահ-

մանափակվելով գործին մասնակցող անձանց միջնորդություններով, նրանց ներկայացրած ապացույցներով և գործում առկա այլ նյութերով, ձեռնարկել ողջամիտ միջոցներ գործի քննությունը լրիվ, բազմակողմանի իրականացնելու համար, մասնավորապես պահանջելու տեղեկություններ, ապացույցներ, լրացուցիչ բացատրություններ, հանձնարարելու գործին մասնակցող անձանց ներկայանալ դատական նիստի, նշանակելու փորձաքննություն, հարցաքննելու վկաների, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից, ֆիզիկական և իրավաբանական անձանցից պահանջելու փաստաթղթեր:

3. Երեխայի լավագույն շահերի ապահովման անհրաժեշտությունից ելնելով դատարանն իր նախաձեռնությամբ կամ կողմի միջնորդությամբ հայցի ապահովման կարգով կարող է գործին մասնակցող կամ այլ անձանց արգելել կամ պարտավորեցնել կատարելու որոշակի գործողություններ, թեկուզև հայցի ապահովման կիրառված միջոցն առերևույթ հանգեցնում է ներկայացված պահանջի փաստացի կատարման»:

Գործի քննության առիթը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի ԵԴ/9967/02/19 քաղաքացիական գործով «Սահմանադրական դատարան դիմելու մասին» 2019 թվականի նոյեմբերի 7-ի որոշման հիման վրա նույն դատարանի 2019 թվականի նոյեմբերի 13-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով դիմումը և կից ներկայացված փաստաթղթերը, պատասխանողի գրավոր բացատրությունը, գործում առկա մյուս փաստաթղթերը, ինչպես նաև Օրենսգիրքը և այլ վերաբերելի իրավական ակտեր՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Դիմողի դիրքորոշումները

Դիմողը խնդրում է որոշել Օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 183-րդ հոդվածի 8-րդ մասի և 203-րդ հոդվածի համապատասխանությունը Սահմանադրության 61 և 63-րդ հոդվածների 1-ին մասերին, 37-րդ հոդվածի 2 և 3-րդ մասերին, 78-րդ հոդվածին:

Դիմողի կարծիքով՝ հայցից հրաժարվելու հիմքով վարույթի կարճման դեպքում նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն փաստական հիմքերով կրկին դատարան դիմելու օրենսդրական բացարձակ արգելքն անհնարին է դարձնում ալիմենտի բռնագանձման պահանջի վերաբերյալ գործերով երեխայի լավագույն շահերի դատական պաշտպանությունը:

Դիմողը գտնում է, որ Օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը հակասում է Մահմանադրությանն այնքանով, որքանով գործի վարույթը կարճելու անվերապահ հիմք է սահմանում նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն փաստական հիմքերով առանց բացառության բոլոր, այդ թվում՝ ընտանեկան վեճերի վերաբերյալ գործերով դատարանի օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտերը:

Դիմողը փաստում է, որ հայցից հրաժարվելու հիմքով օրինական ուժի մեջ մտած եզրափակիչ դատական ակտի առկայության պայմաններում նույն անձանց միջև, նույն փաստական հիմքերով ու միևնույն առարկայի մասին կրկին դատարան դիմելու արգելքը նպատակ ունի նույն վեճով այլևս չծանրաբեռնել դատարաններին, որոշակիացնել դատական պաշտպանության կողմերի իրավունքի իրականացումը և կանխել իրավունքի հնարավոր չարաշահման դեպքերը:

Դիմողի համոզմամբ, սակայն, քաղաքացիական դատավարության ցանկացած փուլում առանց որոշակի ժամկետի հայցից հրաժարվելու հայցվորի իրավունքի իրացման արդյունքում վրա հասնող նույն անձանց միջև, նույն փաստական հիմքերով ու միևնույն առարկայի մասին կրկին դատարան դիմելու արգելքն իրավունքի չափազանց խիստ սահմանափակում է, որն ակնհայտորեն համաչափ չէ հետապնդվող նպատակին և խախտում է արդար դատաքննության իրավունքի իրացման և այդ իրավունքի սահմանափակման նպատակների միջև արդարացի հավասարակշռությունը՝ ի վնաս դատարանի դիմելու իրավունքի: Արդյունքում՝ օրենքի ուժով անձի վրա դրվում է **խիստ անհամաչափ բացասական բեռ**, երբ հայցվորն ընդամենը հարցն արտադատական կարգով լուծելու նկատառումներով գործի քննության սկզբնական փուլում կամ դեռևս նախնական դատական նիստ չհրավիրված հրաժարվում է հայցից, սակայն հետագայում արտադատական կարգով հարցը չի լուծվում, և վերջինս այլևս զրկվում է դատարանի դիմելու իրավունքից:

Ըստ դիմողի՝ հայցվորին ամեն դեպքում պետք է տրվեր հայցից հրաժարվելու իրավունքից օգտվելու հարցը որոշելու ողջամիտ ու որոշակի ժամկետ, որն էլ կլիներ սահմանադրական հիմնարար իրավունքի արդարացի, ողջամիտ ու անհրաժեշտ սահմանափակում՝ հաշվի առնելով այն ծանր բացասական հետևանքը, որը հետագայում ունենում է հայցվորը՝ հայցից հրաժարվելու հիմքով գործի վարույթը կարճելու մասին դատարանի օրինական ուժի մեջ

մտած եզրափակիչ դատական ակտի գոյության պայմաններում զրկվելով կրկին հայց ներկայացնելու իրավունքից:

Օրենսգրքի 183-րդ հոդվածի 8-րդ մասը, ըստ դիմողի, նույնպես հակասում է Սահմանադրությանն այնքանով, որքանով գործի վարույթը կարճելու իրավական հետևանքների մասով առանց բացառության բոլոր, այդ թվում՝ ընտանեկան վեճերի վերաբերյալ գործերով վարույթի կարճման դեպքում նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ չի թույլատրվում կրկին դիմել դատարան, անկախ նրանից, թե ե՞րբ է հայցվորը հրաժարվել հայցից՝ կախված դատավարական փուլից կամ դատավարական գործողությունից: Ըստ դիմողի՝ օրենսդիրն ինքը պետք է որոշի, թե որ ժամկետն է իրականում նպատակահարմար կամ իրավաչափ, բայց հայցից հրաժարվելու նման հետևանքի դեպքում **որևէ ժամկետի բացակայությունն այդ իրավունքի անհամաչափ սահմանափակում է:**

Օրենսգրքի 203-րդ հոդվածի առնչությամբ դիմողը կարծում է, որ այն չի համապատասխանում Սահմանադրությանն այնքանով, որքանով չի նախատեսում առանձնահատուկ կարգավորում (որպես բացառություն)՝ հայցից հրաժարվելու հիմքով ընտանեկան վեճով գործի վարույթի կարճման դեպքում նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ ցանկացած պահի դատարան դիմելու հայցվորի իրավունքի մասին:

2. Պատասխանողի դիրքորոշումները

Պատասխանողը գտնում է, որ Օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, 183-րդ հոդվածի 8-րդ մասը և 203-րդ հոդվածը համապատասխանում են Սահմանադրությանը:

Վկայակոչելով Մարդու իրավունքների եվրոպական դատարանի և Սահմանադրական դատարանի առանձին դիրքորոշումներ պատասխանողը փաստում է, որ դատարանի մատչելիության իրավունքը բացարձակ իրավունք չէ. որոշակի դեպքերում այն կարող է ենթարկվել անուղղակի սահմանափակումների, սակայն ցանկացած սահմանափակում պետք է հետապնդի իրավաչափ նպատակ, գործադրվող միջոցների և հետապնդվող նպատակի միջև պետք է առկա լինի համաչափության ողջամիտ հարաբերություն, և սահմանափակումը որևէ կերպ չպետք է ազդի իրավունքի էության վրա:

Պատասխանողը պնդում է, որ դատավարական միջոցների խնայողության սկզբունքն ապահովում է ուժերի ռացիոնալ օգտագործումը, արդարադատության ավելի արագ և արդյունավետ իրական-

նացումը՝ ջանքերի նվազագույն գործադրմամբ, իսկ իրավական որոշակիության սկզբունքը ներառում է նաև վճիռների վերջնակա- նության սկզբունքը, որն էլ իր հերթին ինչպես դատավարական միջոցների խնայողության, այնպես էլ դատավարության արդյունա- վետության սկզբունքների կարևորագույն երաշխիք է:

Պատասխանողը նշում է, որ նույն անձանց միջև, նույն առար- կայի և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ, առանց բացառության, կրկին դատարան դիմելու արգելքը կամ հայցվորի՝ ցանկացած պա- հի դատարան դիմելու իրավունքն ապահովող դրույթի բացակայու- թյունը նպատակ ունի ապահովել արդարադատության կանխա- տեսելիության և իրավական որոշակիության սկզբունքների պահ- պանումը:

Ըստ պատասխանողի՝ օրենսդրի կողմից բացառություն նախա- տեսելը՝ կապված վեճի առանձնահատկությամբ, կառաջացնի ոչ միայն արդարադատության անկանխատեսելիություն, այլ **իրա- վունքի** առջև բոլորի հավասարության սկզբունքի խախտման հնա- րավոր ռիսկեր, ինչն էլ անընդունելի է ժողովրդավարական և իրավական պետության համար:

3. Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները

Նկատի ունենալով, որ դիմողն, ըստ էության, բարձրացնում է հայցից հրաժարվելու հիմքով վարույթի կարճման դեպքում նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով կրկին դատարան դիմելու օրենսդրական արգելքի պայմաններում ալի- մենտի բռնագանձման պահանջի վերաբերյալ գործերով երեխայի լավագույն շահերի դատական պաշտպանության ապահովման հարց, Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում սույն գործով վիճարկվող դրույթների Սահմանադրությանը համա- պատասխանության հարցը քննության առնել Սահմանադրության 36, 37, 61, 63, 75 և 78-րդ հոդվածների համատեքստում՝ պարզելով, մասնավորապես, հետևյալ հարցադրումները.

- ի՞նչ նպատակներ է հետապնդում հայցից հրաժարվելու հիմքով քաղաքացիական գործի վարույթի կարճման դեպքում նույն ան- ձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով կրկին դատարան դիմելու օրենսդրական արգելքը, և արդյոք այն սահմա- նափակում է անձի դատական պաշտպանության, արդար դատա- քննության սահմանադրական իրավունքները և համաչափ է հետա- պնդվող նպատակներին,

- արդյոք հայցից հրաժարվելու հիմքով վարույթի կարճման դեպքում նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով կրկին դատարան դիմելու օրենսդրական արգելքը հավասարապես վերաբերում է նաև ալիմենտի բռնագանձման պահանջներին, և այդ պարագայում արդյոք երեխայի լավագույն շահերի դատական պաշտպանությունն իրացնելու համար օրենքով սահմանված են անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր:

4. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

4.1. Սահմանադրության 61-րդ հոդվածով սահմանված արդյունավետ դատական պաշտպանության իրավունքի բովանդակությունը հանգում է անձի իրավունքների և ազատությունների պաշտպանության համար դատարան դիմելու իրավունքի երաշխավորմանը և այդ իրավունքի իրացման համար արդյունավետ միջոցների և պայմանների ստեղծման պետության պարտականությանը:

Դատական պաշտպանության իրավունքի արդյունավետության ապահովման երաշխիքներն ու չափորոշիչներն ամրագրված են Սահմանադրության 63-րդ հոդվածում, ինչպես նաև «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 6-րդ հոդվածում: Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (այսուհետ՝ ՄԻԵԴ) նախադեպերով հաստատված է, որ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով երաշխավորված՝ արդար դատաքննության իրավունքը, որի մասնավոր տարրն է դատարանի մատչելիության իրավունքը, չի հանդիսանում բացարձակ իրավունք և կարող է ենթարկվել որոշակի սահմանափակումների, իսկ այդպիսի «...սահմանափակումը 6-րդ հոդվածի 1-ին մասին չի համապատասխանի, եթե այն իրավաչափ նպատակ չի հետապնդում, և եթե կիրառված միջոցների և հետապնդվող նպատակի միջև չկա համաչափության ողջամիտ հարաբերակցություն» («Khalfaoui v. France», app. no. 34791/97, 14/03/2000)»:

Նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով հայցի՝ դատարանի կողմից կրկնակի քննության արգելքը նպատակ ունի, նախ՝ երաշխավորել իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքի իրացումը՝ ապահովելով դատական որոշումների վերջնականությունը և կանխելով նույն հարցի վերաբերյալ դատարանի կողմից տարաբնույթ որոշումների կայացումը: Երկրորդ՝ նույն հարցի կրկնակի քննության արգելքը կոչված է

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 1(97)/2020

ապահովելու արդյունավետ արդարադատության իրականացումը՝ թույլ չտալով նույն հարցով դատարանին կրկնակի ծանրաբեռնելը: Ի վերջո, այդ արգելքի նպատակն է նաև բացառել հայցվորի կողմից դատական պաշտպանության իրավունքի չարաշահումը:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ հայցից հրաժարվելու հիմքով քաղաքացիական գործի վարույթի կարճման դեպքում նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով կրկին դատարան դիմելու դեպքում դատարանի մատչելիության իրավունքի սահմանափակման նշված նպատակներն իրավաչափ են և չեն խաթարում այդ իրավունքի բուն էությունը:

4.2. Անձի սուբյեկտիվ իրավունքի կամ օրինական շահի պաշտպանությանը դատարանը ձեռնամուխ է լինում միայն այն դեպքում, երբ շահագրգռված անձն օրենքով սահմանված կարգով հայց է ներկայացնում: Ինչպես անձի սուբյեկտիվ իրավունքների և օրինական շահերի պաշտպանության նպատակով դատարան հայց ներկայացնելու իրավունքը, այնպես էլ հարուցված հայցից հրաժարվելու իրավունքը տնօրինչականության սկզբունքի ուժով պատկանում են բացառապես հայցվորին (Օրենսգիրք, հոդված 12):

Օրենսգրքի «Պահանջներից հրաժարվելը» վերտառությամբ 149-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ **առաջին ատյանի դատարանը նախքան գործի վարույթը կարճելու մասին որոշում կայացնելը գործին մասնակցող անձանց բացատրում է պահանջից հրաժարվելու դատավարական հետևանքները:** Հայցվորը պարտադիր կարգով իրազեկված է լինում այն մասին, որ հայցից հրաժարվելը հանգեցնելու է դատարանի կողմից համապատասխան եզրափակիչ դատական ակտի գործի վարույթը կարճելու մասին որոշման կայացման (Օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետ), ինչպես նաև այն մասին, որ այլևս հնարավորություն չի ունենալու դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած այդ դատական ակտի առկայության պայմաններում նույն անձի դեմ, նույն առարկայի մասին և միևնույն հիմքերով կրկին դիմելու դատարան (Օրենսգրքի 183-րդ հոդվածի 8-րդ մաս):

Անկախ գործի քննության փուլից **հայցից հրաժարվելու հայցվորի որոշումը** կամավոր է և պետք է լինի կշռադատված ու մտածված, pro et contra բոլոր հանգամանքների հաշվառմամբ: Հետևաբար, հայցից հրաժարվելու հիմքով քաղաքացիական գործի վարույթի կարճման դեպքում նույն անձանց միջև, նույն առարկայի մասին և

միննույն հիմքերով կրկին դատարան դիմելու օրենսդրական արգելքը, լինելով անձի կամահայտնության դատավարական հետևանք, ընդհանուր առմամբ համապատասխանում է Սահմանադրության 78-րդ հոդվածում ամրագրված համաչափության սկզբունքին:

4.3. Արդյունավետ դատական պաշտպանության և արդար դատաքննության իրավունքները ենթադրում են կոնկրետ անձի կոնկրետ իրավունքի կամ ազատության պաշտպանություն, որի արդյունավետությունը կարող է գնահատվել էլնելով տվյալ իրավունքի առանձնահատկություններից: Սույն գործի շրջանակներում դատական պաշտպանության արդյունավետությունը պետք է դիտարկել նաև այն տեսանկյունից, թե արդյոք գործի վարույթը կարճելու վերաբերյալ քննարկվող ընդհանուր կարգավորումները հնարավորություն տալիս են Սահմանադրության 37-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ **երեխային վերաբերող հարցերում առաջնահերթ ուշադրության արժանացնել երեխայի շահերը:**

Երեխայի լավագույն շահերի ապահովման անհրաժեշտությունը բխում է նաև Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորություններից:

Այսպես, ՄԱԿ-ի Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի 23-րդ հոդվածի 4-րդ մասում ամրագրված է դաշնագրի մասնակից պետությունների, ի թիվս այլնի, ամուսնալուծության դեպքում ամուսինների իրավունքների և պարտականությունների հավասարությունն ապահովելու համար պատշաճ միջոցներ ձեռնարկելու պարտավորությունը, իսկ **ամուսնալուծության դեպքում՝ բոլոր երեխաների անհրաժեշտ պաշտպանության պարտավորությունը:**

ՄԱԿ-Ի «Երեխայի իրավունքների մասին» կոնվենցիայի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ **«Երեխաների նկատմամբ բոլոր գործողություններում, անկախ այն բանից, թե դրանք ձեռնարկվում են սոցիալական ապահովության հարցերով զբաղվող պետական կամ մասնավոր հիմնարկների, դատարանների, վարչական կամ օրենսդրական մարմինների կողմից, առաջնահերթ ուշադրություն է դարձվում երեխայի լավագույն շահերին»:** Բացի դրանից, նշված կոնվենցիայի 3-րդ հոդվածի 2-րդ մասը պարտավորեցնում է մասնակից պետություններին երեխային ապահովելու նրա բարեկեցության համար անհրաժեշտ պաշտպանությամբ և հոգատարությամբ ու այդ նպատակով ձեռնարկելու օրենսդրական ու վարչական բոլոր համապատասխան միջոցները:

Կոնվենցիայի Թիվ 7 արձանագրության 5-րդ հոդվածն ամրագրում է ամուսինների հավասարությունը, մասնավորապես՝ ամուսնալուծության դեպքում ամուսինների հավասար իրավունքները և մասնավոր իրավական բնույթի հավասար պատասխանատվությունը փոխադարձ հարաբերություններում և իրենց երեխաների հետ ունեցած հարաբերություններում: **Հոդվածը պետություններին չի խոչընդոտում ձեռնարկել այնպիսի միջոցներ, որոնք անհրաժեշտ են երեխաների շահերը պաշտպանելու համար:**

4.4. Ընտանեկան հարաբերությունների ոլորտը կարգավորող գործող իրավակարգավորումների համալիր վերլուծությունից հետևում է, որ երեխայի լավագույն շահերի պաշտպանության գրավականը, ըստ էության, «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքով սահմանված երեխայի իրավունքների ամբողջական և արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ պայմանների ապահովումն է:

«Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր երեխա ունի ֆիզիկական, մտավոր և հոգևոր լիարժեք զարգացման համար անհրաժեշտ կենսապայմանների իրավունք, իսկ **երեխայի զարգացման համար անհրաժեշտ կենսապայմանների ապահովման հարցում հիմնական պատասխանատվությունը կրում են ծնողները** կամ այլ օրինական ներկայացուցիչները: Նույն օրենքի 14-րդ հոդվածը ամրագրում է դրույթ, համաձայն որի՝ երեխայի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը նրա ծնողների կամ այլ օրինական ներկայացուցիչների հիմնական պարտականություններից է:

ՀՀ ընտանեկան օրենսգրքի 43-րդ հոդվածի 1-ին մասի ուժով երեխան ունի իր իրավունքների և օրինական շահերի պաշտպանության իրավունք, սակայն երեխայի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունն իրականացնում են նրա ծնողները (օրինական ներկայացուցիչները):

Անդրադառնալով երեխայի և ծնողների փոխհարաբերություններին՝ ՄԻԵԴ-ը գտել է, որ Կոնվենցիայի 8-րդ հոդվածը պահանջում է, որ իշխանությունները երեխայի և ծնողների շահերի միջև գտնեն արդար հարաբերակցություն և այդ շահերը հավասարակշռելիս հատուկ ուշադրություն դարձնեն երեխայի լավագույն շահերին, որոնք, կախված իրենց բնույթից և լրջությունից, կարող են գերակշռել ծնողների շահերը: Մասնավորապես, 8-րդ հոդվածի համաձայն՝ ծնողին չի կարող տրամադրվել այնպիսի միջոցներ ձեռնարկելու իրավունք, որոնք վնաս են հասցնում երեխայի առողջու-

թյանը և զարգացմանը («Rytchenko v. Russia», 20/01/2011, app. no. 22266/04, §39):

Ավելի վաղ ՄԻԵԴ-ը նշել է, որ «**ընտանեկան կյանքն**» ընդգրկում է ոչ միայն սոցիալական, բարոյական կամ մշակութային բնույթի հարաբերություններ, այլև ներառում է **նյութական շահեր, ինչպիսիք են, մասնավորապես, ալիմենտային պարտավորությունները...**» («Marckx v. Belgium», 13/06/1979, app. no 6833/74, § 52):

4.5. Նկատի ունենալով ընտանեկան վեճերի առանձնահատկությունները, մասնավորապես, դրանց սոցիալական, բարոյական և խիստ զգայուն բնույթը՝ օրենսդիրը նախատեսել է այդ վեճերի քննության հատուկ կարգ: Օրենսգրքի 2-րդ ենթաբաժնի 202-րդ հոդվածի համաձայն՝ ընտանեկան վեճերը դատարանները քննում են հատուկ հայցային վարույթի կարգով, որի դեպքում գործի քննության ընդհանուր կանոնները կիրառվում են այն հատուկ կանոնների պահպանմամբ, որոնք սահմանված են նույն ենթաբաժնի դրույթներով (201-րդ հոդված):

Վերոհիշյալ ենթաբաժնի «Ընտանեկան վեճերով գործի քննության առանձնահատկությունները» վերտառությամբ 203-րդ հոդվածի վերլուծությունը ցույց է տալիս, որ օրենսդիրը, ելնելով երեխայի լավագույն շահերի ապահովման անհրաժեշտությունից, դատարանի համար ամրագրում է պարտականությունների ավելի լայն շրջանակ, քան դատարանն ունի ընդհանուր կարգով գործեր քննելիս, **ինչը վերաբերում է գործի քննության բոլոր փուլերին:**

Չնայած նշված հոդվածը նույնական հայցով դատարան դիմելու համար ուղղակիորեն բացառություն չի նախատեսում, սակայն դրա 2-րդ մասը, երեխայի լավագույն շահերի ապահովման անհրաժեշտությունից ելնելով, **սահմանում է դատարանի պարտականությունը՝** գործի լուծման համար անհրաժեշտ ներքին համոզմունք ձևավորելու նպատակով չսահմանափակվելու գործին մասնակցող անձանց միջնորդություններով, նրանց ներկայացրած ապացույցներով և գործում առկա այլ նյութերով, **ձեռնարկելու ողջամիտ միջոցներ գործի քննությունը լրիվ, բազմակողմանի իրականացնելու համար:** Ըստ Օրենսդրի ձեռնարկվելիք ողջամիտ միջոցների շարքին են դասվում մասնավորապես՝ «պահանջելու տեղեկություններ, ապացույցներ, լրացուցիչ բացատրություններ, հանձնարարելու գործին մասնակցող անձանց ներկայանալ դատական նիստի, նշանակելու փորձաքննություն, հարցաքննելու վկաների, պետական և

տեղական ինքնակառավարման մարմիններից, ֆիզիկական և իրավաբանական անձանցից պահանջելու փաստաթղթեր»:

Այսինքն՝ օրենսդիրը, երեխայի լավագույն շահերն ապահովելու անհրաժեշտությունից ելնելով, ընտանեկան վեճերի քննության համար նախատեսել է բացառություններ, քանի որ նման գործերով պետությունն ունի առաքելություն՝ ապահովելու, երաշխավորելու ու պաշտպանելու երեխայի լավագույն շահերը՝ անկախ մրցակցային դատավարության պայմաններում ծնողների հայեցողությամբ իրացվող իրավունքներից ու պարտականություններից:

4.6. Ծնողների սահմանադրական պարտականությունն է (Սահմանադրության 36-րդ հոդվածի 1-ին մաս) հոգ տանել իրենց երեխաների դաստիարակության, կրթության, առողջության, լիարժեք ու ներդաշնակ զարգացման մասին, ինչն անվերապահորեն ներառում է երեխայի համար ապրուստի միջոց տրամադրելու պարտավորությունը:

Ընտանեկան օրենսգրքի 68-րդ հոդվածը սահմանում է երեխաների ապրուստը հոգալու ծնողների պարտականությունները: Այդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե ծնողներն ապրուստի միջոց չեն տրամադրում իրենց երեխաներին, ապա վերջիններիս պահելու համար միջոցները (ալիմենտը) ծնողներից բռնագանձվում են դատական կարգով:

Հնարավոր են դեպքեր, երբ ալիմենտի բռնագանձման պահանջի մասին հայցից հրաժարվելը պայմանավորված լինի ընտանիքը պահպանելու նպատակով դատական պաշտպանության մեխանիզմը տվյալ կոնկրետ ժամանակահատվածում չկիրառելու հայցվորի ցանկությամբ, ինչը չի նշանակում, որ հայցվորն ընդմիջտ հրաժարվում է ալիմենտի պահանջից:

Պրակտիկայում կարող են նաև լինել դեպքեր, երբ հայցվորը պատասխանողի հետ որոշակի **բանավոր պայմանավորվածություններ** ձեռք բերելու արդյունքում հրաժարվում է հայցից, սակայն վերջինս ինչ-ինչ պատճառներով չի կատարում պայմանավորվածություններից բխող պարտականությունները, անգամ կարող է ստեղծվել այնպիսի իրավիճակ, երբ պատասխանողը, իրականում ցանկություն չունենալով կատարելու իր նյութական պարտավորությունները երեխայի հանդեպ, չարաշահում է հայցվորի վստահությունը, համոզում է վերջինիս հրաժարվել իր դեմ հարուցված հայցից, սակայն չի կատարում տրված խոստումները: **Արդյունքում՝ երեխան հայտնվում է անբարենպաստ պայմաններում, և ոտնահարվում են նրա շահերը:**

4.7. Ընտանեկան օրենսգրքի վերաբերելի դրույթներից հետևում է, որ երեխայի համար **ապրուստի միջոց տրամադրելու՝ ծնողի պարտավորությունը չի դադարում մյուս ծնողի ալիմենտի պահանջից հրաժարվելու հիմքով**, այլ շարունակվում է մինչև երեխայի չափահաս դառնալը, իսկ երեխայի անաշխատունակության դեպքում՝ նաև նրա չափահաս դառնալուց հետո: Հետևաբար, **ալիմենտային իրավահարաբերությունները շարունակական են և ժամանակի ընթացքում կարող են, կողմերի վարքագծով կամ գույքային հնարավորություններով պայմանավորված, որոշակի փոփոխությունների ենթարկվել**: Օրենսդիրը հնարավոր է համարել անգամ, որ փոփոխվի դատարանի եզրափակիչ վճռով արդեն սահմանված ալիմենտի չափը, եթե փոփոխվել է կողմերից մեկի գույքային և ընտանեկան դրությունը (Ընտանեկան օրենսգրքի 107-րդ հոդված):

Ընտանեկան օրենսգրքի 95-րդ հոդվածի համաձայն՝ ալիմենտ ստանալու իրավունք ունեցող անձը կարող է ալիմենտի բռնագանձման համար դիմել դատարան՝ անկախ ալիմենտի իրավունքի առաջացման պահից անցած ժամանակահատվածից, եթե ալիմենտ վճարելու վերաբերյալ համաձայնությամբ նախկինում ալիմենտ չի վճարվել և, որպես կանոն, ալիմենտ հատկացվում է դատարանի որոշմամբ:

Օրենսգրքի 203-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ ընտանեկան վեճեր քննելիս դատարանները պարտավոր են, երեխայի լավագույն շահերի ապահովման անհրաժեշտությունից ելնելով, հաշվի առնել ինչպես այդ հոդվածի 2-րդ մասով, այնպես էլ ՀՀ ընտանեկան օրենսգրքով սահմանված առանձնահատկությունները: Հետևաբար, Ընտանեկան օրենսգրքի վերը հիշատակված կարգավորումների պայմաններում **երեխայի լավագույն շահի և երեխայի համար հոգ տանելու ծնողի շարունակվող պարտավորության կատարման ապահովման անհրաժեշտությամբ պայմանավորված՝ դատարանը պարտավոր է հաշվի առնել հայցից հրաժարվելու հիմքով ալիմենտի պահանջի մասին գործի վարույթի կարճման որոշումից հետո կողմերի վարքագծի, ընտանեկան կամ գույքային դրության փոփոխությունները և նույն կողմերի միջև նոր հայց ներկայացվելու դեպքում այն ըստ էության քննության առնել**:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով, 169-րդ հոդվածի 4-րդ մասով, 170-րդ հոդվածով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 71-րդ հոդվածներով Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**:

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 182-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը համապատասխանում է Սահմանադրությանը:

2. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 183-րդ հոդվածի 8-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանը:

3. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքի 203-րդ հոդվածը համապատասխանում է Սահմանադրությանը:

4. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

10 մարտի 2020 թվականի
ՍԴՈ-1515



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՆ ԵՐԵՎԱՆՈՒՄ
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ
ՄԻՆԳԱՊՈՒՐԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ
ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

17 մարտի 2020 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ա. Դիլանյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի (զեկուցող), Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)

Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի տեղակալ Վ. Սիմոնյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2019 թվականի հոկտեմբերի 1-ին Երևանում ստորագրված՝ «Հայաստանի Հանրապետության և Մինգաչուրի Հանրապետության միջև ծառայություն-

1(97)/2020
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆

ների առևտրի և ներդրումների մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2020 թվականի հունվարի 17-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը, գործում առկա եզրակացություններն ու մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Հայաստանի Հանրապետության և Մինգաչուրի Հանրապետության միջև ծառայությունների առևտրի և ներդրումների մասին» համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) ստորագրվել է 2019 թվականի հոկտեմբերի 1-ին Երևանում՝ ծառայությունների առևտրի և ներդրումների ոլորտում խոչընդոտները վերացնելու, բիզնես ծախսերը նվազեցնելու, տնտեսական արդյունավետությունը բարձրացնելու և ավելի լայն տնտեսական համագործակցության ու փոխշահավետության համար բարենպաստ պայմաններ ստեղծելու նպատակով:

2. Համաձայնագրի բաղկացուցիչ մասն են կազմում 3-րդ գլխին կից 3-Ա հավելվածը «Օտարում» վերտառությամբ, 5-րդ գլխին կից 5-1 «Արբիտրաժի կանոնակարգը» և 5-2 «Արբիտրների վարքագծի կանոնակարգը» վերտառությամբ հավելվածները, ինչպես նաև Համաձայնագրի հավելված I-ը և հավելված II-ը՝ «Չհամապատասխանող միջոցները» վերտառությամբ:

Համաձայնագրի բաղկացուցիչ մասն են կազմում նաև հավելված I-ի և հավելված II-ի երկուական առդիրները, որոնցից երկուսը բովանդակում են Հայաստանի Հանրապետությանը, մյուսները՝ Մինգաչուրի Հանրապետությանը վերաբերող դրույթներ:

3. Հայաստանի Հանրապետությունը, փոխադարձության հիման վրա, Համաձայնագրով ստանձնում է մի շարք պարտավորություններ, մասնավորապես՝

- ստեղծել ազատ առևտրի գոտի՝ ԱՀԿ համաձայնագրի 1 «Բ» հավելվածում նշված՝ Ծառայությունների առևտրի գլխավոր համաձայնագրի V հոդվածին համապատասխան (Հոդված 1.1),

- սինգապուրյան կողմի ծառայություն մատուցողներին տրամադրել ոչ պակաս բարենպաստ ռեժիմ, քան այն ռեժիմը, որը համանման իրավիճակում տրամադրում է Կողմ չհանդիսացող երկրի ծառայություն մատուցողներին (Հոդված 2.3),

- սինգապուրյան կողմի ծառայություն մատուցողներին տրամադրել ոչ պակաս բարենպաստ ռեժիմ, քան այն ռեժիմը, որը համանման իրավիճակում տրամադրում է իր սեփական ծառայությունը մատուցողներին (Հոդված 2.4),

- չընդունել կամ չիրականացնել այնպիսի միջոցներ, որոնցով՝

ա) կսահմանափակվի ծառայություն մատուցողների թիվը՝ քանակական քվոտաների, մենաշնորհների, բացառիկ ծառայություն մատուցողների կամ տնտեսական կարիքների ստուգորոշման պահանջի ձևով,

բ) կսահմանափակվեն ծառայության մատուցման հետ կապված գործարքների ընդհանուր արժեքը կամ ակտիվները՝ քանակական քվոտաների կամ տնտեսական կարիքների ստուգորոշման պահանջի ձևով,

գ) կսահմանափակվի ծառայության հետ կապված գործողությունների ընդհանուր թվի կամ ծառայության արդյունքի հատկորոշված թվային միավորներով արտահայտած ընդհանուր թիվը՝ քվոտաների կամ տնտեսական կարիքների ստուգորոշման պահանջի ձևով,

դ) կսահմանափակվի այն ֆիզիկական անձանց ընդհանուր թիվը, որոնք կարող են աշխատանքի անցնել ծառայության որոշակի ոլորտում, կամ որոնց կարող է աշխատանքի վերցնել ծառայություն մատուցողը, և որոնք անհրաժեշտ են կոնկրետ ծառայության մատուցման համար և ուղղակիորեն առնչվում են դրան՝ քանակական քվոտաների կամ տնտեսական կարիքների ստուգորոշման պահանջի ձևով, կամ

ե) կսահմանափակվեն կամ կպահանջվեն իրավաբանական անձի կամ համատեղ ձեռնարկության որոշակի տեսակներ, որոնց միջոցով ծառայություն մատուցողն ունի ծառայություն մատուցելու հնարավորություն (Հոդված 2.5),

- չպահանջել, որ մյուս Կողմի ծառայություն մատուցողը հիմնադրի կամ վարի ներկայացուցչական գրասենյակ կամ ձեռնարկության ցանկացած ձև, կամ իր տարածքում լինի ռեզիդենտ՝ որպես միջսահմանային ծառայության մատուցման պայման (Հոդված 2.6),

- ապահովել, որ Համաձայնագրի 2.3-րդ հոդվածը (Ազգերի առավել բարենպաստության ռեժիմը), 2.4-րդ հոդվածը (Ազգային ռեժիմը), 2.5-րդ հոդվածը (Շուկայի հասանելիությունը) և 2.6-րդ հոդվածը (Տեղական մակարդակում ներկայությունը) չկիրառվեն Համաձայնագրի 2.7-րդ հոդվածի 1-ին մասում շարադրված դեպքերում, ինչպես նաև այնպիսի միջոցի նկատմամբ, որը հայկական կողմն ընդունում կամ իրականացնում է II հավելվածի իրեն վերաբերող առդիրում սահմանված ոլորտների, ենթաոլորտների կամ գործունեության տեսակների նկատմամբ (Հոդված 2.7),

- կոնկրետ երկրում, այդ թվում՝ մյուս Կողմի և կողմ չհանդիսացող երկրների տարածքում ստացած կրթությունն ու փորձը, կատարված պահանջները կամ տրամադրված լիցենզիաները կամ հավաստագրերը ճանաչելու իր իրավունքը չիրացնել այնպիսի եղանակով, որը կհամարվի երկրների միջև ծառայություն մատուցողներին թույլտվություն տրամադրելու, նրանց լիցենզավորման կամ հավաստագրման ստանդարտների կամ չափորոշիչների կիրառման հարցում խտրական միջոց կամ ծառայությունների առևտրի թաքնված սահմանափակում (Հոդված 2.9, կետ 4),

- ապահովել, որ ՀՀ տարածքում ցանկացած մենաշնորհային ծառայություն մատուցող համապատասխան շուկայում մենաշնորհային ծառայություն մատուցելիս չգործի՝

ա) Համաձայնագրի 2.3-րդ հոդվածով (Ազգերի առավել բարենպաստության ռեժիմը), 2.4-րդ հոդվածով (Ազգային ռեժիմը), 2.5-րդ հոդվածով (Շուկայի հասանելիությունը) և 2.6-րդ հոդվածով (Տեղական մակարդակում ներկայությունը) սահմանված Կողմի պարտավորություններին չհամապատասխանող ձևով (Հոդված 2.10, կետ 1),

բ) սինգապուրյան կողմի մենաշնորհային ծառայություն մատուցողի կողմից ուղղակիորեն կամ փոխկապակցված ընկերության միջոցով այնպիսի ծառայության մատուցման հարցում մրցակցելու դեպքում, որն իր մենաշնորհային իրավունքների շրջանակից դուրս է, և որի վրա տարածվում են Համաձայնագրի 2.3-րդ հոդվածով (Ազգերի առավել բարենպաստության ռեժիմը), 2.4-րդ հոդվածով (Ազգային ռեժիմը), 2.5-րդ հոդվածով (Շուկայի հասանելիությունը) և 2.6-րդ հոդվածով (Տեղական մակարդակում ներկայությունը) սահմանված Հայաստանի Հանրապետության պարտականությունները, ապա ապահովել, որ այդ ծառայություն մատուցողը չչարաչափի իր մենաշնորհային դիրքը՝ Հայաստանի Հանրապետության տարածքում այդ հանձնառություններին չհամապատասխանող ձևով գործելու եղանակով (Հոդված 2.10, կետ 2),

- Համաձայնագիրն ուժի մեջ մտնելուց հետո ապահովել, որ սինգապուրյան կողմի ծառայությունների և ծառայություն մատուցողների նկատմամբ չձեռնարկվեն երաշխիքային ապահովման գործողություններ, ինչպես նաև չնախաձեռնել կամ չշարունակել սինգապուրյան կողմի ծառայությունների և ծառայություն մատուցողների նկատմամբ որևէ երաշխիքային ապահովման գծով քննություն (Հոդված 2.11),

- թույլատրել, որ միջսահմանային ծառայությունների մատուցման հետ կապված դեպի ՀՀ տարածք կամ դրանից դուրս փոխանցումներն ու վճարումները կատարվեն ազատորեն և առանց ուշացման (Հոդված 2.12, կետ 1),

- թույլատրել, որ միջսահմանային ծառայությունների մատուցման հետ կապված փոխանցումներն ու վճարումները կատարվեն ազատ փոխարկելի արժույթի՝ փոխանցման օրվա դրությամբ գործող տարադրամի փոխանակման հիմնական շուկայական փոխարժեքով (Հոդված 2.12, կետ 2),

- կատարված ներդրումներին տրամադրել այնպիսի ռեժիմ, որը միջազգային իրավունքի նվազագույն չափանիշի համաձայն՝ տրամադրվում է օտարերկրացիներին, այդ թվում՝ արդարացի և անաչառ վերաբերմունք և լիարժեք պաշտպանություն ու անվտանգություն (Հոդված 3.4, կետ 1),

- ապահովել, որ սինգապուրյան կողմի ներդրողներին տրամադրվի ոչ պակաս բարենպաստ ռեժիմ, քան այն, որը տրամադրվում է ՀՀ ներդրողներին՝ ՀՀ տարածքում ներդրումների ստեղծման, ձեռքբերման, ընդլայնման, կառավարման, իրականացման, գործարկման և վաճառքի կամ այլ ձևով տնօրինման առումով, ինչպես նաև կատարված ներդրումներին տրամադրել ոչ պակաս բարենպաստ ռեժիմ, քան այն, որը համանման հանգամանքներում տրամադրվում է ՀՀ ներդրողների կողմից ՀՀ տարածքում իրականացված ներդրումներին՝ դրանց ստեղծման, ձեռքբերման, ընդլայնման, կառավարման, իրականացման, գործարկման, ինչպես նաև վաճառքի կամ այլ ձևով տնօրինման առումով (Հոդված 3.5),

- սինգապուրյան կողմի ներդրողներին տրամադրել ոչ պակաս բարենպաստ ռեժիմ, քան այն, որը համանման հանգամանքներում տրամադրում է կողմ չհանդիսացող որևէ երկրի ներդրողներին՝ ՀՀ տարածքում ներդրման ստեղծման, ձեռքբերման, ընդլայնման, կառավարման, իրականացման, գործարկման, ինչպես նաև վաճառքի կամ այլ ձևով տնօրինման առումով, ինչպես նաև կատարված ներդրումներին տրամադրել ոչ պակաս բարենպաստ ռեժիմ, քան

այն, որը համանման հանգամանքներում տրամադրում է կողմ չհանդիսացող որևէ երկրի ներդրողների կողմից ՀՀ տարածքում իրականացված ներդրումներին դրանց ստեղծման, ձեռքբերման, ընդլայնման, կառավարման, իրականացման, գործարկման, ինչպես նաև վաճառքի կամ այլ ձևով տնօրինման առումով (Հոդված 3.6, կետեր 1, 2),

- սինգապուրյան կողմի ներդրողների՝ ՀՀ տարածքում պատերազմի կամ այլ զինված հակամարտության, հեղափոխության, արտակարգ իրավիճակի, խռովության, քաղաքացիական անկարգությունների կամ որևէ այլ նմանատիպ իրադարձությունների պատճառով ՀՀ տարածքում կատարած ներդրումների հետ կապված վնասներ կրելու դեպքում սինգապուրյան կողմի ներդրողի կատարած ներդրումներին տրամադրել վնասների վերականգնման, հատուցման, փոխհատուցման կամ որևէ այլ ձևով կարգավորման այնպիսի ռեժիմ, որը ոչ պակաս բարենպաստ է, քան այն ռեժիմը, որը Հայաստանի Հանրապետությունը կտրամադրեր իր ներդրողների ներդրումների կամ Կողմ չհանդիսացող որևէ այլ երկրի ներդրողների ներդրումների համար՝ նայած դրանցից որն է առավել բարենպաստ (Հոդված 3.7, կետ 1),

- սինգապուրյան կողմի ներդրողների՝ ՀՀ տարածքում պատերազմի կամ այլ զինված հակամարտության, հեղափոխության, արտակարգ իրավիճակի, խռովության, քաղաքացիական անկարգությունների կամ որևէ այլ նմանատիպ իրադարձությունների պատճառով ՀՀ տարածքում կատարած ներդրումների հետ կապված վնասներ կրելու դեպքում, որն առաջանում է ՀՀ ուժային կառույցների կամ իշխանությունների կողմից սինգապուրյան կողմի ներդրողների կատարած ներդրումների կամ դրանց մի մասի բռնագրավման հետևանքով, ինչպես նաև ոչնչացման հետևանքով, ինչը չի պահանջվել տվյալ իրավիճակի անհրաժեշտությունից, սինգապուրյան կողմի ներդրողին տրամադրել այդ վնասի վերականգնում, փոխհատուցում կամ, անհրաժեշտության դեպքում, երկուսը միասին (Հոդված 3.7, կետ 2),

- ՀՀ տարածքում սինգապուրյան կողմի կամ Կողմ չհանդիսացող երկրի ներդրողի ներդրումների ստեղծման, ձեռքբերման, ընդլայնման, կառավարման, իրականացման, գործարկման կամ վաճառքի կամ այլ ձևով տնօրինման հետ կապված չսահմանել կամ չկիրառել որևէ պահանջ կամ չպահանջել կատարելու որևէ հանձնառություն կամ պարտավորություն որպեսզի, ի թիվս այլնի, ապահովի հայրենական կապիտալի որոշակի մակարդակ կամ տոկոսային հարա-

բերակցություն, ինչպես նաև իր տարածքում սահմանափակի այդպիսի ներդրումների միջոցով արտադրվող ապրանքների կամ մատուցվող ծառայությունների վաճառքը այդ վաճառքը որևէ կերպ կապակցելով իր արտահանման ծավալի կամ արժեքի կամ արտարժույթի մուտքերի հետ (Հոդված 3.8, կետ 1),

- ՀՀ տարածքում սինգապուրյան կողմի կամ Կոդոմ չհանդիսացող երկրի ներդրողի ներդրումների ստեղծման, ձեռքբերման, ընդլայնման, կառավարման, իրականացման, գործարկման կամ վաճառքի կամ այլ ձևով տնօրինման հետ կապված առավելությունների ստացումը կամ դրանց շարունակական ստացումը չպայմանավորել որևէ պահանջի կատարմամբ, որպեսզի, ի թիվս այլնի, ապահովի հայրենական կապիտալի որոշակի մակարդակ կամ տոկոսային հարաբերակցություն, ինչպես նաև ՀՀ տարածքում սահմանափակի այդպիսի ներդրումների միջոցով արտադրվող ապրանքների կամ մատակարարվող ծառայությունների վաճառքը այդ վաճառքը որևէ կերպ պայմանավորելով արտահանման ծավալով կամ արժեքով կամ արտարժույթի մուտքերով (Հոդված 3.8, կետ 2),

- չպահանջել, որ կատարված ներդրում համարվող սինգապուրյան Կոդոմի ձեռնարկությունում ղեկավար բարձր պաշտոնների նշանակվեն որևէ կոնկրետ քաղաքացիություն ունեցող ֆիզիկական անձինք (Հոդված 3.9, կետ 1),

- չազգայնացնել, չպետականացնել կատարված ներդրումը կամ այն չենթարկել ազգայնացմանը կամ պետականացմանը համարժեք ազդեցություն ունեցող միջոցներին, բացառությամբ եթե այդ միջոցը ձեռնարկվել է ոչ խտրական հիմունքներով, հանրային նպատակներով՝ պատշաճ իրավական ընթացակարգին համապատասխան և նախնական, համարժեք և արդյունավետ փոխհատուցման վճարմամբ (Հոդված 3.11, կետեր 1, 2),

- թույլ տալ, որ կատարված ներդրումների հետ կապված՝ դեպի ՀՀ տարածք կամ ՀՀ տարածքից դուրս փոխանցումները կատարվեն ազատ և առանց ուշացման (Հոդված 3.12, կետ 1),

- ձեռնարկել արբիտրաժային կոլեգիայի վերջնական գեկույցի պահանջները բարեխղճորեն կատարելու համար անհրաժեշտ ցանկացած միջոց (Հոդված 5.12, կետ 1),

- հաստատել ԱՀԿ համաձայնագրի շրջանակներում և դրա շրջանակներում կնքված այլ համաձայնագրերի, ինչպես նաև ցանկացած այլ միջազգային համաձայնագրի շրջանակներում, որի կողմեր են Հայաստանի Հանրապետությունը և Սինգապուրի Հանրապետությունը, Սինգապուրի Հանրապետության նկատմամբ ստանձնած

Հայաստանի Հանրապետության գործող իրավունքներն ու պարտավորությունները (Հոդված 6.4, կետ 1):

4. Համաձայնագրում հղում է կատարված Առևտրի համաշխարհային կազմակերպության ստեղծման մասին Մարաքեշի համաձայնագրին, որը, ինչպես նաև կից փաստաթղթերը Հայաստանի Հանրապետությունը վավերացրել է 2002 թվականի դեկտեմբերի 26-ին Ազգային ժողովի թիվ Ն-322-2 որոշմամբ:

5. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Համաձայնագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած հիշյալ պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված՝ արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց Ց**.

1. 2019 թվականի հոկտեմբերի 1-ին Երևանում ստորագրված «Հայաստանի Հանրապետության և Մինգաչուրի Հանրապետության միջև ծառայությունների առևտրի և ներդրումների մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

17 մարտի 2020 թվականի
ՄԴՈ-1516



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2019 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 9-ԻՆ ՉՈՒՊՈՆ ԱՏԱՅՈՒՄ
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ
ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՈՎ ՎՏԱՆԳԱՎՈՐ ԹԱՓՈՆՆԵՐԻ
ԱՆԴՐՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ՄԱՍԻՆ»
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

17 մարտի 2020 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի (զեկուցող), Ա. Դիլանյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝

Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության շրջակա միջավայրի նախարար Է. Գրիգորյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների,

դրնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2019 թվականի օգոստոսի 9-ին Չոլպոն Ատայում ստորագրված «Եվրասիական

1(97)/2020
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆

տնտեսական միության մաքսային տարածքով վտանգավոր թափոնների անդրսահմանային տեղափոխման մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2020 թվականի հունվարի 29-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով համաձայնագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքով վտանգավոր թափոնների անդրսահմանային տեղափոխման մասին» համաձայնագիրը (**այսուհետ՝ Համաձայնագիր**) ստորագրվել է 2019 թվականի օգոստոսի 9-ին Չոլպոն Ատայում: Համաձայնագրի նպատակն է կարգավորել Եվրասիական տնտեսական միության (**այսուհետ՝ Միություն**) մաքսային տարածքով վտանգավոր թափոնների անդրսահմանային տեղափոխման հետ կապված հարաբերությունները:

2. Ըստ Համաձայնագրի՝ Հայաստանի Հանրապետությունը (**այսուհետ՝ ՀՀ**) ստանձնում է հետևյալ հիմնական պարտավորությունները.

- իրականացնել թափոնների անդրսահմանային տեղափոխումը ՀՀ տարածքից այլ անդամ պետության տարածք Միության անդամ չհանդիսացող պետության տարածքով՝ Բազելյան կոնվենցիայի դրույթներին համապատասխան («Վտանգավոր թափոնների անդրսահմանային փոխադրման և դրանց հեռացման նկատմամբ հսկողություն սահմանելու մասին» 1989 թվականի մարտի 22-ի Բազելյան կոնվենցիային Հայաստանի Հանրապետությունը միացել է 1999 թվականի մարտի 26-ին Ազգային Ժողովի Ն-322-1 որոշմամբ (ՄԴՈ-50)) (հոդված 4),

- չթույլատրել թափոնների անդրսահմանային տեղափոխումը ՀՀ և Միության անդամ պետություններ՝ դրանց թաղման և (կամ) վնասազերծման նպատակով (հոդված 5, մաս 2),

- ապահովել, որ թափոնների անդրսահմանային տեղափոխումն իրականացվի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում դիմումատուին տրամադրված եզրակացության (թույլատրագրի) հիման վրա, որը ՀՀ իրավասու մարմինը տրամադրում է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից հաստատվող միասնական ձևով (հոդված 6, մասեր 1, 2),

- որպես թափոններ արտահանող կամ որպես տարանցիկ երկիր՝ թափոնների արտահանման եզրակացությունը (թույլատրագիրը) տրամադրել միայն թափոնների ներմուծման եզրակացության (թույլատրագրի) առկայությամբ (հոդված 6, մասեր 3, 4),

- ապահովել, որ համապատասխան թափոնների՝ առանց եզրակացությունների (թույլատրագրերի) ՀՀ տարածք ներմուծման և (կամ) ՀՀ տարածքով անդրսահմանային տեղափոխման իրականացման փաստերի հայտնաբերման, ինչպես նաև եզրակացություններում (թույլատրագրերում) նշված տեղեկությունների՝ թափոնների անդրսահմանային տեղափոխման նկատմամբ հսկողության և վերահսկողության իրականացման ընթացքում ստացված տեղեկությունների հետ անհամապատասխանության դեպքերում այդ փաստերի հայտնաբերման օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան պետական մարմիններն իրավասու մարմնի միջոցով այդ մասին տեղեկացնեն այն անդամ պետության իրավասու մարմնին, որի տարածքից իրականացվել է թափոնների արտահանումը (հոդված 7),

- ՀՀ տարածքից թափոնների արտահանում իրականացնելիս թափոնների՝ առանց եզրակացությունների (թույլատրագրերի) ՀՀ տարածք ներմուծման և (կամ) ՀՀ տարածքով անդրսահմանային տեղափոխման դեպքում ապահովել, որ ՀՀ իրավասու մարմինը միջոցներ ձեռնարկի, Բազելյան կոնվենցիայի նորմերին համապատասխան, թափոնները վերադարձնելու կամ դրանք էկոլոգիապես հիմնավորված եղանակով հեռացնելու ուղղությամբ, իսկ թափոնների անդրսահմանային տեղափոխման նկատմամբ հսկողություն և վերահսկողություն իրականացնելու ժամանակ ստացված տեղեկությունների հետ եզրակացության (թույլատրագրի) մեջ նշված տեղեկությունների անհամապատասխանության դեպքում ապահովել, որ ՀՀ իրավասու մարմինը որոշում ընդունի եզրակացության (թույլատրագրի) գործողության դադարեցման մասին, այդ որոշումն

ընդունելու օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին տեղեկացնի այն դիմումատուին, որին տրամադրվել էր եզրակացությունը (թույլատրագիրը), այն անդամ պետության իրավասու մարմնին, որի տարածք իրականացվել է (նախատեսվել է) թափոնների ներմուծումը, և այն անդամ պետության իրավասու մարմնին, որի տարածքով իրականացվել է թափոնների անդրսահմանային տեղափոխումը (ինչը հիմք է հանդիսանում նշված իրավասու մարմինների կողմից դիմումատուին տրամադրված եզրակացությունները (թույլատրագրերը) չեղյալ ճանաչելու համար), և միջոցներ ձեռնարկի, Բազելյան կոնվենցիայի նորմերին համապատասխան թափոնները, վերադարձնելու կամ դրանք էկոլոգիապես հիմնավորված եղանակով հեռացնելու ուղղությամբ (հոդված 8),

- ապահովել, որ ՀՀ իրավասու մարմինը՝ ՀՀ տարածքից թափոնների արտահանման իրականացման պարագայում յուրաքանչյուր տարի՝ մինչև հաշվետու տարվան հաջորդող տարվա հունվարի 20-ը, Համաձայնագրի Հավելվածի համաձայն՝ սահմանված ձևով (էլեկտրոնային փոստով) համապատասխան ժամանակաշրջանում տրամադրված թափոնների արտահանման եզրակացությունների (թույլատրագրերի) վերաբերյալ հաշվետվություն ուղարկի այն անդամ պետության իրավասու մարմնին, որի տարածք ներմուծվել են թափոնները (հոդված 11),

- մյուս անդամ պետությունների կառավարություններին և Եվրասիական տնտեսական հանձնաժողովին տեղեկացնել ՀՀ իրավասու մարմնի մասին, ինչպես նաև իրավասու մարմնի փոփոխության մասին (հոդված 12):

3. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Հայաստանի Հանրապետության կողմից Համաձայնագրով ստանձնած պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 12-րդ հոդվածի պահանջներին, և դրանց կատարումը կարող է նպաստել շրջակա միջավայրի պահպանությանը:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**:

1. 2019 թվականի օգոստոսի 9-ին Չոլպոն Ատայում ստորագրված «Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածքով վտանգավոր թափոնների անդրսահմանային տեղափոխման մասին» համաձայնագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

17 մարտի 2020 թվականի
ՍԴՈ-1517



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝
«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ»
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ
81-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ 5-ՐԴ ՄԱՍԻ ԵՎ 82-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ,
«ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԻ 35-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ, «ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆԻ
ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ՕՐԵՆՔԻ 12-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ, «ՀԵՌՈՒՍՏՍԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՑԻ
ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 39-ՐԴ
ՀՈՂՎԱԾԻ, «ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 17-ՐԴ ՀՈՂՎԱԾԻ, «ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 18 ԵՎ 19-ՐԴ ՀՈՂՎԱԾՆԵՐԻ,
«ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ 144 ԵՎ 145-ՐԴ
ՀՈՂՎԱԾՆԵՐԻ, «ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԱՆՑ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ
ԱՊԱՀՈՎՄԱՆ, ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՐԱՇԽԻՔՆԵՐԻ
ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ 2 ԵՎ 3-ՐԴ
ՀՈՂՎԱԾՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երևան

31 մարտի 2020 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ա. Դիլանյանի, Ֆ. Թոխյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի (զեկուցող),

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 1(97)2020

մասնակցությամբ՝ դիմողի՝ Հանրապետության նախագահի ներկայացուցիչներ՝ Հանրապետության նախագահի օգնական Լ. Երեմյանի և Հանրապետության նախագահի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ն. Հովակիմյանի,

գործով որպես պատասխանող կողմ ներգրավված Ազգային ժողովի ներկայացուցիչ՝ Ազգային ժողովի աշխատակազմի իրավական ապահովման և սպասարկման բաժնի պետ Կ. Մովսիսյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետի, 169-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 22 և 68-րդ հոդվածների,

դռնբաց նիստում բանավոր ընթացակարգով քննեց «Հանրապետության նախագահի դիմումի հիման վրա՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 81-րդ հոդվածի 5-րդ մասի և 82-րդ հոդվածի, «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի, «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 12-րդ հոդվածի, «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածի, «Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18 և 19-րդ հոդվածների, «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 144 և 145-րդ հոդվածների, «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2 և 3-րդ հոդվածների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքը Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2018 թվականի փետրվարի 7-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել է 2018 թվականի փետրվարի 10-ին և ուժի մեջ է մտել 2018 թվականի ապրիլի 9-ից:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի «Բարձրագույն դատական խորհրդի կազմավորման կարգը» վերտառությամբ 81-րդ հոդվածի սույն գործով վիճարկվող 5-րդ մասը սահմանում է.

«Եթե Ազգային ժողովը Բարձրագույն դատական խորհրդի՝ Ազգային ժողովի կողմից ընտրվող անդամի պաշտոնը թափուր մնալու օրվան հաջորդող եռամսյա ժամկետում չի ընտրում Բարձրագույն դատական խորհրդի անդամ, ապա մինչև Ազգային ժողովի կողմից նրա ընտրությունը Հանրապետության նախագահը տասնհինգօրյա ժամկետում նշանակում է ժամանակավոր պաշտոնակատար, որը պետք է բավարարի Սահմանադրությամբ և սույն օրենսգրքով Բարձրագույն դատական խորհրդի Ազգային ժողովի կողմից ընտրվող անդամին ներկայացվող պահանջները»:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի «Բարձրագույն դատական խորհրդի անդամի լիազորությունների ժամկետը և երդումը» վերտառությամբ սույն գործով վիճարկվող 82-րդ հոդվածը սահմանում է.

«1. Բարձրագույն դատական խորհրդի անդամներն ընտրվում են հինգ տարի ժամկետով՝ առանց անընդմեջ վերընտրվելու իրավունքի:

2. Ազգային ժողովի կողմից ընտրվելուց անմիջապես հետո Բարձրագույն դատական խորհրդի անդամները՝ Ազգային ժողովում, Ընդհանուր ժողովի կողմից ընտրված անդամները Ընդհանուր ժողովի նիստում հանդիսավոր պայմաններում անհատական կարգով երդվում են. «Ստանձնելով Բարձրագույն դատական խորհրդի անդամի բարձր պաշտոնը՝ Հայաստանի Հանրապետության ժողովրդի առջև երդվում եմ իմ պարտականությունները կատարել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանն ու օրենքներին համապատասխան՝ ապահովելով իրավունքի գերակայությունը, երաշխավորելով դատարանների և դատավորների անկախությունը:»:

3. Երդումից հետո Բարձրագույն դատական խորհրդի անդամն ստորագրում է երդման տեքստը:

4. Բարձրագույն դատական խորհրդի նորընտիր անդամն իր պաշտոնն ստանձնում է Բարձրագույն դատական խորհրդի համապատասխան անդամի պաշտոնավարման ժամկետի ավարտի օրվանից, իսկ այլ հիմքով Բարձրագույն դատական խորհրդի անդամի թափուր տեղ առաջանալու դեպքում՝ ընտրվելու օրվանից:

5. Ազգային ժողովի կողմից որպես Բարձրագույն դատական խորհրդի անդամ Սահմանադրական դատարանի դատավորի ընտրվելու դեպքում համարվում է, որ Սահմանադրական դատարանի դատավորը ներկայացրել է հրաժարական, և Բարձրագույն

դատական խորհրդի անդամի լիազորություններն ստանձնելու օրվանից որպես դատավոր նրա լիազորությունները դադարում են»:

«Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2017 թվականի նոյեմբերի 17-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել է 2017 թվականի դեկտեմբերի 1-ին և ուժի մեջ է մտել 2018 թվականի ապրիլի 9-ից:

«Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի «Գլխավոր դատախազի թեկնածուին ներկայացվող պահանջները և գլխավոր դատախազի ընտրությունը» վերտառությամբ սույն գործով վիճարկվող 35-րդ հոդվածը սահմանում է.

«1. Գլխավոր դատախազն Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովի առաջարկությամբ ընտրվում է Ազգային ժողովի կողմից՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով, վեց տարի ժամկետով:

2. Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել գլխավոր դատախազ:

3. Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողով ճանաչվելու և նրա կողմից գլխավոր դատախազի թեկնածուի առաջադրման և ընտրության կարգը սահմանվում է «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով:

4. Գլխավոր դատախազ կարող է ընտրվել երեսունհինգ տարին լրացած, միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, ընտրական իրավունք ունեցող, բարձր մասնագիտական որակներով և մասնագիտական աշխատանքի առնվազն տասը տարվա փորձառությամբ, բարձրագույն կրթությամբ իրավաբանը:

5. Գլխավոր դատախազը պետք է համապատասխանի սույն օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով սահմանված պահանջներին, և չպետք է առկա լինի սույն օրենքի 34-րդ հոդվածով նախատեսված որևէ սահմանափակում:

6. Գլխավոր դատախազն իր պաշտոնն ստանձնում և պարտականությունների կատարմանն անցնում է Ազգային ժողովում սույն օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով իր երդման արարողությունից հետո՝ նախորդ գլխավոր դատախազի պաշտոնավարման ժամկետի ավարտման օրը, իսկ եթե ընտրվելու պահին գլխավոր դատախազի պաշտոնը թափուր է, ապա գլխավոր

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 1(97)2020

դատախազն իր պարտականությունների կատարմանն անցնում է Ազգային ժողովում երդման արարողությանը մասնակցելուն հաջորդող օրվանից»:

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքը Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2016 թվականի դեկտեմբերի 16-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել է 2017 թվականի հունվարի 14-ին և ուժի մեջ է մտել 2017 թվականի փետրվարի 4-ից:

«Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի «Պաշտպանի ընտրությունը» վերտառությամբ սույն գործով վիճարկվող 12-րդ հոդվածը սահմանում է.

«1. Պաշտպանի պաշտոնում կարող է ընտրվել 25 տարին լրացած, հասարակության մեջ բարձր հեղինակություն վայելող, բարձրագույն կրթություն ունեցող, վերջին չորս տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, վերջին չորս տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող և ընտրական իրավունք ունեցող, ինչպես նաև հայերենին տիրապետող յուրաքանչյուր ոք:

2. Պաշտպանին Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովի առաջարկությամբ ընտրում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով, վեց տարի ժամկետով:

3. Պաշտպանն իր պաշտոնն ստանձնում է Ազգային ժողովի կողմից ընտրվելուց անմիջապես հետո Ազգային ժողովում պատգամավորների ներկայությամբ տված հետևյալ երդմամբ.

«Ստանձնելով մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնը՝ երդվում եմ, հավատարիմ լինելով Սահմանադրությանն ու օրենքներին, արդարության սկզբունքներին՝ պաշտպանել մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները: Երդվում եմ, որ լիազորություններս կկատարեմ անաչառ, առավելագույն բարեխղճությամբ և ջանասիրությամբ»:

4. Պաշտպանն իր պարտականությունների կատարմանն անցնում է Ազգային ժողովում իր երդման արարողությունից հետո՝ նախորդ Պաշտպանի պաշտոնավարման ժամկետի ավարտման հաջորդ օրը: Եթե Պաշտպանի ընտրվելու պահին Պաշտպանի պաշտոնը թափուր է, ապա Պաշտպանն իր պարտականությունների կատարմանն անցնում է Ազգային ժողովում երդման արարողությանը հաջորդող օրվանից:

5. Պաշտպանի ընտրություններն անցկացվում են «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով նախատեսված ժամկետներում»:

Վերոհիշյալ հոդվածը փոփոխվել է 13.06.18թ. ՀՕ-355-Ն օրենքով:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2000 թվականի հոկտեմբերի 9-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել է 2000 թվականի նոյեմբերի 9-ին և ուժի մեջ է մտել 2000 թվականի նոյեմբերի 18-ից:

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի «Հանձնաժողովի կազմավորման կարգը» վերտառությամբ սույն գործով վիճարկվող 39-րդ հոդվածը սահմանում է.

«1. Մահմանադրության 197-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ Հանձնաժողովը բաղկացած է յոթ անդամից: Հանձնաժողովի անդամներին Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովի առաջարկությամբ ընտրում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով, վեց տարի ժամկետով:

2. Հանձնաժողովի անդամի լիազորությունների ավարտման օրվանից ոչ շուտ, քան մեկ ամիս առաջ և ոչ ուշ, քան մեկ շաբաթ առաջ, իսկ այլ հիմքով թափուր տեղ առաջանալու դեպքում թափուր տեղն առաջանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, Հանձնաժողովի նախագահը, իսկ Հանձնաժողովի նախագահի թափուր տեղ առաջանալու դեպքում Հանձնաժողովի նախագահին փոխարինող անդամը այդ մասին գրավոր տեղեկացնում է Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովին:

3. Ազգային ժողովը Հանձնաժողովի անդամի ընտրությունը կատարում է Մահմանադրությամբ և «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով:

4. Հանձնաժողովն իր կազմից ընտրում է Հանձնաժողովի նախագահ: Հանձնաժողովի անդամը կարող է առաջադրվել որպես Հանձնաժողովի նախագահ ինքնաառաջադրման կամ Հանձնաժողովի որևէ այլ անդամի կողմից իր համաձայնությամբ առաջադրվելու եղանակով:

5. Հանձնաժողովի նախագահի ընտրության համար գաղտնի քվեարկվում են Հանձնաժողովի բոլոր անդամները:

6. Քվեարկության համար կազմվում է քվեաթերթիկ, որում ներառվում են բոլոր թեկնածուները:

7. Քվեարկելիս Հանձնաժողովի անդամն ունի մեկ ձայն: Եթե քվեարկության մասնակիցն ավելի ձայն է տվել, ապա այդ քվեաթերթիկը համարվում է անվավեր:

8. Եթե քվեարկության արդյունքով որևէ թեկնածու չի ստացել ձայների կեսից ավելին, ապա անցկացվում է լրացուցիչ քվեարկություն, որին մասնակցում են առավել ձայներ ստացած երկու թեկնածուները:

9. Եթե ձայների հավասարության պատճառով հնարավոր չէ որոշել առավել ձայներ ստացած երկու թեկնածուներին, ապա նախապատվությունը տրվում է մասնագիտական աշխատանքի առավել երկար փորձառություն ունեցող թեկնածուին, իսկ փորձառության հավասարության դեպքում՝ տարիքով ավագին:

10. Լրացուցիչ քվեարկության ժամանակ Հանձնաժողովի յուրաքանչյուր անդամ ունի մեկ ձայն: Լրացուցիչ քվեարկության ժամանակ ձայների թվի կեսից ավելին ստացած թեկնածուն համարվում է ընտրված: Եթե ոչ մեկը չի ստացել քվեարկության մասնակիցների առնվազն կեսից ավելի «կողմ» ձայներ, ապա անցկացվում է նոր ընտրություն:

11. Հանձնաժողովի նախագահն ընտրվում է Հանձնաժողովների անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Հանձնաժողովի անդամն իրավունք չունի հրաժարվելու քվեարկությունից և քվեարկում է միայն «կողմ» կամ «դեմ»:

12. Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել Հանձնաժողովի անդամ, ներառյալ Հանձնաժողովի նախագահ:

13. Հանձնաժողովի նախագահն ընտրվում է մինչև որպես Հանձնաժողովի անդամ իր պաշտոնավարման ժամկետի ավարտը:

14. Հանձնաժողովի նոր նախագահի ընտրությունը կատարվում է Հանձնաժողովի անդամների կազմը համալրվելուց հետո՝ տասնօրյա ժամկետում»:

«Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2018 թվականի հունվարի 16-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել է 2018 թվականի հունվարի 30-ին և ուժի մեջ է մտել 2018 թվականի ապրիլի 9-ից:

«Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի «Հաշվեքննիչ պալատի անդամը» վերտառությամբ սույն գործով վիճարկվող 17-րդ հոդվածը սահմանում է.

«1. Հաշվեքննիչ պալատի անդամ, ներառյալ՝ պալատի նախագահ, կարող է ընտրվել Ազգային ժողովի պատգամավորին ներկայացվող պահանջներին համապատասխանող, բարձրագույն կրթություն և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աուդիտորի որակավորում ստացած այն քաղաքացին, որն ունի աուդիտորի նվազագույնը հինգ տարվա աշխատանքային ստաժ, որից առնվազն մեկ տարին աուդիտորական ծառայությունների իրականացման լիցենզիա ունեցող իրավաբանական անձի ղեկավար պաշտոնի աշխատանքային ստաժ կամ հաշվեքննիչ պալատի անդամի նվազագույնը երեք տարվա աշխատանքային ստաժ կամ հաշվեքննիչ պալատի կառուցվածքային ստորաբաժանումներում ղեկավար պաշտոնների առնվազն 3-րդ ենթախմբի նվազագույնը հինգ տարվա աշխատանքային ստաժ կամ հանրային ֆինանսների կառավարման ոլորտի նվազագույնը 10 տարվա աշխատանքային ստաժ, որից առնվազն հինգ տարին՝ ղեկավարի պաշտոնում:

2. Հաշվեքննիչ պալատի անդամի պաշտոնավարման ժամկետը լրանալուց երեք ամիս առաջ հաշվեքննիչ պալատի նախագահն այդ մասին տեղեկացնում է Ազգային ժողովին: Հաշվեքննիչ պալատի անդամի վաղաժամկետ թափուր տեղ առաջանալու դեպքում, եթե պաշտոնավարման ժամկետի ավարտին մնացել է վեց ամսից ավելի ժամանակահատված, ապա հաշվեքննիչ պալատի նախագահն այդ մասին հինգ աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնում է Ազգային ժողովին: Այս դեպքում հաշվեքննիչ պալատի նոր անդամն ընտրվում է նախկին անդամի պաշտոնավարման չլրացած ժամկետով: Հաշվեքննիչ պալատի անդամի վաղաժամկետ թափուր տեղ առաջանալու դեպքում այն չի համալրվում, եթե պաշտոնավարման ժամկետի ավարտին մնացել է վեց ամսից պակաս ժամանակահատված:

3. Հաշվեքննիչ պալատի նախագահը և մյուս անդամներն ընտրվում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ և «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված կարգով:

4. Հաշվեքննիչ պալատի անդամ, ներառյալ՝ պալատի նախագահ, չի կարող ընտրվել այն անձը, որը՝

1) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով ճանաչված է անգործունակ կամ սահմանափակ գործունակ.

2) ենթարկվել է քրեական պատասխանատվության, և դատվածությունը օրենքով սահմանված կարգով հանված կամ մարված չէ.

3) օրենքով սահմանված կարգով գրկված է որոշակի պաշտոն զբաղեցնելու իրավունքից:

5. Հաշվեքննիչ պալատի անդամները, ներառյալ՝ պալատի նախագահը, չեն կարող զբաղեցնել իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, որն է պաշտոն՝ առևտրային կազմակերպությունում, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից:

6. Հաշվեքննիչ պալատի անդամի, այդ թվում՝ նախագահի լիազորությունները դադարեցնում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով՝ սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված անհամատեղելիության պահանջի խախտման կամ հաշվեքննիչ պալատի անդամի որևէ կուսակցության անդամ լինելու, քաղաքական գործունեությամբ զբաղվելու, հրապարակային ելույթներում քաղաքական զսպվածություն չցուցաբերելու դեպքերում:

7. Հաշվեքննիչ պալատի անդամի լիազորությունները դադարում են՝

1) պաշտոնավարման ժամկետը լրանալու դեպքում.

2) հաշվեքննիչ պալատի անդամի՝ հանցագործության կատարման համար դատապարտվելու կամ անգործունակ կամ սահմանափակ գործունակ, անհայտ բացակայող կամ մահացած ճանաչվելու մասին դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի (վճռի) հիման վրա.

3) եթե ի հայտ է եկել հաշվեքննիչ պալատի անդամի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատ կամ հիվանդություն, որը ներառված է Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ հաստատված՝ դատավորի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատների և հիվանդությունների ցանկում.

4) հաշվեքննիչ պալատի անդամի հրաժարականի դեպքում.

5) հաշվեքննիչ պալատի անդամի՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարելու կամ օտարերկրյա քաղաքացիություն ձեռք բերելու դեպքում.

6) նրա մահվան դեպքում:

8. Հաշվեքննիչ պալատի անդամի հրաժարականի մասին դիմումը ներկայացվում է Ազգային ժողովի նախագահին, որի մասին տեղեկացվում է հաշվեքննիչ պալատը: Այդ տեղեկությունը տեղա-

դրվում է հաշվեքննիչ պալատի պաշտոնական ինտերնետային կայքում: Սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված՝ հաշվեքննիչ պալատի անդամի լիազորությունների դադարման այլ հիմքեր ի հայտ գալու պարագայում հաշվեքննիչ պալատի նախագահն այդ հիմքերն ի հայտ գալու վերաբերյալ տեղեկատվությունը երեք աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնում է Ազգային ժողով»:

Վերոհիշյալ հոդվածը փոփոխվել է 21.01.20թ. ՀՕ-31-Ն օրենքով:

«Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը Ազգային ժողովի կողմից ընդունվել է 1996 թվականի հունիսի 30-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել է 1996 թվականի հունիսի 30-ին և ուժի մեջ է մտել 1996 թվականի օգոստոսի 29-ից:

«Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի «Կենտրոնական բանկի նախագահը և նրա տեղակալները» վերտառությամբ սույն գործով վիճարկվող 18-րդ հոդվածը սահմանում է.

«1. Կենտրոնական բանկի նախագահը Կենտրոնական բանկի բարձրագույն պաշտոնատար անձն է: Կենտրոնական բանկի նախագահը պատասխանատու է սույն օրենքով սահմանված Կենտրոնական բանկի նպատակների իրագործման համար: Կենտրոնական բանկի նախագահի բացակայության կամ պաշտոնեական պարտականությունները կատարելու անհնարինության դեպքում նրան փոխարինում է Կենտրոնական բանկի նախագահի տեղակալներից մեկը, իսկ տեղակալների բացակայության կամ պաշտոնեական պարտականությունները կատարելու անհնարինության դեպքում՝ Կենտրոնական բանկի խորհրդի տարիքով ավագ անդամը:

2. Կենտրոնական բանկի նախագահին Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովի առաջարկությամբ ընտրում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով, վեց տարի ժամկետով:

Կենտրոնական բանկի նախագահի տեղակալներին Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովի առաջարկությամբ ընտրում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ, վեց տարի ժամկետով:

Կենտրոնական բանկի նախագահ և նրա տեղակալներ կարող են ընտրվել բարձրագույն կրթություն ունեցող, 25 տարին լրացած, վեր-

ջին չորս տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, վերջին չորս տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, ընտրական իրավունք ունեցող և հայերենին տիրապետող այն անձինք, որոնք

ա) ֆինանսական համակարգում ունեն բարձր հեղինակություն և

բ) դրամավարկային քաղաքականության իրականացման բնագավառում ունեն առնվազն երեք տարվա ղեկավարի կամ միջազգային ֆինանսական կազմակերպություններում երեք տարվա մասնագիտական ստաժ կամ բանկային կամ ապահովագրության կամ արժեթղթերի շուկայի ոլորտում առնվազն չորս տարվա ղեկավարի կամ մակրոտնտեսագիտության բնագավառում ակադեմիական կամ հետազոտական աշխատանքի առնվազն չորս տարվա մասնագիտական ստաժ:

3. (մասն ուժը կորցրել է 13.12.17 ՀՕ-313-Ն)

4. Կենտրոնական բանկի նախագահը՝

ա) կոորդինացնում և ապահովում է Կենտրոնական բանկի, նրա խորհրդի և խորհրդի անդամների բնականոն աշխատանքը.

բ) նախագահում է Կենտրոնական բանկի խորհրդի նիստերը, ստորագրում է Կենտրոնական բանկի խորհրդի ակտերը և խորհրդի նիստերի արձանագրությունները.

գ) կազմակերպում է Կենտրոնական բանկի խորհրդի նորմատիվ ակտերի կատարումը.

դ) ներկայացնում է Կենտրոնական բանկը Հայաստանի Հանրապետությունում, այլ պետություններում և միջազգային կազմակերպություններում.

ե) տալիս է լիազորագրեր.

զ) հաստատում է Կենտրոնական բանկի կառուցվածքը, աշխատակիցների հաստիքացուցակը.

է) բացառությամբ սույն օրենքով նախատեսված դեպքերի նշանակում և ազատում է աշխատանքից Կենտրոնական բանկի ստորաբաժանումների ղեկավարներին և մյուս աշխատակիցներին.

Է¹⁾ ընդունում է անհատական և ներքին որոշումներ ու կարգադրություններ, այդ թվում՝ վերստուգվող անձանց ստուգումներ նշանակելու մասին որոշումներ.

ը) իրականացնում է օրենքով Կենտրոնական բանկի խորհրդի իրավասությանը չվերապահված այլ լիազորություններ»:

Վերոհիշյալ հոդվածը լրացվել և փոփոխվել է 03.03.04թ. ՀՕ-45-Ն, 08.12.05թ. ՀՕ-245-Ն, 25.12.06թ. ՀՕ-36-Ն, 12.11.15թ. ՀՕ-133-Ն, 13.12.17թ. ՀՕ-313-Ն օրենքներով:

«Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի «Կենտրոնական բանկի խորհուրդը» վերտառությամբ սույն գործով վիճարկվող 19-րդ հոդվածը սահմանում է.

«1. Կենտրոնական բանկի խորհուրդը Կենտրոնական բանկի կառավարման բարձրագույն մարմինն է: Կենտրոնական բանկի խորհուրդը կազմված է. Կենտրոնական բանկի նախագահից, նրա երկու տեղակալներից և հինգ անդամներից:

2. Կենտրոնական բանկի խորհրդի անդամներին Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովի առաջարկությամբ ընտրում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ, վեց տարի ժամկետով: Խորհրդի անդամների պաշտոնավարման ժամկետները հետևյալն են՝

- մեկ անդամը՝ մեկ տարի,
- մեկ անդամը՝ երկու տարի,
- մեկ անդամը՝ երեք տարի,
- մեկ անդամը՝ չորս տարի,
- մեկ անդամը՝ հինգ տարի:

Հետագայում նշանակված խորհրդի անդամների պաշտոնավարման ժամկետը վեց տարի է:

Կենտրոնական բանկի խորհրդում թափուր տեղ առաջանալու դեպքում խորհրդի նոր անդամը նշանակվում է ազատված պաշտոնավարման չլրացած ժամկետով:

3. Կենտրոնական բանկի խորհրդի անդամ կարող է ընտրվել բարձրագույն կրթություն ունեցող, 25 տարին լրացած, վերջին չորս տարում միայն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող, վերջին չորս տարում Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, ընտրական իրավունք ունեցող և հայերենին տիրապետող այն անձինք, որոնք

ա) ֆինանսական համակարգում ունեն բարձր հեղինակություն և

բ) դրամավարկային քաղաքականության իրականացման բնագավառում ունեն առնվազն երկու տարվա ղեկավարի կամ միջազգային ֆինանսական կազմակերպություններում երկու տարվա մասնագիտական ստաժ կամ բանկային կամ ապահովագրության կամ արժեթղթերի շուկայի ոլորտում առնվազն չորս տարվա ղեկավարի կամ մակրոտնտեսագիտության բնագավառում ակադեմիա-

կան կամ հետագոտական աշխատանքի առնվազն չորս տարվա մասնագիտական ստաժ և

զ) իրենց մասնագիտական կարողություններով և գիտելիքներով ի վիճակի են ապահովել սույն օրենքի 20-րդ հոդվածով սահմանված իրավասությունների կատարումը:

4. Բացի սույն հոդվածի 3-րդ մասով նախատեսված չափանիշներից, խորհուրդը պետք է ձևավորվի այնպես, որ

ա) խորհրդի անդամների առնվազն կեսն ունենա մակրոտնտեսագիտության բնագավառում մասնագիտական աշխատանքային փորձ.

բ) խորհրդի անդամներն ունենան բանկային, աուդիտի, ֆինանսական հաշվետվությունների, տեղեկատվական տեխնոլոգիաների, Կենտրոնական բանկի և ֆինանսական կազմակերպությունների գործունեությունը կարգավորող օրենսդրության ոլորտների վերաբերյալ գիտելիքներ:

Կենտրոնական բանկի խորհրդի անդամ, նախագահ կամ տեղակալ չեն կարող լինել այն անձինք, որոնք՝

ա) դատարանի վճռով անգործունակ կամ սահմանափակ գործունակ են ճանաչվել կամ օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտվել են դիտավորությամբ կատարված հանցագործության համար.

բ) օրենքով սահմանված կարգով գրկվել են որոշակի պաշտոն վարելու իրավունքից:

5. Կենտրոնական բանկի նախագահը, տեղակալները և խորհրդի այլ անդամներն իրենց լիազորությունների իրականացման ժամանակահատվածում չեն կարող զբաղեցնել իրենց կարգավիճակով չպայմանավորված պաշտոն պետական կամ տեղական ինքնակառավարման այլ մարմիններում, լինել որևէ կուսակցության անդամ կամ որևէ այլ կերպ զբաղվել քաղաքական գործունեությամբ, զբաղվել ձեռնարկատիրական գործունեությամբ, կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, կրթական և ստեղծագործական աշխատանքից: Հրապարակային ելույթներում նրանք պետք է ցուցաբերեն քաղաքական զսպվածություն: Կենտրոնական բանկի խորհրդի անդամները, նախագահը, տեղակալներն իրավունք ունեն առևտրային կազմակերպություններում և հիմնադրամներում զբաղեցնելու իրենց կարգավիճակով պայմանավորված պաշտոններ:

Կենտրոնական բանկի խորհրդի անդամները չեն կարող Կենտրոնական բանկում այլ պաշտոններ զբաղեցնել: Կենտրոնական բանկի խորհրդի անդամը պատասխանատու է Կենտրոնական բանկի խորհրդում իր կատարած աշխատանքի համար»:

Վերոհիշյալ հոդվածը փոփոխվել և լրացվել է 12.11.15թ. ՀՕ-133-Ն, 13.12.17թ. ՀՕ-313-Ն օրենքներով:

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքը Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2016 թվականի դեկտեմբերի 16-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել է 2017 թվականի հունվարի 14-ին և ուժի մեջ է մտել 2017 թվականի մայիսի 18-ից:

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի «Բարձրագույն դատական խորհրդի անդամների ընտրությունը» վերտառությամբ սույն գործով վիճարկվող 144-րդ հոդվածը սահմանում է.

«1. Բարձրագույն դատական խորհրդի անդամի ընտրությունն անցկացվում է Ազգային ժողովի կողմից ընտրված Բարձրագույն դատական խորհրդի անդամի

1) լիազորությունների ավարտից ոչ շուտ, քան երեք ամիս առաջ, և ոչ ուշ, քան մեկ օր առաջ.

2) պաշտոնը թափուր մնալուց հետո՝ եռամսյա ժամկետում:

2. Բարձրագույն դատական խորհրդի անդամի պաշտոնում մեկական թեկնածու առաջադրելու իրավունք ունեն խմբակցությունները: Թեկնածուն առաջադրվում է խմբակցության որոշմամբ: Որոշման մեջ նշվում են Բարձրագույն դատական խորհրդի անդամի թեկնածուի և նրան ներկայացնելու իրավասություն ունեցող խմբակցության ներկայացուցչի անունները, ազգանունները: Որոշմանը կցվում են Սահմանադրությամբ և օրենքով սահմանված պահանջների ապահովումը հավաստող փաստաթղթերը: Սահմանադրության կամ օրենքի պահանջներին չհամապատասխանելու դեպքում Ազգային ժողովի նախագահը որոշումը և դրան կից ներկայացված փաստաթղթերը երկու աշխատանքային օրվա ընթացքում վերադարձնում է խմբակցությանը՝ նշելով պատճառների մասին:

3. Թեկնածուները կարող են առաջադրվել Բարձրագույն դատական խորհրդի անդամի

1) լիազորությունների ավարտից ոչ շուտ, քան երեք ամիս առաջ, և ոչ ուշ, քան ութսուն օր առաջ.

2) պաշտոնը թափուր մնալուց հետո՝ տասնօրյա ժամկետում:

4. Բարձրագույն դատական խորհրդի անդամի լիազորությունների ավարտից առնվազն հարյուր օր առաջ, ինչպես նաև նրա պաշտոնը թափուր մնալուց հետո՝ 24 ժամվա ընթացքում, Աշխատակազմն այդ մասին գրավոր տեղեկացնում է Ազգային ժողովի նախագահին և խմբակցություններին:

5. Թեկնածուների առաջադրման ժամկետը լրանալուց հետո՝ 24 ժամվա ընթացքում, Ազգային ժողովի նախագահը հանդես է գալիս Բարձրագույն դատական խորհրդի անդամի թեկնածուի, ինչպես նաև ընտրության անցկացման օրվա և ժամի մասին հայտարարությամբ:

6. Բարձրագույն դատական խորհրդի անդամի ընտրության հարցը քննարկվում է Կանոնակարգի 135-րդ հոդվածով սահմանված կարգով, թեկնածուների ներկայացման ժամկետը լրանալուց հետո՝ Ազգային ժողովի առաջիկա հերթական նիստերում:

7. Բարձրագույն դատական խորհրդի անդամն ընտրվում է գաղտնի քվեարկությամբ, պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով: Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված դեպքում Բարձրագույն դատական խորհրդի նորընտիր անդամը իր պաշտոնը ստանձնում է Բարձրագույն դատական խորհրդի անդամի լիազորությունների ավարտման օրը:

8. Եթե քվեարկությանը մասնակցել է երկուսից ավելի թեկնածու, և նրանցից ոչ մեկը չի ընտրվել, ապա անցկացվում է ընտրության երկրորդ փուլ, որին կարող են մասնակցել առաջին փուլում առավել ձայներ ստացած երկու թեկնածուները: Հարցը քննարկվում է Կանոնակարգի 139-րդ հոդվածի 9-րդ մասով սահմանված կարգով:

9. Եթե Բարձրագույն դատական խորհրդի անդամը չի ընտրվում, ապա քվեարկությունից հետո տասնօրյա ժամկետում, թափուր մնացած պաշտոնի համար խմբակցությունները կարող են ներկայացնել Բարձրագույն դատական խորհրդի անդամի նոր թեկնածու»:

Վերոհիշյալ հոդվածը փոփոխվել է 17.01.18թ. ՀՕ-50-Ն օրենքով:

«Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի «Իրավասու մշտական հանձնաժողովների առաջադրմամբ պաշտոնատար անձանց ընտրության կարգը» վերտառությամբ սույն գործով վիճարկվող 145-րդ հոդվածը սահմանում է.

«1. Գլխավոր դատախազի, Մարդու իրավունքների պաշտպանի, Հաշվեքննիչ պալատի նախագահի և մյուս անդամների, Կենտրոնական բանկի նախագահի, նրա տեղակալների և խորհրդի մյուս անդամների, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի և մյուս անդամների, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամների ընտրությունն անցկացվում է համապատասխան պաշտոնատար անձի

1) լիազորությունների ավարտից ոչ շուտ, քան երեք ամիս առաջ, և ոչ ուշ, քան մեկ օր առաջ:

2) պաշտոնը թափուր մնալուց հետո՝ եռամսյա ժամկետում:

2. Ազգային ժողովին սույն հոդվածի 1-ին մասում նշված պաշտոնում թեկնածու է առաջարկվում Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովի որոշմամբ՝ խմբակցությունների առաջադրած մեկական թեկնածուների թվից:

3. Թեկնածուները կարող են առաջադրվել սույն հոդվածի 1-ին մասում նշված պաշտոնատար անձի

1) լիազորությունների ավարտից ոչ շուտ, քան երեք ամիս առաջ, և ոչ ուշ, քան ութսուն օր առաջ:

2) պաշտոնը թափուր մնալուց հետո՝ տասնօրյա ժամկետում:

4. Սույն հոդվածի 1-ին մասում նշված պաշտոնատար անձի լիազորությունների ավարտից առնվազն հարյուր օր առաջ, ինչպես նաև նրա պաշտոնը թափուր մնալուց հետո՝ 24 ժամվա ընթացքում, Աշխատակազմն այդ մասին գրավոր տեղեկացնում է իրավասու մշտական հանձնաժողովին և խմբակցություններին:

4.1. Սույն հոդվածի 1-ին մասում նշված պաշտոնում թեկնածուն Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովին է առաջադրվում խմբակցության որոշմամբ: Որոշման մեջ նշվում են թեկնածուի և նրան ներկայացնելու իրավասություն ունեցող խմբակցության ներկայացուցչի անունները, ազգանունները: Որոշմանը կցվում են Մահմանադրությամբ և օրենքով սահմանված պահանջների ապահովումը հավաստող փաստաթղթերը: Մահմանադրության կամ օրենքի պահանջներին չհամապատասխանելու դեպքում Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովի նախագահը որոշումը և դրան կից ներկայացված փաստաթղթերը երկու աշխատանքային օրվա ընթացքում վերադարձնում է խմբակցությանը՝ նշելով պատճառների մասին:

5. Թեկնածուների առաջադրման ժամկետը լրանալուց հետո՝ 24 ժամվա ընթացքում, իրավասու մշտական հանձնաժողովի նախագահը հանդես է գալիս խմբակցությունների առաջադրած թեկնածուների, ինչպես նաև Ազգային ժողովին թեկնածու առաջարկելու մասին հարցի քննարկման օրվա և ժամի մասին հայտարարությամբ:

6. Թեկնածուների առաջադրման ժամկետը լրանալուց հետո՝ երկշաբաթյա ժամկետում, իրավասու մշտական հանձնաժողովն Ազգային ժողովին է առաջարկում սույն հոդվածի 1-ին մասում նշված պաշտոնատար անձի թեկնածու: Եթե այդ ժամկետում թեկնածու չի առաջարկվում, ապա դրանից հետո՝ տասնօրյա ժամկետում, թափուր մնացած պաշտոնում կարող են առաջադրվել նոր թեկնածուներ:

7. Ազգային ժողովին սույն հոդվածի 1-ին մասում նշված պաշտոնատար անձի թեկնածու առաջարկելու մասին հարցը քննարկվում է իրավասու մշտական հանձնաժողովի նիստում: Հարցի քննարկման ավարտից հետո՝ 24 ժամվա ընթացքում, իրավասու մշտական հանձնաժողովի նախագահին Ազգային ժողովի նախագահին է ուղարկում հանձնաժողովի նիստի արձանագրության քաղվածքը:

8. Սույն հոդվածի 1-ին մասում նշված պաշտոնատար անձի ընտրության հարցը քննարկվում է Կանոնակարգի 135-րդ հոդվածով սահմանված կարգով, թեկնածուի առաջարկման օրվան հաջորդող Ազգային ժողովի հերթական նիստերում:

9. Գլխավոր դատախազը, Մարդու իրավունքների պաշտպանը, Հաշվեքննիչ պալատի նախագահը և մյուս անդամները, Կենտրոնական բանկի նախագահը, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահը և մյուս անդամները, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամներն ընտրվում են գաղտնի քվեարկությամբ, պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով:

10. Կենտրոնական բանկի նախագահի տեղակալները, ինչպես նաև Կենտրոնական բանկի նախագահից բացի, Կենտրոնական բանկի խորհրդի մյուս անդամներն ընտրվում են գաղտնի քվեարկությամբ, պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

11. Սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված դեպքում նորընտիր գլխավոր դատախազը, Մարդու իրավունքների պաշտպանը, Հաշվեքննիչ պալատի նախագահը և մյուս անդամները, Կենտրոնական բանկի նախագահը, նրա տեղակալները և խորհրդի մյուս անդամները, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահը և մյուս անդամները, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամներն իրենց պաշտոնը ստանձնում են համապատասխան պաշտոնատար անձի լիազորությունների ավարտման օրը:

12. Եթե սույն հոդվածի 1-ին մասում նշված պաշտոնատար անձը չի ընտրվում, ապա քվեարկությունից հետո՝ տասնօրյա ժամկետում, թափուր մնացած պաշտոնում կարող են առաջադրվել նոր թեկնածուներ»:

Վերոհիշյալ հոդվածը լրացվել և փոփոխվել է 17.01.18թ. ՀՕ-50-Ն օրենքով:

«Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հան-

քապետության օրենքը Ազգային ժողովի կողմից ընդունվել է 2014 թվականի փետրվարի 4-ին, Հանրապետության նախագահի կողմից ստորագրվել է 2014 թվականի փետրվարի 13-ին և ուժի մեջ է մտել 2014 թվականի հուլիսի 1-ից:

«Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի «Պետական պաշտոն զբաղեցրած անձի կենսաթոշակային ապահովությունը և այլ սոցիալական երաշխիքները» վերտառությամբ սույն գործով վիճարկվող 2-րդ հոդվածը սահմանում է.

«1. Սույն օրենքով սահմանված կենսաթոշակի իրավունք ունի՝

1) **(կենս նւժը կորցրել է 04.03.15 ՀՕ-14-Ն)**

2) Սահմանադրական դատարանի դատավորը՝

ա. «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված հիմքով լիազորությունների դադարման դեպքում՝ անկախ տարիքից,

բ. «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 2-րդ մասի 4-րդ կետով նախատեսված հիմքերով, ինչպես նաև դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու հիմքով լիազորությունների դադարման կամ դադարեցման դեպքերում,

գ. «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 88-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված դեպքում,

դ. «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 88-րդ հոդվածի 4.1-ին մասով նախատեսված դեպքում՝ այդ մասով նախատեսված չափով:

2.1) Ազգային ժողովի ընտրած Բարձրագույն դատական խորհրդի անդամի պաշտոնում առնվազն հինգ տարի պաշտոնավարած անձը, որի լիազորությունները դադարել կամ դադարեցվել են համապատասխանաբար դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու կամ իր պաշտոնում նշանակվելուն խոչընդոտող ֆիզիկական արատ կամ հիվանդություն ձեռք բերելու հիմքով.

2.2) առնվազն մեկ սահմանադրական ժամկետ Ազգային ժողովի ընտրած Բարձրագույն դատական խորհրդի անդամի պաշտոնում պաշտոնավարած անձը՝ 65 տարին լրանալու դեպքում.

2.3) առնվազն մեկ ժամկետ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ գործող միջազգային դատարանի դատավորի պաշտոնում պաշտոնավարած անձը՝ 65 տարին լրանալու դեպքում.

3) դատավորի պաշտոնում առնվազն 10 տարի պաշտոնավարած անձը, որի լիազորությունները դադարեցվել կամ դադարել են «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 160-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված հիմքով, ինչպես նաև դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու կամ դատավորի պաշտոնում նշանակվելուն խոչընդոտող ֆիզիկական արատ կամ հիվանդություն ձեռք բերելու հիմքերով.

4) դատախազի պաշտոնում առնվազն 10 տարի պաշտոնավարած անձը, որը պաշտոնից ազատվել է «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված հիմքով, ինչպես նաև դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու կամ դատախազի պաշտոնում նշանակվելուն խոչընդոտող ֆիզիկական արատ կամ հիվանդություն ձեռք բերելու հիմքերով.

5) հատուկ քննչական ծառայությունում առնվազն 10 տարի ինքնավար պաշտոն զբաղեցրած անձը, որը պաշտոնից ազատվել է «Հատուկ քննչական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 5-րդ կետերով սահմանված հիմքերով, ինչպես նաև դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու հիմքով.

5.1) Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեում առնվազն 10 տարի ինքնավար պաշտոն զբաղեցրած անձը, որի լիազորությունները դադարել են «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ և 5-րդ կետերով սահմանված հիմքերով, ինչպես նաև դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու հիմքով.

5.2) Հայաստանի Հանրապետության հարկային ծառայությունում առնվազն 10 տարի քննիչի պաշտոն զբաղեցրած անձը, որը պաշտոնից ազատվել է «Հարկային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով սահմանված հիմքով կամ 63 տարին լրանալուց հետո՝ 26-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված հիմքով, ինչպես նաև դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու հիմքով.

5.3) Հայաստանի Հանրապետության մաքսային ծառայությունում առնվազն 10 տարի քննիչի պաշտոն զբաղեցրած անձը, որը պաշտոնից ազատվել է «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ և 7-րդ կետերով սահմանված հիմքերով, ինչպես նաև դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչվելու հիմքով:

6) առնվազն մեկ սահմանադրական ժամկետ Հայաստանի Հանրապետության մարդու իրավունքների պաշտպանի պաշտոնը զբաղեցրած անձը՝ 65 տարին լրանալու դեպքում:

7) առնվազն մեկ սահմանադրական ժամկետ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորի պաշտոն զբաղեցրած կամ հինգ տարի Հայաստանի Հանրապետության Գերագույն խորհրդի պատգամավորի պաշտոն զբաղեցրած անձը՝ 65 տարին լրանալու դեպքում:

7.1) առնվազն մեկ սահմանադրական ժամկետ Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի նախագահի պաշտոնն զբաղեցրած կամ վեց տարի Ազգային ժողովի վերահսկիչ պալատի նախագահի պաշտոնն զբաղեցրած անձը՝ 65 տարին լրանալու դեպքում:

8) սույն օրենքի հավելված N 1-ով սահմանված պաշտոններում, օտարերկրյա պետությունում գործող դիվանագիտական ծառայության մարմինների ղեկավարի պաշտոնում առնվազն 10 տարի պաշտոնավարած անձը՝ 65 տարին լրանալու դեպքում:

9) Հանրապետության նախագահը, Ազգային ժողովի պատգամավորները, Կառավարության անդամները, Սահմանադրական դատարանի և այլ դատարանների դատավորները, Ազգային ժողովի ընտրած Բարձրագույն դատական խորհրդի անդամները, Մարդու իրավունքների պաշտպանը, Հաշվեքննիչ պալատի նախագահը, դատախազները, հատուկ քննչական ծառայության, քննչական կոմիտեի ծառայողները՝ իրենց պաշտոնեական պարտականությունները կատարելիս կամ դրանք կատարելու առնչությամբ ստացած վնասվածքի կամ խեղման պատճառով աշխատանքային գործունեությամբ զբաղվելու կարողության 3-րդ աստիճանի սահմանափակում ունեցող հաշմանդամ ճանաչվելու դեպքում:

2. Սույն հոդվածի 1-ին մասի 9-րդ կետում նշված դեպքում պետական պաշտոն զբաղեցրած անձը Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բժշկական կազմակերպություններում ապահովվում է բժշկական սպասարկմամբ՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով:

3. Պետական պաշտոն զբաղեցրած անձը կենսաթոշակի իրավունք ունի, եթե չի զբաղեցնում հանրային պաշտոն կամ հանրային ծառայության պաշտոն»:

Վերոհիշյալ հոդվածը լրացվել և փոփոխվել է 19.05.14թ. ՀՕ-29-Ն, 01.12.14թ. ՀՕ-198-Ն, 04.03.15թ. ՀՕ-14-Ն, 17.01.18թ. ՀՕ-43-Ն, 07.03.18թ. ՀՕ-143-Ն, 21.06.18թ. ՀՕ-341-Ն, 01.07.19թ. ՀՕ-101-Ն, 11.12.19թ. ՀՕ-313-Ն, 21.01.20թ. ՀՕ-68-Ն օրենքներով:

«Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի «Պետական պաշտոն զբաղեցրած անձի ընտանիքի անդամների սոցիալական երաշխիքները պետական պաշտոն զբաղեցրած անձի մահանալու (գոհվելու) դեպքում» վերտառությամբ սույն գործով վիճարկվող 3-րդ հոդվածը սահմանում է.

«1. Հանրապետության նախագահի, Ազգային ժողովի պատգամավորի, Կառավարության անդամի, Սահմանադրական դատարանի և այլ դատարանների դատավորի, Ազգային ժողովի ընտրած Բարձրագույն դատական խորհրդի անդամի, Մարդու իրավունքների պաշտպանի, Հաշվեքննիչ պալատի նախագահի, դատախազի, հատուկ քննչական ծառայությունում, քննչական կոմիտեում ինքնավար պաշտոն զբաղեցրած անձի կողմից իրենց պաշտոնեական պարտականությունները կատարելիս կամ դրանք կատարելու առնչությամբ ստացած վնասվածքի կամ խեղման պատճառով մահանալու (գոհվելու) դեպքում՝

1) նրա հուղարկավորությունը կազմակերպած անձին վճարվում է հուղարկավորության նպաստ,

2) նրա ընտանիքին տրվում է միանվագ դրամական օգնություն,

3) նրա ընտանիքի՝ «Պետական կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակի իրավունք ունեցող անդամներին նշանակվում և վճարվում է կենսաթոշակ:

2. Միանվագ դրամական օգնություն, հուղարկավորության նպաստ նշանակելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը, նշանակելու և վճարելու կարգը, հուղարկավորության նպաստի չափը, միանվագ դրամական օգնության չափը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը»:

Վերոհիշյալ հոդվածը լրացվել և փոփոխվել է 19.05.14թ. ՀՕ-29-Ն, 17.01.18թ. ՀՕ-43-Ն, 07.03.18թ. ՀՕ-143-Ն, 21.01.20թ. ՀՕ-68-Ն օրենքներով:

Գործի քննության առիթը Հանրապետության նախագահի՝ 2019 թվականի նոյեմբերի 8-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Սահմանադրական դատարանի 2020 թվականի փետրվարի 24-ի ՄԴԱՈ-33 աշխատակարգային որոշմամբ սույն գործի հանգամանքների առավել արդյունավետ բացահայտման նպատակով որոշվել է անցնել բանավոր ընթացակարգով դատաքննության:

Լսելով սույն գործով զեկուցողի զեկույցը, դիմողի և պատասխանողի բացատրությունները, ինչպես նաև վերլուծելով վիճարկվող օրենքների համապատասխան դրույթները, գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. Դիմողի դիրքորոշումները

Հանրապետության նախագահը, դիմելով Սահմանադրական դատարան, խնդրում է որոշել «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 81-րդ հոդվածի 5-րդ մասի համակցված «Դատախազության մասին» օրենքի 35-րդ հոդվածի, «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» սահմանադրական օրենքի 12-րդ հոդվածի, «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» օրենքի 39-րդ հոդվածի, «Հաշվեքննիչ պալատի մասին» օրենքի 17-րդ հոդվածի, «Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի մասին» օրենքի 18-րդ և 19-րդ հոդվածների, «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 144-րդ հոդվածի և 145-րդ հոդվածի հետ (ներառյալ՝ վերոնշյալ օրենքներն այնքանով, որքանով դրանցում բացակայում են Սահմանադրության 138-րդ հոդվածով նախատեսված պաշտոնատար անձանց Հանրապետության նախագահի կողմից նշանակվող ժամանակավոր պաշտոնակատարների անկախության իրավական երաշխիքները) Սահմանադրության 1-ին և 138-րդ հոդվածին համապատասխանության հարցը, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 82-րդ հոդվածի և «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածների Սահմանադրության 1-ին և 173-րդ հոդվածներին համապատասխանության հարցը»:

Վերլուծելով վիճարկվող օրենքների համապատասխան դրույթները և ներկայացնելով դրանց սահմանադրականության վերաբերյալ իր դիրքորոշումներն առավելապես օրենսդրական բացի և իրավական որոշակիության տեսանկյունից՝ դիմողը, մասնավորապես, եզրահանգում է.

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 1(97)2020

ա) եթե Ազգային ժողովը եռամսյա ժամկետում սահմանված կարգով չի ընտրում համապատասխան պաշտոնատար անձանց, ապա Հանրապետության նախագահի կողմից ժամանակավոր պաշտոնակատարներ նշանակելու կարգը օրենքով սահմանելը հանդիսանում է Սահմանադրության 138-րդ հոդվածի ուղղակի և աներկբա պահանջ,

բ) «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի, «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի, «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, «Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի վերաբերելի հոդվածներում, ինչպես նաև «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով նախատեսված չէ որևէ կարգ, որով Հանրապետության նախագահը կարող է նշանակել համապատասխանաբար Բարձրագույն դատական խորհրդի անդամի, Գլխավոր դատախազի, Մարդու իրավունքների պաշտպանի, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամի, Հաշվեքննիչ պալատի անդամի կամ Կենտրոնական բանկի խորհրդի անդամի ժամանակավոր պաշտոնակատար, այն դեպքում, երբ Ազգային ժողովը եռամսյա ժամկետում սահմանված կարգով չի ընտրում համապատասխան պաշտոնատար անձին: Հանրապետության նախագահի մասով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով նախատեսված և Սահմանադրության 138-րդ հոդվածի բովանդակությունից տարբերվող միակ դրույթը ժամկետի սահմանումն է: Սակայն ժամկետի սահմանումն ինքնին չի հանդիսանում սահմանադրական պահանջ,

գ) բացի Բարձրագույն դատական խորհրդի և Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամների ժամանակավոր պաշտոնակատարներից, վերոնշյալ մնացած պաշտոնատար անձանց մասով օրենսդրական կարգավորումներում բացակայում է նշանակման համար նախատեսվող ժամկետը: Եվ չնայած ժամկետի օրենքով սահմանումը առերևույթ չի հանդիսանում սահմանադրական պահանջ, այնուամենայնիվ, դա բխում է տվյալ հարցի կարգավորման սահմանադրական նպատակներից,

դ) առկա օրենսդրական կարգավորումները չեն ապահովում Սահմանադրության 138-րդ հոդվածի համաձայն Հանրապետության նախագահի կողմից նշանակվող ժամանակավոր պաշտոնակատարների իրավական և սոցիալական անկախության երաշխիքները:

Պաշտոնավարման կայունությունը ապահովելու նպատակով որպես հնարավոր լուծում դիմողն առաջարկում է «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանել Բարձրագույն դատական խորհրդի անդամի ժամանակավոր պաշտոնակատարի պաշտոնավարման նվազագույն ժամկետ, որը լրանալուց հետո միայն Ազգային ժողովը կարող է իրականացնել ժամանակավոր պաշտոնակատարի փոխարեն Բարձրագույն դատական խորհրդի անդամի ընտրություն:

2. Պատասխանողի դիրքորոշումները

Պատասխանողը խնդրում է Սահմանադրական դատարանին «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 81-րդ հոդվածի 5-րդ մասի և 82-րդ հոդվածի, «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի, «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 12-րդ հոդվածի, «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածի, «Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18 և 19-րդ հոդվածների, «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 144 և 145-րդ հոդվածների, «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2 և 3-րդ հոդվածների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով ընդունել որոշում՝ վիճարկվող դրույթները Սահմանադրությանը համապատասխանող ճանաչելու մասին:

Անդրադառնալով դիմողի այն փաստարկին, որ «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում որևէ կարգ սահմանված չէ Հանրապետության նա-

խազափ կողմից Բարձրագույն դատական խորհրդի անդամի ժամանակավոր պաշտոնակատար նշանակելու վերաբերյալ, պատասխանողը նշում է, որ հիշյալ սահմանադրական օրենքը վերաբերում է Ազգային ժողովի հիմնական լիազորություններին և գործառնություններին, հետևաբար միանգամայն տրամաբանական է, որ այն չի պարունակում որևէ դրույթ՝ Հանրապետության նախագահի կողմից Բարձրագույն դատական խորհրդի անդամի ժամանակավոր պաշտոնակատար նշանակելու ընթացակարգի վերաբերյալ:

Ըստ պատասխանողի ժամանակավոր պաշտոնակատարի ինստիտուտի էությունից բխում է, որ նրա գործունեության ժամկետը կապվում է որևէ իրադարձության վրա հասնելու հետ, ուստի տրամաբանական չէր լինի, եթե օրենսդրի կողմից սահմանվեր Բարձրագույն դատական խորհրդի անդամի ժամանակավոր պաշտոնակատարի պաշտոնավարման պարտադիր նվազագույն ժամկետ, քանի որ նման ժամկետ սահմանելը կկաշկանդեր Ազգային ժողովին արդյունավետ կերպով իրականացնել իր սահմանադրական լիազորությունը: Ժամանակավոր պաշտոնակատարի նշանակման վերաբերյալ մանրամասն իրավակարգավորումները կարող են հանգեցնել սահմանադրական այդ ինստիտուտի իմաստի և նշանակության արժեզրկմանը:

Պատասխանողը գտնում է, որ Բարձրագույն դատական խորհրդի անդամի ժամանակավոր պաշտոնակատար նշանակելու համար Հանրապետության նախագահին օրենքով տրված է 15-օրյա ժամկետ, որը, ըստ էության, օբյեկտիվորեն ողջամիտ ժամկետ է թեկնածուի մասնագիտական որակները գնահատելու և որոշում կայացնելու համար:

Անդրադառնալով սոցիալական երաշխիքներին՝ պատասխանողը նշում է, որ օրենսդիրը կենսաթոշակ ստանալու իրավունքը կապել է որոշակի ժամկետով տվյալ պաշտոնը զբաղեցնելու հետ առնվազն հինգ տարի կամ մեկ սահմանադրական ժամկետ: Ժամանակավոր պաշտոնակատարի ինստիտուտից ողջամտորեն բխում է, որ տվյալ անձը Բարձրագույն դատական խորհրդի անդամի ժամանակավորապես թափուր պաշտոնը զբաղեցնում է հինգ տարուց կամ մեկ սահմանադրական ժամկետից պակաս ժամկետով, հակառակ դեպքում կիմաստագրկվի այդ ինստիտուտի գոյությունը, ուստի ժամանակավոր պաշտոնակատարի դեպքում կենսաթոշակ ստանալու հարցը չի կարող քննարկվել:

Ըստ պատասխանողի «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների

մասին» Հայաստանի Հանրապետության օրենքն անալոգիայի կիրառման որևէ արգելք չի նախատեսում, ուստի «Ազգային ժողովի ընտրած Բարձրագույն դատական խորհրդի անդամ» հասկացությունը կիրառելի է նաև Բարձրագույն դատական խորհրդի անդամի ժամանակավոր պաշտոնակատարի դեպքում:

Պատասխանողը գտնում է, որ օրենսդրության մեջ առկա են համապատասխան իրավական երաշխիքներ, որոնք հնարավորություն են տալիս գործնականում առանց որևէ էական խոչընդոտի ընտրելու և նշանակելու համապատասխան թեկնածուին որպես ժամանակավոր պաշտոնակատար:

Ըստ պատասխանողի՝ թեև վիճարկվող իրավակարգավորումներում կարող է առկա լինել օրենսդրական որոշակի բաց, սակայն դրա հաղթահարումը օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է:

3. Գործի շրջանակներում պարզման ենթակա հանգամանքները

Սույն գործով վիճարկվող դրույթների սահմանադրականությունը գնահատելիս Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում, մասնավորապես, անդրադառնալ հետևյալ հարցադրումներին.

ա) «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 81-րդ հոդվածի 5-րդ մասով Ազգային ժողովի կողմից ընտրվող Բարձրագույն դատական խորհրդի անդամների ժամանակավոր պաշտոնակատարներ Հանրապետության նախագահի կողմից նշանակելու համար միայն ժամկետ սահմանված լինելը համապատասխանո՞ւմ է արդյոք Սահմանադրության 138-րդ հոդվածի համաձայն՝ օրենքով սահմանված կարգով ժամանակավոր պաշտոնակատարներ նշանակելու պահանջին,

բ) վիճարկվող օրենքների վերաբերելի իրավակարգավորումներով ժամանակավոր պաշտոնակատարներ նշանակելու հիմքեր և կարգ ուղղակիորեն սահմանված չլինելը խոչընդոտո՞ւմ է արդյոք Սահմանադրության 138-րդ հոդվածի համաձայն Հանրապետության նախագահի լիազորությունների իրականացմանը,

գ) վիճարկվող օրենքներով ամրագրվա՞ծ են արդյոք երաշխիքներ՝ Հանրապետության նախագահի կողմից նշանակվող ժամանակավոր պաշտոնակատարների համար, և համապատասխանո՞ւմ են դրանք արդյոք Սահմանադրության 138-րդ հոդվածի պահանջներին:

4. Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները

4.1. 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրությամբ անցում կատարելով խորհրդարանական կառավարման ամրագրվեց Հանրապետության նախագահի նոր կարգավիճակը:

Հանրապետության նախագահը, Սահմանադրության «Իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը» վերտառությամբ 4-րդ հոդվածի ուժով գործառությանին առումով դասվելով գործադիր իշխանությանը, այդուհանդերձ, ամբողջովին դուրս դրվեց գործադիր իշխանության ինստիտուցիոնալ համակարգից, և, ի տարբերություն գործառությանին առումով գործադիր իշխանությանը պատկանող այլ անկախ կամ ինքնավար մարմինների, պետության գլուխն է և ունի այդ կարգավիճակին բնորոշ գործառություններ և դրանցից ածանցվող լիազորություններ: Ըստ այդմ՝ Հանրապետության նախագահը՝ որպես պետության գլուխ (Սահմանադրության 123-րդ հոդվածի 1-ին մաս), **հանրությանը և պետությանն ինտեգրող, ազգային միասնությունը խորհրդանշող սահմանադրական մարմինն է:**

Ըստ էության, գերծ լինելով պետության ներքին և արտաքին քաղաքականության մշակմանը, ինչպես նաև կառավարմանը բովանդակային առումով մասնակցելու գործառությանից և չկրելով դրանց պատասխանատվությունը Հանրապետության նախագահին սահմանադրորեն պատվիրակվել է **լինել անաչառ և առաջնորդվել բացառապես համապետական և համազգային շահերով** (Սահմանադրության 123-րդ հոդվածի 3-րդ մաս): Ըստ այդմ՝ Հանրապետության նախագահին սահմանադրորեն վերապահվել է **վերկուսակցական արբիտրի դեր**, որն իր լիազորությունների իրականացման ընթացքում չի կարող լինել որևէ կուսակցության անդամ (Սահմանադրության 124-րդ հոդվածի 5-րդ մաս): Մինևույն ժամանակ վերկուսակցական (ապակուսակցական) արբիտրի դերը, որը հիմնված է թե՛ Հանրապետության նախագահի՝ որպես պետության գլխի, ինտեգրող գործառության, թե՛ նրա անաչառության վրա, ենթադրում է **Սահմանադրության պահպանմանը հետևելու գործառությանի իրականացում**, ինչը ևս ուղղակիորեն ամրագրված է Սահմանադրությամբ (Սահմանադրության 123-րդ հոդվածի 2-րդ մաս): Բացի դրանից, Սահմանադրության պահպանմանը հետևելու գործառությանի, իր հերթին, ենթադրում է, որ **Հանրապետության նախագահը պետք է ունենա զսպումների և հակակշիռների միջոցով այդ գործառության արդյունավետորեն իրականացնելու հնարավորություն**, ուստի նա պետք է ոչ միայն կարողանա կատարված փաս-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 1(97)2020

տերից հետո գնահատել ենթադրյալ հակասահմանադրական գործողությունները (անգործությունը) կամ որոշումները, այլև պետք է կարողանա, նախևառաջ, **կանխել դրանց ի հայտ գալը օժտված լինելով կանխարգելիչ սահմանադրական վերահսկողության որոշակի լիազորություններով:**

4.2. Հանրապետության նախագահի սահմանադրական գործառույթների իրականացումն ապահովելու նպատակով սահմանադիրը նրան վերապահել է համարժեք լիազորություններ (Սահմանադրության 123-րդ հոդվածի 4-րդ մաս), որոնք նրա վրա ազդելու հնարավորությունները բացառելու համար սպառիչ ամրագրել է Սահմանադրությամբ օրենսդրին թողնելով Սահմանադրությամբ ուղղակիորեն նախատեսված դեպքերում դրանց իրականացումը կանոնակարգելը:

Սահմանադրության պահպանմանը հետևելու գործառույթի շրջանակներում Հանրապետության նախագահը հետևում է քաղաքական դերակատարների կողմից սահմանադրական նորմերի պահպանմանը, այդ թվում՝ օրենսդրական գործընթացի և դրա արդյունքի համապատասխանությանը սահմանադրական պահանջներին, ինչպես նաև սահմանադրական մարմինների կազմավորման սահմանադրականությանը: Նա օժտված է **հավասարակշռող լիազորություններով** թե՛ օրենսդիր մարմնի, թե՛ նաև գործադիր իշխանության մարմինների և անգամ Բարձրագույն դատական խորհրդի նկատմամբ: Հանրապետության նախագահն այդ առումով օժտված է, հատկապես, այնպիսի գործիքակազմով, ինչպիսիք են Ազգային ժողովին ուղերձ հղելը, Սահմանադրական դատարան դիմելը և պաշտոնատար անձանց ժամանակավոր նշանակելը:

Հարկ է նշել, որ Հանրապետության նախագահի լիազորությունները, կախված սահմանադրորեն կանխորոշված նպատակներից, իրենց բնույթով ինչպես **պարտադիր են**, այնպես էլ **հայեցողական**: Հանրապետության նախագահի պարտադիր և հայեցողական լիազորությունները ինքնուրույն կամ ոչ ինքնուրույն (կաշկանդված) են: Ոչ ինքնուրույն լիազորություններն իրականացվում են կա մ Սահմանադրությամբ սահմանված նախադրյալների առկայությամբ, կա մ սահմանադրական այլ մարմնի (իրավասու սուբյեկտի) լիազորությունների իրականացման հիմքով: Այսպես՝

Սահմանադրությամբ սահմանված հիմքերով (կարգով) Հանրապետության նախագահն իրականացնում է հետևյալ **պարտադիր լիազորությունները**.

ա) Ազգային ժողովի հերթական և արտահերթ ընտրությունները նշանակելը (Սահմանադրության 93-րդ հոդված),

բ) Կառավարության հրաժարականն ընդունելը (Սահմանադրության 130-րդ հոդված),

գ) պաշտոնատար անձանց ժամանակավոր նշանակումը (Սահմանադրության 138-րդ հոդված),

դ) Հանրապետության նախագահի աշխատակազմի պաշտոններում նշանակումներ կատարելը (Սահմանադրության 145-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ նախադասություն),

ե) վարչապետ նշանակելը (Սահմանադրության 149-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասեր),

զ) Սահմանադրական դատարանի երեք դատավորների թափուր տեղերի համար Ազգային ժողովին թեկնածուներ առաջադրելը (Սահմանադրության 166-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ նախադասություն),

է) հանրաքվե նշանակելը (Սահմանադրության 206-րդ հոդվածի առաջին նախադասություն):

Սահմանադրությամբ սահմանված հիմքերով (կարգով) Հանրապետության նախագահն իրականացնում է հետևյալ **հայեցողական լիազորությունները**.

ա) իր իրավասության մեջ մտնող հարցերի վերաբերյալ Ազգային ժողովին ուղերձ հղելը (Սահմանադրության 128-րդ հոդված),

բ) Ազգային ժողովի ընդունած օրենքը ստորագրելը և հրապարակելը կամ Ազգային ժողովի ընդունած օրենքի համապատասխանությունը Սահմանադրությանը որոշելու հարցով Սահմանադրական դատարան դիմելը կամ որևէ գործողություն չկատարելը (Սահմանադրության 129-րդ հոդված),

գ) Կառավարության կազմում փոփոխություններ կատարելը (Սահմանադրության 131-րդ հոդված) կամ Սահմանադրության 139-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված այլընտրանքային լիազորությունները,

դ) արտաքին քաղաքականության բնագավառում՝ միջազգային պայմանագրեր կնքելը, օտարերկրյա պետություններում և միջազգային կազմակերպություններում դիվանագիտական ներկայացուցիչներին նշանակելը և հետ կանչելը, օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների դիվանագիտական ներկայացուցիչների հավատարմագրերը և հետկանչագրերն ընդունելը, վավերացում չպահանջող միջազգային պայմանագրերը հաստատելը, կասեցնելը կամ չեղյալ հայտարարելը, բարձրագույն

դիվանագիտական աստիճաններ շնորհելը (Սահմանադրության 132-րդ հոդված) կամ Սահմանադրության 139-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված այլընտրանքային լիազորությունները,

ե) զինված ուժերի բնագավառում՝ զինված ուժերի և այլ զորքերի բարձրագույն հրամանատարական կազմը նշանակելը և ազատելը, բարձրագույն զինվորական կոչումներ շնորհելը (Սահմանադրության 133-րդ հոդված) կամ Սահմանադրության 139-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված այլընտրանքային լիազորությունները,

զ) Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն շնորհելու և Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը դադարեցնելու վերաբերյալ հարցերը լուծելը (Սահմանադրության 134-րդ հոդված) կամ Սահմանադրության 139-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված այլընտրանքային լիազորությունները,

է) դատապարտյալներին ներում շնորհելը (Սահմանադրության 135-րդ հոդված) կամ Սահմանադրության 139-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված այլընտրանքային լիազորությունները,

ը) Հայաստանի Հանրապետության շքանշաններով և մեդալներով պարգևատրելը և պատվավոր կոչումներ շնորհելը (Սահմանադրության 136-րդ հոդված) կամ Սահմանադրության 139-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված այլընտրանքային լիազորությունները,

թ) բարձրագույն դասային աստիճաններ շնորհելը (Սահմանադրության 137-րդ հոդված) կամ Սահմանադրության 139-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված այլընտրանքային լիազորությունները,

ժ) զինված ուժերի գլխավոր շտաբի պետին նշանակելը (Սահմանադրության 155-րդ հոդվածի 3-րդ մասի առաջին նախադասություն) կամ Սահմանադրության 139-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված այլընտրանքային լիազորությունները,

ժա) Վճռաբեկ, վերաքննիչ և առաջին ատյանի դատարանների դատավորներին, Վճռաբեկ դատարանի պալատների նախագահներին, առաջին ատյանի և վերաքննիչ դատարանների նախագահներին նշանակելը (Սահմանադրության 166-րդ հոդվածի 3-րդ մասի առաջին նախադասություն, 4-րդ մասի առաջին նախադասություն, 6-րդ մաս և 7-րդ մասի առաջին նախադասություն) կամ Սահմանադրության 139-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով սահմանված այլընտրանքային լիազորությունները,

ժբ) փոխվարչապետներին և նախարարներին նշանակելը (Սահմանադրության 150-րդ հոդվածի երրորդ նախադասություն) կամ

Սահմանադրության 150-րդ հոդվածի հինգերորդ նախադասությամբ սահմանված այլընտրանքային լիազորությունը:

Հանրապետության նախագահի հայեցողական լիազորությունների մեծամասնությունը իրականացվում է կամ Սահմանադրությամբ սահմանված նախադրյալների առկայությամբ, կամ սահմանադրական այլ մարմնի (իրավասու սուբյեկտի) լիազորությունների իրականացման հիմքով: Այս կանոնից բացառություն են կազմում իր իրավասության մեջ մտնող հարցերի վերաբերյալ Ազգային ժողովին ուղերձ հղելու (Սահմանադրության 128-րդ հոդված), Ազգային ժողովի ընդունած օրենքները չստորագրելու (Սահմանադրության 129-րդ հոդվածի 1-ին մաս) և նշանակումների հարցերով առարկություններ ներկայացնելու կամ որպես այլընտրանք Սահմանադրական դատարան դիմելու կամ որևէ գործողություն չկատարելու (Սահմանադրության 131-137-րդ հոդվածներ, 155-րդ հոդվածի 3-րդ մաս և 166-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ, 6-րդ և 7-րդ մասեր) փոխկապակցված 139-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի հետ, ինչպես նաև 150-րդ հոդվածի երրորդ և հինգերորդ նախադասություններ, ինչպես նաև Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին և 4-րդ կետերով սահմանված դեպքերում Սահմանադրական դատարան դիմելու լիազորությունները:

Սահմանադրական դատարանը հարկ է համարում նաև նշել, որ Հանրապետության նախագահի լիազորությունների տարանջատումը միմյանցից և դրանց բովանդակության տարասեռությունը նպաստակ են հետապնդում երաշխավորել Հանրապետության նախագահի գործառույթների պատշաճ իրականացումը:

Մինևս այն ժամանակ Հանրապետության նախագահի լիազորությունների տարանջատումը նշանակում է, որ Հանրապետության նախագահը չի կարող հայեցողաբար փոփոխել իր լիազորությունների էությունը կամ որ նույնն է պարտադիր լիազորությունները փաստացի փոխակերպել հայեցողական լիազորությունների, ինչպես նաև չի կարող հրաժարվել իրականացնել իր պարտադիր լիազորությունները հայեցողական լիազորությունների գործադրմամբ կամ որևէ այլ պատճառաբանությամբ: Նշվածը վերաբերելի է նաև սահմանադրական ցանկացած այլ մարմնի, իրավասու սուբյեկտի կամ պաշտոնատար անձի:

Սահմանադրական դատարանը փաստում է, որ իշխանական բնույթի լիազորություններից բացի Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մասի շրջանակներում Հանրապետության նախագահին իրավասու է իրականացնել նաև ոչ իշխանական բնույթի պաշտո-

նական գործողություններ, որոնք ունեն իր լիազորություններին ուղեկցող բնույթ, մասնավորապես, ելույթներ, հանդիպումներ ունենալ, հարցազրույցներ տալ:

4.3. Սահմանադրության «Պաշտոնատար անձանց ժամանակավոր նշանակումը» վերտառությամբ 138-րդ հոդվածի համաձայն՝ «Եթե Ազգային ժողովը եռամսյա ժամկետում Սահմանադրության 174-րդ հոդվածի 3-րդ մասով, 177-րդ հոդվածի 1-ին մասով, 192-րդ հոդվածի 1-ին մասով, 195-րդ հոդվածի 2-րդ մասով, 197-րդ հոդվածի 2-րդ մասով, 199-րդ հոդվածի 2-րդ մասով և 201-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով չի ընտրում համապատասխան պաշտոնատար անձանց, ապա մինչև Ազգային ժողովի կողմից նրանց ընտրությունը Հանրապետության նախագահին օրենքով սահմանված հիմքերով և կարգով նշանակում է ժամանակավոր պաշտոնակատարներ»:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ Հանրապետության նախագահի՝ Սահմանադրության 138-րդ հոդվածով ամրագրված լիազորություններն ուղղակիորեն ածանցվում են Հանրապետության նախագահի՝ պետության գլխի, անաչառ արբիտրի, և, ըստ այդմ՝ Սահմանադրության պահպանմանը հետևելու գործառույթներից: Հանրապետության նախագահի կողմից հիշյալ լիազորությունների իրականացումն **անհրաժեշտ է պետության կենսագործունեության համար կարևոր նշանակություն ունեցող սահմանադրական մի շարք մարմինների թեև ժամանակավոր, սակայն կա՛մ ամբողջական կազմավորման, կա՛մ համալրման նպատակով:**

Սահմանադիրն արարողակարգային առումով որպես պետության բարձրագույն պաշտոնատար անձ, որը միաժամանակ միանձնյա սահմանադրական մարմին է, հենց Հանրապետության նախագահին է վերապահել պետության միակ առաջնային մանդատով օժտված սահմանադրական մարմնի՝ Ազգային ժողովի փոխարեն այդ մարմինների ժամանակավոր կազմավորումը կամ դրանց կազմի ժամանակավոր համալրումը (համապատասխան պաշտոնատար անձանց ժամանակավոր նշանակումը): Բացի դրանից, հաշվի առնելով Հանրապետության նախագահի անաչառությունը՝ նա որպես վերկուսակցական արբիտր **պետք է հակակշռի Ազգային ժողովում ներկայացված քաղաքական ուժերին՝** հաղթահարելով նրանց քաղաքական կամ անձնային անհամաձայնության հետևանքները և, իր պաշտոնի և անձի հեղինակության շնորհիվ ժա-

ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿՎՈՐ ♦ 1(97)2020

մանակավորապես ապահովելով սահմանադրական մի շարք մարմինների գործունակությունը՝ նշանակլի Բարձրագույն դատական խորհրդի՝ Ազգային ժողովի կողմից ընտրվող անդամների (ոչ դատավոր անդամներ), Գլխավոր դատախազի, Մարդու իրավունքների պաշտպանի, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի և մյուս անդամների, Հեռուստատեսության և ռադիոյի հանձնաժողովի անդամների, Հաշվեքննիչ պալատի նախագահի և մյուս անդամների, ինչպես նաև Կենտրոնական բանկի նախագահի և խորհրդի մյուս անդամների ժամանակավոր պաշտոնակատարներ:

Ի տարբերություն Բարձրագույն դատական խորհրդի ոչ դատավոր անդամների՝ դատավորների ժամանակավոր պաշտոնակատարների նշանակում Սահմանադրությունը չի նախատեսում:

Սահմանադրության 138-րդ հոդվածում նշված մնացյալ սահմանադրական մարմինները կամ պաշտոնատար անձինք ինստիտուցիոնալ անկախությամբ կամ ինքնուրույնությամբ օժտված մարմիններ են (պաշտոնատար անձինք), որոնք գործառության առումով դասվում են գործադիր իշխանությանը: Հետևապես, մի դեպքում՝ դատարանների և դատավորների անկախության պատշաճ երաշխավորման, մյուս դեպքերում՝ գործադիր իշխանության տիրույթում գործող սահմանադրական մարմինների կամ պաշտոնատար անձանց հավասարակշռող գործառույթների ապահովման նպատակով սահմանադիրը հատուկ շեշտադրել է այդ մարմինների կազմավորման կամ համալրման անհրաժեշտությունը՝ փոխարինող լիազորություններ ամրագրելով Հանրապետության նախագահի համար: Ընդամին, եթե Կենտրոնական բանկի նախագահի և խորհրդի մյուս անդամների ժամանակավոր պաշտոնակատարների նշանակման դեպքում, չնայած կայուն խորհրդարանական մեծամասնության կանոնի ամրագրմանը՝ սահմանադիրը, սահմանելով Կենտրոնական բանկի նախագահից բացի Կենտրոնական բանկի խորհրդի մյուս անդամների ընտրության համար ոչ թե Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի առնվազն երեք հինգերորդի, այլ ընդհանուր թվի ձայների մեծամասնության պահանջ (Սահմանադրության 201-րդ հոդվածի 1-ին մասի երկրորդ նախադասություն), ապահովագրել է Կենտրոնական բանկի գործառույթների երաշխավորված իրականացումը, ապա սահմանադրական մնացյալ մարմինների և պաշտոնատար անձանց դեպքում, որոնք ընտրվում են Ազգային ժողովի պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով (Սահմանադրու-

թյան 174-րդ հոդվածի 3-րդ մաս, 177-րդ հոդվածի 1-ին մաս, 192-րդ հոդվածի 1-ին մաս, 195-րդ հոդվածի 2-րդ մաս, 197-րդ հոդվածի 2-րդ մաս և 199-րդ հոդվածի 2-րդ մաս), սահմանադիրը երաշխավորել է ոչ միայն այդ բարձր արգելապատնեշի հաղթահարմամբ կազմավորվող սահմանադրական մարմինների գործունակությունը, այլև հատկապես հենց Հանրապետության նախագահի **ինտեգրող և հավասարակշռող** մասնակցությունն այն դեպքերում, երբ Ազգային ժողովի մեծամասնության և փոքրամասնության քաղաքական կամ այլ դիրքորոշումների պատճառով հնարավոր չի եղել ապահովել այդ մարմինների կազմավորումը կամ համալրումը:

Այսպիսով, Մահմանադրական դատարանը գտնում է, որ սահմանադիրը, սահմանելով Հանրապետության նախագահի փոխարինող մասնակցությունը սահմանադրական մի շարք մարմինների կազմավորմանը կամ համալրմանը, որպես Հանրապետության նախագահի պարտադիր լիազորություն (պարտականություն)՝ Հանրապետության նախագահին դիտարկել է որպես **առանցքային դերակատար**՝ մի կողմից, Ազգային ժողովին հակակշռելու, մյուս կողմից՝ սահմանադրական որոշակի մարմինների բնականոն գործունեությունը երաշխավորելու նպատակներով:

Մահմանադրական դատարանը հարկ է համարում շեշտել, որ Հանրապետության նախագահի կողմից վերոհիշյալ **պարտականությունը** չկատարելը կարող է հանգեցնել այդ հակակշռող գործառույթի իմաստազրկման՝ ստեղծելով Հանրապետության նախագահի ինստիտուտի հեղինակազրկման նախադրյալներ, ինչպես նաև ստեղծելով անմիջական վտանգ սահմանադրական մի շարք մարմինների բնականոն գործունեության համար՝ պայմանավորված դրանց չկազմավորմամբ կամ չհամալրմամբ, ուստի՝ հակասահմանադրական իրավիճակներ, որոնցում մի շարք առանցքային գործառույթներով օժտված սահմանադրական մարմիններ կարող են չդառնալ գործունակ կամ զրկվել իրենց գործունակությունից: Նշվածն առավել ակնառու է Բարձրագույն դատական խորհրդի դեպքում, քանի որ այս սահմանադրական մարմինը, բացի սահմանադրական կարգի պահպանման տեսանկյունից իր հիմնարար նշանակություն ունեցող գործառույթից, այն է՝ դատարանների և դատավորների անկախությունը երաշխավորելը (Մահմանադրության 173-րդ հոդված), հենց այդ գործառույթի արդյունավետ իրականացման նպատակով կազմավորվում է պարիտետային (հավասարակշռության) հիմունքներով, այսինքն՝ Բարձրագույն դատական խորհրդի կազմում ընտրվում են հավասար թվով դատավոր և

ոչ դատավոր անդամներ, և այս երկու խմբերի քանակական գերակայությունը միմյանց հանդեպ Սահմանադրության ուժով պետք է բացառվի թե՛ օրենսդրական մակարդակում, թե՛ նաև գործնականում: Հակառակ դեպքում Բարձրագույն դատական խորհրդի լեգիտիմությունը կարող է դրվել հարցականի տակ, ինչը կխաթարի նրա բնականոն գործունեությունը:

Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում նաև շեշտել, որ Բարձրագույն դատական խորհրդի կազմավորման կամ համալրման առումով անգործություն դրսևորելու և սահմանադրական պարտականությունները չկատարելու միջոցով թափուր տեղերի չհամալրումը կարող է վերջին հաշվով վտանգել նաև դատարանների անկախությունը, եթե նրանց անկախության երաշխավորը՝ Բարձրագույն դատական խորհուրդը, իրավագոր չլինի պատշաճ կերպով իրականացնել իր լիազորությունները:

Դատարանների և դատավորների անկախության երաշխավորի հնարավոր անգործունակությունը կունենա նաև այլ անկանխատեսելի հետևանքներ սահմանադրականության և սահմանադրական կարգի պահպանության համար, քանի որ Բարձրագույն դատական խորհուրդը, ի թիվս այլնի՝ օժտված է նաև դատարանների կազմավորման որոշիչ, ինչպես նաև դատավորների լիազորությունների դադարեցման լիազորություններով, առանձին դեպքերում ինքն է հանդես գալիս որպես դատարան:

Բացի դրանից, Սահմանադրական դատարանը փաստում է, որ եթե դատավորների ընդհանուր ժողովի կողմից Բարձրագույն դատական խորհրդի դատավոր անդամ չընտրելը հակակշռված չէ այլ սահմանադրական մարմինների համարժեք լիազորություններով, ապա Ազգային ժողովի խմբակցությունների կողմից Բարձրագույն դատական խորհրդի ոչ դատավոր անդամի չառաջադրումը և (կամ) նրա՝ Ազգային ժողովի կողմից չընտրվելը հակակշռված են Հանրապետության նախագահի կողմից Բարձրագույն դատական խորհրդի ընդհուպ բոլոր հինգ ոչ դատավոր անդամներին ժամանակավոր նշանակելու լիազորությամբ: Հետևապես, Հանրապետության նախագահի կողմից Սահմանադրության 138-րդ հոդվածով սահմանված իր պարտականության չկատարումն անմիջականորեն վտանգում է Բարձրագույն դատական խորհրդի գործունակությունը և դրա արդյունքում նաև դատարանների և դատավորների անկախությունը:

4.4. Սահմանադրության 138-րդ հոդվածի վերլուծությունը վկայում է, որ Հանրապետության նախագահի կողմից ժամանակավոր պաշտոնակատարների նշանակման նախադրյալներն են

ա) Ազգային ժողովի կողմից եռամսյա ժամկետում համապատասխան պաշտոնատար անձանց չընտրելը.

բ) օրենքով սահմանված հիմքերով ժամանակավոր պաշտոնակատարներ նշանակելը.

գ) օրենքով սահմանված կարգով ժամանակավոր պաշտոնակատարներ նշանակելը:

Սահմանադրության 138-րդ հոդվածով սահմանվում է նաև Հանրապետության նախագահի կողմից նշանակված ժամանակավոր պաշտոնակատարների պաշտոնավարման ժամանակահատվածը, այն է՝ **մինչև Ազգային ժողովի կողմից համապատասխան պաշտոնատար անձանց ընտրությունը**: Վերջինս, ինչպես նաև Ազգային ժողովի կողմից եռամսյա ժամկետում համապատասխան պաշտոնատար անձանց չընտրելու սահմանադրական նախադրյալը հստակ սահմանված են Սահմանադրության 138-րդ հոդվածով և օրենսդրական հետագա մանրամասնեցման ենթակա չեն:

Ինչ վերաբերում է օրենքով սահմանված հիմքերով և կարգով ժամանակավոր պաշտոնակատարներ նշանակելու սահմանադրական նախադրյալներին, ապա նշված հիմքերը և կարգը, թեև սահմանման ենթակա են վերաբերելի օրենքներում, սակայն չեն ենթադրում, որ պետք է հենց ժամանակավոր պաշտոնակատարների նշանակման առումով պարտադիր և ուղղակիորեն սահմանված լինեն:

Սահմանադրական դատարանը գտնում է, որ ժամանակավոր պաշտոնակատարներ նշանակելու **օրենքով սահմանված հիմքերը ներառում են նրանց ներկայացվող պահանջները, որոնք պետք է նույնական լինեն համապատասխան պաշտոնում Ազգային ժողովի կողմից ընտրվող պաշտոնատար անձանց ներկայացվող պահանջներին**:

Սահմանադրության 138-րդ հոդվածում նշված՝ համապատասխան պաշտոնատար անձանց տվյալ պաշտոններում ընտրելու համար ներկայացվող պահանջները սահմանվում են Սահմանադրությամբ, իսկ Սահմանադրությամբ նախատեսված դեպքերում վերաբերելի օրենքներով կարող են սահմանվել լրացուցիչ պահանջներ: Հիշյալ պահանջները որպես օրենքով սահմանված հիմքեր պարտադիր են նաև Հանրապետության նախագահի կողմից նշանակվող ժամանակավոր պաշտոնակատարների համար: Իսկ այն դեպքե-

րում, երբ Սահմանադրության 138-րդ հոդվածում նշված համապատասխան պաշտոնատար անձանց տվյալ պաշտոններում ընտրելու համար ներկայացվող պահանջները սահմանվում են բացառապես Սահմանադրությամբ, ապա օրենքով սահմանված հիմքերով նշանակելու սահմանադրական նախադրյալն օրենսդրին չի պարտավորեցնում սահմանել հավելյալ հիմքեր (պահանջներ):

Մինևույն ժամանակ, Սահմանադրության 138-րդ հոդվածով նախատեսված օրենքով սահմանված հիմքերով նշանակելու սահմանադրական նախադրյալը օրենսդիրն իր հայեցողությամբ իրավասու է մեկնաբանել ավելի լայն և իրացնել՝ ապահովելով ժամանակավոր պաշտոնակատարների **նշանակման երաշխիքներ**, մասնավորապես, կախված սահմանադրական մարմնում պաշտոնատար անձի անկախության ծավալից՝ իրավասու է այդ մարմնում ժամանակավորապես պաշտոնավարող անձի համար սահմանել մշտական աշխատատեղի (գրադեցրած հանրային կամ հանրային ծառայության պաշտոնի) պահպանման պահանջ՝ հիմնական աշխատավայրում նրա աշխատանքային պայմանագրի կամ լիազորությունների կասեցմամբ, ինչպես նաև սահմանադրական մարմինների ժամանակավոր համալրումն արդյունավետորեն ապահովելու նպատակով՝ հավելյալ սոցիալական և աշխատանքային երաշխիքներ:

Ինչ վերաբերում է ժամանակավոր պաշտոնակատարներ նշանակելու **օրենքով սահմանված կարգին, ապա դրա բովանդակությունը որոշում է օրենսդիրը**: Այդ կարգը, իհարկե, **չպետք է խոչընդոտի ժամանակավոր պաշտոնակատարների նշանակմանը**: Օրենսդիրն իրավասու է սահմանել կոնկրետ ժամանակավոր պաշտոնակատարի նշանակման կարգ, և, մասնավորապես, սահմանել նշանակման կարգին վերաբերող առարկայական կամ ընթացակարգային բնույթի ցանկացած կանոն կամ սահմանափակվել բացառապես ժամկետ նախատեսելով: Բացի դրանից, օրենսդիրն իրավասու է նաև կարգին վերաբերող հարցին անդրադառնալ վերաբերելի օրենքների ընդհանուր կանոնակարգումների տրամաբանության շրջանակներում, մասնավորապես, օրենսդրական այն կարգավորման շրջանակներում, ինչպիսին է բնականոն գործունեության ապահովումը: Դա, իր հերթին, ենթադրում է Սահմանադրության 138-րդ հոդվածում նշված համապատասխան պաշտոնատար անձանց պաշտոնների թափուր լինելու մասին այդ պաշտոն-

ներում ընտրող Ազգային ժողովի և ժամանակավոր պաշտոնակատարներ նշանակող Հանրապետության նախագահի պատշաճ իրազեկում: Այս համատեքստում հարկ է նշել, որ առանձին դեպքերում Ազգային ժողովին իրազեկելու մասով, օրենսդիրն ուղղակիորեն սահմանել է համապատասխան պաշտոններում թափուր տեղ առաջանալու դեպքում կոնկրետ ժամկետում այդ մասին տեղեկացնելու վերաբերյալ դրույթներ (մասնավորապես՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 81-րդ հոդվածի 3-րդ մաս, «Հետուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մաս, «Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մաս):

Սահմանադրական դատարանը փաստում է, որ բնականոն գործունեությունն ապահովելու ընդհանուր կարգավորումից անմիջականորեն ածանցվող ընտրելու և ժամանակավոր պաշտոնակատարներ նշանակելու հարցերով իրավասու մարմիններին իրազեկելու կոնկրետ պարտականություն բոլոր վերաբերելի օրենքներում հետևողականորեն և ուղղակիորեն (բառացիորեն) չի ամրագրվել, ինչը, սակայն, Սահմանադրական դատարանի գնահատմամբ չի կարող խոչընդոտ դառնալ այդ պարտականությունը կատարելու համար:

Անդրադառնալով դիմողի այն պնդմանը, որ ժամանակավոր պաշտոնակատարների անկախության երաշխիքների թվում պետք է օրենսդրորեն սահմանել ժամանակավոր պաշտոնակատարների պաշտոնավարման նվազագույն ժամկետ, Սահմանադրական դատարանը գտնում է, որ այն հակասության մեջ է մտնում Սահմանադրության 138-րդ հոդվածի ինչպես նպատակի, այն է՝ մի շարք սահմանադրական մարմինների ժամանակավոր կազմավորման կամ համալրման (պաշտոնատար անձի ժամանակավոր նշանակման), այնպես էլ ուղղակի (տառացի) կարգավորման հետ: Հիշյալ հոդվածում սահմանվում է ժամանակավոր նշանակման ժամանակահատվածը, այն է՝ **մինչև Ազգային ժողովի կողմից ընտրելը**, ուստի ակնհայտ է, որ ժամանակավոր պաշտոնակատարների պաշտոնավարման որևէ նվազագույն ժամկետի սահմանումն ուղղակիորեն կհակասի Սահմանադրությանը, ավելին՝ կարգելափակի Ազգային ժողովի համապատասխան լիազորությունների իրականացումը:

Բացի դրանից, մի կողմից՝ ժամանակավոր պաշտոնակատարներին վերաբերող երաշխիքների ծավալը և բովանդակությունը չպետք է խոչընդոտեն նրանց կողմից իրենց լիազորությունների պատշաճ իրականացումը կամ կախվածություն ստեղծեն այդ երաշխիքները տրամադրող մարմիններից կամ որևէ այլ կախվածության մեջ դնեն ժամանակավոր պաշտոնակատարներին, մյուս կողմից՝ այդ երաշխիքները չեն կարող իրենց ծավալով գերազանցել համապատասխան սահմանադրական մարմնում մշտական հիմունքներով ընտրվող պաշտոնատար անձանց տրամադրվող երաշխիքների ծավալը: Հակառակը կնշանակեր, որ պետությունն օրենքի առջև ընդհանուր հավասարության տեսանկյունից (Սահմանադրության 28-րդ հոդված) սահմանադրորեն չարդարացված նպատակով համապատասխան պաշտոնները մշտական հիմունքներով զբաղեցնող պաշտոնատար անձանց համեմատ անհիմն երաշխիքներ է տրամադրում ժամանակավոր պաշտոնակատարներին:

Այսպիսով՝ Սահմանադրական դատարանը գտնում է, որ Սահմանադրության 138-րդ հոդվածի համաձայն Հանրապետության նախագահի կողմից նշանակվող ժամանակավոր պաշտոնակատարները, ինչպես և համապատասխան պաշտոնները մշտական հիմունքներով զբաղեցնող պաշտոնատար անձինք **պետք է ունենան անկախության միևնույն երաշխիքները, այդ թվում սոցիալական:** Ուստի, եթե համապատասխան պաշտոնները մշտական հիմունքներով զբաղեցնող պաշտոնատար անձանց համար սոցիալական երաշխիքներ են սահմանվում օրենսդրական որոշակի պայմանների առկայության դեպքում, օրինակ՝ որոշակի ժամանակահատված պաշտոնավարելուց հետո, ապա ակնհայտ է, որ դա պետք է վերաբերի նաև ժամանակավոր պաշտոնակատարներին:

4.5. Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում առանձին անդրադառնալ Բարձրագույն դատական խորհրդի ոչ դատավոր անդամների ժամանակավոր պաշտոնակատարների նշանակումը տասնհինգօրյա ժամկետում կատարելու օրենսդրական կարգավորման՝ Սահմանադրության տեսանկյունից խնդրահարույց լինելու վերաբերյալ դիմողի հարցին:

Սահմանադրական դատարանը, նախ անհրաժեշտ է համարում ընդգծել, որ բոլոր իրավասու սուբյեկտներին՝ Ազգային ժողովին և դատավորների ընդհանուր ժողովին վերաբերող Սահմանադրության կարգավորումները, որոնք առնչվում են Բարձրագույն դատական խորհրդի ոչ դատավոր անդամներ առաջադրելուն և ընտրե-

լուն, ինչպես նաև դատավոր անդամներ ընտրելուն, **պարտադիր պահանջների ուժ ունեն** և համապատասխան սուբյեկտների պարտադիր գործառնություններ և լիազորություններ են, ուստի չեն կարող չիրականացվել: Նույնը վերաբերում է նաև այդ մարմինների այլ պարտադիր լիազորություններին, ինչպես նաև սահմանադրական մյուս մարմինների պարտադիր լիազորություններին, իսկ սահմանադրորեն կառուցակարգված հակակշիռների համակարգում՝ հատկապես պետության գլխին:

Ինչ վերաբերում է «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 81-րդ հոդվածի 5-րդ մասով Բարձրագույն դատական խորհրդի ոչ դատավոր անդամների ժամանակավոր պաշտոնակատար նշանակելու համար սահմանված տասնհինգօրյա ժամկետի ողջամիտ չլինելու վերաբերյալ դիմողի պնդումներին, ապա Սահմանադրական դատարանը գտնում է, որ հիշյալ ժամկետը չի կարող a priori գնահատվել որպես ողջամիտ կամ ոչ ողջամիտ, քանի որ այդպիսի գնահատումը, որպես կանոն, կախված է այդ ժամկետում իրականացվող լիազորության բնույթից, ինչպես նաև գործնականում այդ լիազորության երբևէ իրականացված լինելու հանգամանքից: Հանրապետության նախագահը դեռևս երբևէ չի իրականացրել հիշյալ լիազորությունը, հետևապես, առկա չէ գործնականում դրա կիրառելիության անհնարինության մասին որևէ փաստ, իսկ ժամկետի սահմանումն օրենսդրի հայեցողությունն է, ուստի Սահմանադրական դատարանը «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 81-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված ժամկետը սահմանադրականության տեսանկյունից ինքնին խնդրահարույց չի համարում:

Այսպիսով՝ Սահմանադրական դատարանը շեշտում է, որ Սահմանադրության 138-րդ հոդվածի համաձայն՝ Հանրապետության նախագահի կողմից ժամանակավոր պաշտոնակատարների նշանակման արդյունավետությունն ապահովող օրենսդրական լուծումների ընտրությունը վերապահված է օրենսդրին: Դա նշանակում է, որ ոչ Հանրապետության նախագահը, ոչ էլ գործադիր իշխանության որևէ այլ մարմին իրավասու չեն, ձեռնպահ մնալով իրենց պարտադիր լիազորությունների իրականացումից, գնահատել օրենսդրական հիմքերի սահմանադրականությունը և դրանց՝ Սահմանադրությանը հակասելու մասին սեփական ենթադրությունների

հիման վրա չկատարել Սահմանադրությամբ կամ օրենքով սահմանված իրենց պարտականությունները:

Սահմանադրական դատարանը, կարևորելով օրինականության սահմանադրական սկզբունքի պահպանումը (Սահմանադրության 6-րդ հոդվածի 1-ին մաս), արձանագրում է, որ Հանրապետության նախագահը, հղում անելով օրենքների ենթադրյալ հակասահմանադրականությանը և նշելով, որ «Հանրապետության նախագահի սահմանադրական լիազորությունների արդյունավետ իրացման համար անհրաժեշտ են Սահմանադրությունից բխող օրենսդրական պատշաճ կարգավորումներ ու դրանց իրացման հստակ կառուցակարգեր», «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով սահմանված ժամկետում չի նշանակել Բարձրագույն դատական խորհրդի ոչ դատավոր անդամի ժամանակավոր պաշտոնակատար: Ըստ սույն գործում առկա նյութերի՝ Հանրապետության նախագահի աշխատակազմը Ազգային ժողովի կողմից Բարձրագույն դատական խորհրդի անդամ չընտրելու վերաբերյալ Ազգային ժողովի նախագահից 2019 թվականի նոյեմբերի 4-ին ստացել է համապատասխան գրություն: Նույն թվականի նոյեմբերի 8-ին Հանրապետության նախագահը վերացական սահմանադրական վերահսկողության կարգով «համապատասխան օրենսդրական բացերը Սահմանադրությանը հակասող ճանաչելու խնդրանքով» դիմել է Սահմանադրական դատարան:

Սահմանադրական դատարանը փաստում է, որ Հանրապետության նախագահի կողմից Սահմանադրության պահպանմանը հետևելը չի կարող սահմանափակվել բացառապես Սահմանադրական դատարան դիմելու հայեցողական լիազորությամբ: Հանրապետության նախագահը Սահմանադրության պահպանմանը հետևելու իր գործառույթը պետք է կատարի առաջին հերթին իր պարտադիր սահմանադրական լիազորությունների իրականացման, տվյալ դեպքում՝ Սահմանադրության 138-րդ հոդվածի համաձայն ժամանակավոր պաշտոնակատարներ նշանակելու միջոցով: Այլ կերպ՝ Հանրապետության նախագահը որպես վերացական սահմանադրական վերահսկողության սուբյեկտ, բնականաբար, միշտ իրավասու է Սահմանադրական դատարանում վիճարկել Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետում նշված իրավական ակտերի համապատասխանությունը Սահմանադրությանը, բայց ոչ երբեք ի հաշիվ իր պարտադիր լիազորությունների իրականացման: Նշվածը վերաբերում է նաև իրավասու այլ սահմանադրական մարմիններին:

4.6. Սույն գործով վիճարկելով մի շարք օրենքների դրույթներ՝ դիմողը բարձրացնում է առավելապես դրանցում օրենսդրական բացի հարցեր:

Սահմանադրական դատարանն իր մի շարք որոշումներում անդրադարձել է օրենսդրական բացի հիմնահարցին: Այսպես՝ 2019 թվականի սեպտեմբերի 4-ի ՄԴՈ-1476 որոշմամբ Սահմանադրական դատարանը, մասնավորապես, արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումները.

1) օրենսդրական բացը Սահմանադրական դատարանի քննության առարկա կարող է դառնալ այն ժամանակ, երբ այն իրավակարգավորման թերությունն է, այլ ոչ թե իրավաստեղծ մարմնի, սովյալ դեպքում՝ օրենսդրի կամքը՝ ձեռնպահ մնալու որպես օրենսդրական բաց ընկալվող իրավական կարգավորումից,

2) ցանկացած թերի օրենսդրական կարգավորում չէ, որը որպես օրենսդրական բաց կարող է Սահմանադրական դատարանի քննության առարկա դառնալ, այլ միայն այնպիսի օրենսդրական բացը, որը հնարավոր չէ հաղթահարել այլ վերաբերելի իրավակարգավորումները մեկնաբանելու և կիրառելու միջոցով,

3) օրենսդրական բացը պետք է հանգեցրած լինի հակասական իրավակիրառ պրակտիկայի, որը հնարավոր չէ հաղթահարել կամ որը փաստացի չի հաղթահարվել սովորական դատարանների կողմից,

4) օրենսդրական բաց առկա է այն պարագայում, երբ իրավակարգավորման լիարժեքություն ապահովող տարրի բացակայության կամ այդ տարրի թերի կանոնակարգման հետևանքով խաթարվում է **օրենսդրորեն կարգավորված իրավահարաբերությունների ամբողջական և բնականոն իրագործումը**,

5) այն դեպքերում, երբ իրավունքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գտնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ նորմատիվ պատվիրանի բացակայությամբ, ապա նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է: Սահմանադրական դատարանը գործի քննության շրջանակներում անդրադառնում է օրենքի այս կամ այն բացի սահմանադրականությանը, եթե վիճարկվող նորմի բովանդակությամբ պայմանավորված իրավական անորոշությունն իրավակիրառական պրակտիկայում հանգեցնում է սովյալ նորմի այնպիսի մեկնաբանությանն ու կիրառմանը, որը **խախտում է կամ կարող է խախտել կոնկրետ սահմանադրական իրավունք**:

Սույն գործի շրջանակներում վերաբերելի օրենքների վերլուծության արդյունքում Սահմանադրական դատարանն արձանագրում է.

ա) Սահմանադրության 138-րդ հոդվածի համաձայն՝ Հանրապետության նախագահի կողմից Բարձրագույն դատական խորհրդի ոչ դատավոր անդամների ժամանակավոր պաշտոնակատարներ նշանակելու հետ կապված հարցերը կարգավորվում են «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 81-րդ հոդվածի 5-րդ մասով,

բ) Սահմանադրության 138-րդ հոդվածի համաձայն Հանրապետության նախագահի կողմից ժամանակավոր պաշտոնակատարներ նշանակելու հիմքեր և կարգ **ուղղակիորեն** սահմանված չեն «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 82-րդ հոդվածով, ինչպես նաև «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի, «Դատախազության մասին», «Հեռուստատեսության և ռադիոյի մասին», «Հաշվեքննիչ պալատի մասին» և «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների որևէ վերաբերելի իրավադրույթներով,

գ) Սահմանադրության 138-րդ հոդվածի համաձայն Հանրապետության նախագահի կողմից ժամանակավոր պաշտոնակատարներ նշանակելու հետ կապված հարցեր **ուղղակիորեն** կարգավորված չեն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի որևէ վերաբերելի իրավադրույթներով,

դ) Սահմանադրության 138-րդ հոդվածի համաձայն Հանրապետության նախագահի կողմից նշանակված ժամանակավոր պաշտոնակատարների հետ կապված հարցեր **ուղղակիորեն** կարգավորված չեն «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի որևէ վերաբերելի իրավադրույթներով:

Ելնելով սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումներից՝ Սահմանադրական դատարանը գտնում է.

ա) «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքում բավարար հստակությամբ ամրագրված են այն հիմքերը (պահանջները), որոնք անհրաժեշտ են Հանրապետության նախագահի կողմից

Բարձրագույն դատական խորհրդի ոչ դատավոր անդամի ժամանակավոր պաշտոնակատարի նշանակման համար, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 81-րդ հոդվածի 5-րդ մասում սահմանվում է, մասնավորապես, այն **Ժամկետը**, որը և **կարգ է**, որի ընթացքում Հանրապետության նախագահը պարտավոր է նշանակել ժամանակավոր պաշտոնակատար, իսկ կարգի ընտրությունն օրենսդրի հայեցողության շրջանակներում է, ուստիև Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 81-րդ հոդվածի 5-րդ մասը սահմանադրականության տեսանկյունից խնդրահարույց չէ,

բ) «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 82-րդ հոդվածում՝ դիմումի առարկայի շրջանակներում, առկա չէ Սահմանադրական դատարանի քննությանը ենթակա օրենսդրական բաց,

գ) «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի, «Դատախազության մասին», «Հեռուստատեսության և ռադիոյի մասին», «Հաշվեքննիչ պալատի մասին» և «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների վերաբերելի իրավադրույթներում Հանրապետության նախագահի կողմից ժամանակավոր պաշտոնակատարներ նշանակելու **հիմքեր և կարգ ուղղակիորեն սահմանված չլինելը չի հանգեցնում** այնպիսի **օրենսդրական բացի**, որով խախտվում են Սահմանադրության 138-րդ հոդվածով սահմանված պահանջները, և դրանով խոչընդոտ է հարուցվում Հանրապետության նախագահի կողմից Սահմանադրության հիշյալ հոդվածով սահմանված իր պարտադիր լիազորությունների իրականացման համար, քանի որ բոլոր վերաբերելի օրենքներում առնվազն առկա է իրավասու պաշտոնատար անձանց կողմից այդ մարմինների բնականոն գործունեությունն ապահովելու պահանջ, որը և պարտավորեցնում է իրազեկել իրավասու մարմնին՝ տվյալ դեպքում Հանրապետության նախագահին, Ազգային ժողովի կողմից եռամսյա ժամկետում համապատասխան պաշտոնատար անձանց չընտրելու մասին: Նշվածը Սահմանադրության 138-րդ հոդվածի իմաստով նույնպես օրենքով սահմանված կարգ է: Բացի դրանից, ինչպես վերը նշվեց՝ օրենսդրի հայեցողությանն է վերապահված կարգի ինչպես այդ, այնպես էլ այլ բաղադրիչների սահմանումը, մասնավորապես, ժամկետի, իսկ վերջինիս բացա-

կայությունը չի խոչընդոտում Հանրապետության նախագահի՝ Սահմանադրության 138-րդ հոդվածով սահմանված պարտադիր լիազորությունների իրականացումը: Օրենքով ժամկետ սահմանված չլինելու դեպքում Հանրապետության նախագահի այդ լիազորությունները պետք է իրականացվեն **հնարավոր սեղմ ժամկետներում**՝ հաշվի առնելով համապատասխան մարմնի կազմավորման կամ համալրման հրամայական անհրաժեշտությունը, որը և սահմանադրի կողմից դրվել է Սահմանադրության 138-րդ հոդվածի հիմքում: Անկախ օրենքով սահմանվող կարգի բաղադրիչների ծավալից՝ Սահմանադրության 138-րդ հոդվածով սահմանված պարտադիր լիազորությունների պատշաճ իրականացման համար Հանրապետության նախագահը, իր հերթին, պետք է իր իրավասության շրջանակներում նախապես ձեռնարկի անհրաժեշտ միջոցներ, ի մասնավորի, իր աշխատակազմի միջոցով՝ ժամանակավոր պաշտոնակատարների թեկնածուների ընտրության ուղղությամբ: Հետևապես, թեև հիշյալ օրենքներում **ուղղակիորեն** սահմանված չէ կարգ, այդուհանդերձ, նման կարգին վերաբերող նվազագույն պահանջները պահպանված են, ուստիև առկա չէ Սահմանադրական դատարանի քննությանը ենթակա օրենսդրական բաց,

դ) «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքով Հանրապետության նախագահի կողմից ժամանակավոր պաշտոնակատարներ նշանակելու հետ կապված հարցերը կարգավորված չլինելը **իրավաչափ է**, քանի որ Սահմանադրության 88-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ փոխկապակցված 103-րդ հոդվածի 2-րդ մասի երկրորդ նախադասության հետ, հիշյալ սահմանադրական օրենքի իրավակարգավորումը չպետք է դուրս գա իր առարկայի շրջանակներից, հետևապես՝ Սահմանադրության 138-րդ հոդվածի համաձայն Հանրապետության նախագահի կողմից ժամանակավոր պաշտոնակատարներ նշանակելու հիմքեր և կարգ հիշյալ սահմանադրական օրենքով չեն կարող սահմանվել,

ե) Հանրապետության նախագահի կողմից նշանակված ժամանակավոր պաշտոնակատարների սոցիալական երաշխիքների մասով «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում առկա չէ Սահմանադրական դատարանի քննությանը ենթակա օրենսդրական բաց, քանի որ Սահմանադրության 138-րդ հոդվածի համաձայն Հանրապետության նա-

Խազախի կողմից նշանակվող ժամանակավոր պաշտոնակատարներին վերաբերելի են հիշյալ օրենքով նախատեսված նույն երաշխիքները (այդ օրենքով սահմանված որոշակի պայմանների առկայությամբ), որոնք սահմանված են Ազգային ժողովի կողմից այդ պաշտոններում ընտրված պաշտոնատար անձանց համար:

Վերոգրյալի արդյունքում Սահմանադրական դատարանը գտնում է, որ սույն գործով բարձրացված օրենսդրական բացի հետ կապված հարցերը հնարավոր է հաղթահարել **այլ վերաբերելի իրավակարգավորումները մեկնաբանելու և կիրառելու միջոցով**, դրանք **չեն հանգեցրել հակասական իրավակիրառ պրակտիկայի**, ավելին դեռ գործնականում **երբևէ չեն կիրառվել**, ուստի դրանց լուծումը գտնվում է Ազգային ժողովի իրավասության շրջանակներում, և այդ մասով սույն գործի վարույթը ենթակա է կարճման:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 1-ին կետով, 169-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին-5-րդ մասերով, ինչպես նաև «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 60-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 63, 64 և 68-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**:

1. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 81-րդ հոդվածի 5-րդ մասը համապատասխանում է Սահմանադրությանը:

2. «Հանրապետության նախագահի դիմումի հիման վրա «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 81-րդ հոդվածի 5-րդ մասի և 82-րդ հոդվածի, «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի, «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 12-րդ հոդվածի, «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածի, «Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18 և 19-րդ հոդվածների, «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 144 և 145-րդ հոդվածների, «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման,

սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2 և 3-րդ հոդվածների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ՝ գործի վարույթը մասամբ՝ «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 82-րդ հոդվածի, «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի, «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 12-րդ հոդվածի, «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածի, «Հաշվեքննիչ պալատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18 և 19-րդ հոդվածների, «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 144 և 145-րդ հոդվածների, «Պաշտոնատար անձանց գործունեության ապահովման, սպասարկման և սոցիալական երաշխիքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2 և 3-րդ հոդվածների մասերով, կարճել:

3. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

31 մարտի 2020 թվականի
ՍԴՈ-1518



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2007 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 25-ԻՆ ԼԱՆՁԱՐՈՏՈՒՄ
ՍՏՈՐԱԳՐՎԱԾ «ՍԵՌԱԿԱՆ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄԻՑ ԵՎ ՍԵՌԱԿԱՆ
ԲՆՈՒՅԹԻ ԲՈՒՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԵՐԵՒԱՆԵՐԻ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ԵՎՐՈՊԱՅԻ ԽՈՐՀՐԴԻ
ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

31 մարտի 2020 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ա. Դիլանյանի, Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի (զեկուցող), մասնակցությամբ՝

Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարի տեղակալ Ք. Գրիգորյանի,

համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 22, 23 և 74-րդ հոդվածների,

դռնբաց նիստում բանավոր ընթացակարգով քննեց «2007 թվականի հոկտեմբերի 25-ին Լանգարոտում ստորագրված «Սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայում

1(97)/2020
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
◆ ՏԵՂԵԿԱԳԻՐ ◆

ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2019 թվականի նոյեմբերի 15-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Սահմանադրական դատարանի 2020 թվականի փետրվարի 11-ի ՄԴԱՌ-26 աշխատակարգային որոշմամբ «2007 թվականի հոկտեմբերի 25-ին Լանգարոտում ստորագրված «Սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը կասեցվել է մինչև Կառավարության կողմից հիշյալ կոնվենցիայի հայերեն պաշտոնական թարգմանության ճշգրտված տեքստն ստանալը:

Սահմանադրական դատարանի 2020 թվականի մարտի 27-ի ՄԴԱՌ-67 աշխատակարգային որոշմամբ «2007 թվականի հոկտեմբերի 25-ին Լանգարոտում ստորագրված «Սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործի վարույթը վերսկսվել է՝ հաշվի առնելով, որ վերացել է սույն գործի կասեցման հիմքը:

Լսելով սույն գործով զեկուցողի զեկույցը, Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցչի բացատրությունները, հետազոտելով կոնվենցիան և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիան (Կոնվենցիա) ստորագրվել է 2007 թվականի հոկտեմբերի 25-ին Լանգարոտում:

Կոնվենցիայի նպատակներն են՝

- 1) երեխաների սեռական շահագործման և նրանց նկատմամբ սեռական բնույթի բռնությունների կանխարգելումը և դրանց դեմ պայքարը,
- 2) սեռական շահագործման և սեռական բնույթի բռնությունների երեխա զոհերի իրավունքների պաշտպանությունը,

3) երեխաների սեռական շահագործման և նրանց նկատմամբ սեռական բնույթի բռնությունների դեմ պայքարի մասով ազգային և միջազգային համագործակցության խթանումը:

Կոնվենցիան ուժի մեջ է մտել 2010 թվականի հուլիսի 1-ից:

Կոնվենցիան Հայաստանի Հանրապետությունը ստորագրել է 2010 թվականի սեպտեմբերի 29-ին:

2. Կոնվենցիայով Հայաստանի Հանրապետությունը ստանձնում է, մասնավորապես, հետևյալ պարտավորությունները

1) երաշխավորել Կոնվենցիայի կիրարկումը, մասնավորապես՝ զոհերի (սեռական շահագործման կամ սեռական բնույթի բռնության ենթարկված ցանկացած երեխայի) իրավունքների պաշտպանության նպատակով միջոցառումների իրականացումն առանց որևէ հիմքով խտրականության,

2) ձեռնարկել անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցներ՝ երեխաների սեռական շահագործման ու նրանց նկատմամբ սեռական բնույթի բռնությունների բոլոր ձևերը կանխարգելելու և երեխաներին պաշտպանելու համար,

3) ձեռնարկել անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցներ՝ կրթական, առողջապահության, սոցիալական պաշտպանության, դատական և իրավապահ, ինչպես նաև սպորտի, մշակույթի և հանգստի ոլորտներում երեխաների հետ պարբերաբար շփում ունեցող անձանց շրջանում երեխաների պաշտպանության և իրավունքների մասին իրազեկությունը խթանելու համար,

4) ձեռնարկել անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցներ՝ ապահովելու համար, որ երեխաները տարրական և միջնակարգ կրթության ընթացքում ստանան սեռական շահագործման ու սեռական բնույթի բռնությունների հետ կապված վտանգների, ինչպես նաև ինքնապաշտպանության միջոցների մասին տեղեկություններ, որոնք հարմարեցված են նրանց զարգացող կարողություններին: Ծնողների հետ համագործակցությամբ տրամադրված այդ տեղեկությունները պետք է անհրաժեշտության դեպքում տրվեն սեռական բնույթի հարցերի վերաբերյալ տեղեկությունների առավել լայն համատեքստում, և պետք է հատուկ ուշադրություն դարձվի վտանգավոր, հատկապես նոր տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործում ներառող իրավիճակներին,

5) ձեռնարկել անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցներ՝ Կոնվենցիային համապատասխան սահմանված հանցագործությունները գովազդող նյութերի տարածումը կանխարգելելու կամ արգելելու համար,

6) ձեռնարկել անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցներ՝ ստեղծելու կամ նշանակելու անկախ իրավասու ազգային կամ տեղական կառույցներ՝ երեխաների իրավունքները խթանելու և պաշտպանելու համար՝ ապահովելով, որ այդ կառույցներն օժտված լինեն հատուկ ռեսուրսներով և պարտականություններով,

7) խրախուսել իրավասու պետական մարմինների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի միջև համագործակցությունը՝ երեխաների սեռական շահագործումը և նրանց նկատմամբ սեռական բնույթի բռնություններն առավել արդյունավետորեն կանխարգելելու և դրանց դեմ պայքարելու համար,

8) ստեղծել արդյունավետ սոցիալական ծրագրեր և բազմապրոֆիլ կառույցներ՝ զոհերին, նրանց մերձավոր ազգականներին և նրանց խնամքի համար պատասխանատու ցանկացած անձի անհրաժեշտ աջակցություն տրամադրելու համար,

9) ձեռնարկել անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցներ՝ խրախուսելու, որ ցանկացած անձ, որը, բարեխղճության սկզբունքի հիման վրա, տեղյակ է կամ կասկածում է երեխաների սեռական շահագործման կամ սեռական բնույթի բռնության մասին, այդ փաստերը հաղորդի իրավասու ծառայություններին,

10) ձեռնարկել անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցներ՝ խրախուսելու և աջակցելու տեղեկատվական ծառայությունների հեռախոսային կամ ինտերնետային օգնության թեժ գծերի ստեղծմանը՝ զանգահարողներին խորհրդատվություն տրամադրելու համար՝ նույնիսկ գաղտնիության պայմանով կամ պատշաճ կերպով հաշվի առնելով նրանց անանունությունը,

11) ձեռնարկել անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցներ՝ կարճաժամկետ և երկարաժամկետ կտրվածքով աջակցելու համար զոհերին՝ նրանց ֆիզիկական և հոգեբանական ու սոցիալական վերականգնման հարցում: Հիշյալ ձեռնարկված միջոցների շրջանակներում պետք է պատշաճ կերպով հաշվի առնվեն երեխայի կարծիքը, կարիքները և մտահոգությունները,

12) ձեռնարկել անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցներ՝ ապահովելու Կոնվենցիայում նշված՝ դիտավորությամբ կատարված արարքների քրեականացումը,

13) ձեռնարկել անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցներ՝ Կոնվենցիային համապատասխան սահմանված ցանկացած հանցագործության նկատմամբ իրավագործություն սահմանելու համար այն դեպքում, երբ հանցագործությունը կատարվել է Հայաստանի Հանրապետության տարածքում, կամ Հայաստանի Հանրապետու-

թյան դրոշը կրող նավի վրա, կամ Հայաստանի Հանրապետության օրենքների համաձայն գրանցված ինքնաթիռում, կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացիներից որևէ մեկի կողմից, կամ այն անձի կողմից, որի հիմնական բնակության վայրը Հայաստանի Հանրապետության տարածքում է,

14) ձեռնարկել անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցներ՝ Կոնվենցիային համապատասխան սահմանված հանցագործությունների նկատմամբ իրավագործություն սահմանելու համար այն դեպքում, երբ ենթադրյալ հանցագործություն կատարողը գտնվում է Հայաստանի Հանրապետության տարածքում, և Հայաստանի Հանրապետությունը չի հանձնում նրան մեկ այլ կողմի՝ բացառապես նրա քաղաքացիության հիմքով,

15) ձեռնարկել անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցներ՝ ապահովելու համար, որ Կոնվենցիային համապատասխան սահմանված հանցագործությունների համար նախատեսվեն արդյունավետ, համաչափ և զսպող պատժամիջոցներ՝ հաշվի առնելով դրանց ծանրության աստիճանը: Այդ պատժամիջոցները ներառում են ազատազրկում նախատեսող պատիժներ, որոնք կարող են հանգեցնել հանձնման,

16) ձեռնարկել անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցներ՝ ապահովելու համար, որ քննություններն ու քրեական վարույթներն իրականացվեն՝ ելնելով երեխայի լավագույն շահերից և հարգելով նրա իրավունքները,

17) որդեգրել զոհի նկատմամբ պաշտպանական մոտեցում՝ ապահովելով, որ քննություններն ու քրեական վարույթները չխորացնեն երեխայի ստացած տրավման, և որ անհրաժեշտության դեպքում քրեական արդարադատության իրականացմանը հաջորդի աջակցության տրամադրումը,

18) ապահովել, որ Կոնվենցիայի VII գլխի ներքո կիրառելի միջոցները չխախտեն պաշտպանության կողմի իրավունքները և արդար ու անաչառ դատավարության պահանջները՝ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի 6-րդ հոդվածին համապատասխան,

19) ապահովել, որ իրավասու մարմինների հետ նրանց առաջին շփումից սկսած՝ զոհերին հասանելի լինեն համապատասխան դատական և վարչական վարույթների վերաբերյալ տեղեկությունները,

20) ձեռնարկել անհրաժեշտ օրենսդրական կամ այլ միջոցներ՝ ապահովելու համար, որ Կոնվենցիային համապատասխան սահմանված հանցագործության զոհերը կարողանան մեկ այլ կողմի

տարածքում, որն իրենց բնակության վայրը չէ, բողոք ներկայացնել իրենց բնակության վայրի պետության համապատասխան մարմիններ:

3. Սահմանադրական դատարանը, նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցչի բացատրությունները, մասնավորապես, արձանագրում է.

1) Կոնվենցիայով ամրագրված պարտավորություններում «օրենսդրական կամ այլ միջոցներ» եզրույթը Հայաստանի Հանրապետության համար կիրառելի է Հայաստանի Հանրապետության սահմանադրաիրավական կարգավորումների շրջանակներում, այլ կերպ էթե տվյալ հարցը ենթակա է լուծման միայն օրենսդրական կարգավորումներով, այն չի կարող լուծվել այլ միջոցներով,

2) Կոնվենցիայի 10-րդ հոդվածով ամրագրված երեխաների իրավունքները խթանելու և պաշտպանելու համար անկախ իրավասու ազգային կամ տեղական կառույցներ ստեղծելու կամ նշանակելու պարտավորությունը չի ենթադրում պարտադիր նոր մարմնի ստեղծում, և այդ պարտավորության իրականացումը կարող է ապահովվել Հայաստանի Հանրապետությունում արդեն իսկ գործող իրավասու մարմնի գործունեության շրջանակներում:

4. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Կոնվենցիայով Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնվող պարտավորությունները պետք է իրականացվեն վերաբերելի սահմանադրական արժեքների պահպանության պայմաններում, մասնավորապես հաշվի առնելով Սահմանադրության 16-րդ հոդվածի (մանկության հատուկ պաշտպանության մասով), 36-րդ հոդվածի 1-ին մասի, 37-րդ հոդվածի, 86-րդ հոդվածի 6-րդ կետի սահմանադրական բովանդակությունը:

Միաժամանակ Սահմանադրական դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ Կոնվենցիայով նախատեսված երեխաների տարրական և միջնակարգ կրթության ընթացքում սեռական շահագործման ու սեռական բնույթի բռնությունների հետ կապված վտանգների, ինքնապաշտպանության միջոցների մասին տեղեկությունները տրամադրվեն պարտադիր հաշվի առնելով երեխաների հասունության մակարդակը և նրանց զարգացող կարողությունները, ինչպես նաև ապահովելով նրանց լավագույն շահի առաջնահերթ պաշտպանության նկատմամբ պետության արդյունավետ վերահսկողությունը ի կատարումն պետության մանկության հատուկ պաշտպանության սահմանադրական պարտականության:

5. Սահմանադրական դատարանը հարկ է համարում նշել, որ Կոնվենցիայով Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնվող պարտավորությունների կատարման անհրաժեշտ օրենսդրական երաշխիքների ապահովումը և իրավակիրառական պրակտիկական պետք է ներդաշնակ լինեն սույն որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշումներին:

6. Սահմանադրական դատարանը փաստում է, որ Կոնվենցիայով Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնվող պարտավորությունները հատկապես վերաբերելի են Ազգային ժողովի ու Կառավարության լիազորություններին, և Կոնվենցիայի վավերացման նպատակահարմարության հարցը գտնվում է հիշյալ մարմինների լիազորությունների տիրույթում:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. «2007 թվականի հոկտեմբերի 25-ին Լանգարոտում ստորագրված «Սեռական շահագործումից և սեռական բնույթի բռնություններից երեխաների պաշտպանության մասին» Եվրոպայի խորհրդի կոնվենցիայում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

31 մարտի 2020 թվականի
ՄԴՈ-1519



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2012 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 24-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝
«ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ԿԱՏԱՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՊԵԿԻՆԻ
ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԱՍՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝
ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ
ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

31 մարտի 2020 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ա. Դիլանյանի (զեկուցող), Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության Էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ն. Մարգարյանի, համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2012 թվականի հունիսի 24-ին ստորագրված՝ «Տեսալսողական կատարումների մասին» Պեկինի պայմանագրում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 1(97)2020

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2020 թվականի հունվարի 24-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վերոնշյալ պայմանագիրը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**.

1. «Տեսալսողական կատարումների մասին» պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) ընդունվել է 2012 թվականի հունիսի 24-ին Պեկինում՝ տեսալսողական կատարումների նկատմամբ կատարողների իրավունքները հնարավորինս արդյունավետ և միասնականորեն զարգացնելու և պահպանելու նպատակով:

2. Հայաստանի Հանրապետությունը, փոխադարձության հիման վրա, Պայմանագրով ստանձնում է մի շարք պարտավորություններ, որոնցից, մասնավորապես, նշում ենք հետևյալները.

- Պայմանագրով նախատեսված պահպանություն տրամադրել այլ Պայմանավորվող կողմերի քաղաքացիներ հանդիսացող, ինչպես նաև Պայմանավորվող կողմերից որևէ մեկի քաղաքացի չհանդիսացող, սակայն Պայմանավորվող կողմերից որևէ մեկում մշտապես բնակվող կատարողներին (Հոդված 3),

- մյուս Պայմանավորվող կողմերի քաղաքացիներին տրամադրել այնպիսի ռեժիմ, որը տրամադրում է ՀՀ քաղաքացիներին Պայմանագրով հատուկ տրամադրված բացառիկ իրավունքների և Պայմանագրի 11-րդ հոդվածով նախատեսված արդարացի վարձատրության իրավունքի նկատմամբ (Հոդված 4, կետ 1),

- սահմանել Պայմանագրով նախատեսված իրավունքների սահմանափակումներ և բացառություններ որոշ հատուկ դեպքերի համար, որոնք չեն հակասում կատարման բնականոն օգտագործմանը և անհիմն կերպով չեն վնասում կատարողի օրինական շահերը (Հոդված 13, կետ 2),

- ապահովել, որ Պայմանագրով կատարողներին տրամադրվող պահպանության ժամկետը գործի առնվազն մինչև 50 տարին լրանալը, որը հաշվարկվում է այն տարվա վերջից, երբ կատարումն ամրագրվել է (Հոդված 14),

- տրամադրել համարժեք իրավական պահպանություն և արդյունավետ իրավական պաշտպանության միջոցներ այն արդյունավետ տեխնոլոգիական միջոցները շրջանցելու դեմ, որոնք օգտագործվում են կատարողների կողմից՝ Պայմանագրով իրենց իրավունքներն իրականացնելու համար, և որոնք սահմանափակում են իրենց կատարումների նկատմամբ կատարողների կողմից չթույլատրված կամ օրենքով արգելված գործողությունները (Հոդված 15),

- որպես Պայմանավորվող կողմ՝ ապահովել համարժեք և արդյունավետ իրավական պաշտպանության միջոցներ ցանկացած անձի դեմ, որը գիտակցաբար կատարում է հետևյալ գործողություններից որևէ մեկը՝ իմանալով կամ, քաղաքացիաիրավական պաշտպանության միջոցների առումով, բավարար հիմքեր ունենալով իմանալու, որ այդպիսի գործողությունը կառաջացնի, կնպաստի, կօգնի կամ կթաքցնի Պայմանագրով սահմանված որևէ իրավունքի խախտում.

ա) առանց թույլտվության հեռացնել կամ փոփոխել իրավունքների կառավարման վերաբերյալ որևէ էլեկտրոնային տեղեկատվություն,

բ) առանց թույլտվության տարածել, տարածման նպատակով ներմուծել, հեռարձակել, հաղորդել կամ մատչելի դարձնել հանրությանը տեսալսողական ամրագրումներում ամրագրված կատարումները կամ դրանց կրկնօրինակները իմանալով, որ իրավունքների կառավարման վերաբերյալ էլեկտրոնային տեղեկատվությունը հեռացվել կամ փոփոխվել է առանց թույլտվության (Հոդված 16, կետ 1),

- որպես Պայմանավորվող կողմ Պայմանագրով պահպանություն տրամադրել այն ամրագրված կատարումներին, որոնք գոյություն ունեն Պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահին, և բոլոր այն կատարումներին, որոնք տեղի են ունենում հայկական կողմի համար Պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո (Հոդված 19, կետ 1),

- համաձայն ՀՀ իրավական համակարգի՝ ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ՝ ապահովելու համար Պայմանագրի կիրարկումը (Հոդված 20, կետ 1),

- ապահովել, որ ՀՀ օրենսդրությամբ նախատեսվեն կիրարկման այնպիսի ընթացակարգեր, որոնք թույլ կտան կատարել արդյունավետ գործողություններ Պայմանագրով տրամադրվող իրավունք-

ների ցանկացած խախտման դեմ, ներառյալ խախտումները կանխելուն ուղղված անհապաղ միջոցները և հետագա խախտումները բացառելուն ուղղված միջոցները (Հոդված 20, կետ 2),

- որպես Պայմանավորվող կողմ՝ հոգալ Ասամբլեայում Հայաստանի Հանրապետության կողմից նշանակված պատվիրակության ծախսը (Հոդված 21, կետ 1) գ):

3. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Պայմանագրով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված միջազգային իրավունքի հիման վրա բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված՝ արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**:

1. 2012 թվականի հունիսի 24-ին ստորագրված «Տեսալսողական կատարումների մասին» Պեկինի պայմանագրում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

31 մարտի 2020 թվականի
ՄԴՈ-1520



ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՈՐՈՇՈՒՄԸ**

**2019 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 9-ԻՆ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ
«1994 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 9-Ի ԵՎՐԱՍԻԱԿԱՆ
ԱՐՏՈՆԱԳՐԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻՆ ԿԻՑ
«ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՍՈՒՇՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ
ՄԱՍԻՆ» ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՄՐԱԳՐՎԱԾ
ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ
ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ**

Քաղ. Երևան

31 մարտի 2020 թ.

Սահմանադրական դատարանը՝ կազմով. Հ. Թովմասյանի (նախագահող), Ա. Գյուլումյանի, Ա. Դիլանյանի (զեկուցող), Ա. Թունյանի, Ա. Խաչատրյանի, Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի, մասնակցությամբ (գրավոր ընթացակարգի շրջանակներում)՝ Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ՝ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ն. Մարգարյանի, համաձայն Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետի, 169-րդ հոդվածի 3-րդ մասի, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 23, 40 և 74-րդ հոդվածների, դռնբաց նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2019 թվականի սեպտեմբերի 9-ին ստորագրված 1994 թվականի սեպտեմբերի 9-ի Եվրասիական արտոնագրային կոնվենցիային կից «Արդյունա-

ՍԱՀՄԱՆԱԴՐՎԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ ♦ ՏԵՂԵԿԱԳԻՐ ♦ 1(97)/2020

բերական նմուշների պահպանության մասին» արձանագրությունում ամրագրված պարտավորությունների՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթը Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2020 թվականի հունվարի 29-ին Սահմանադրական դատարան մուտքագրված դիմումն է:

Ուսումնասիրելով սույն գործով Կառավարության ներկայացուցչի գրավոր բացատրությունը, հետազոտելով վերոնշյալ արձանագրությունը և գործում առկա մյուս փաստաթղթերը՝ Սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց**:

1. «1994 թվականի սեպտեմբերի 9-ի Եվրասիական արտոնագրային կոնվենցիային կից «Արդյունաբերական նմուշների պահպանության մասին» արձանագրությունը (այսուհետ՝ Արձանագրություն) ստորագրվել է 2019 թվականի սեպտեմբերի 9-ին Նուր-Սուլթանում արդյունաբերական նմուշների պահպանության միջպետական համակարգ ստեղծելու, Պայմանավորվող պետությունների ներքին շուկաները զարգացնելու և իրենց տարածքների գրավչությունը առևտրի ու ներդրումային գործունեության զարգացման համար բարձրացնելու նպատակով:

2. Հայաստանի Հանրապետությունը, փոխադարձության հիման վրա, Արձանագրությամբ ստանձնում է մի շարք պարտավորություններ, որոնցից, մասնավորապես, նշում ենք հետևյալները.

- որպես արդյունաբերական նմուշի՝ իրավական պահպանություն չտրամադրել հետևյալ որոշումներով, որոնք՝

ա) հակասում են հանրային շահերին, մարդասիրության և բարոյականության սկզբունքներին թեկուզ մեկ Պայմանավորվող պետությունում.

բ) պարունակում, վերարտադրում կամ նմանակում են պաշտոնական խորհրդանիշեր (այդ թվում՝ պետական խորհրդանիշեր և նշաններ), միջազգային և միջկառավարական կազմակերպությունների կրճատ կամ լրիվ անվանումներ՝ առանց այն պետությունների համապատասխան իրավասու մարմինների, կազմակերպությունների համաձայնության, որոնց շահերին են առնչվում այդ լուծումները.

զ) պարունակում, վերարտադրում կամ նմանակում են մշակութային (այդ թվում՝ էթնիկ ու կրոնական) ժառանգության օբյեկտների պաշտոնական անվանումները կամ պատկերները, դրանց ճանաչելի մասերը՝ առանց այն Պայմանավորվող պետությունների իրավասու մարմինների համաձայնության, որոնց շահերին են առնչվում այդ լուծումները (Հոդված 3, կետ 2),

- արդյունաբերական նմուշի նկատմամբ առաջնության իրավունքը ճանաչել Փարիզյան կոնվենցիային համապատասխան (Հոդված 5),

- արդյունաբերական նմուշի եվրասիական արտոնագրով տրամադրվող իրավական պահպանության ծավալը որոշել արտադրատեսակի պատկերների վրա արտացոլված արդյունաբերական նմուշի էական հատկանիշների ամբողջությամբ (Հոդված 7),

- ապահովել, որ արդյունաբերական նմուշի նկատմամբ բացառիկ իրավունքը ժառանգությամբ կամ այլ իրավահաջորդության կարգով փոխանցվի միայն ամբողջությամբ (Հոդված 10, կետ 2),

- լիցենզային պայմանագրի, ինչպես նաև Արձանագրության 10-րդ հոդվածի 1-ին կետի երրորդ մասի հիման վրա՝ ՀՀ օրենսդրությանը համապատասխան կնքված պայմանագրի գրանցումն իրականացնել ՀՀ ազգային արտոնագրային գերատեսչության (այսուհետ՝ ազգային գերատեսչություն) կողմից, որի տարածքի մասով կնքվել է համապատասխան պայմանագիրը (Հոդված 10, կետ 3, պարբերություն 2-րդ),

- տեղեկացնել Եվրասիական գերատեսչությանը արդյունաբերական նմուշի եվրասիական արտոնագիրը անվավեր ճանաչելու վերաբերյալ ընդունված որոշման մասին (Հոդված 11, կետ 3, պարբերություն 2),

- ապահովել, որ արդյունաբերական նմուշի եվրասիական հայտը ներկայացվի Եվրասիական գերատեսչություն, բացի Արձանագրության 13-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված դեպքերից (Հոդված 13, կետ 1):

3. Սահմանադրական դատարանը գտնում է, որ Արձանագրությունով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունները համահունչ են Սահմանադրության 13-րդ հոդվածով ամրագրված՝ միջազգային իրավունքի հիման վրա բոլոր պետությունների հետ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունների հաստատմանն ուղղված՝ արտաքին քաղաքականության իրականացման նպատակներին:

Ելնելով գործի քննության արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 168-րդ հոդվածի 3-րդ կետով, 170-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 63, 64 և 74-րդ հոդվածներով՝ Սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց**.

1. 2019 թվականի սեպտեմբերի 9-ին ստորագրված «1994 թվականի սեպտեմբերի 9-ի Եվրասիական արտոնագրային կոնվենցիային կից «Արդյունաբերական նմուշների պահպանության մասին» արձանագրությունում ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Սահմանադրությանը:

2. Սահմանադրության 170-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ սույն որոշումը վերջնական է և ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՆԱԽԱԳԱՀՈՂ

Հ. ԹՈՎՄԱՍՅԱՆ

31 մարտի 2020 թվականի
ՍԴՈ-1521

Գրանցվել է ՀՀ արդարադատության նախարարության
20 դեկտեմբերի 1996թ. կոլեգիայի թիվ 37/2-14 որոշմամբ

Խմբագրության հասցեն՝
Երևան, Բաղրամյան 10
Հեռախոս՝ 011-58-81-81(189)
E-mail: armlaw@concourt.am.
<http://www.concourt.am>.

Ստորագրված է տպագրության՝ 26.06.2020թ.
Դասիչ՝ 77754
Գրաչափը՝ 70X100 1/16
Տպաքանակը՝ 100

ՀՀ ՍԴ տեղեկագիրը
ՀՀ բարձրագույն որակավորման կոմիտեի
որոշմամբ ընդգրկված է ՀՀ ԲՈԿ-ի
ատենախոսությունների հիմնական արդյունքների
և դրույթների հրապարակման համար ընդունելի
հրատարակությունների ցուցակում

Вестник Конституционного Суда Республики Армения N 1(97)2020
Bulletin of the Constitutional Court of the Republic of Armenia N 1(97)2020
Bulletin de la Cour constitutionnelle de la République d'Arménie N 1(97)2020